

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԹՈՒԹԵԱՆ

ՄԻՈՂ




2026

ՅՈՒՆՈՒԱՐ – ՓԵՏՐՈՒԱՐ – ՄԱՐՏ ԹԻՒ 1-2-3
Ղ. 98 ՏԱՐԻ – ՆՈՐ ԵՐՋԱՆ



ISSN 0037-5810



ԻՈՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ԵՐՈՒՍԱԿԼԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

ՂԸ. 98 ՏԱՐԻ – ՆՈՐ ՇՐՋԱՆ

ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՅ ՅԱԿՈԲԵԱՆՅ
ԵՐՈՒՍԱԿԼԵՄ

2026
2026

ՅՈՒՆՈՒԱՐ – ՓԵՏՐՈՒԱՐ – ՄԱՐՏ
JANUARY – FEBRUARY – MARCH

ԹԻԻ 1-2-3
№ 1-2-3

SION

A QUARTERLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

VOL. 98



ST. JAMES PRESS
JERUSALEM

ՀՐԱՄԱՆԱԻ
ՏԵԱՌՆ ՆՈՒՐՀԱՆԱՅ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԵՒ ՊԱՏՐԻԱՐՔԻ Ս. ԵՐՈՒՍԱԴԷՄԱՅ



*Իրաւատէր՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան,
Հայ Պատրիարք Երուսաղէմի*

*Proprietor: His Beatitude Archbishop Nourhan Manougian
Armenian Patriarch of Jerusalem*

*Գլխաւոր խմբագիր՝ Դոկտ. Ներսէճ Վարդապետ Ալոյեան
Editor in Chief: Archimandrite Nerseh Aloyan, PhD in Philology*

*Խմբագրի օգնական՝ Տիրացու Առնօ Մխիթարեան
Assistant Editor: Arno Mkhitaryan*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ն. Վ.

| | |
|---|----------------|
| Նոր տարուայ շեմին | 7 |
| Ամենապատիւ Պատրիարք Ս. Հօր Ս. Ծննդեան պատգամը Բեթղեհէմի Սուրբ Այրէն | 9 |
| Մեծերը Աստուծոյ մասին | 13, 30, 33, 81 |

ՔԱՐՈՋԻՍՈՍԱԿԱՆ

| | |
|--|----|
| Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի բացման խօսքը՝ Աւստրիոյ Սէնթ Փեռլթըն քաղաքին մէջ կայացած Հայ Առաքելական Եկեղեցւոյ Եպիսկոպոսաց ժողովին (17 Փետրուար, 2026) | 11 |
| Գէորգ Վրդ. Հայրապետեանի քարոզը՝ խօսուած Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Սրբոց Վարդանանց Զօրավարաց տօնին (19 Փետրուար, 2026) | 14 |
| Վազգէն Վրդ. Ալէքեանի քարոզը՝ խօսուած Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Բուն Բարեկենդանին (22 Փետրուար, 2026) | 17 |
| Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր քարոզը՝ խօսուած Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Մեծ Պահոց Հսկումին (5 Մարտ, 2026) | 22 |
| Ադան Վրդ. Գոգչեանի քարոզը՝ խօսուած Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ Մեծ Պահոց Տնտեսի Կիրակիին (15 Մարտ, 2026) | 25 |
| Արշակ Աբդ. Ղազարեանի քարոզը՝ խօսուած Ս. Հրեշտակապետաց Եկեղեցւոյ մէջ, Սրբոց քառասուն մականց յիտատակին նուիրուած հսկումին (20 Մարտ, 2026) | 28 |
| Ներսէճ Վրդ. Ալոյեանի քարոզը՝ խօսուած Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Մեծ Պահոց Գալստեան Կիրակիին (29 Մարտ, 2026) | 31 |

ԱՆՏԻՊ

ԴՈԿՏ. ՆԱՐԵԿ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՅԻՐՄԵՆՃԵԱՆ

| | |
|---|----|
| Նիւթեր Մեսրոպ Վրդ. Նշանեան - Արշակ Զօպանեան նամակագրութենէն (1907-1939) | 34 |
|---|----|

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՎՈՎԱ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

| | |
|-------------------------------|----|
| - Դիմակ՝ ակնոցի փոխարէն | 70 |
| - Մոխիրը կը խառնուի արեւին... | 71 |
| - Ամէն անգամ... | 72 |
| - Կ'անձրեւես... | 73 |

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴՈՅ. ԵԻԱ ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆ, ՊՐՈՖ. ԱՇՈՏ ԳԱԼՍՏԵԱՆ

| | |
|--|----|
| Ռոմանոս Մելիքեան. բնորդը յուշագրութեան մէջ | 74 |
|--|----|

NELLY GEVORGYAN

| | |
|--|----|
| Ecclesiastical idioms in modern Eastern Armenian | 82 |
|--|----|

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

ՊՐՈՑ. ՆԱԻԱՍԱՐԴ ՄԱՐՏՈՅԵԱՆ

Երանելի Յովհաննէս Գառնեցիի աղօթքները 90

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ

ԽԱՉԻԿ ԴԱՆԻԷԼԵԱՆ

Եկեղեցական ճարտարապետութեան արդի խնդիրները 98

ՎԻՄԱԳՐԱԿԱՆ

ՍԱԹԵՆԻԿ ԽՈՒՐՇՈՒԴԵԱՆ

Վաղատուր գիւղի նորայայտ վիճագրերը 102

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԴԻԻԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅ

- *A statement from the patriarchs and heads of the churches in Jerusalem on unity and representation of the Christian communities in the Holy Land (January 17, 2026)* 115

- Առ ի գիտութիւն Հայաստանի Հանրապետութեան եւ օտար լրատուամիջոցներուն 115

- Հաղորդագրութիւն Դատաւորաց Կիրակիի մասին 116

- Հաղորդագրութիւն Սուրբ Յարութեան տաճարի, Քրիստոսի Սուրբ Գերեզմանի փակման եւ տաճարին մէջ մատուցուող Սուրբ Պատարագներու, թափօրներու եւ այլ սրբազան արարողութիւններու վերաբերեալ 117

- Հաղորդագրութիւն Գալստեան Կիրակիի Սուրբ Պատարագը Նոր Երուսաղէմի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ շմատուցելու մասին 117

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԱՅԼԵԻԱՅԼՔ

ՆԵՐՍԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼՈՅԵԱՆ

- Տարեմուտ 2026 թուականին Քրիստոսի 119

- «Հրաշագործ Մայր Աստուածածնի» սրբապատկերի քօղագերծում Ասորւոց Սուրբ Մարկոս վանքէն ներս 121

- Իսրայէլի Ռամլէ քաղաքի Հայոց Սուրբ Գէորգ Եկեղեցի առաջնորդող փողոցը անուանակոչուեցաւ «Հայոց Եկեղեցի» 121

- Ուրարի տուչութիւն 121

- Հայոց Սուրբ Ծնունդը Բեթղեհէմի մէջ 122

- Սուրբ Թէոդորոս Ձեռագրատան նոր յարկին բացում 124

- Տարեկան ուխտագնացութիւն դէպի Յորդանան գետ 124

- Սուրբ Երկրի պատրիարքները, հոգեւոր պետերը եւ դիւանագէտները մէկտեղուած են Յունաց Պատրիարքարանին մէջ 125

- Ս. Ծննդեան Տաճարի իրաւատէրերէն՝ Հայոց Սրբոց Յակոբեանց Ձինուորեալ Միաբանութիւնը այցելեց Սուրբ Ծննդեան քարայր՝ մօտէն հետեւելու վերականգնման աշխատանքներուն 125

- Նոր նշանակումներ 126
- Սուրբ Երկրի պատրիարքները եւ հոգեւոր պետերը Զատիկական տօներուն ընդառաջ մէկտեղուեցան Յունաց Պատրիարքարանին մէջ 126
- Պաշտօնականք 131

ՏԻՐԱՅՈՒ ԱՌՆՕ ՄԽԻԹԱՐԵԱՆ

- Եկեղեցականք - Բեմականք 127

ՏԻՐՈՒՆԻ

- Հանգիստ Տ. Բարսեղ Ծայրագոյն Վարդապետ Գալէմտէրեանի (1954-2026) 133
- Կենսագրութիւն Տ. Բարսեղ Ծայրագոյն Վարդապետ Գալէմտէրեանի 133
- Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեանի կողմէ խօսուած դամբանականը ի Ս. Յակոբ 135
- Ներսէ՛ Վարդապետ Ալոյեանի քարոզը՝ նուիրուած հանգուցեալ Բարսեղ Ծայրագոյն Վարդապետ Գալէմտէրեանի յիշատակին 138
- Յօդուածագիրներու ուշադրութեան 141

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ՇԵՄԻՆ

Նոր տարուան շեմին կանգնած՝ մարդ արարածը բնականաբար կը դառնայ իր անցած ուղիին լուռ վկան ու խոհուն քննադատը: Ժամանակի այս սահմանագիծը սոսկ օրացուցային փոփոխութիւն մը չէ, այլ՝ ներքին հաշուետուութեան, հոգեւոր ինքնաքննութեան եւ նոր յանձնառութիւններու առիթ: Ամէն Նոր տարի իր հետ կը բերէ ոչ միայն յոյսի շունչ մը, այլ նաեւ պատասխանատուութեան զգացում՝ վերագնահատելու մեր ապրածը եւ իմաստաւորելու մեր գալիք քայլերը:

Անցնող տարին անգամ մը եւս յիշեցուց, թէ որքան արագ կը փոխուին աշխարհի պայմանները եւ որքան փխրուն են մարդկային հոգիները, երբ անոնք զուրկ են հոգեւոր ամուր հիմքէ: Մարդկութիւնը, հակառակ իր գիտական ու տեխնոլոգիական յառաջընթացին, տակաւին կը մնայ խորապէս կարօտ ներքին խաղաղութեան, բարոյական յստակութեան եւ հոգեւոր ուղղութեան: Ահա թէ ինչու Նոր տարին մեզ կը հրաւիրէ վերագառնալու այն աղբիւրներուն, որոնք դարեր շարունակ սնուցած են մեր ժողովուրդի հոգեւոր դիմագիծը՝ հաւատքը, լեզուն, գրականութիւնը եւ մշակութային յիշողութիւնը:

«Սիոն» կրօնական, գրական եւ բանասիրական ամսագիրը իր հիմնադրութենէն ի վեր կոչուած է ծառայելու այս կենդանի արժէքներուն: Մեր առաքելութիւնը չէ սահմանափակուած միայն գիտելիքի փոխանցումով, այլ նաեւ՝ հոգեւոր զգօնութեան արթնացմամբ եւ ազգային ինքնագիտակցութեան խորացմամբ: Այսօր, երբ արագութեան եւ մակերեսայնութեան մշակոյթը կը սպառնայ խամրեցնել խոր մտածումը, մեր պարտքն է կրկնապատկել մեր ջանքերը՝ պաշտպանելու լրջութիւնը, գիտական բարեխղճութիւնը եւ գրական որակը:

Նոր տարին մեզ կը կանգնեցնէ նաեւ մեր լեզուական ու բանասիրական ժառանգութեան պահպանութեան հրամայականին առջեւ: Հայերէնը սոսկ հաղորդակցութեան միջոց մը չէ, այլ մեր հոգեւոր ինքնութեան տունն ու շունչը: Ամէն գրուած տող, ամէն խնամուած բառ կը դառնայ ծառայութիւն մեր մշակոյթի շարունակութեան: Այս գիտակցութեամբ «Սիոն»-ի էջերը պիտի շարունակեն բաց մնալ գիտական ուսումնասիրութիւններու, լեզուական քննութիւններու եւ բարձրորակ գրական ստեղծագործութիւններու առջեւ:

Միեւնոյն ժամանակ Նոր տարին յիշեցում մըն է, որ հաւատքը չի սահմանափակուիր տեսական մտածումով: Ան կը կոչէ գործի, վերափոխումի եւ կենդանի վկայութեան: Մեր ժամանակները կը պահանջեն հաւատացեալ միտք, բայց նաեւ հաւատքով ներշնչուած գործողութիւն՝ ընտանիքին մէջ, կրթութեան դաշտին մէջ, մշակութային կեանքին մէջ եւ համայնքային ծառայութեան մէջ: Երբ խօսքը միանայ գործին, այն ատեն միայն մեր հոգեւոր ժառանգութիւնը կը շարունակէ կենսունակ մնալ:

Այս Նոր տարուան առիթով կը հրաւիրենք մեր ընթերցողները՝ նորոգելու իրենց մտաւոր հետաքրքրասիրութիւնը, խորացնելու իրենց հոգեւոր կեանքը եւ աւելի գի-

տակից կերպով մասնակցելու մեր մշակութային կերտումին: Թող իւրաքանչիւր ընթերցող զգայ, թէ ինք ալ մասնակիցն է այս մեծ շարունակութեան՝ որուն մէջ անցեալը կը սնուցէ ներկան, իսկ ներկան՝ կը պատրաստէ ապագան:

«Սիոն»-ի խմբագրութիւնը իր երախտագիտութիւնը կը յայտնէ բոլոր այն հեղինակներուն, աշխատակիցներուն եւ հաւատարիմ ընթերցողներուն, որոնք իրենց մտքով, գրչով եւ աղօթքով կեանք կը պարգեւեն մեր ամսագրին: Ձեր վստահութիւնն ու համագործակցութիւնն են այն ուժը, որ կը պահէ մեր ծառայութիւնը կենսունակ եւ պտղաբեր:

Թող գալիք տարին ըլլայ խաղաղութեան ամրապնդման, հոգեւոր վերազարթօնքի եւ ստեղծագործ աշխատանքի տարի: Թող մեր մտքերը լուսաւորուին ճշմարտութեան լոյսով, մեր սրտերը ջերմանան եղբայրասիրութեամբ, եւ մեր ժողովուրդը՝ աշխարհի որ ծագն ալ գտնուի, զգայ իր արմատներու կենարար ուժը:

Այս բոլորին վրայ կը գայ նաեւ մէկ այլ կարեւոր յիշեցում. մեր ժամանակը կը պահանջէ ոչ միայն յիշել անցեալը, այլ նաեւ իմաստուն կերպով կերտել ապագան: Մեր մշակոյթը եւ մեր հաւատքը կը դառնան կենսունակ այն ատեն, երբ անոնք կը շարունակուին ապրիլ կենդանի սերունդներուն մէջ: Ուստի մեր պարտքն է փոխանցել ոչ միայն գիտելիք, այլ նաեւ հոգեւոր արժէքներ, որպէսզի նոր սերունդները զգան իրենց պատկանելիութիւնը մեր հազարամեայ ժառանգութեան:

Թող գալիք տարին նաեւ դառնայ համբերութեան եւ յոյսի տարի: Թող մեր ժողովուրդը, որքան ալ սփռուած աշխարհի շորս ծագերուն մէջ, շարունակէ մնալ միացած իր հոգեւոր արմատներով, իր լեզուով եւ իր մշակութային յիշողութեամբ: Որովհետեւ ազգի իսկական ուժը կը ծնանի ոչ միայն արտաքին պայմաններուն մէջ, այլ՝ իր ներքին հաւատքին, միասնականութեան եւ ստեղծագործ ոգիին մէջ:

Նոր տարուան առիթով «Սիոն»-ի խմբագրութիւնը կը շնորհաւորէ իր բոլոր ընթերցողները՝ մաղթելով Աստուծոյ օրհնութիւնը ձեր ընտանիքներուն, խաղաղութիւն ձեր սրտերուն մէջ եւ անսպառ ներշնչում ձեր ստեղծագործ միտքերուն:

Ն. Վ.



**ԱՄԵՆԱՊԱՏԻ Տ. ՆՈՒՐՀԱՆ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ Ս. ԾՆԵԴԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ
ԲԵԹՂԵՀԷՄԻ ՍՈՒՐԲ ԱՅՐԷՆ**

(19 Յունուար, 2026)

Սիրեցեալ ժողովուրդ Հայոց՝
Որ յԵրուսաղէմ, ի Պաղեստին, ի Յորդանան,
ի Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի:

Մեր Փրկչի՝ Քրիստոսի Սուրբ Ծննդեան յիշատակով, դարձեալ հաւաքուած ենք Բեթղեհէմի այս Սուրբ Այրին մէջ, ուր ծնաւ Փրկիչը աշխարհի: Դարեր շարունակ Սրբոց Յակոբեանց Զինուորեալ Միաբանութիւնը, իր հաւատաւոր զաւակներով եւ հայ ուխտաւորներով, երկրպագութեան եկած է Քրիստոնէական այս սրբավայրին, իր հայրերու հաւատքով եւ հայկական աւանդութեամբ, իր շնորհընկալ հոգիին երզը միացնելու հրեշտակներու աւետիսին՝ անդադրում աւետելով աշխարհին թէ՛ արդարեւ «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ», եւ թէ՛ «Անբաւելին երկնի եւ երկրի ի խանձարուրս պատեցաւ, ոչ մեկնելով ի Հօրէ, ի սուրբ այրին բազմեցաւ»:

Դարեր շարունակ, մարդկային աշխարհը կը լսէ երկու հազար եւ աւելի տարիներ առաջ Բեթղեհէմի երկինքէն իջնող հրեշտակներու աւետող ձայնը՝ «յերկիր խաղաղութիւն ի մարդիկ հաճութիւն»:

Թէեւ ահա երկու հազար եւ աւելի տարիներ եկած ու անցած են այդ անկրկնելի օրերէն, սակայն մեծ յոյսը հոգիներու փրկութեան եւ հոյակապ տեսիլքը խաղաղ ու երջանիկ աշխարհի մը, այսօր ալ բոլոր մարդոց սիրտերուն կը խօսին այնպէս քաղցր, այնպէս թարմ ու այնպէս այժմէական, որ կարծէք նոր, մեր օրերուն բացուած է երկինքը, ճիշդ մեզի համար, մեր յոգնած ու ծարաւ հոգիներուն բերելու պատգամը այդ փրկարար երեկոյին: Ահա թէ ինչու յոյժ երջանիկ ենք ձեզի տալու աւետիքը՝ աւետիսներուն, բարի լուրը մեր Փրկչի՝ Քրիստոսի Ծննդեան եւ Աստուածայայտնութեան:

Եւ որքան խորհրդանշական ու իմաստալից է, որ Քրիստոսի Ծնունդն ու Աստուածայայտնութիւնը կ'աւետուի աշխարհին համայն, Նոր տարուայ սեմին, նոր ժամանակի լուսաբացին, երբ անցեալն ու գալիքը իրար կը հանդիպին: Անցեալն իր հետ բերած բոլոր իրագործումներով, նուաճումներով ու զարգացումներով, բայց, աւա՛ղ նաեւ՝ իր դառնութիւններով, յուսախաբութիւններով ու մեղքերով:

Կանգնած այսօր Նոր տարուայ սեմին, Մենք կ'ողջունենք եւ կ'օրհնենք անցեալի լաւն ու բարին, բայց եւ կը տխրինք ու կը ցաւինք նոյն անցեալի՝ աշխարհին բերած շարիքներուն եւ ողբերգութիւններուն համար:

Կանգնած այսօր Նոր տարուայ սեմին, մեր բոլորի նոր յոյսերով լեցուած հոգիները, վերստին զօրացած ու ներշնչուած Սուրբ Ծննդեան շնորհներով ու երկնառաք պատգամներով, կը վերանորոգեն իրենց ուխտը երկնքի հետ, այն պայծառ հաւատքով, թէ ճշմարիտ աղբիւրը բարեաց, ճշմարիտ ճանապարհը սիրոյ եւ խաղաղութեան, ճշմարիտ գրաւականը մարդոց եւ ազգերու երջանիկ համակեցութեան, սկիզբ կ'առնէ այն գերագոյն գիտակցութենէն, թէ բոլոր մարդիկ անխտիր եղբայրներ են հարազատ, զաւակները միեւնոյն Հայր Աստուծոյ:

Աղօթենք բոլորս եւ մեր միջոցներով, մեր դիրքերէն գործենք չոգնող վճռական եռանդով, որ գալիքը չվարակուի անցեալի մեղքերով, անցեալի խարխափումներով, որ արմատախիլ ըլլան արմատները բոլոր տեսակի շարիքներուն, որոնք կը թունաւորեն հոգիները մարդոց, եւ յարաբերութիւնները միջազգային: Այդպիսի շարիքներ են մեր օրերուն, մանաւանդ ազգամիջեան ատելութիւնները, ընկերային անարդարութիւնները, ազգայնական եսամոլութիւններն ու ցեղապաշտական խտրականութիւնները, անսանձ սպառազինութիւններն ու ոմանց՝ արին թափելու հիւանդագին հոգեվիճակը, որ երբեմն անհաւատալի չափերով կը զարգանայ աշխարհի տարբեր կողմերը, անմեղ մարդոց կեանքը խլող հնաբեկչական անմարդկային արարքներով: Կարելի չէ հաշտուիլ նման շարիքներուն եւ նման ողբերգութիւններուն հետ:

Հայ ժողովուրդի անցեալ դարերու ողբերգական փորձը առաւել հրամայական կը դարձնէ մեզ համար ազգերու համերաշխութիւնը, ազատութեան եւ ազգային ինքնորոշումի սկզբունքներու հիման վրայ: Ինչպէս կրնանք մոռնալ անլուր ողբերգութիւնները, որոնք բարեպաշտ, աշխատասէր հայ ժողովուրդի կեանքի բաժինը եղան դարեր շարունակ եւ մանաւանդ 1915-ի եւ 1916-ի սեւ տարիներուն՝ իբրեւ հետեւանք կայսերապաշտական եսամոլ շահերու եւ անխիղճ բռնակալներու քաղաքականութեան, որը շարունակուեցաւ նաեւ մեր օրերուն յատկապէս 2020-ին, Արցախի մեր քոյրերու եւ եղբայրներու նկատմամբ, որոնք կը մարտնչէին անարդարութեան դէմ՝ նախընտրելով ազատ մեռնիլ, քան ստրուկ ապրել:

Այսօրուան աշխարհը, որ յաճախ կը տառապի անարդարութիւններէ, պատերազմներէ եւ հոգեւոր խաւարէ, աւելի քան երբեք կարիքը ունի Քրիստոսի լոյսին: Բեթղեհէմէն՝ այն Սուրբ Քաղաքէն, ուր Տէրը ծնաւ, կը բարձրացնենք մեր աղօթքը խաղաղութեան համար, որպէսզի ժողովուրդներու սրտերը լեցուին նորածին Մանկան սիրով եւ ազգերու մէջ տիրէ համերաշխութիւն:

Սիրելիներ, թող Սուրբ Ծննդեան այս տօնը մեր բոլորին համար դառնայ նորոգման առիթ՝ մեր հաւատքի, մեր ընտանիքներուն եւ մեր համայնքներուն մէջ: Թող Քրիստոսի Ծնունդը նոր ուժ տայ մեզի՝ պահելու մեր ազգային եւ եկեղեցական արժէքները, ամրապնդելու մեր ինքնութիւնը եւ ապրելու ըստ Աւետարանի պատգամին:

Այս սրբազան առիթով, հայրական սիրով կը շնորհաւորենք համայն հայ ժողովուրդը՝ ի Պաղեստին, ի Յորդանան, ի Հայաստան եւ ի Սփիւռոս աշխարհի: Մեր անխառն եւ հաստատուն սէրը կը յայտնենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, եւ մեր սիրեցեալ Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Թող Նոր տարին եւ Սուրբ Ծնունդը ըլլան խաղաղութեան, առողջութեան, հոգեւոր զարթօնքի եւ յոյսի տարի, եւ թող Բեթղեհէմի նորածին Մանկան օրհնութիւնը հանգչի ձեր տուններուն, ձեր հոգիներուն եւ ձեր կեանքին մէջ:

Թող մարդացեալ Փրկիչը մեր հայրենիքն ու պետութիւնը պահէ անվտանգ, ամբողջ եւ անխռով ի կամս ողորմութեան իւրոյ եւ շնորհօքն անճառելի մարդեղութեանն իւրոյ. ամէն:

Շնորհաւոր Նոր տարի եւ Սուրբ Ծնունդ:

**Ձեզ եւ Մեզ Մեծ Աւետիս,
Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ**

ՔԱՐՈՉԽՕՍԱԿԱՆ

**ԱՄԵՆԱՊԱՏԻԻ Տ. ՆՈՒՐՀԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ
ԲԱՅՄԱՆ ԽՕՍՔԸ՝ ԱԻՍՏՐԻՈՅ ՍԷՆԹ ՓԵՈԼԹԸՆ
ՔԱՂԱՔԻՆ ՄԷՋ ԿԱՅԱՑԱԾ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ
ԺՈՂՈՎԻՆ
(17 Փետրուար, 2026)**

Վեհափառ Տէր,
Ամենապատիւ Պատիրարք եղբայր,
Գերաշնորհ եղբայրներ,

Վերջին ամիսներուն Հայց. Եկեղեցւոյ նաւը կ'ալեկոծուի խռովայոյզ քամիներէ, որոնք անհանգստութիւն, շփոթ եւ պառակտում առաջ բերած են մեր ազգային եւ եկեղեցական կեանքին մէջ: Եպիսկոպոսաց ժողովը, որպէս Եկեղեցւոյ բարձրագոյն հոգեւոր մարմին, կոչուած է ընդհանուր եղբայրական մթողորտի մէջ քննարկելու եւ լուծումներ գտնելու առաջացած հարցերուն, որպէսզի վերականգնուի ներքին համերաշխութիւնը եւ ի Քրիստոս սիրոյ միութիւնը:

Նախ ակնյայտ իրողութիւն է, որ Եպիսկոպոսաց ժողովը հայրենի սահմաններէն դուրս գումարելը պայմանաւորուած է Հայաստանի կառավարութեան կողմէ եկեղեցւոյ ներքին կեանքին եւ գործերուն միջամտութեամբ: Այսօր այն հոգեւորականները, որոնք չեն համագործակցեր Հայաստանի կառավարութեան հետ եւ չեն միանար իրենց կողմէ ստեղծուած եւ ուղղորդուող այսպէս կոչուած «Բարենորոգութեան շարժման», կ'ենթարկուին քաղաքական ճնշումներու եւ հետապնդումներու՝ անթաքոյց կերպով թիրախաւորելով Վեհափառ Հայրապետի անձը եւ միակ նպատակ ունենալով անոր գահընկեցութիւնը: Այս գլխաւոր նպատակին հասնելու համար անոնք չեն խնայեր ո՛չ ջանք, ո՛չ ալ պետական միջոց: Խնամքով կը ծածկեն իրենց համակիր եկեղեցականներու յայտնի եւ ծածուկ մեղքերը, մինչդեռ նոյն մարդկային տկարութիւններուն ենթակայ, բայց ոչ համակիր եկեղեցականներու կեանքին գաղտնիքները երեւան բերելով՝ զանոնք կ'ամբաստանեն իբրեւ ուխտադրուժներ, օտարերկրեայ լրտեսներ եւ քաղաքական կեանքին միջամուխներ:

Յաւ ի սիրտ, հալածանքի եւ փորձութեան այս պահուն կարգ մը բարձրաստիճան եկեղեցականներ, արիաբար խօսելու եւ գործելու փոխարէն, կը կերպարանաւորուին իբրեւ եկեղեցւոյ ներքին խնդիրներով մտահոգ բարենորոգիչներ, մինչ այդ դիրքաւորումը ակնյայտ ինքնախաբեութիւն է եւ եկեղեցւոյ շահերուն փոխարէն սեփական շահը խորհելու եսապաշտութիւն: Ի հարկէ, այսպիսի կեցուածքը մեր «դիւանագէտ եկեղեցականները» կ'արդարացնեն ներկայ եկեղեցահալած կառավարութեան հետ ուղիղ հակասութեան մէջ չմտնելու զգուշաւորութեամբ, բայց առանց թերեւս անդրադառնալու, թէ այսպիսի երկդիմի եւ անվճռական դիրքաւորումը, փորձութեան այս ծանր ժամուն, Վեհափառ Հայրապետը վտանգի մէջ առանձին ձգել կը նշանակէ:

Իսկ ի՞նչ կը պահանջուի մեզմէ, կամ ո՞րն է այս պահու իսկական մարտահրաւէրը: Այս պահու բուն, եւ ոչ կարծեցեալ, մարտահրաւէրը եկեղեցւոյ անկախութիւնն ու ինքնավարութիւնը պաշտպանելն է, որ առաջին հերթին եպիսկոպոսաց դասի պարտաւորութիւնն է, եւ ապա միայն՝ աւելի խոնարհ դասերու պարտականութիւնը: Եկեղեցւոյ գլուխը պաշտպանելով՝ պաշտպանուած կ'ըլլայ եկեղեցւոյ նուիրապետական ողջ կառոյցը: Իսկ հակառակ պարագային, արտաքին ճնշման տակ քաղաքական իշխանութեան պահանջներուն տուրք տալը կը նշանակէ եկեղեցւոյ անկախութիւնն ու ինքնավարութիւնը զիջիլ, սեփական ժողովրդը հայրաբար խրատելու եւ քրիստոնէաբար կրթելու ազատութիւնը կորսնցնել, ճշմարտութեան կողմը ցոյց տալու եւ հայրենիքին սպառնացող վտանգներու պարագային զգաստացուցիչ խօսք հնչեցնելու իրաւունքէն զրկուիլ:

Միրելի եղբայրներ, եկեղեցին ազատ է եւ կոչուած է որեւէ հարցի վերաբերեալ բարոյական եւ հոգեւոր տեսակէտ արտայայտելու: Մի՛ խաբուիք անոնցմէ, որոնք ճշմարիտ խօսքը կը մեկնաբանեն իբրեւ քաղաքական գնահատական կամ քաղաքական գործերու մէջ միջամտութիւն: Հոգեւորական ու ամէն տեսակ ծառայողական պատասխանատուութիւններէ անդին, ճշմարիտ եկեղեցականի առաջին պարտաւորութիւնն է ճշմարտութիւնը ապրիլ եւ ճշմարտութիւնը խօսիլ, որքան ալ այդ ուղեկցուի հալածանքներով: Եկեղեցականը պարտաւոր է Աստուծոյ բերանը ըլլալ եւ բարին՝ բարի, իսկ չարը՝ չար կոչել: Հոգ չէ, թէ շատեր շուգեան լսել ճշմարտութեան ձայնը. սակայն Քրիստոսի բանաւոր հօտը կ'ուզէ լսել զայն եւ կը սպասէ անոր, ինչպէս մեր Տէրը կ'ըսէ. «Ոչխարք իմ ձայնի իմում լսեն, եւ ես ճանաչեմ զնոսա եւ զկնի իմ գան»: Եկեղեցականը պարտաւոր է իրեն պատասխանատու զգալ Եկեղեցւոյ ապագային համար, այլ ոչ թէ՛ սեփական շահը վերադասելով Եկեղեցիին սպառնացող վտանգէն, նախընտրել անձնական անվտանգութիւնն ու ընդառաջ երթալ օտար ուժերու առաջարկներուն: Եկեղեցականը պարտաւոր է դատախազ ըլլալ սեփական մեղքերուն հանդէպ, այլ ոչ թէ եղբօր գայթակմանը վրայ ըլլալ դատաւոր: Ան պարտաւոր է նախընտրել առժամեայ նեղութիւնը, քան թէ՛ յաւիտենական նախատինքը...

Ահաւասիկ բարենորոգութեան ճանապարհը, որ կախուած է իւրաքանչիւրիս ընտրութենէն: Բարեկարգումը նախ սեփական անձի ճանապարհով կ'անցնի. բաժակի ներսը մաքրելով՝ դուրսն ալ մաքուր կ'ըլլայ, մեր Տիրոջ խօսքի համաձայն:

Սակայն ներկայ կառավարութիւնը, իշխանութեան եկած ըլլալով յեղափոխական ճանապարհով, նոյն ոգին ու մտայնութիւնը կը ներարկէ եկեղեցականներու մէջ, իսկ մեր կարգ մը եկեղեցականներ, տուրք տալով այդ ոգիին, չեն անդրադառնար, թէ կեղծիքի ոգին է, որ ընդունած են, եւ ոչ թէ ճշմարտութեան: Ահա թէ ինչու կը խռովեն եկեղեցւոյ կեանքը եւ կը պառակտեն հաւատացեալներու շարքերը:

Դուրսէն թելադրուող «Եկեղեցւոյ բարեկարգութեան» կեղծ կարգախօսը այս պահու հրամայականը չէ: Այսօրուան իրական հրամայականը մէկն է՝ Հայաստանի անվտանգութեան եւ Հայոց ինքնութեան պահպանումը: Եւ այդ սրբազան առաքելութեան մէջ անփոխարինելի եւ վճռորոշ է Հայոց Սուրբ Եկեղեցւոյ դերը:

Այս գիտակցութեամբ է, որ մենք այսօր կոչուած ենք միահամուռ, միակամ եւ վրճուական վերահաստատելու մեր հաւատարմութեան ուխտը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդէպ՝ ի գլուխ ունենալով Վեհափառ Հայրապետը: Քանզի երբ կը թիրախաւորուի անոր անձը, կը թիրախաւորուի ամբողջ Հայոց Եկեղեցին. եւ երբ կը պաշտպանենք

զայն, կը պաշտպանենք Եկեղեցւոյ անկախութիւնը, արժանապատուութիւնը եւ ինքնավարութիւնը:

Թէպէտ ժամանակները ծանր են, եւ փորձութիւնները՝ բազում, մենք այստեղ ենք յոյսով, հաւատքով եւ վստահութեամբ: Եկեղեցին միայն մարդկային կառույց չէ. անոր գլուխը Քրիստոս է, եւ Ան երբեք չէ լքած Իր Եկեղեցին: Հետեւաբար, եթէ հաւատարմօրէն մնանք մեր կոչման մէջ, այս ծանր շրջանը կրնայ վերածուիլ հոգեւոր մաքրութեան, նորոգութեան եւ կենդանի վկայութեան ժամանակաշրջանի:

Թող Տէրը լուսաւորէ մեր միտքերը, զօրացնէ մեր սրտերը եւ ուղղէ մեր քայլերը, որպէսզի մեր ծառայութիւնը ըլլայ ի փառս Իր սուրբ անուան, ի շինութիւն եւ ի հաստատութիւն Հայոց Սուրբ Եկեղեցւոյ եւ ի փրկութիւն մեր ժողովուրդին:

ՄԵԾԵՐԸ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԱՍԻՆ

Ողջ օրգանական բնութիւնը կը վկայէ իմաստուն նպատակի գոյութեան մասին եւ կը դիտուի իբրեւ բարձրագոյն բանականութեան արդիւնք... Այսպիսով՝ մարդը կանչուած է տեսնելու, քննութեան առնելու իր բարձրագոյն ընդունակութիւնը՝ մտքի ընդունակութիւնը՝ համապատասխանութեան մէջ ըլլալով էութեան մը հետ, Որուն պարտական է իր գոյութեան համար:

ՅԵՆՍ ՅԱԿՈԲ ԲԵՐՅԵԼԻՈՒՍ

Աշխարհի մէջ գոյութիւն ունեցող համակարգերու կատարելութիւնը, մանաւանդ կենդանիներու զարմանալի յատկութիւններն ու ընդունակութիւնները, ինչպէս նաեւ անոնց կազմութեան հիացմունքի արժանի ներդաշնակութիւնը, դարեր շարունակ պատճառ եղած են, որպէսզի մտածողները ընդունին Աստուծոյ գոյութիւնը:

ՌՈՊԷՐԹ ՊՈՅԼ

Երկնային մարմիններու բազմաքանակութիւնը, գեղեցկութիւնը, կարգաւորութիւնը, բոյսերու եւ կենդանիներու կատարեալ կերտուածքը, ինչպէս նաեւ բնութեան այլեւայլ երեւոյթները խելամիտ, անկանխակալ դիտորդը արդարացիօրէն կը յանգեցնեն Բարձր Գոյի՝ ամենազօր, արդար, բարի Արարչի գոյութեան:

ՌՈՊԷՐԹ ԲՐՈՈՒՆ

Գիտութիւնը Աստուծոյ մասին հարցը կատարելապէս բաց ձգած է: Անոնք, որոնք կ'ըսեն, թէ գիտութիւններու ուսումնասիրութիւնը մարդը ամբողջ կը դարձնէ, յիրաւի՝ ինչ-որ առումով ծիծաղելի են:

ՄԱՔՍ ԲՈՌՆ

ՔԱՐՈՁԽՕՍԱԿԱՆ

**ԳԷՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆԻ ՔԱՐՈՁԸ՝
ԽՕՍՈՒԱԾ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՅ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ,
ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՅ ՋՕՐԱՎԱՐԱՅ ՏՕՆԻՆ
(19 Փետրուար, 2026)**

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն:

Սիրելի՛ եղբայրներ եւ քոյրեր ի Քրիստոս,

Երուսաղէմի մեր Առաքելական Սուրբ Աթոռը այսօր կը տօնախմբէ Վարդանանց հերոսամարտը, որ տեղի ունեցաւ 451 թուականին՝ Աւարայրի դաշտին մէջ, Տղմուտ գետի ափին: Այդ օրը մեր ժողովուրդը միայն զէնք չբարձրացուց, այլեւ վկայեց իր հաւատքը՝ իր արիւնով կնքելով Քրիստոսի հետ իր ուխտը:

Մեր ազգային եւ քրիստոնէական ինքնութիւնը խարսխուած է այդ սրբազան պայքարին վրայ: Աւարայրի ճակատամարտը լոկ պատմական դէպք մը չէ, այլ մեր հաւաքական հաւատքի կենդանի վկայութիւնը, վկայութիւն թէ՛ խօսքով, երբ պարսից Յագկերտ Բ. արքային ուղղուած պատասխան նամակին մէջ մեր հայրերը համարձակօրէն հռչակեցին հաւատքի ճշմարտութիւնը, եւ թէ՛ գործով, երբ Աւարայրի դաշտին մէջ մտան անհաւասար պատերազմի մը մէջ՝ ընդդէմ հեթանոսական ահուկի բազմութեան: Անոնք միայն սրով չէին զինուած, այլեւ՝ Աստուծոյ հանդէպ անսասան վստահութեամբ: Առանց այդ վստահութեան անկարելի պիտի ըլլար այն յաղթանակը, զոր այսօր կը խոստովանինք:

Այո՛, յաղթանակ: Թէեւ շատեր կը հարցնեն՝ ինչպէ՞ս կարելի է յաղթանակ կոչել պատերազմ մը, ուր մեր զօրքը նահատակուեցաւ: Սակայն եկէք խորապէս ըմբռնենք. անոնք կը պայքարէին քրիստոնէայ մնալու համար՝ եւ մնացին: Կը պայքարէին մեր Տէր Յիսուս Քրիստոսը պաշտելու եւ ոչ թէ օտար աստուածներու խոնարհելու համար, եւ հասան իրենց նպատակին: Կը պայքարէին իրենց հոգիի ազատութիւնը եւ փրկութիւնը չկորսնցնելու համար, եւ ահաւասիկ՝ մեր ազգը կենդանի է ի Քրիստոս եւ կը պաշտէ ճշմարիտ Աստուծոյ: Արդեօք ասիկա՞ չէ իսկական յաղթանակը:

Վարդանանց պատմութիւնը շատ նման է առաջին քրիստոնէական նահատակներու պատմութեան: Անոնք մեռան, բայց ապրեցան. կորսնցուցին մարմինը, բայց շահեցան հոգին. զրկուեցան աշխարհային փառքէն, բայց ստացան երկնային պսակը: Ահա՛ բարոյական յաղթանակը, որով կնքուեցաւ Աւարայրի պատերազմը:

Այսօր, դժբախտաբար, յաճախ կը ծաղրուի «բարոյական յաղթանակ» արտայայտութիւնը: Կ'ըսեն՝ մեզի իրական, շօշափելի յաղթանակներ են պէտք, ոչ թէ բարոյական: Սակայն չեն գիտակցիր, թէ բարոյականն է իրականը եւ կեանքի հիմքը: Երբ բարոյապէս յաղթած ես, պահած ես քու հոգեւոր ազատութիւնդ: Թէեւ կրնաս աշխարհադաքական դիրք կորսնցնել եւ նիւթապէս տկարանալ, բայց եթէ պահած ես ճշմարտութիւնը եւ հաւատարիմ մնացած ես Աստուծոյ, կ'ապրիս որպէս արժանապատիւ ժողո-

վուրդ՝ որպէս հոգեւոր առաքելութիւն ունեցող ազգ:

Ի՞նչ արժէք ունի սոսկ ֆիզիքական գոյութիւնը, եթէ ազգը դադրած է ճշմարտութեան կրող ըլլալէ: Ի՞նչ օգուտ ունի հզօր պետութիւն մը ունենալը, եթէ կորսուած է անոր հոգեւոր առաքելութիւնը: Ազգի իրական մեծութիւնը տարածքով, հարստութեամբ կամ զօրութեամբ չի շահուիր, այլ՝ իր հոգեւոր արժէքներով եւ Աստուծոյ հանդէպ հաւատարմութեամբ: Եթէ անգամ բազմամարդ ու հզօր երկրի զաւակներ ըլլայինք, բայց չճանչնայինք Քրիստոսը, ի՞նչ պիտի աւելցնէր այդ մեծութիւնը մեր փրկութեան: Մենք պիտի ծնէինք որպէս միլիառէն մէկը եւ մեռնէինք իբրեւ միլիառէն մէկը՝ առանց Փրկիչի եւ առանց յոյսի:

Երբ խորապէս գիտակցինք մեր ազգի իրական արժէքը, այլեւս մեզ չենք համեմատեր այլ մեծ կամ զարգացած ազգերու հետ՝ խորշելով մեր ներկայ տկար վիճակէն, հայրենիքի փոքր շահերէն կամ նիւթական սակաւութենէն: Փոխարէնը՝ գոհութեամբ պիտի փառաբանենք մեր Քրիստոս Աստուածը, որ մեզ արժանացուց հայ ծնունդու պատուին: Ժողովուրդի մը զաւակներ ենք, որուն նախնիները դարեր շարունակ կրած են իրենց խաչը, հաւատարիմ մնացած են քրիստոնէական հաւատքին, աշխարհային մեծութեան փոխարէն փնտռած են երկնայինը, նիւթական գանձերու փոխարէն՝ հոգեւոր գանձերը:

Այս ճշմարտութիւնը կրնան խորապէս ըմբռնել միայն անոնք, որոնք կը սիրեն Քրիստոսը եւ իրենց կեանքը կ'ապրին հոգու փրկութեան ճանապարհին մէջ: Իսկ անոնք, որոնք քրիստոնէայ են միայն անունով եւ ոչ՝ հոգիով ու գործով, Վարդանանց պատերազմը կը մնայ լոկ պատմական յիշատակ մը, գուցէ նաեւ՝ տարակուսելի յաղթանակ մը:

Սիրելիներ, Վարդանանց ոգին մեզ կը յիշեցնէ, թէ կոշուած ենք ոչ միայն գոյատեւելու, այլեւ՝ հաւատարիմ մնալու. ոչ միայն ապրելու, այլեւ՝ ճշմարտութեամբ ապրելու: Եթէ այս գիտակցութեամբ մօտենանք մեր պատմութեան, ապա Վարդանանց յիշատակը չի մնայ անցեալի մէջ, այլ կ'ապրի մեր սրտերուն եւ մեր կեանքին մէջ: Անոնք դարեդար կը շարունակեն մնալ մեր բարեխօսները եւ մեր ոգեշնչման աղբիւրը:

Անոնց կեանքի բանաձեւը այս էր. «Իմացեալ մահը՝ անմահութիւն է, իսկ ոչ իմացեալ մահը՝ իրական մահ»: Իմացեալ մահուամբ մարդը կը շահի յաւիտենական կեանքը, իսկ անգիտակից մահուամբ կը զրկուի թէ՛ այս կեանքէն, եւ թէ՛ յաւիտենականէն: Սակայն իմացեալ մահուան գիտակցութիւնը կը ձեւաւորուի իմացեալ կեանք ապրելով:

Հաւատացեալը կ'ապրի կեանքի եւ մահուան իրականութեան միջեւ՝ իր կեանքը իմաստաւորելով մահուան ընդառաջ երթալու պատրաստութեամբ եւ պատասխանատուութեամբ: Ան գիտէ, որ այս կեանքը մսխելու համար չէ տրուած, եւ չի առաջնորդւիր «կեր, խմէ եւ ուրախ եղիր» կարգախօսով, այլ կը յիշէ Տիրոջ խօսքը. «Եթէ քչին մէջ հաւատարիմ չեղաք, մեծը ձեզի ո՞վ պիտի վստահէ»: Այստեղ «քիչը» այս կեանքն է՝ իր օրերու սակաւութեամբ, իսկ «մեծը»՝ յաւիտենականը՝ իր անսահմանութեամբ:

Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Ինծի համար կեանքը Քրիստոս է, իսկ մեռնիլը՝ շահ» (Փիլ. 1:21): Այս խօսքերը կը վերաբերին անոնց, որոնք այս կեանքը Քրիստոսով կ'ապրին եւ առանց Անոր կեանքը չեն պատկերացներ: Վարդանանք նոյնպէս իրենց եւ մեր ազգի կեանքը չէին պատկերացներ առանց Քրիստոսի. այդ պատճառով ալ մեռնիլը շահ կը համարէին, քան ուրացութեամբ ապրիլը:

Պարսից շահին ուղղուած նամակին մէջ հայ նախարարներն ու հոգեւորականները կը վկայէին. պատրաստ ենք մեր կեանքը տալու մեր Փրկչին համար, որովհետեւ, մահկանացու ըլլալով, մեծ բան մը ըրած չենք ըլլար, եթէ մեր կեանքը տանք Անմահին համար. եւ եթէ անմահ ալ ըլլայինք, դարձեալ արժան էր, որ մեր կեանքը շինայէինք Անոր համար, քանի որ Ան ալ անմահ էր եւ Իր անմահութիւնը շինայեց մեզ համար»:

Ահա՛ Աստուծոյ հանդէպ իրական սէրը, որ պայման չի ճանչնար, շահ չի փնտռեր, այլ միայն կը ձգտի չկորսնցնել իր Սիրելին: Մի՞թէ ասիկա չէ առաջին եւ մեծագոյն պատուիրանը՝ սիրել Տէր Աստուծոյ՝ ամբողջ սրտով, ամբողջ հոգով, ամբողջ մտքով եւ ամբողջ զօրութեամբ:

Երբ Աստուած կը փորձէ մեր սէրը, մեզ կը կանգնեցնէ Իր եւ աշխարհի միջեւ ընտրութեան առջեւ: Եթէ իրապէս կը սիրենք Իրեն, մեր ընտրութիւնը միշտ Աստուծոյ վրայ կը կենայ, նոյնիսկ եթէ այդ ընտրութիւնը մեր կեանքը արժենայ: Քանզի, եթէ կորսնցընենք ամէն ինչ եւ չկորսնցնենք Աստուծոյ, ոչինչ կորսնցուցած կ'ըլլանք. բայց եթէ կորսընցնենք Աստուծոյ, ամէն ինչ կորսնցուցած կ'ըլլանք:

Ի պարծանս մեր ժողովուրդին՝ պէտք է ըսել, որ ան երբեք սակարկութեան չգնաց հաւատքի հարցերուն մէջ: Կորսնցուց քաղաքական ազատութիւնը, բայց չկորսնցուց հոգու ազատութիւնը: Իսկ հոգու ազատութիւնը ամենամեծ գանձն է, որովհետեւ հաւատքէ հաւատք անցնելը հոգու գերութիւն է եւ ոչ թէ ազգի փրկութիւն:

Վարդանանք եւ Ղեւոնդեանք Աւարայրի դաշտին մէջ կռուեցան, որպէսզի հեթանոսական խաւարէն դուրս գալէ ետք դարձեալ նոյն խաւարը չվերադառնան, ճշմարիտ հաւատքը ընդունելէ ետք դարձեալ կռապաշտութեան չդառնան, Աստուծոյ որդեգիրներ ըլլալէ ետք մեղքի ծառաներ չդառնան: Անոնք հաւատքի փորձութիւնը յաղթահարեցին անձնագոհութեամբ:

Եւ մենք այսօր ճշմարիտ զԱստուած չէինք ճանչնար, եթէ անոնք չդիմանային հալածանքներուն եւ քաղաքական ճնշման եւ բռնութեան ներքոյ չպաշտպանէին իրենց եկեղեցին եւ հաւատքը: Անոնց ճիշդ ընտրութեան, պայքարի եւ զոհողութեան շնորհիւ է, որ այսօր մենք հոգեպէս ազատ ենք եւ ազգովին քրիստոնեայ:

Թող Տէրը մեզ ամրացնէ նոյն հաւատքով, նոյն արիութեամբ եւ նոյն աննկուն կամքով, առ Աստուած եւ առ հայրենին ճշմարիտ սիրով, որով ամրացուց Վարդան Մամիկոնեանը եւ իր քաջամարտիկները, որպէսզի մենք եւս մեր ժամանակներու փորձութիւններուն մէջ, ըլլանք արժանի զաւակները մեր Սուրբ Եկեղեցւոյ եւ սուրբ նախնիներուն: Եւ արժանաւորապէս փառաւորենք Ամենասուրբ Երրորդութիւնը՝ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին՝ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ՔԱՐՈՋԽՕՍԱԿԱՆ

**ՎԱՋԳԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼԷՔԵԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝
ԽՕՍՈՒԱԾ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՅ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ,
ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻՆ
(22 Փետրուար, 2026)**

Յանուն Հօր Եւ Որդւոյ Եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Միրելինե՛ր, այսօր Բուն Բարեկենդան է, որով Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին կ'ազդարարէ Մեծ Պահճի քառասունութօրեայ շրջանի սկիզբը, որ պիտի անցընենք պահեցողութեամբ, Աստուածաշունչի ընթերցանութեամբ եւ աղօթքներով:

Բուն բարեկենդան կը նշանակէ բուն ուրախութեան եւ երջանկութեան խորհուրդը, որ կը յիշեցնէ մեր նախածնողներուն՝ Ադամի եւ Եւայի դրախտային, երջանիկ կեանքը:

Երբ մարդը կորսնցնէ իր երջանկութիւնը, իր ներքին հանգստութիւնն ու խաղաղութիւնը, իր ամբողջ կեանքի ընթացքին կը փնտռէ այդ բուն երջանկութիւնը: Մեր ամէնօրեայ նպատակն է երջանկութիւն գտնել՝ սիրոյ մէջ, ընտանեկան ջերմութեան մէջ, աշխատանքի մէջ, եւ նոյնիսկ մեր ամենասիրած գործին մէջ կ'ուզենք խաղաղութիւն եւ երջանկութիւն ունենալ:

Յաւօք, այսօրուայ մարդը չունի այն երջանկութիւնը, որուն համար ստեղծուած էր: Մեղքի պատճառով մարդ արարածը ամէն օր կը կորսնցնէ այն ամենաթանկը, ինչ որ ունի: Այսօր մարդը չի գնահատեր իր ունեցածը, ինչպէս մեր նախածնողները չգնահատեցին իրենց ունեցած յաւիտենական կեանքը եւ դրախտային երանութիւնը:

Աստուած մարդը դրախտին մէջ դրած եւ ըսած էր. «Աճեցէք, բազմացէք, երկիրը լեցուցէք եւ տիրեցէք անոր»: Սակայն անոնք չգնահատեցին Աստուծոյ ներկայութիւնը, այն մեծ շնորհքը, որ ունէին Տիրոջ հետ հաղորդակցելու, խօսելու եւ կիսուելու: Դրախտին մէջ ըլլալով չբաւարարուեցան իրենց տրուած բարիքներով եւ համարձակեցան մեղանչել՝ կորսնցնելով իրենց հոգեւոր եւ ֆիզիքական երջանկութիւնը:

Թէեւ ժամանակները կը փոխուին, կեանքը կը զարգանայ, գիտութիւնը կ'առաջադիմէ, եւ այսօր շատ բաներ մարդուն համար աւելի դիւրին ու հասանելի դարձած են, սակայն մարդը նորէն երջանիկ չէ:

Աշխարհի մէջ նոյնիսկ կայ պետութիւն մը, ուր գոյութիւն ունի Երջանկութեան նախարարութիւն, որ կը փորձէ իր քաղաքացիները երջանկացնել: Սակայն հարցը կը մնայ նոյնը. ո՞րն է մարդուն իրական երջանկութիւնը:

Այս աշխարհին մէջ ամբողջական երջանկութիւն ունենալու մասին խօսիլը դժուար է, որովհետեւ մարդը չի կրնար լիովին երջանիկ ըլլալ, երբ կը տեսնէ իր կողքին տառապող մարդիկ, պատերազմէն հաշմանդամ զինուորներ, հազարաւոր նահատակուած երիտասարդներ, հիւանդութիւններ, կորուստներ եւ դժբախտութիւններ:

Մեզմէ իւրաքանչիւրը իր պատկերացումով կը սահմանէ երջանկութիւնը: Բայց բուն երջանկութիւնը այլ տեղ է, սիրելիներ: Ամէն օր կը փորձենք հասնիլ անոր, սակայն բազմաթիւ դժուարութիւններու կը հանդիպինք: Շատեր կը կարծեն, թէ երջանկութիւնը ուրիշ երկիրներու մէջ է՝ օրինակ Ամերիկայի մէջ, ուր մեծ գումար աշխատելով, լաւ տուն կամ ինքնաշարժ ունենալով պիտի երջանիկ ըլլան: Սակայն այդ բոլորը կարելի է ունենալ աշխարհի տարբեր վայրերու մէջ եւ նորէն երջանիկ չըլլալ: Նոյնիսկ ընտանիք կազմելը, կին եւ երեխաներ ունենալը ինքնին դեռ երջանկութեան ամբողջական պատկերը չէ:

Աստուած մարդը անմահութեան համար ստեղծեց, բայց մարդը չգնահատեց այդ շնորհքը եւ մահկանացու դարձաւ: Մարդուն կեանքը, որ սկզբնապէս հազար տարի էր սահմանուած, աստիճանաբար կրճատուեցաւ եւ այսօր դարձած է մօտաւորապէս 70-90 տարի: Այս կարճ ակնթարթի ընթացքին մարդը շատ անգամ չի հասցներ զգալ իրական երջանկութիւնը, այլ միայն անոր փոքրիկ փշրանքները:

Շատեր կը ցանկան այցելել հեռաւոր երկրի մը տեսարժան եւ գեղեցիկ վայրեր՝ կարծելով, թէ այդ ալ երջանկութեան աղբիւր մըն է: Սակայն այդ զգացումը կու գայ ու կ'անցնի, եւ մարդը կը հասկնայ, որ բուն երջանկութիւնը ուրիշ տեղ է՝ Քրիստոսի հետ քալելու մէջ:

Երբ մարդը կ'ուզէ բժիշկ դառնալ, անոր նպատակը միայն մարդու մարմինը բուժելն է: Եթէ միայն այդ է նպատակը, ապա ան անկասկած կը ձախողի, որովհետեւ մարդը միայն մարմին չէ, այլ նաեւ հոգի է: Եթէ բժիշկը միայն մարմինը բուժէ, բայց անուշադիր ըլլայ մարդուն հոգիին՝ կրնայ պատահիլ, որ մարմինը առողջացնէ, սակայն հոգին վիրաւորէ:

Նոյնպէս, երբ մէկը զինուորական է եւ սահման կը պաշտպանէ, ան միայն երկրի սահմանները չէ, որ կը պաշտպանէ: Ան նաեւ պարտաւոր է պաշտպանել իրեն վստահուած զինուորներուն հոգեւոր սահմանները, որպէսզի այդ զինուորը չատէ այն սահմանը, ուր ինք երկու տարի կոշուած է ծառայելու, այլ սիրով ու գիտակցութեամբ պաշտպանէ իր հայրենիքը:

Եւ այսպէս կրնանք շարունակել օրինակները, սիրելիներ: Մարդուն իսկական կոշումը միայն արտաքին պարտականութիւններ կատարելը չէ, այլ նաեւ հոգեւոր պատասխանատուութիւն կրելը: Միայն այդ ժամանակ մարդը կրնայ զգալ այն երջանկութիւնը, որ Աստուած նախատեսած է իրեն համար:

Բոլոր ժամանակներու սրբակենցաղ մարդիկ այդ բուն երջանկութիւնը զգացած են այն ատեն, երբ իրենց կեանքը կապած են Աստուծոյ հետ եւ հասկցած են, որ այս է մարդուն կեանքի իրական երջանկութիւնը:

Երբ Շաբաթ երեկոյեան խորանի վարագոյրը փակուեցաւ, այն մեզի յիշեցուց, որ մեղքի պատճառով մարդը դրախտէն դուրս դրուեցաւ, եւ երկինք տանող ճանապարհը փակուեցաւ անոր համար մինչեւ որ ապաշխարէ:

Հետեւաբար Մեծ Պահքը ապաշխարութեան հոգեւոր ճամբորդութիւն է, որ մեզ կ'առաջնորդէ դէպի խաղաղ նաւահանգիստ եւ Քրիստոսի Յարութեամբ՝ դէպի յաւիտենական կեանք:

Սիրելիներ, մեղքը միայն սպանութիւնը, գողութիւնը կամ շնութիւնը չէ: Պօղոս Առաքեալ իր Հռոմեացիներուն ուղղուած նամակին մէջ գեղեցիկ կերպով կը յիշեցնէ

նաեւ այլ մեղքեր՝ երբ մենք կը դատենք մեր եղբայրը, կը գայթակղեցնենք զայն կամ կը վիրաւորենք անոր արժանապատուութիւնը: «Ով որ կ'ուտէ,- կ'ըսէ Պօղոս Առաքեալ,- թող չուտողը չդատէ, չուտողներն ալ թող ուտողները չդատեն»:

Եզնիկ Կողբացին ալ կ'ըսէ. «Մեր բերանները յոգնեցան պահք պահելէն, մեր շուրթերը ցաւեցան սաղմոսներ ըսելէն, բայց չդադրեցան իրարու միս ուտելէն»: Այս է ամենամեծ վտանգը՝ երբ կը բամբասենք, կը նախանձինք, կ'ատենք եւ կը վիրաւորենք իրարու, դրամասիրութեան, պաշտօնամօլութեան, փառասիրութեան ետեւէ իյնալով իրարու միս կ'ուտենք, որն անընդունելի է Աստուծոյ համար: Պօղոս Առաքեալ դարձեալ կ'ըսէ. «Աստուածապաշտութեան կերպարանք ունինք, բայց անոր զօրութենէն հեռու ենք»: Երբ մարդը չունի այդ աստուածապաշտութեան կենդանի զօրութիւնը, ան հեռու կը գտնուի ճշմարտութենէն եւ չի կրնար ճշմարիտ երջանկութիւն բերել ո՛չ իրեն, ո՛չ ալ ուրիշներուն:

Փարիսեցիները լաւ գիտէին Սուրբ Գիրքը, օրէնքները եւ կը սորվեցնէին ժողովուրդին: Սակայն ո՛չ իրենք էին երջանիկ, ո՛չ ալ կ'արտօնէին, որ ուրիշները երջանիկ ըլլան: Այդ պատճառով ալ Յիսուս կը յանդիմանէ զանոնք՝ ըսելով. «Ծովեր ու ցամաքներ կը շրջիք մէկ հոգի դարձի բերելու համար, եւ երբ զայն դարձի կը բերէք, զայն ձեզմէ կրկնակի աւելի դժոխքի որդի կը դարձնէք»:

Սիրելիներ, մենք ալ կրնանք ամէն օր խօսիլ սիրոյ մասին, աղօթքի մասին, պահեցողութեան մասին, բայց մնալ դատարկ այդ շնորհներէն: Սակայն Յիսուս Քրիստոս մեզի սորվեցուց աղօթքի, պահեցողութեան եւ սիրելու ճշմարիտ ճանապարհը, որով մարդը կրնայ գտնել իր կորսուած երջանկութիւնը:

Շատերու համար երջանկութիւնը հարստութեան մէջ է, ուրիշներու համար՝ իշխանութեան, իսկ ոմանց համար՝ ընտանիք կազմելու մէջ: Սակայն այս բոլորը, նոյնիսկ մեր ամբողջ կեանքը այս աշխարհի մէջ ժամանակաւոր են:

Շատ անգամ մեզի կը թուի, թէ ապրելով կը մեծնանք, բայց իրականութեան մէջ մենք ամէն օր մէկ քայլով կը մօտենանք մահուան եւ այդ մահուան ճանապարհին կրնանք գտնել յաւերժութիւնը՝ Աստուծոյ փնտռելով եւ մեր կեանքը Անոր կապելով:

Այսօր մենք ամէն բան ունինք, փա՛ռք Աստուծոյ: Մեր կեանքին մէջ շատ բաներ կան, սակայն չունինք ամենկարեւորը՝ հոգիի խաղաղութիւնը եւ բուն երջանկութիւնը: Այն մարդը, որուն խիղճը խաղաղ է եւ հոգին հանգիստ է գիշերը պառկելէն առաջ, անիկայ կը ճանչնայ այդ երջանկութեան զգացումը: Ինչպէս Դաւիթ թագաւոր կ'ըսէ. «Երանի այն մարդուն, որուն մեղքերը Տէրը այլեւս մեղք չի համարեր, եւ որուն անօրինութիւնները կը ծածկէ»:

Այս է երջանկութեան առաջին քայլը՝ երբ մարդը իր մեղքերով հանդերձ կը վերադառնայ Աստուծոյ եւ կը հրաւիրուի ապրելու Տիրոջ ներկայութեան մէջ:

Սիրելիներ, վաղ թէ ուշ մեր կեանքը այս աշխարհին վրայ պիտի աւարտի: Մեր մարմինը պիտի յանձնուի հողին, եւ տարիներ ետք մարդիկ նոյնիսկ պիտի մոռնան մեր անունը: Բայց մենք երբեք չենք մոռցուիր Աստուծոյ յիշողութենէն:

Այն երջանկութիւնը, որ մեր նախածնողները չգնահատեցին, մենք կը փորձենք գտնել այսօր: Սակայն այդ ճանապարհին բազում փորձութիւններ եւ գայթակղութիւններ պիտի հանդիպին մեզի, որպէսզի կասկածենք՝ արդեօք ճիշտ է հաւատալ Աստուծոյ եւ յաւիտենական կեանքին այս 21-րդ դարուն:

Այսօր գիտութիւնը կը զարգանայ, նոր բացայայտումներ կը կատարուին, սակայն միեւնոյն ատեն մենք կը տեսնենք նաեւ ուրիշ իրականութիւն մը. շատ մեծահարուստ մարդիկ, որոնք այս աշխարհի բոլոր բարիքները ունին՝ տուներ, հարստութիւն, շքեղ ինքնաշարժեր եւ անթիւ ունեցուածք, բայց նոյն այդ մարդիկ երբեմն կը հասնին այնպիսի դատարկութեան, որ նոյնիսկ իրենց կեանքին վերջ կու տան: Ինչո՞ւ,- պիտի հարցնէք,- որովհետեւ կը հասկնան, որ այդ բոլորը ունենալով անգամ՝ չեն կրցած իրական սիրով ապրիլ: Անոնք կը զգան, որ իրենց ունեցածին մէջ ոչ ոք զիրենք անկեղծօրէն սիրած է, ոչ ոք իրենց համար ի սրտէ մտահոգուած է: Եւ երբ հիւանդութիւն, տկարութիւն կամ դժուարութիւն ունեցած են, այն մարդիկ, որոնք իրենց կողքին կը թուէին ըլլալ, շատ անգամ հեռացած են իրենցմէ:

Այս բոլորին մէջ ճշմարիտ երջանկութիւն չկայ, սիրելիներ:

Յաւօք, մարդը մինչեւ այսօր կը շարունակէ հաւատալ սատանայի այն հին խաբէութեան, թէ մարդը կրնայ Աստուծոյ պէս ըլլալ: Սակայն մարդը երբեք չի կրնար հասնիլ իր Արարչին եւ իր ճշմարիտ երջանկութեան, եթէ չխոնարհի եւ խոնարհութեամբ շտեմնէ իր սեփական մեղքերը:

Շատ անգամ մենք մեր սխալները կը հասկնանք միայն այն ատեն, երբ ինչ-որ բան կը կորսնցնենք: Բայց պէտք չէ, որ մարդը իր կեանքը կորսնցնէ, կամ դժբախտութեան մէջ իյնայ, կամ բանտի մէջ յայտնուի, որպէսզի միայն այն ատեն հասկնայ, թէ ինչքա՞ն մեծ պարգեւ էր կեանքը եւ ինչո՞ւ ինք զայն անիմաստ վատնեց:

Եթէ մեր կեանքի նպատակը մեղքէն ազատագրուիլը եւ դէպի փրկութիւն քալելը չէ, ապա մեր ապրած տարիները եւ նոյնիսկ վայրկեանները իրենց իսկական իմաստը կը կորսնցնեն:

Ճերմակած մազերը դեռ իմաստութեան նշան չեն, եթէ այդ տարիներուն մէջ մարդը չհասկնայ, որ ինք ժամանակաւոր է այս աշխարհին մէջ եւ օր մը պիտի հեռանայ անկէ եւ ի՞նչ պիտի տանի իր հետ:

Այսօր շատ մարդիկ, երբ հիւանդութեան անկողինին մէջ կը գտնուին, պատրաստ են ամէն բան տալու՝ միայն թէ ժամանակը ետ դարձնեն եւ իրենց կեանքը այլ կերպ ապրին: Բայց ժամանակը այլեւս չի վերադառնար:

Ուստի մարդը պէտք է խոնարհութեամբ ըսէ. «Մեղայ քեզ, Տէ՛ր, մեղանչեցի երկնքի եւ Քու աստուածութեան առջեւ»:

Սիրելիներ, Բուն Բարեկենդանի խորհուրդը հէնց այս է՝ մարդը յիշէ իր կորսուած երջանկութիւնը, յիշէ թէ ինչի համար ստեղծուած էր եւ անդրադառնայ, թէ այսօր ինչպիսի վիճակի մէջ կը գտնուի: Եթէ մենք ինքներս մեզ չփոխենք, չենք կրնար ուրիշներուն փոխել:

Դիւրին է ուրիշները մեղադրել, եւ մեր սեփական մեղքերը ուրիշներուն վրայ բեռնել: Բայց այդպէս մարդը չի արդարանար, աւելի լաւը չի դառնար, այլ աւելի կը նըլատանայ Աստուծոյ առջեւ:

Մենք մարդոց կրնանք խաբել, կարելի է նոյնիսկ կաշառելով սուրբ երեւիլ, բայց Աստուած կը տեսնէ մարդուն սիրտը:

Հին ժամանակներուն թագաւորները Կիրակի օրը կ'երթային եկեղեցի, դուրս կու գային եւ աղքատներուն ողորմութիւն կը բաժնէին, եւ ժողովուրդը կը փառաբանէր

զանոնք՝ մոռանալով անոնց կատարած սխալները:

Բայց Յիսուս Քրիստոս կը յիշեցնէ մեզի. «Ով որ զիս մարդոց առջեւ ուրանայ, ես ալ զայն պիտի ուրանամ իմ Հօրս առջեւ, որ երկինքի մէջ է»:

Սիրելիներ, այս օրուան խորհուրդով թող Տէրը մեզի քաջառողջութիւն եւ զօրութիւն պարգեւէ, որպէսզի մեզմէ ոչ մէկը պակսի մինչեւ Տիրոջ Սուրբ Յարութիւնը՝ այս ապաշխարութեան եւ հոգեւոր նորոգութեան ճանապարհին:

Թող մեր պահքը միայն ուտելիքէն հեռու մնալ չըլլայ: Թող մեր աղօթքները միայն շուրթերու շարժում չըլլան, որ մեր բերանները բացուին ու փակուին, բայց մեր սրտերը չաղօթեն, որովհետեւ Աստուած նախ եւ առաջ կը նայի մարդու սրտին:

Աստուած պիտի չնայէ մեր ձեռքերը միայն տեսնելու համար, այլ պիտի նայի՝ այդ ձեռքերը որքանո՞վ արդարութիւն եւ բարիք գործած են:

Աստուած պիտի չնայէ մեր աչքերը տեսնելու համար, թէ անոնք խոնարհ են կամ երկինք կը նային, այլ պիտի նայի՝ որքան մաքրութիւն կայ այդ աչքերուն մէջ եւ ինչպէս մենք նայած ենք մեր եղբօրը եւ մեր մերձաւորին:

Աստուած պիտի չնայէ մեր ականջները տեսնելու համար, թէ մենք ի՞նչ լսած ենք, այլ պիտի նայի՝ ի՞նչ լսել ուզած ենք եւ ինչի՞ն բացած ենք մեր ականջները:

Եւ վերջապէս Աստուած պիտի նայէ մեր ոտքերուն՝ տեսնելու համար, թէ մենք դէպի ո՞ւր կ'ուզենք քալել. դէպի յաւիտենական կեանք, դէպի արդարութեան եւ փրկութեան ճանապարհ, թէ՞ դէպի մեղքի եւ կորստեան ճանապարհ:

Սիրելիներ, թող Բուն Բարեկենդանի այս ուրախ եւ խորիմաստ խորհուրդը նաեւ մեր կեանքերուն մէջ բերէ ճշմարիտ երջանկութիւն: Հաշտուինք անոնց հետ, որոնց հետ խնդիր ունինք: Ներենք անոնց, որոնց մինչեւ այսօր չենք կրցած ներել: Սիրենք անոնց, որոնք մեր սիրոյ կարիքն ունին, որովհետեւ վաղը կրնայ ուշ ըլլալ սիրելու համար, վաղը կրնայ ուշ ըլլալ ներելու համար, եւ երբեմն՝ ուշ ըլլալ նաեւ փրկութեան համար:

Փրկութեան օրը այսօր է: Այս պահէն կը սկսի այն օրը, երբ մարդը կը գիտակցի, որ ինք ժամանակաւոր է այս աշխարհին մէջ, եւ որ ժամանակաւորը շատ անգամ կը ծառայէ մեր կորստեան, եթէ մենք զայն չդարձնենք մեր հոգիի փրկութեան ճանապարհ:

Հետեւաբար, սիրելիներ, թող մեր Տիրոջ խաղաղութիւնն ու սէրը ամէնքիդ հետ ըլլայ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:



ՔԱՐՈՋԽՕՍԱԿԱՆ

**ԱՄԵՆԱՊԱՏԻ ՊԱՏՐԻԱՐՔ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ՔԱՐՈՋԸ՝
ԽՕՍՈՒԱԾ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՅ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ,
ՄԵԾ ՊԱՀՈՑ ՀՍԿՈՒՄԻՆ
(5 Մարտ, 2026)**

**«Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն...»:
ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ**

Տէրունական Աղօթքէն առնուած այս նախադասութիւնը այս երեկոյ, կու գայ մեզի յիշեցնելու՝ թէ մարդ արարածը՝ ամէն տարիքի, արու կամ էգ, ենթակայ է փորձութեան: Եւ հիմա երբ մտած ենք Մեծ Պահոց քառասնօրեայ շրջանը, պատշաճ է անգամ մը եւս անդրադառնալ «փորձութիւն» բառին իրա՛ւ իմաստին, որուն միշտ ենթակայ եղած է մարդ արարածը:

Դժբախտաբար «Փորձութիւն» բառը այլեւս ինքզինք դուրս ձգած է այս դարուս մարդուն միտքէն ու հոգեբանութենէն, որովհետեւ մեզի համար աւելի հեշտ է եւ հաճելի՝ տեղի տալ անոր խոստացած հաճոյքներուն, եւ զարմանալիօրէն՝ անցեալ դարերու մշակոյթը կարծէք անմիջական իրաւունք կու տար մարդկութեան, կայծակնային արագութեամբ իյնալ փորձութիւններու մէջ, առանց նույնիսկ վայրկեան մը մտածելու իրենց արարքին հետեւանքներու մասին: Եւ տխուր է ըսել, մանաւանդ երիտասարդ սերունդէն ոմանք երբեմն կը ծիծաղին անոնց վրայ՝ որոնք կը մերժեն տեղի տալ փորձութիւններու:

Սակայն իսկապէս ի՞նչ կը նշանակէ ենթարկուիլ փորձութեան, եթէ ոչ մենք զմեզ հեռացնել մեր Արարչէն, ժամանակաւորը փոխարինելով յաւիտենականին հետ: Մենք զմեզ կը հեռացնենք Աստուծոյ ստեղծագործութեան նպատակէն, որ է ապրիլ Աստուծոմով, ըլլալ մէկ՝ Հայր Աստուծոյ հետ եւ քաջ գիտնալ իր մեզմէ ակնկալածը: Փորձութիւն նաեւ կը նշանակէ անտեսել եւ արհամարհել Անոր մեզի տուած Տասնաբանեայ պատուիրանները, որոնք պարտին ըլլալ կեանքի անբաժան մասնիկը իրա՛ւ հաւատացեալին. փորձութեան ենթարկուիլ պիտի նշանակէր մոռնալ խոնարհաբար քալել Հայր Աստուծոյ ճամբէն, եւ մանաւանդ մոռնալ Աստուածորդւոյն պատգամած սէրը, ողորմածութիւնն ու արդարասիրութիւնը: Պէտք է քաջ գիտնալ, որ բոլոր փորձութիւնները սահմանուած են մարդ արարածը ընդմիշտ հեռացնելու Հայր Աստուծոյ սէրէն: Անկասկած բոլոր աւետարանները բացառիկ կարեւորութիւն կը ներկայացնեն մեր բոլորին համար, որովհետեւ մենք բոլորս կ'անցնինք նոյն փորձութիւններէն եւ դժուարութիւններէն:

Առաջին փորձութիւնը կը խօսի մարդկային մարմնին անմիջական կարիքներուն մասին, եւ ի՞նչ եղած է բոլոր ժամանակներուն մարդկութեան մեծագոյն մտահոգութիւնն ու պահանջը՝ եթէ ոչ՝ «Հացը», որմէ զրկուած մարդիկ սովահար մեռած են: Հոս կ'արժէ անդրադառնալ այս մէկ, հացի փորձութեան որ կու գայ Աստուածորդւոյն անապատի քառասնօրեայ ճգնութեան շրջանին եւս, երբ սատանան մօտենալով կը փորձէ

զինք խաբել, ըսելով. «Եթէ դուն իսկապէս Աստուծոյ զաւակն ես, ուրեմն գործածէ՛ ամբողջ կարողութիւններդ եւ այս քարերը հացի վերածէ՛», որով եթէ Քրիստոս ձախողէր, այդ պիտի ըլլար լաւագոյն փաստը սատանային համար, որ Աստուածորդին բացարձակապէս կապ չունէր Աստուծոյ հետ, որուն մեր Տէրը կը պատասխանէ ըսելով. «Ետիս գնա՛ սատանայ»: Անշուշտ Յիսուս լաւ գիտէր մարդ արարածին սնունդի կարիքները, ապա թէ ոչ Ան երբեք գուժ պիտի չցուցաբերէր աղքատներու եւ անոքներու նկատմամբ, պահանջելով որ մարդիկ միշտ հոգատար ըլլային իրենց եղբայր մարդոց հանդէպ: Դժբախտաբար, այս օրերուն, եսասէր մարդոց մարմինը իրենց համար վերածուած է կուռքի մը, զոր տարօրինակ գործողութիւններու կ'ենթարկեն, ինչպէս իրենք համոզուած են, կատարեալ դարձնելու իրենց մարմինները:

Անկասկած լսած ըլլալու էք կարգ մը մարդոց, որոնք անդադար կը կրկնեն. մանաւանդ աղէտներու ժամանակ, «Ձեմ կրնար հաւատալ Աստուծոյ մը որ թոյլ կու տայ որ մարդիկ այսպէս շարշարուին ու տառապին»: Սակայն Քրիստոս, նոյնիսկ երբ ինք կ'անցնէր Ֆիզիքական փորձութենէ, պիտի ըսէր իր փորձիչ՝ Սատանային. «Մարդ ո՛չ կեցցէ հացիւ, այլեւ բանիւ Տեառն, եւ Անոր գուժով ու արդարասիրութեամբ», եւ այս մէկը եթէ իսկապէս եւ անկեղծօրէն կը հաւատանք, մեզ կրնայ տանիլ յաւիտենական կեանքի: Անկասկած Աստուածորդին քաջ տեղեակ էր իր օրերուն Սուրբ Երկրէն ներս տիրող մարդոց դժուարին ու ծանր պայմաններուն, որուն համար պիտի ըսէր սատանային, որ հացը չէր մարդուն միակ եւ էական կարիքը, այլ նաեւ Հայր Աստուծոյ խօսքը, Անոր բացարձակ ճշմարտութիւնը: Սակայն Քրիստոս միւս կողմէն գիտնալով սնունդի անհրաժեշտութիւնը մարդ արարածին համար, պիտի քաջալերէր իր հետեւորդները որ կերակրէին անօթիները, սակայն առանց գերին դառնալու հացին: Այս օրերուն մարդիկ դժբախտաբար աւելի կարեւորութիւն կու տան հացին, այսինքն նիւթին՝ քան Աստուծոյ խօսքին: «Մարդ ո՛չ կեցցէ միայն հացիւ» խօսքով Աստուածորդին ըսել կ'ուզէր որ մենք պէտք չէ տեղի տայինք որ մեր Ֆիզիքական կարիքները իշխէին Աստուծոյ խօսքին կարիքներուն վրայ:

Երկրորդ փորձութիւնը եւս ցաւալիօրէն ծանօթ է բոլորիս, անշուշտ եթէ գիտնանք մեր ակնկալութիւնները՝ քննել արդար կերպով: Մարդ արարածին անվերջ փորձերը սակարկելու իր Արարչին հետ որոշ է եւ յաւիտենական, մենք անդադար կը գանգատինք ըսելով. «Բայց Քրիստոս ըսաւ. խնդրեցէ՛ք եւ պիտի տրուի ձեզի, զարկէ՛ք դուռը եւ պիտի բացուի, ապա ուրեմն ինչո՞ւ Աստուած իմ սրտիս փափաքները չգոհացնէր, ինչո՞ւ Ան չպատասխանէր աղօթքներուս, ինչո՞ւ Աստուած չի պատժեր շարագործները եւ վարձատրեր արդարները»: Անկասկած ասոնք բոլորը օրինաւոր եւ տրամաբանական հարցումներ են, սակայն ասոնք գրեթէ բոլորը կը յանգին համաձայնութեան մը գալու, փորձելու ձեւով. «Տէր Աստուած, եթէ աղօթքներուս պատասխանես, ես լաւ անձ մը կը մնամ», կամ «Տէր իմ, Հայր Աստուած, ըրէ ա՛յն ինչ որ ես կը խորհիմ ճիշդ է, եւ ես բոլորովին պիտի հաւատամ քեզի»:

Դժբախտաբար երբ մենք ձեւով մը կ'անտեսենք՝ ստեղծագործութեան ներքին կապերը եւ զԱստուած կը դնենք փորձի, կը մոռնանք որ մենք ի զօրու չենք թելադրելու Աստուծոյ, որ քաջ գիտէ յետին նպատակը մեր միտքերուն, որ կը տեսնէ եւ լաւ կը հասկնայ թէ ի՞նչ է իսկապէս մեր փափաքածը: Ի՞նչ պիտի ըլլար եթէ Հայր Աստուած պատասխանէր մարդոց աղօթքներուն, որոնք կը փափաքէին մահը իրենց հակառակորդներուն եւ թշնամիներուն, ի՞նչ պիտի ըլլար արդիւնքը ատոր, եւ ո՞ւր պիտի հասնէր աշխարհ: Ատով մենք միայն զԱստուած է որ փորձի ենթարկած կ'ըլլանք առանց

նոյնիսկ խորհելու ատոր հետեւանքներուն մասին:

Իսկ երրորդ փորձութիւնը, որ մարդը միշտ կ'առաջնորդէ աղէտի եզրին, հրապուրիչ՝ սակայն սարսափելի կանչն է ոյժին: Անկասկած շատ դիւրին պիտի ըլլար մեր Տիրոջ համար, երբ բոլորովին առանձին էր անապատին մէջ, մինակ ու սոված, մոռնալ թէ ինք իսկապէս որո՞ւ կը պատկանէր: Ո՛չ միայն այս օրերուն, այլ նաեւ մարդկային պատմութեան ընթացքին շատ դժուար եղած է մարդ արարածին համար չենթարկուիլ ոյժին փորձութեան: Թող վայրկեանի մը համար նայինք աշխարհի դրամին մարդոց կուտակած անհաւատալի հարստութիւններուն, մինչ անդին՝ նոյնիսկ ամենահարուստ երկիրներուն մէջ, ուր մէկ կողմէն, եթէ մարդիկ կը տիրեն ոյժի եւ կը կուտակեն միլիառաւոր տոլարներ՝ Զուիցերիական դրամատուներու մէջ, անդին ուրիշներ կը մեռնին սովահար: Ահա ա՛յս է փորձութիւնը ոյժին՝ որ հարստութիւնը կը բերէ: Մեր Տէրը քաջ գիտէր ճակատագրական հետեւանքները տեղի տալու սուտ ու ժամանակաւոր աստուածներուն՝ ազահութեան, հարստութեան եւ ուրիշները իշխելու: Ճիշդ այս էր որ Սատանան կ'ուզէր համոզել Աստուածորդին, մոռնալ զԱստուած եւ գերի դառնալ նիւթին եւ ոյժին, ըսելով. «Ես եմ որ կամ»:

Քրիստոս կու գար անմիջապէս մերժելու Սատանային այս փորձութիւնը, հասկըցնելով անոր՝ թէ միայն մեր Ստեղծիչն ու Հայրն էր արժանի մեր սիրոյն, պաշտամունքին եւ յարգանքին, եւ թէ մենք միայն Անոր ծառաներն էինք եւ միայն Ան էր արժանի մեր ծառայութեան եւ նուիրուածութեան: Եւ այս հաստատական ու զօրաւոր պատասխանէն վերջ, Սատանան կը հեռանար: Յոբ Երանելին պիտի ըսէր. «Ես քաջ գիտեմ, որ իմ Փրկիչս կ'ապրի», մինչ Պօղոս Առաքեալ իր բանտի խուցէն պիտի յայտարարէր. «Ես քաջ գիտեմ թէ որու կը հաւատամ»: Մարդ արարածը եւս, սիրելի հաւատացեալներ, միշտ պարտի յիշել եւ անդրադառնալ թէ ինք ո՞վ է, ո՞վ ստեղծած է զինք, սիրած եւ զանազան շնորհներով օժտած, եւ մեզ երբեք առանձին պիտի չթողու փորձութեան անապատին՝ մեր մարդկային կեանքին մէջ:

Մեծագոյն գաղտնիքը փորձութեան պատմութեան, սիրելի հաւատացեալ քոյրեր եւ եղբայրներ, Եղեմական Դրախտի պարտէզին մէջ էր, ուր Նախամարդուն ստեղծիչը՝ Հայր Աստուած, երբե՛ք չլքեց Ադամն ու Եւան: Աստուածային խոստումը արձագանգած է ամբողջ դարեր եւ Պօղոս Առաքեալ շարունակեց Աստուածային այդ խոստումը որ կ'ըսէ, «Եթէ նոյնիսկ մենք՝ մարդ արարածներս ենթարկուինք զԱստուած մոռնալու փորձութեան, քաջ վստահ եղէք, որ Աստուածային շնորհքը երբեք պիտի չմոռնայ մեզ, սակայն եկէք այս երեկոյ, երբ մուտք կը գործենք Մեծ Պահոց Քառասնօրեայ շրջանէն ներս, թող քաջ գիտնանք Ո՛չ ըսել փորձութեանց եւ Այո՛ Բարձրեալն Աստուծոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս, յաւիտենից. Ամէն»:

ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

**ԱՂԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳՈԳՉԵԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՕՍՈՒԱԾ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՅ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՁ,
ՄԵԾ ՊԱՀՈՅ ՏՆՏԵՍԻ ԿԻՐԱԿԻՆ
(15 Մարտ, 2026)**

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն:

Սիրելի՛ հաւատացեալներ, այսօր կը տօնենք Մեծ Պահոց շորրորդ կիրակին, որ կը կոչուի Տնտեսի Կիրակի: Այս կիրակին կապուած է Դուկասի Աւետարանի մէջ յիշուած անիրաւ տնտեսի առակին:

Յիսուս այս առակով մեզի կը ներկայացնէ հետեւեալ պատմութիւնը. մեծահարուստ մը կար, որ տնտես ունէր: Օր մը մարդիկ կու գան եւ մեծահարուստին կը բողոքեն՝ ըսելով, թէ իր տնտեսը կը վատնէ իր հարստութիւնը:

Մեծահարուստը իր քով կը կանչէ տնտեսը, եւ բարկանալով անոր վրայ, կը պահանջէ, որ ան ներկայացնէ իր տնտեսութեան ամբողջ հաշիւը, որովհետեւ որոշած էր ազատել զինք իր ծառայութենէն:

Տնտեսը, լսելով այս որոշումը, իր մտքին մէջ կը խորհի եւ կ'ըսէ. «Ի՞նչ պիտի ընեմ հիմա, երբ տէրս կը վերցնէ իմ տնտեսութիւնս ինձմէ: Հող մշակել չեմ կրնար, իսկ մուրաւ կ'ամչնամ»: Ուստի ուրիշներուն յարկերուն տակ ապաստան գտնելու համար ան կը փորձէ օգտագործել վերջին հնարաւորութիւնը եւ բարիք ընել անոնց, որպէսզի յետագային անոնք իրեն օգնեն: Եւ իր քով կը կանչէ իր տիրոջ պարտապանները եւ իւրաքանչիւրին կը հարցնէ. «Որքա՞ն պարտք ունիս տիրոջս»: Առաջինը կը պատասխանէ. «Հարիւր տակառ ձէթ»: Տնտեսը կ'ըսէ անոր. «Առ մուրհակդ եւ շուտով գրէ՛ յիսուն»: Յետոյ կը կանչէ ուրիշ պարտապան մը եւ կը հարցնէ. «Դուն որքա՞ն պարտք ունիս»: Ան կը պատասխանէ. «Հինգ հարիւր պարկ ցորեն»: Տնտեսը անոր ալ կ'ըսէ «Առ մուրհակդ եւ գրէ՛ չորս հարիւր»: Եւ առակը կը պատմէ, որ Տէրը կը գովէ այս տնտեսը իր հնարամտութեան համար, եւ կ'ըսէ. «Այս աշխարհի որդիները աւելի հնարամիտ են, քան լոյսի որդիները»:

Շատեր այս առակը սխալ կը մեկնաբանեն եւ կ'ըսեն, թէ Քրիստոս կը գովէ անիրաւ տնտեսը եւ զայն աւելի կը գնահատէ, քան լոյսի որդիները:

Սիրելիներ, Քրիստոս երբեք չէ գոված մեղքը, եւ չէ քաջալերած մեզ, որպէսզի նմանինք մեղաւորին, նոյնիսկ եթէ անոր նպատակը արդարացնէր այդ միջոցը: Անտրամաբանական պիտի ըլլար, որ Քրիստոս գովէր մեղքը, որ հակառակ էր Իր Աստուածային խօսքին եւ որմէ մեզի ազատելու համար այս աշխարհ եկած էր: Աւելին՝ եթէ մեր Տէրը պիտի գովաբանէր անիրաւ տնտեսը, ապա զայն պիտի չկոչէր «այս աշխարհի որդի», այլ՝ «լոյսի որդի», եւ այս առակին հերոսին անունը պիտի ըլլար «անիրաւ տնտես», այլ՝ «բարի» կամ «օրինակելի տնտես»:

Առակին երկրորդ մասին մէջ մեր Տէրը կը բացատրէ, թէ ինչ նպատակով կը գովէ անիրաւ տնտեսին ըրածը, երբ կ'ըսէ. «Այս աշխարհի որդիները աւելի հնարամիտ են, քան լոյսի որդիները»: Այսինքն՝ գովելով անիրաւ տնտեսին գործը, Յիսուս կ'ուզէ մեզի ըսել հետեւեալը. եթէ այս աշխարհի որդիները իրենց տրամադրութեան տակ եղած բոլոր միջոցները կը գործածեն՝ իրենց նպատակներուն հասնելու եւ իրենց երկրային կեանքը ապահովելու համար, ապա ինչո՞ւ նոյնը չընեն լոյսի որդիները՝ ժառանգելու համար յաւերժական կեանքը, որ անհամեմատ բարձր է այս երկրային կեանքէն եւ անոր վրայ եղած անցողիկ նպատակներէն:

Եթէ աշխարհի որդիներուն կեանքը կը սկսի եւ կ'աւարտի այս աշխարհի վրայ եղած բարիքներով եւ նպատակներուն իրագործումով, ապա լոյսի որդիները՝ գիտնալով հանդերձ, որ այս առժամեայ աշխարհը իրենց տրուած է միայն պատրաստուելու եւ դրախտը ժառանգելու համար, ինչո՞ւ նոյն այդ հնարամտութեամբ չեն գործեր եւ իրենց աստուածահաճոյ գործերով սանդուխներ չեն կառուցեր դէպի յաւիտենական կեանք:

Ահա թէ ինչու այս առակին մէջ մեր Տէրը կ'ըսէ. «Անիրաւ մամոնայէն ձեզի բարեկամներ շինեցէք, որպէսզի երբ այն պակսի, ձեզի ընդունին յաւիտենական յարկերուն տակ», եւ ոչ թէ այս աշխարհի ժամանակաւոր յարկերուն տակ:

Մեզմէ շատեր կը բողոքեն եւ կ'ըսեն. մենք ոչ անիրաւ տնտեսին տրամադրութեան տակ եղած դրամն ունինք եւ ոչ ալ անոր իշխանութիւնը, որպէսզի կարողանանք ուրիշներուն բարիք ընել եւ, երբ այս կեանքէն մեր հեռանալու ժամանակը գայ, մեզ համար երկնքի յաւիտենական արքայութեան մէջ յարկեր պատրաստենք: Սակայն այսպիսի պնդումին Քրիստոս նոյն առակով կը պատասխանէ՝ ըսելով. «Քիչ բաներու մէջ հաւատարիմը շատ բաներու մէջ ալ հաւատարիմ է, եւ քիչ բաներու մէջ անիրաւը շատ բաներու մէջ ալ անիրաւ է»:

Մենք շատ յաճախ կը զլանանք անգամ մամենապզտիկ բաներով օգնել կարօտեալները: Ոչ թէ որովհետեւ չունինք այդ օգնելու հնարաւորութիւնը, այլ որովհետեւ վարժուած չենք օգնելու: Աւելի շուտ կը նախընտրենք մեր ձեռքին տակ եղած մամոնան եւ ունեցուածքը գործածել միայն մեր անձնական ցանկութիւններուն համար: Այսպիսի ապրելակերպը մարդը կը վարժեցնէ հանգիստ կեանքի եւ միայն իր անձին մասին մըրտածելու: Այդ ալ անոր կը մղէ կեանքի մէջ շատ հարստութիւն եւ մամոնայ ունենալու ցանկութեան եւ ձգտման:

Այս մտածումը մարդը կ'առաջնորդէ բաւարարուելու այս աշխարհի ցանկութիւններով, եւ շատ հարստութիւն ունենալը կը դառնայ անոր կեանքի միակ նպատակը: Այսպէս մարդը կը զրկուի լոյսի որդի ըլլալու շնորհէն եւ կը վերածուի աշխարհի որդիի: Աւելին՝ շատ նիւթական հարստութիւն ունենալու ցանկութիւնը մեզի կը մղէ, որ աւելի հետեւինք եւ ծառայենք աշխարհի օրէնքներուն: Այդ ժամանակ մենք կը կորսնցնենք մեր կեանքի ուղղութիւնը, որովհետեւ մամոնան կը դառնայ մեր տէրը, իսկ մենք՝ անոր ծառաները: Այսինքն՝ հարստութիւն ունենալու համար աշխարհի օրէնքները մեզ համար կը դառնան նոր պատուիրաններ, եւ մենք կը դադրինք հետեւելու այն պատուիրաններուն, որոնք մեր Տէրը մեզի աւանդած է: Այսպէս մեր կեանքին մէջ ուրիշ տէր մը կը յայտնուի, որուն անունը դրամ կամ հարստութիւն է: Ահա թէ ինչու մեր Տէրը այս առակին մէջ մեզի կը զգուշացնէ՝ ըսելով. «Չէք կրնար ծառայել թէ՛ Աստուծոյ եւ թէ՛ մամոնային»:

Ուրիշ առակ մը կը պատմէ, թէ մարդ մը կար, որ առտուները կ'աշխատէր եւ կը ծառայէր մէկու մը քով, որուն գործը մարդոց հարստութիւնը եւ ունեցուածքը գողնալն էր: Ան շատ լաւ կ'աշխատէր, եւ տէրը իր կատարած գործին համար զինք առատօրէն կը վարձատրէր:

Տէրը, շատ գոհ ըլլալով իր գործաւորին աշխատանքէն, ամենէն շատ գործը անոր կու տար: Օր մըն ալ, անոր լաւ աշխատանքին համար, իր կատարած կողոպուտէն թանկարժէք մատանի մը կը նուիրէ:

Նոյն այդ ծառան ուրիշ մէկու մը քով երկրորդ գործ մըն ալ գծատ էր, որ երեկոյեան ժամերուն կ'աշխատէր: Ան կ'երթար մարդոց տուները, կը խնամէր ծերերը եւ անոնց հետ կ'աղօթէր, որպէսզի բարի գործ մը կատարած ըլլայ եւ իր շուրջիններուն մօտ պարկեշտ մարդու տպաւորութիւն ձգէ՝ գաղտնի պահելով իր առտուան աշխատանքը: Այս ծառայութեան տէրը շատ գովասանք կը լսէր ծեր մարդոցմէ, որովհետեւ ծառան իր գործը լիովին կ'ընէր: Սակայն այն օրը, երբ ծառան իր առտուան գործին համար թանկարժէք մատանին ստացած էր, երեկոյեան իր երկրորդ աշխատանքին ժամանակ տուն մը կը մտնէ եւ կը տեսնէ ծեր զոյգ մը նստած բարձրաձայն կու լայ եւ կ'աղօթէ: Ան կը հարցնէ անոնց. «Ինչո՞ւ կու լաք, ի՞նչ պատահած է»: Ծեր զոյգը կը պատասխանէ ըսելով, թէ իրենց ունեցած ամբողջ հարստութիւնը առտու գողցուած է: Իսկ այդ հարստութեան մէջ էր նաեւ իրենց ամուսնութեան թանկարժէք մատանին:

Անոնք կը խնդրեն ծառային, որ միանայ իրենց աղօթքին, որպէսզի Տիրոջմէ խընդրեն, որ այդ գողը արժանանայ Աստուծոյ դատաստանին: Ծառան հասկնալով եղելութիւնը՝ ատելութեամբ կը լեցուի իր երկրորդ աշխատանքին հանդէպ եւ կը դադարի այդ գործը ընելէ: Ան կը նախընտրէ իր առաջին աշխատանքը, որովհետեւ զայն աւելի կարեւոր կը տեսնէ այս աշխարհիկ եւ անցողիկ կեանքը վայելելու համար:

Սիրելիներ՛, մէկը չի կրնար երկու տիրոջ ծառայել, անոնցմէ մէկը ուզէ կամ ոչ պիտի ընտրէ, ինչպէս որ մեր Տէրը կ'ըսէ այս առակին մէջ. «Ոչ մէկ ծառայ կրնայ ծառայել երկու տիրոջ, որովհետեւ եթէ ատէ մէկը՝ պիտի սիրէ միւսը, կամ եթէ մեծարէ մէկը՝ պիտի արհամարհէ միւսը»:

Երկու տիրոջ ծառայելու ձգտումը մարդը կը մղէ մէկը ատելու եւ միւսը սիրելու: Իսկ եթէ ան այդ տէրերէն չընտրէ ճիշդ Տէրը եւ նախընտրէ այս աշխարհի վրայ գտնուող անցողիկ ցանկութիւնները, ապա ի վերջոյ պիտի կորսնցնէ երկուքն ալ:

Սիրելի՛ հաւատացեալներ, ուրեմն եկէք հաւատարիմ ըլլանք մեր Տէր Յիսուս Քրիստոսին եւ հետեւինք միայն Անոր եւ Անոր պատուիրաններուն, որպէսզի չըլլանք այս աշխարհի որդիներ, այլ՝ լոյսի որդիներ:

Եկէք աղօթենք, որ մեր Տէր Յիսուս Քրիստոսը մեր բոլոր գործերուն եւ նպատակներուն մէջ ըլլայ մեր առաջնորդը, որուն վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ՝ այժմ եւ միշտ եւ յաւիտենաս յաւիտենից. Ամէն:

ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

**ԱՐՇԱԿ ԱՔԵՂԱՅ ԴԱԶԱՐԵԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՕՍՈՒԱԾ Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՁ,
ՍՐԲՈՅ ՔԱՌ-ԱՍՈՒՆ ՄԱՆԿԱՆՅ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ
ՀՄԿՈՒՄԻՆ
(20 Մարտ, 2026)**

«Խոստովան եղիցոք անուան քոս սրբոյ, եւ պարծեսցոք յօրհնութիւնս քո»:
(Մաղմ. ԸԵ)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն:

Միրելի՛ հաւատացեալներ, Տիրոջ անունը խոստովանիլը միայն շրթունքներու գործ չէ, այլ սրտի խորքէն բխող կենդանի վկայութիւն. վկայութիւն այն հաւատքին, զոր կը կրէ մարդը իր հոգւոյ մէջ:

Պարծենալ Աստուծոյ օրհնութիւններով կը նշանակէ ճանչնալ, թէ մեր կեանքին մէջ ամէն բարիք իրմէ է, եւ թէ մեր ճշմարիտ զօրութիւնը, յոյսը եւ փրկութիւնը իր մէջ կը գտնուին:

Այսօր, երբ Սուրբ Եկեղեցին կը յիշատակէ Սեբաստիոյ քառասուն մանուկները, այս խօսքերը աւելի կենդանի ու իրական կը դառնան: Անոնք ոչ միայն իրենց շրթունքներով խոստովանեցան Աստուծոյ, այլեւ իրենց ամբողջ կեանքով վկայեցան զԱյն: Անոնք ոչ միայն փառաբանեցին Աստուած խօսքով, այլ նաեւ իրենց նահատակութեամբ պարծեցան իր օրհնութիւններով՝ ընտրելով հաւատքը, նոյնիսկ կեանքի գնով:

Միրելիներ՛, Սեբաստիոյ քառասուն մանուկները այն քաջ ու հաւատարիմ զինուորներն էին, որոնք իրենց կեանքով եւ նահատակութեամբ դարձան կենդանի վկայութիւն այն ճշմարտութեան, թէ Աստուծոյ հաւատարիմ մարդը չի վախնար ո՛չ տառապանքէն, ո՛չ մահէն, ո՛չ ալ աշխարհի զօրութիւններէն:

Անոնց պատմութիւնը տեղի ունեցաւ Կապադովկիոյ Սեբաստիա քաղաքին մէջ, այն ժամանակ, երբ Լիկիանոս կայսրը սկսաւ հալածել քրիստոնեաները՝ խախտելով այն ազատութիւնը, որ ժամանակին հաստատուած էր Կոստանդիանոս կայսեր կողմէ: Այդ օրերուն բանակին մէջ կային քառասուն երիտասարդ զինուորներ: Անոնք զօրաւոր էին մարմնով, փորձուած՝ պատերազմի մէջ, եւ քաջ՝ երկրային թագաւորին համար կռուելու ժամանակ: Բայց երբ անոնցմէ պահանջուեցաւ ուրանալ Քրիստոսը, անոնք ցոյց տուին, թէ իրենց քաջութիւնը շատ աւելի մեծ էր, քան մարդիկ կրնային երեւակայել:

Անոնք միաբերան յայտարարեցին. «Մենք քրիստոնեայ ենք»:

Կամքի այս պարզ արտայայտութեան մէջ անսահման զօրութիւն կար: Այդ կը նշանակէր, թէ պատրաստ էին կորսնցնելու ամէն բան, միայն թէ չկորսնցնեն իրենց հաւատքը:

Անոնց զօրութիւնը միայն անհատական քաջութիւնը չէր. անոնց զօրութիւնը իրենց միութիւնն էր: Անոնք եղբայրներ դարձան ոչ թէ արեամբ, այլ՝ հաւատքով: Կ'ըսէին իրարու. «Ինչպէս միասին կռուեցանք երկրային թագաւորին համար, նոյնպէս ալ միասին պիտի կանգնինք մեր Երկնաւոր Թագաւորին համար»:

Երբ սպառնացին տանջանքներով, անոնք չվախցան: Երբ խոստացան պատիւներ ու պարգեւներ, անոնք չխաբուեցան՝ գիտնալով, որ աշխարհի ամենամեծ պարգեւը ո՛չ իշխանութիւնն է, ո՛չ ալ հարստութիւնը, այլ՝ Աստուծոյ հետ ըլլալը:

Սուրբ հայրերէն Յովհաննէս Ոսկեբերան կ'ըսէ. «Ոչ մէկ կրակ, ոչ մէկ սուր, ոչ մէկ բռնութիւն կրնայ յաղթել այն հոգիին, որ կը սիրէ Քրիստոսը»: Եւ իրապէս, սիրելի՛ հաւատացեալներ, երբ մարդը ամբողջ սրտով կը սիրէ գՔրիստոս, կ'ազատագրուի վախէն, աշխարհիկ սպառնալիքներէն եւ մահուան ահէն:

Սուրբ քառասուն մանուկները երիտասարդ էին, կեանքի ծաղկուն տարիքին մէջ: Կրնային ընտրել դիւրին ճամբան: Բաւական էր մէկ խօսք, մէկ ուրացում, եւ պիտի ազատէին: Բայց անոնք գիտէին, թէ այդ ազատութիւնը ճշմարիտ ազատութիւն չէր, այլ հոգիի գերութիւն: Ահա թէ ինչու ընտրեցին այն ճամբան, որ մարդկային աչքով կը թուէր կորուստ, բայց Աստուծոյ առջեւ դարձաւ մեծ յաղթանակ:

Գրիգոր Նազիանզացի կ'ըսէ. «Նահատակները կորսնցուցին կեանքը երկրին վրայ, բայց գտան զայն երկնքին մէջ»:

Սիրելի՛ հաւատացեալներ, Սուրբ քառասուն մանուկներու վկայաբանութեան պատմութիւնը միայն անցեալի մասին չէ, այլ նաեւ այսօրուայ մեր կեանքին մասին է: Այսօր ալ, հարիւրաւոր տարիներ անց, աշխարհը իր զանազազան ու պատիր խարդաւանքներով կը փորձէ թուլացնել մեր հաւատքը՝ կեղծ կասկածներ սերմանելով տկար հոգիներու մէջ:

Երբեմն շատեր կը վախնան դժուարութիւններէն, ապագայի անորոշութենէն, պատերազմներէն կամ մարդոցմէ: Բայց Սուրբ քառասուն մանուկները մեզ կը յիշեցնեն մեծ ճշմարտութիւն մը. «Վախը կը կորսնցնէ իր զօրութիւնը հոն, ուր կայ հաւատք»:

Եկեղեցւոյ հայրերերէն մին կ'ըսէ. «Ով որ Աստուած ունի իր սրտին մէջ, ան ամուր պարիսպ ունի իր շուրջը»: Երբ մարդը կը վստահի Ամենակարող Աստուծոյ, իր սիրտը հաստատուն կը դառնայ: Ան կը գիտնայ, թէ իր կեանքը պատահականութեան ձեռքը չէ, այլ Աստուծոյ նախախնամութեան մէջ է:

Սուրբ քառասուն մանուկները այս հաւատքով յաղթեցին վախին: Անոնք գիտէին, թէ իրենց կեանքը Աստուծոյ ձեռքերուն մէջ է, եւ այդ պատճառով չվախցան նոյնիսկ մահէն: Եւ ահա այս սուրբ նահատակներուն մեծ պատգամը մեզի այս է. աշխարհին մէջ կրնան ըլլալ դժուարութիւններ, փորձութիւններ, ցաւեր եւ կորուստներ: Բայց եթէ մարդը կը հաւատայ Ամենակարող Աստուծոյ, ապա չկայ այնպիսի ուժ մը, որ կրնայ կոտրել իր հոգին: Որովհետեւ Աստուծոյ հետ եղող մարդը երբեք մինակ չէ:

Երբեմն կը կարծենք, թէ մեր կարողութիւնները սակաւ են, իսկ մեր ուժերը՝ սահմանափակ: Սակայն յիշենք Սուրբ քառասուն մանուկները. անոնք ալ պարզ մարդիկ էին, բայց իրենց հաւատքը աւելի զօրաւոր գտնուեցաւ, քան կայսրերու ամբողջ իշխանութիւնը: Անոր համար ալ անոնց անունները մնացին պատմութեան մէջ, իսկ հալածողները մոռցուեցան: Ինչպէս մեր շուրջ տիրող այս խաւարը չի կրնար կլանել նահատակութեան լուսապսակով պսակուած Քառասուն Մանուկները խորհրդանշող այս ճրագ-

ները, այնպէս ալ նենգ կայսրը եւ իր արբանեակներու խարդաւանքները չեն կրնար մոռցնել տալ Քրիստոսի նահատակներու յիշատակը:

Սիրելի՛ հաւատացեալներ, այսօր, երբ կը յիշենք այս սուբերը, խնդրենք Աստուծոյ, որ անոնց հաւատքէն կայծ մը վառէ նաեւ մեր սրտերուն մէջ:

Թող անոնց քաջութիւնը մեզի զօրացնէ դժուարութեան մէջ: Թող անոնց հաւատքը մեզի օգնէ կանգնելու ճշմարտութեան առջեւ: Թող անոնց միութիւնը մեզի յիշեցնէ, թէ Եկեղեցին եղբայրական ընտանիք մըն է: Եւ երբ վախը մօտենայ մեր կեանքին, յիշենք անոնց օրինակը եւ ըսենք մենք զմեզ. «Եթէ մենք կը հաւատանք Ամենակարող Աստուծոյ, ապա այս աշխարհին մէջ չկայ ոչինչ, որմէ պէտք է վախնանք»: Որովհետեւ Աստուած է մեր ապաւէնը, մեր զօրութիւնը եւ մեր փրկութիւնը, Որուն փառք յաւիտեան. Ամէն:

ՄԵԾԵՐԸ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԱՍԻՆ

Մարդկային ճիգերով տիեզերական թռիչք իրականացնելը ցնցող յաջողութիւն մըն է: Սակայն Տիեզերքը մարդուն առջեւ իր դռներուն շատ չնչին, նեղլիկ մէկ մասը միայն կը բանայ: Տիեզերքի մեծ գաղտնիքներուն դիտահայումը, նոյնիսկ այդ նեղլիկ ճեղքին միջով, անկասկած կը հաստատէ Արարչին նկատմամբ մեր հաւատքը: Որպէս գիտնական՝ ինծի համար դժուար է հասկնալ ոչ միայն Բարձրագոյն Բանականութիւնը մերժողը, այլեւ գիտութեան զարգացումը մերժող հաւատացեալը:

ՎԵՐՆԵՐ ՖՈՆ ԲՐԱՌԻՆ

Տարածուած է այն կարծիքը, թէ իբր տիեզերական թռիչքներու այս դարաշրջանին մէջ մենք այնքան շատ բան գիտենք բնութեան մասին, որ այլեւս անհրաժեշտ չէ Աստուծոյ հաւատալ: Այս կարծիքը կատարապէս սխալ է: Միայն նորոգ դարձն առ Աստուած կրնայ փրկել մեզ վերահաս աղէտէն:

ՎԵՐՆԵՐ ՖՈՆ ԲՐԱՌԻՆ

Քրիստոս պատուիրաններով եւ սեփական օրինակով ցոյց տուաւ, թէ Աստուած մեր Հայրն է, իսկ մենք՝ Անոր զաւակները: Ան մատնանշեց այնպիսի հասարակութիւն մը, ուր կը թագաւորէ Սէրը: Ուստի, կեանքի կառավարման մեր փնտռութիւններուն մէջ, պէտք է մտածենք, թէ ինչպիսի մարդիկ կ'ուզէինք տեսնել մեր զաւակները եւ ինչ վարք կը սպասենք անոնցմէ: Մենք կը սիրենք զանոնք տեսնել ջանադիր, անկեղծ, ուրախ եւ բարեացակամ: Մեզի հաճելի է, երբ անոնք կ'ուրախանան: Երբեմն ալ դառնութիւն ու ցաւ կ'ապրինք, բայց հոգ չէ. եկէ՛ք երջանիկ ըլլանք այնքան, որքան կարելի է: Եւ քանի դեռ բարեկեցութեան եւ յաջողութեան մէջ ենք, եկէ՛ք օգնութեան ձեռք երկարենք անոնց, որոնք զրկուած են ատկէ: Որքան աւելի մեծ է երջանկութեան ձգտումը, այնքան աւելի կը կարողանանք զայն փոխանցել ուրիշներուն: Զէ՞ որ մենք կը հաւատանք, թէ այս կեանքը սոսկ նախապատրաստութիւն մըն է դէպի յաւիտենութիւն եւ ոչ թէ վերջնական փորձութիւն մը:

ՈՒԻԼԻԸՄ ՀՆԵՐԻ ՊՐԵԳԳ

ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

**ՆԵՐՍԵՆՆ ԿԱՐԳԱՊԵՏ ԱՆՈՅԵԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՕՍՈՒԱԾ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՅ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ,
ՄԵԾ ՊԱՀՈՅ ԳԱԼՍԵԱՆ ԿԻՐԱԿԻՆ
(29 Մարտ, 2026)**

**«Արթուն կեցէք, որովհետեւ չէք գիտեր ո՛չ օրը եւ ո՛չ ալ ժամը»
(Մատթ. 25:13)**

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն

Սիրելի՛ հաւատացեալներ, այսօր արդէն Մեծ Պահոց վերջին Կիրակիին հասած ենք, որ կը կոչուի Գալստեան Կիրակի եւ կը հանդիսանայ մեր եկեղեցւոյ խորախորհուրդ օրերէն մէկը: Այս Կիրակին բացառիկ է, քանի որ այն մեզի կը յիշեցնէ ոչ միայն մեր Տէր Յիսուս Քրիստոսի երկրորդ եւ փառաւոր գալստեան, այլեւ Անոր մշտական ներկայութեան մասին մեր կեանքէն ներս:

Եկեղեցին այսօր մեզի արթնութեան, պատրաստութեան եւ ապաշխարութեան կոչ կ'ուղղէ: «Արթուն կեցէ՛ց, որովհետեւ չէք գիտեր թէ ո՛ր ժամուն կու գայ ձեր Տէրը» (Մատթ. 24:42): Տիրոջ այս խօսքերը միայն վախ ներշնչելու համար չեն, այլ՝ սթափեցնելու եւ մեզի ճիշդ ճանապարհին վրայ հաստատելու համար: Քրիստոսի գալուստը պիտի ըլլայ ուրախութիւն անոնց համար, որոնք կը սպասեն Անոր սիրով եւ հաւատքով:

Գալստեան Կիրակին նախ եւ առաջ յոյսի Կիրակի է: Մենք կը հաւատանք, որ պատմութիւնը պատահական չէ, եւ աշխարհը շունի անիմաստ վախճան: Քրիստոս, որ եկաւ խոնարհութեամբ Բեթղեհէմի անշուք քարայրի մը մէջ ծնելով, պիտի գայ նաեւ փառքով:

Տէրը յստակ կ'ըսէ. «Այն ատեն երկնքի վրայ պիտի երեւի մարդու Որդիին նշանը... եւ պիտի տեսնեն մարդու Որդին, որ կու գայ երկնքի ամպերուն վրայէն՝ զօրութեամբ եւ մեծ փառքով» (Մատթ. 24:30):

Սակայն, սիրելիներ՛ր, մեր Եկեղեցին այս խօսքերը մեզի կը յիշեցնէ, ոչ միայն ապագան նկարագրելու համար, այլ որպէսզի փոխուի մեր ներկան: Քրիստոսի գալուստը կը սկսի այն պահուն, երբ Ան կը բախէ մեր սրտին դուռը: Յայտնութեան գիրքին մէջ կը կարդանք. «Ահաւասիկ ես դրան առջեւ եմ եւ կը բախեմ. եթէ մէկը ականջ դնէ իմ ձայնիս ու բանայ դուռը՝ պիտի մտնեմ անոր քով...» (Յայտ. 3:20):

Ուստի հարցը այս է՝ բացուա՞ծ է արդեօք մեր սրտին դուռը:

Գալստեան Կիրակիի հիմնական պատգամը արթուն ըլլալն է: Տէրը բազմիցս կը կրկնէ այս հրահանգը. «Արթուն կեցէք, որովհետեւ չէք գիտեր ո՛չ օրը եւ ո՛չ ալ ժամը» (Մատթ. 25:13):

Այս խօսքերը մեզի կը յիշեցնեն իմաստուն եւ յիմար կոյսերու առակը, որոնցմէ

հինգը պատրաստ էին՝ իւղով լի ճրագներով, իսկ հինգը՝ անպատրաստ: Երբ փեսան եկաւ, պատրաստները մտան հարսանիքի, իսկ միւսները դուրս մնացին:

Սիրելիներ, այս առակը միայն ապագայի դատաստանի մասին չէ: Այն մեր ամենօրեայ կեանքի մասին է: Մենք բոլորս ճրագ ունինք, որ մեր հաւատքն է: Բայց դարձեալ հարցը այս է՝ կա՞յ արդեօք իւղ մեր ճրագին մէջ:

Իւղը կենդանի աղօթքն է, ողորմած սիրտը, ներողամտութիւնը, հաւատքով կատարուած բարի գործերը:

Յակոբոս Առաքեալ կը զգուշացնէ. «Հաւատքը, եթէ գործեր չունենայ՝ մեռած է ինքնին» (Յակոբ. 2:17): Հետեւաբար արթուն ըլլալ կը նշանակէ ապրիլ կենդանի հաւատքով, ոչ թէ միայն խօսքով:

Մենք յաճախ կը մտածենք, թէ Տիրոջ գալուստը միայն աշխարհի վախճանին կը վերաբերի: Բայց Տէրը կու գայ նաեւ այսօր: Ան կու գայ աղքատին կարիքի մէջ, հիւանդին ցաւի մէջ, նեղուած եղբօր հառաչանքին մէջ:

Յիշենք Տիրոջ խօսքը Վերջին դատաստանի մասին. «Քանի որ այս իմ փոքրիկ եղբայրներէս մէկուն ըրիք, ինծի՛ ըրէք» (Մատթ. 25:40):

Ասիկա Գալստեան Կիրակիի ամենէն զօրաւոր յիշեցումն է: Եթէ կ'ուզենք պատրաստ ըլլալ Տիրոջ գալուստին, պէտք է սորվինք ճանշնալ զինքը մեր մերձաւորին մէջ:

Սուրբ Յովհաննէս Աւետարանիչ կը գրէ. «Ան որ չի սիրեր իր եղբայրը՝ զոր կը տեսնէ՝ ինչպէ՞ս կրնայ սիրել զԱստուած՝ զոր տեսած չէ» (Ա. Յովհ. 4:20):

Գալստեան Կիրակին նաեւ ապաշխարութեան հրաւեր է: Տէրը համբերատար կը սպասէ մեզի, բայց շուգէր, որ մենք մնանք հոգեւոր քունի մէջ:

Քրիստոս կ'ըսէ. «Ապաշխարեցէք, որովհետեւ մօտեցած է երկնքի արքայութիւնը» (Մատթ. 4:17):

Սիրելիներ, ապաշխարութիւնը միայն մեղքը յիշելը չէ: Այդ վերադարձ մըն է դէպի Հայրը: Այդ սրտի նորոգութիւն է: Այդ ուղղութեան փոփոխութիւն է:

Երբ մենք անկեղծ կ'ապաշխարենք՝ խիղճը կը խաղաղուի, սիրտը կը լուսաւորուի եւ հաւատքը կը կենդանանայ:

Սաղմոսերգուն կ'աղօթէ. «Մաքուր սիրտ ստեղծէ իմ մէջ, ո՛վ Աստուած» (Սաղմոս 50:12):

Թող այս աղօթքը դառնայ նաեւ մերը:

Թէպէտ Գալստեան Կիրակիի խօսքերը երբեմն լուրջ եւ սթափեցնող են, սակայն խորքին մէջ մխիթարութիւն մը կայ: Քրիստոսի գալուստը սարսափ չէ անոնց համար, որոնք կը սիրեն Անոր:

Պօղոս Առաքել կը գրէ. «Այսուհետեւ ինծի համար պահուած է արդարութեան պսակը, որ Տէրը պիտի տայ... ոչ միայն ինծի, այլեւ բոլոր անոնց, որոնք սիրեցին Անոր յայտնութիւնը» (Բ. Տիմ. 4:8):

Ահա մեր յոյսը: Մենք կը սպասենք ոչ միայն դատաւորին, այլ մեր Փրկչին, մեր Հովուին, մեր սիրող Տիրոջը:

Քրիստոս ինք կը խօստանայ. «Թող ձեր սրտերը շխոտվուին... Ես կ'երթամ ձեզի

համար տեղ պատրաստելու» (Յովհ. 14:1-2):

Գալստեան Կիրակին մեզմէ իւրաքանչիւրին հարց կու տայ, արթո՞ւն է իմ հոգին, վա՞ռ է իմ հաւատքի ճրագը, սիրո՞ւմ կը սպասեմ Տիրոջը:

Եթէ թուլութիւն կը զգանք՝ հիմա է վերադառնալու ժամանակը: Եթէ սառնութիւն կը զգանք՝ հիմա է շերմանալու ժամանակը: Եթէ հեռացում կը զգանք՝ հիմա է մօտե՛նալու ժամանակը:

Պօղոս Առաքեալ կը յորդորէ. «Արդ, ժամանակն է քունէն արթննալու, որովհետեւ այժմ մեր փրկութիւնը աւելի մօտ է» (Հռոմ. 13:11):

Սիրելի՛ հաւատացեալներ, թող Գալստեան այս Կիրակին դառնայ մեր հոգեւոր արթնութեան օրը: Եկէ՛ք վառ պահենք մեր ճրագները, զօրացնենք մեր հաւատքը, մաքրենք մեր սրտերը եւ սիրով սպասենք մեր Տիրոջ գալուստին:

Եւ երբ Ան գայ՝ այսօր մեր սրտերուն, թէ վաղը Իր փառքով, կարողանանք լսել այդ օրհնեալ խօսքը.

«Եկէ՛ք, Իմ Հօր օրհնեալներ, ժառանգեցէ՛ք արքայութիւնը» (Մատթ. 25:34):

Թող Տէր Յիսուս Քրիստոս իր շնորհով պահպանէ մեզի արթուն, պատրաստ եւ սիրով լի, այժմ եւ միշտ, որպէսզի օրհնաբանենք Անոր փառքը յաւիտեանս. Ամէն:

ՄԵԾԵՐԸ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԱՍԻՆ

Այս դժբախտները, որոնք չեն գիտեր ո՛չ պահք, ո՛չ աղօթք, եւ, հրաժարելով փրկարար գործերէն, յոյս ունին սեւ մոգութեան միջոցով անմիջապէս բարձրանալ գերբնական բարձունքներ, չեն գիտեր, թէ մոգութիւնը կը ծանակէ իրենց եւ իրենց համար կը վառէ կեղծ երջանկութեան ու կեղծ լուսաւորութեան կրակներ: Մինչդեռ մենք՝ պոէտներս եւ փիլիսոփաներս, հոգիի վերածման հասած ենք յամառ աշխատանքով եւ հայեցողութեամբ, կամքի անդադար վարժանքներով, ձգտումներու ազնուութեամբ եւ յարատեւութեամբ: Մենք մեզի համար, Աստուծոյ կամօք, ստեղծած ենք ճշմարիտ գեղեցկութեան այգի մը՝ յիշելով այն խօսքը, թէ հաւատքը լեռներ կը շարժէ, մենք ստեղծած ենք այն միակ հրաշքը, որը մեզի թոյլ տուած մեր Տէր Աստուած:

ՇԱՐԼ ՊՈՏԼԵՌ

Ճշմարիտ բնագէտը որեւէ կերպ չի կրնար խորամուկս ըլլալ արարչութեան գաղտնիքներու իմացութեան մէջ՝ առանց Աստուծոյ միջամտութեան:

ՌՈՊԷՐԹ ՊՈՅԼ

Աշխարհի մէջ Աստուծոյ ճանչնալը կենցաղային ունայնութենէ արթնցող մտքի առաջին շարժումն է:

ՌՈՊԷՐԹ ԲՐՈՈՒՆ

ԱՆՏԻՊ**ՆԻՒԹԵՐ ՄԵՍՐՈՊ ՎՐԴ. ՆՇԱՆԵԱՆ - ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ
ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԵՆԷՆ (1907–1939)**

Հայ մտաւորականութեան պատմութեան մէջ նամակագրութիւնները յաճախ կը հանդիսանան այնպիսի սկզբնաղբիւրներ, որոնք ո՛չ միայն կը լուսաբանեն անձնական յարաբերութիւնները, այլեւ կը բացայայտեն իրենց ժամանակի մշակութային շարժումները, գիտական հետաքրքրութիւնները եւ ազգային մտահոգութիւնները:

Մեսրոպ Վրդ. Նշանեանի (հետագային եպիսկոպոս, պատրիարք Ս. Աթոռի) եւ Արշակ Զօպանեանի նամակագրութիւնը կը պատկանի հայ մշակութային եւ մտաւորական պատմութեան այն սկզբնաղբիւրներու շարքին, որոնք կարեւոր տեղեկութիւններ կը փոխանցեն 20-րդ դարու առաջին տասնամեակներուն հայագիտական հետազոտութիւններու զարգացման, ինչպէս նաեւ տարբեր մշակութային կեդրոններու միջեւ գոյութիւն ունեցած մտաւորական կապերու մասին: Ներկայ նամականին կ'ընդգրկէ մօտաւորապէս երեք տասնամեակ՝ սկսելով 1907 թուականէն եւ շարունակուելով մինչեւ 1930-ական թուականներու աւարտը, եւ կը ներկայացնէ Երուսաղէմի Ս. Յակոբեանց միաբանութեան անդամ Մեսրոպ Վրդ. Նշանեանի (1872-1944) եւ Փարիզի մէջ գործունէութիւն ծաւալող նշանաւոր գրող, հրապարակագիր ու խմբագիր Արշակ Զօպանեանի (1872-1954) միջեւ հաստատուած գրական ու գիտական հաղորդակցութիւնը: Անոնք անձամբ ալ ծանօթացած էին 1921-ին, երբ Զօպանեան այցելած էր Երուսաղէմ ու միջոց մը վայելած Հայոց վանքի ասպնջականութիւնը՝ դառնալով Ս. Աթոռոյ հաւատարիմ բարեկամներէն մէկը:

Նշանեան-Զօպանեան նամականիի զգալի մէկ մասը կը վերաբերի հայ միջնադարեան գրականութեան ուսումնասիրութեան եւ հրատարակութեան խնդիրներուն: Զօպանեան, որ իր հրատարակչական նախաձեռնութիւններով եւ գրական-թարգմանչական գործունէութեամբ կը ձգտէր հայ գրական ժառանգութիւնը ներկայացնել միջազգային մտաւորական շրջանակներուն, բազմիցս դիմած է Երուսաղէմի մատենադարանին՝ ձեռագրական նիւթերու որոնման եւ ընդօրինակութեան նպատակով: Մեսրոպ Վրդ. Նշանեան, որպէս Ս. Յակոբեանց վանքի ձեռագրատան պատասխանատու, կեղեցական եւ ձեռագրագիտական փորձառութիւն ունեցող ուսումնասիրող, պատրաստակամութեամբ կը մասնակցէր այդ աշխատանքներուն՝ ընդօրինակելով ձեռագիրներէ, երբեմն նաեւ մամուլէ հատուածներ, հաղորդելով մատենագիտական տեղեկութիւններ եւ կատարելով անհրաժեշտ գիտական ճշգրտումներ: Այս նամակագրութիւնը, հետեւաբար, կարեւոր վկայութիւն է Երուսաղէմի ձեռագրատան ունեցած դերին մասին՝ հայագիտական ուսումնասիրութիւններու մէջ:

Նամակներուն մէջ յաճախ կը յիշատակուին միջնադարեան հեղինակներու անուններ եւ Երուսաղէմի ձեռագրատան մէջ պահպանուող ձեռագիր մատենաններու թիւեր: Այդ շրջագծով յիշատակուած են, ի միջի այլոց, Ֆրիկ, Քերովբէ, Խաչատուր Կեչառեցի, Գրիգոր Աղթամարցի եւ այլ հեղինակներ: Նշանեանի նամակները կը պարունակեն նաեւ ձեռագրագիտական դիտողութիւններ, ընթերցման ճշգրտումներ եւ լեզուաբանական մեկնաբանութիւններ, որոնք կը վկայեն իր գիտական պատրաստուածութեան

եւ ձեռագրագիտական փորձառութեան մասին: Այս առումով նամակագրութիւնը հետաքրքրական աղբիւր է նաեւ հայ միջնադարեան գրականութեան ուսումնասիրութեան պատմութեան տեսակէտէ:

Միեւնոյն ժամանակ նամակները կը բացայայտեն հայ մտաւորական աշխարհի բազմակեդրոն բնոյթը: Երուսաղէմ իր հնաւանդ ձեռագրատունով եւ կրթական հաստատութիւններով կը հանդիսանայ հայ մշակութային կարեւոր կեդրոն մը, մինչդեռ Փարիզ կը ներկայացնէր արեւմտահայ մտաւորականութեան գործունէութեան միջազգային արդի հարթակներէն մէկը: Այս երկու կեդրոններու միջեւ հաստատուած նամակագրական հաղորդակցութիւնը կը վկայէ մտաւորական այն ցանցին մասին, որու միջոցով հայագիտական նիւթերու փոխանակումը եւ գիտական համագործակցութիւնը կը շարունակուէին հակառակ աշխարհագրական հեռաւորութեան:

Նամակագրութիւնը նաեւ կը լուսաբանէ ժամանակի ազգային եւ քաղաքական իրադարձութիւններու արձագանգը հայ մտաւորական շրջանակներուն մէջ: Խրիմեան Հայրիկի մահէն ետք կաթողիկոսական ընտրութեան շուրջ ստեղծուած վիճակը, Երուսաղէմի պատրիարքութեան ներքին խնդիրները, Կոմիտաս Վարդապետը Փարիզէն Երուսաղէմ փոխադրելու նիւթը, Կարկուռեան յայտնի դատավարութիւնը, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներուն Միջին Արեւելքի գաղթական հայութեան կացութիւնը, պատերազմէն ետք ստեղծուած նոր պայմանները, բրիտանական հոգատար կառավարութեան իշխանութեան շրջանին պատրիարքական ընտրութիւններու կազմակերպման հարցերը եւն. բազմիցս կը յիշատակուին նամակներուն մէջ: Նշանեան կը հաղորդէ տեղեկութիւններ նաեւ գաղթականական շարժումներուն, պատերազմի հետեւանքներուն եւ տեղւոյն հայութեան վիճակին մասին, որոնք այսօր կը ներկայացնեն պատմական կարեւոր վկայութիւններ:

Նամակագրութիւնը կը շարունակուի նաեւ պատերազմէն ետք՝ 1920-30-ական թուականներուն: Այդ շրջանի նամակները կը վերաբերին պատրիարքութեան վարչական հարցերուն, ինչպէս նաեւ հայ գրական եւ մշակութային նախաձեռնութիւններուն: Այսպիսով նամակները կը բացայայտեն ոչ միայն գիտական համագործակցութեան, այլեւ անձնական բարեկամութեան եւ փոխադարձ վստահութեան միջնորդող, որ երկար տարիներ կապած էր հայրենակից երկու մտաւորականները:

Ուստի, ստորեւ հրատարակուող նամակները, իրենց ծանօթագրութիւններով հանդերձ, նպատակ ունին փոքր ներգրում մը բերել հայ մտաւորականութեան պատմութեան եւ հայագիտական հետազոտութիւններու պատմութեան ուսումնասիրութեան մէջ:

Խմբագրական նշում

Հետեւեալ քսանչորսը կը ներկայացնեն Մեսրոպ Վրդ. Նշանեանի եւ Արշակ Զօպանեանի փոխանակած այն նամակները, որոնք ի պահ կը մնան Երեւանի Եղիշէ Զարենցի անուան Գրականութեան եւ արուեստի թանգարանէն ներս, Ա. Զօպանեանի թողօնի թիւ 5092-5110 թղթապանակին մէջ: Կան քանի մը նամակներ ալ, զորս գտած ենք Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան Կիւլպէնկեան մատենադարանի մէջ գտնուող Մեսրոպ Եպսկ. Նշանեանի անձնական նամակներու տետրակներէն: Վերջիններս նըշուած են տողատակի ծանօթագրութիւններով:

Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան նախկին դիւանապետ, «Սիոն»ի նախկին խմբագիր, բանասէր Արայ Գալայճեան (1938-2012) «Սիոն»ի նոյեմբեր-դեկտեմբեր 1972

Թուակիր համարին մէջ (էջ 419-430) հրատարակած է Չօպանեանէ Նշանեանի ուղղեալ եօթը նամակ՝ նշելով, թէ վերջինիս թղթածրարին մէջ Չօպանեանի ստորագրութեամբ կայ քառասունչորս նամակ: Հետաքրքիր ենք գիտնալու, թէ Գալայճեանի մահէն ետք արդեօք ի՞նչ եղած է մնացեալ երեսունեօթի ճակատագիրը:

Նամակները կը հրատարակենք հաւատարիմ մնալով բնագրին եւ պահպանելով ուղղագրական եւ լեզուական հիմնական առանձնայատկութիւնները: Ի պահանջել հարկին կատարուած են ուղղագրական մանր ճշգրտումներ: Շեղագրով տրուած ընդգծումները կը պատկանին նամակագիրներուն, իսկ անկիւնաւոր փակագիծերու մէջ դրուածները՝ հրատարակչին:

Ծանօթագրութիւնները կը նպատակադրեն պարզաբանել նամակներու մէջ յիշատակուած անձերը, ձեռագիր մատեանները, պատմական իրադարձութիւնները եւ գրական երկերը: Անոնք հիմնուած են հիմնականաբար մատենագիտական աղբիւրներու եւ ժամանակակից ուսումնասիրութիւններու վրայ:

* * *

Երուսաղէմ, 9/22 դեկ. 1907

Մեծայարգ

Պ. Արշակ Չօպանեան

Փարիզ

Ստացայ դեկ. 3 Թուակիր նամակնիրդ: Թէպէտ շատ տեղերէ խնդրանքներ կու գան, որոնց ամէնուն դժուար է ինձ պատասխանել վանական զբաղումներու շատութեան պատճառաւ¹, բայց որովհետեւ առաջին օրէն Ձեր գրականութիւնը սիրած եւ գործերնուդ համակրողներէն եմ, փութացի Ձեր փափաքին գոհացում տալ ընդօրինակութիւններ ընելով, զորոնք առանձին ծրարով կը ղրկեմ Ձեր հասցէին:

Ձեր յանձնարարութեան համաձայն տաղերու առաջին տողերը օրինակեցի, Ձեզ կը մնայ ընտրութիւններ ընել ձեռագիրներու թիւը եւ առաջին տողը նշանակելով: Յաղագս Հոփսիսիմէ կուսիմ² ոտանաւորը եւ յաջորդը՝ Երզնկայի երկրաշարժին վրայ³ ամբողջութեամբ գրեցի (Թուղթ 12-21), ինչպէս նաեւ Քերովբէի տաղը⁴ (Թուղթ 42-43): Թուղթ 21-24 երկու տաղերը մեր ձեռագրաց ցուցակին մէջ Քերովբէին կը վերագրուին, ուստի զանոնք ալ ընդօրինակեցի:

Իսկ Ֆրիկի մեր քով գտնուած երգերուն միայն առաջին տունները կը ղրկեմ, որպէսզի անոնցմէ ընտրութիւն ընէք, միգուցէ Ձեզի ծանօթներ գտնուին եւ մեզ աւելորդ

¹ Մեսրոպ Վրդ. Նշանեան բացի Ս. Յակոբեանց միաբանի մը առօրեայ ծառայութենէ, Սեպտեմբեր 1906-ին ստանձնած էր թանգարանապետի պարտականութիւնը, որու պատասխանատուութիւնը կը տարածուէր նաեւ մատենադարանի վրայ: Ան միաժամանակ կը վարէր Միաբանական ընդհանուր ժողովի ատենապետի պաշտօնը:

² Մեսրոպ Վրդ. Նշանեան այս տաղը ընդօրինակած է Ս. Աթոռոյ ձեռագրատան թիւ 1426 ձեռագրէն, որ 1614-ին գրագրուած ժողովածոյ մըն է (տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց Ս. Յակոբեանց», Նորայր Եպս. Պողարեան, հտ. Ե, Երուսաղէմ, 1971, էջ 90): Չօպանեան զայն հրատարակած է «Հայ էջեր» աշխատութեան մէջ (Փարիզ, 1912, էջ 6-12):

³ Երզնկայի երկրաշարժը ըստ Դարանաղցի տեղի ունեցած է 17 Յունիս 1583-ին, Ս. Լուսաւորչի երկուշաբթի օրը: Այս մասին եղած տաղը նոյնպէս թիւ 1426 ձեռագրին մէջ է, էջ 408-411 («Յարեւելից բերի ետլի...»), (տե՛ս «Մայր ցուցակ», էջ 92-93):

⁴ Հրատարակուած է «Հայ էջեր»ի մէջ, էջ 76-79: Թէեւ գրուած է, որ թիւ 1426 ձեռագրի մէջ ալ կայ տարբերակ մը, սակայն Նորայր Եպս. Պողարեան չէ նշած «Մայր ցուցակ»ի նկարագրութեան մէջ:

աշխատութիւնն ըլլայ: Այդ երգերը մեծ մասամբ № 1070 ձեռագրին⁵ մէջ ամփոփուած են, բայց դժբախտաբար տգէտ ու համբակ գրիչէ մը⁶ օրինակուած ըլլալուն՝ շատ աղաւաղումներ կրած են ու կարգալն ալ խիստ դժուար:

Ինչպէս պիտի նկատէք՝ Ձեր նշանակածներէն դուրս № 743⁷, 1070, 1133⁸ եւ 1404⁹ ձեռագրերուն մէջ տաղեր գտած են: Մեր ճոխ հաւաքածոյին մէջ կը յուսամ որ ուրիշ շատերն ալ դեռ գտնուին: Կանոնաւոր ցուցակ մը շունինք որ անմիջապէս կարենամ գտնել զանոնք, պրպտումներ ըրած պահուս եթէ հանդիպիմ, կը նշանակեմ Ձեզի համար: № 1729ի¹⁰ մէջ քանի մը ոտանաւորներ կային թէեւ, բայց անընթեռնելի ըլլալուն չկրցայ օրինակել: Ձեր նշանակած № 2216¹¹ եւ 2515¹² ձեռագրերը տաղեր շունին: Մեսրոպ վ. Տէր Մովսիսեան¹³ հապճեպով ցուցակագրելուն պատճառաւ սխալներ ըրած կ'երեւի¹⁴: Իսկ № 1071¹⁵ ձեռագրին մէջ պարունակող Վանանդեցոյ¹⁶ ոտանաւորները հա-

⁵ Յիշեալ ձեռագրին մէջ, որ ժողովածոյ մըն է, Ֆրիկէ կան հետեւեալ տաղերը. «Սուրբ կոսն դեռ չէր գոյացել» (239բ), «Ինչ ածէ մահու մատ է» (243բ), «Ջարն աղաչել պիտի զԱստուած» (245ա), «Աստուած արհնէ գայն սիրելին» (247բ), «Այս է համասփիտ ծաղիկն» (250բ), «Ես անարժան Ֆրիկ ծառայս» (257ա), «Տէր անուն յիս գրացար» (257բ), «Փափակել իմ ի ջուրն» (274ա) եւն., (տե՛ս «Մայր ցուցակ», Նորայր Եպս. Պողարեան, հտ. Դ, Երուսաղէմ, 1969, էջ 100-101):

⁶ Հաւանաբար նկատի ունի Մարտիրոսը, որ նոսրգիրով փոքր յիշատակարան մը ձգած է 279բ-ի վրայ:

⁷ ՌԿէ (1618) թուականին կ'ընդ (Իլով) գրչագրուած ժողովածոյ մըն է, որու Ա մասի գրիչն ու ստացողն է Ասար Սեբաստացի: Անդ կան տաղեր Ֆրիկէն (Ոտանատր Ֆրկանն ասացեալ ընդդէմ Ֆալաֆին), Ներսէսէն եւն., տե՛ս «Մայր ցուցակ», Նորայր Եպս. Պողարեան, հտ. Գ, Երուսաղէմ, 1968, էջ 188-190:

⁸ ՌՃԺԲ (1663) թուակիր ժողովածոյ մըն է, որու գրիչն է Միքայէլ, իսկ ստացողն է Պապի որդի Ստեփանոս: Անդ կան տաղեր Գրիգորիսէ, Միսիթարէ, Սահակէ, եւն.: (տե՛ս «Մայր ցուցակ», հտ. Դ, էջ 205-209):

⁹ ՌԿԱ (1612) թուականին Զաքարիա Արեղայի ձեռամբ Դրիմ գրչագրուած մատենան ժողովածոյ մըն է, ուր ամփոփուած են Ս. Ներսէս Շնորհալիի ստեղծագործութիւնները: Անդ տեղ գտած են նաեւ Առաքել Բաղիշեցիի եւն. տաղերը (տե՛ս «Մայր ցուցակ», Նորայր Եպս. Պողարեան, հտ. Ե, Երուսաղէմ, 1971, էջ 57-59):

¹⁰ Այս մատենան ՌՃՂ (1741) թուին կիմ անապատի մէջ գրչագրուած է Յարութիւն Վրդ. Բանտրմացիի ձեռամբ (տե՛ս «Մայր ցուցակ», Նորայր Եպս. Պողարեան, հտ. Զ, Երուսաղէմ, 1972, էջ 40-42):

¹¹ 1774 եւ 1784 թուակիր, Ադրիանուպոլիս գրչագրուած այս մատենան կրօնական բնոյթով ժողովածոյ մըն է (տե՛ս «Մայր ցուցակ», Նորայր Եպս. Պողարեան, հտ. Է, Երուսաղէմ, 1974, էջ 294-306):

¹² ՌՃԵ (1626) թուականին Երուսաղէմ գրչագրուած մատենան կրօնական բնոյթով ժողովածոյ մըն է (տե՛ս «Մայր ցուցակ», Նորայր Եպս. Պողարեան, հտ. Ը, Երուսաղէմ, 1977, էջ 189-190):

¹³ Անուանի բանասէր, պատմաբան ու եկեղեցական: Ծնած է 1865-ին, Սինիֆի Շիկահող գիւղը (աւագանի անունը Փարսաղան): Ասարած է Շուշիի թեմական, Թիֆլիսի Ներսիսեան վարժարանները, ապա Դորպատի համալսարանը: 1893-ին ձեռնադրուած է կուսակրօն ֆահանայ: Վարած է Երեւանի, Շուշիի թեմական դպրոցներու տեսչութիւնը: 1909-ին ձեռնադրուած է եպիսկոպոս: Եղած է Մայր Աթոռի մատենադարանապետը: Վարած է առաջնորդական պաշտօններ Վրաստանի, Աստրախանի, Իրանի մէջ: Հեղինակ է հայագիտական բազմաթիւ մենագրութիւններու ու յօդուածներու: Վախճանած է 1939-ին, Երեւան: Մարմինը ամփոփուած է Ս. Գայիանէ վանքի միաբանական գերեզմանատան մէջ:

¹⁴ Մեսրոպ Վրդ. Տէր Մովսիսեան առնուազն երկու անգամ այցելած է Երուսաղէմ: Առաջինը՝ 1893-ին, որպէս Ամենայն Հայոց նորընտիր կաթողիկոս Սկրտիչ Խրիմեանը՝ Երուսաղէմի ախորձակայրէն Մայր Աթոռ Ս. Էջմիածին ուղեկցող չորս հրապարակներէն մին էր երկրորդն ալ 1907-ին, երբ Երուսաղէմ եկած էր ցուցակագրելու ձեռագիր մատենաները՝ իր նպատակադրած «Ընդհանուր ցուցակ»ը ամբողջացնելու նպատակով: Մեսրոպ Մագիստրոս Երուսաղէմ մնացած է երկու ամիս եւ այդ ընթացքին նկարագրած է Ս. Յակոբեանց մատենադարանի 2555 ձեռագիր (տե՛ս Գեորգ Տէր-Վարդանեան, «Մեսրոպ Արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեան», Երեւան, 1999, էջ 71): Մագիստրոսի այլապէս գնահատելի այս կոթողային աշխատանքի թերիներուն, սխալներուն կամ վրէպներուն հետազային (Մեսրոպ Եպս. Նշանեանի ցուցմունքով) անդրադարձած է Զօպանեան եւս. «Անկարելի է ուրանալ այդպիսի խոշոր ճիգի մը բարոյական արժէքը եւ անտեսել այդ մեծածաւալ հաւաքման դրական կողմերը, բայց անհնար է նաեւ չվախճալ որ այդ հազարաւոր էջերուն մէջ գտնուին բազմաթիւ սխալներ՝ հապճեպ ու հարեւանցի աշխատանքի արդիւնք» (տե՛ս «Քրոնիկ, մեկնողները», Ա. Զօպանեան, «Անահիտ», թիւ 4, Ապրիլ-Մայիս-Յունիս 1940, էջ 38):

¹⁵ ԺԹ դարուն գրուած ժողովածոյ մըն է, ուր ամփոփուած են չափածոյ երկեր (տե՛ս «Մայր ցուցակ», հտ. Դ, էջ 102):

¹⁶ Յովհաննէս (Յովհան) Վանանդեցի (Վան, 1772-1841, Զմիւռնիա), բանաստեղծ ու մշակութային գործիչ: Նախնական կրթութիւնը Վանի Կտուց անապատին մէջ ստանալ է ետք, 1798-ին աւարտած է Պոլսոյ Մայր դպրատունը: 1799-էն սկսեալ աստուածաբանութիւն ու հայագիտութիւն դասասանդած է Զմիւռնիոյ նորաբաց Մես-

մեմատաբար նոր ժամանակի գործ են եւ ոչ այնքան շահեկան:

Մեր դպրոցի¹⁷ նախկին սաներէն պ. Գալուստ Ոսկերիչեան իւր նամակներով կ'իմացնէ թէ ամէն առթիւ Ձեր բարոյական օժանդակութիւնը կը նուիրէք եղեր իրեն, կը յուսանք որ նոյնը պիտի շարունակէք, որուն համար մեզ ալ շնորհապարտ կը թողուք:

Վեհափառ Հայրիկի մահէն վերջ¹⁸ ամէնուն հետաքրքրութեան առարկան է ապագայ կաթողիկոսին անձնաւորութիւնը: Եթէ ռուսահայ եկեղեցականները ընթրիկներ¹⁹ չքանեցունեն, ապահովաբար ընդհանուրին ընտրելին է տասնեմէկ տարիներէ ի վեր Երուսաղէմի վանքին մոռցուած մէկ անկիւնը ապրող Ազգին սիրելի երկաթեայ Պատրիարքը²⁰: Անշուշտ Դուք ալ Ձեր կարգին թերթերնուդ միջոցաւ Նորին Սրբազնութեան թեկնածութիւնը պիտի պաշտպանէք²¹ եւ արդէն չունինք ուրիշ արժանաւորագոյն մը որուն վրայ կարելի ըլլայ կանգ առնել: Հաստատ աղբիւրներ Պօլսէն կը տեղեկացնեն թէ Օրմանեան²² հայրապետական գահի հեռանկարով այժմէն սկսած է ճիգվիթական ձեռնարկներու²³: Ռուս դեսպանին ականջն ի վար կը փորտայ եղեր թէ Իզմիրլեան²⁴ դէպ ու խորիստ բնաւորութեամբը չի կրնար ռուսական շահերուն նպաստաւոր ըլլալ, իսկ հայ ժողովուրդն ալ կ'հաբեկէ եղեր տարածայնելով որ եթէ նա ընտրուի Սուլթանը նոր աղէտ մը պիտի բերէ Ազգին գլխուն: Եթէ տաճկահայերը չմասնակցին, քուէնեքու գերակշռութիւնը կը մնայ Կովկասի եկեղեցականութեան, որ կրնայ թերեւս Ազգին փափաքին հակառակ ապիկար մը կաթողիկոսացնել: Ամէն պարագայի մէջ այս անգամ Եգիպտոս, Ամերիկա, Եւրոպա, Ռումանիա-Պուլկարիա իւր պատգամաւորները պէտք է ղրկէ էջմիածին: Տեսնե՛նք ապագան ինչ անակնկալներ կը հանէ:

Սիրոյ եւ յարգանաց բարեւներով
Ձերդ՝ Մեսրոպ Վ. Նշանեան

րոպեան վարժարանէն ներս: Հայկական դասականութեան կարեւոր անուններէն մէկն է: Իր ամենայայտնի գործն է «Առ Հայաստան» («Հայաստան, երկիր դրախտավայր») բանաստեղծութիւնը, զոր երգի վերածած է Կոմիտաս Վարդապետ:

¹⁷ Նկատի ունի Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանը, որ սկզբնապէս Ռամլէի մէջ հիմնադրուած էր 1843-ի ամռան, Զաֆարիա Կոփեցի պատրիարքի օրօք: Վարժարանը Երուսաղէմ փոխադրուած է 1844-ին:

¹⁸ Նկատի ունի Ամենայն Հայոց Մկրտիչ Ա. երիմեան կաթողիկոսի վախճանումը, 29 Հոկտ. 1907-ին:

¹⁹ Intrigue (ֆր.) – դաւ, մեքենայութիւն:

²⁰ Կ'ակնարկէ Մատթէոս Արք. Իզմիրլեանի, որ Օգոստոս 1896-ին հրատարած էր Կ. Պոլսոյ հայոց պատրիարքութեան: Համիտեան կոտորածի վաղորդայնին, այսինքն նոյն տարուան Սեպտեմբերին, սուլթանի իսկ հրահանգով արտոնուած էր Երուսաղէմի վանքը, ուր հասած էր Սեպտեմբերի 14-ին (տե՛ս «Ազգապատում», Մաղափիա Արք. Օրմանեան, հտ. Գ, Երուսաղէմ, 1927, սիւնակք 5061, 5065-5066):

²¹ Զօպանեան, որ այդ շրջանին կը հրատարակէր «Անահիտ»ը (1898-1911, Ա շրջան), այդ մասին որեւէ հրապարակում կատարած չէ: Բայց 1909-ին կայացած կաթողիկոսական ընտրութեան, վերջնական՝ երկանուն ցանկի ընտրելիներէն մին հանդիսացող Եղիշէ Արք. Դուրեանի առաջարկով, Զօպանեան պիտի մասնակցէր որպէս Շապին-Գարահիսարի թեմի պատգամաւոր (տե՛ս «Եղիշէ Դուրեան սրբազանի եւ Արշակ Զօպանեանի աննշուրթիւնները», Վաչագան Աւագեան, «էջմիածին», 2024, թիւ Ժ, էջ 71):

²² Մաղափիա Արք. Օրմանեան (1841-1918), պատմաբան, աստուածաբան, եղած է Կ. Պոլսոյ հայոց պատրիարք (1896-1908), հեղինակ է բազմաթիւ հրատարակութիւններու, որոնցմէ ամենայայտնիին է եռահատոր «Ազգապատում»ը: 1913-ին Ազգային ժողովի կողմէ որպէս քննիչ ուղարկուած է Երուսաղէմ, ուր մնացած է մինչեւ 1917 թուականը:

²³ Ճիշդ է որ Մաղափիա արք. Օրմանեանի անունը բազմաթիւ անգամներ հոլովուած է 1909-ի կաթողիկոսական ընտրելիներու հաւանական թեկնածուներու շարքին, սակայն քառանուն ցանկին վրայ չէ առնուած:

²⁴ Մատթէոս Արք. Իզմիրլեան (Պոլիս, 1845-1910, Վաղարշապատ), Կ. Պոլսոյ հայոց պատրիարք (1894-1896, 1908-1909), Ամենայն հայոց կաթողիկոս (1908-1910):

*

Երուսաղէմ, 22 մայիս / 5 յունիս 1912

Մեծապատիւ պ. Արշակ Չօպանեան

Փարիզ

Անականկալ ուրախութեամբ ստացայ «Հայ էջերը»²⁵, գոր պատիւն ըրած էիք ինձ ղրկելու: Խորին շնորհակալութեանս հետ կը շնորհաւորեմ նաեւ զՁեզ, որ՝ հայ տպագրութեան 400 ամեակին առթիւ՝ գեղեցիկ միտքը յղացեր ու հրատարակեր էք այդ գողտրիկ հատորը Հայ հին բանաստեղծութեանց՝ զարդարուած բազմաթիւ մաքուր նկարներով²⁶: Երանի՛ թէ Ֆրիկի մնացեալ տաղերն ալ ամփոփէիք հատորին մէջ²⁷: Տիրայր վարդապետը²⁸ ո՛վ գիտէ ե՛րբ պիտի հրատարակէ զանոնք²⁹:

Փոքրիկ դիտողութիւն մը.- էջ 39 Ֆրիկի «Ընդդէմ ֆալաքին» տաղին 18րդ տողին մէջ «ո՛չ թուղ ո՛չ յալամ»ը զուր տեղը փոխեր էք «ոչ թուղթ ոչ ղալամն»ի: Ձեռագրին մէջինը ճիշտ է. թուղ դրօշակ ըսել է, նոյնպէս նաեւ յալամ, որ աղաւաղութիւնն է ալեմին, որմէ եւ ալեմաւ - ալամդաւ = դրօշակակիր: Թուղթ ու ղալամը նշանակութիւն մը չունին հոն, մինչդեռ դրօշակը կատարելապէս կը համաձայնի ամբողջ տանը իմաստին:

Ձեր հաճելի նուէրին աննշան փոխարինութիւն մը ընելու համար կը ներփակեմ սիրոյ տաղ մը, կարծեմ ցարդ անծանօթ, որ վերջերս ձեռքս անցաւ ընդօրինակութիւններու մէջէն: Տաղին ոչ հեղինակը եւ ոչ ժամանակը յայտնի են: Ժողովածուի մը մէջ գտած եմ զայն:

Կրկնելով շնորհակալութիւններս կը մաղթեմ Ձեզ կատարեալ քաջողջութիւն ու յաջողութիւն:

Մնամ իւ. յարգանքով
Մեսրոպ Վ. Նշանեան

Յաղագս սիրոյ (Հեղինակն անյայտ)

Թըխիկ մի առեր զիւր մօշրօպանին, իմ տուն, կերթար դէպ ի ջուր.

²⁵ «Հայ էջեր, Մեր նախնեաց բանաստեղծութիւնն ու արուեստը, յիսուներկու պատկեր», Փարիզ, տպագր. Կ. Ներսէսեան, 1912:

²⁶ Չօպանեան հատորին մէջ զետեղած է նաեւ Ս. Էջմիածնի Մայր տանարի եւ հոն գտնուող շարք մը գեղարւեստական առարկաներու լուսանկարները, զորս ան ապահոված է Կոմիտաս Վարդապետի, Գարեգին Վրդ. Յովսէփեանի, Եղիշէ Թաղէոսեանի եւն. աշխատակցութեամբ:

²⁷ «Հայ էջեր»ի մէջ Ֆրիկէ կան «Վասն ողորմութեան (Յիշէ զբան Աւետարանին...)» (էջ 35-37), «Տաղ Ֆրիկէ ասացեալ ի վերայ մեծատանն եւ աղֆատ Ղազարին (Է՛ր չես երթար...)» (էջ 38), «Ընդդէմ ֆալաքին» (էջ 39-40), «Յորժամ որ մահըն մօտենայ մարդոյն...» (էջ 41-42), «Այս է համասփիւտ...» (էջ 42), «Քան զեզ ծանօթ չունիմ...» (էջ 42-43) տաղերը:

²⁸ Աշխարհական անունով Տիգրան Մուշկամբարեան Մէլիք Տէր Յովհաննիսեան ծնած է 21 Ապրիլ 1867-ին, Արցախի Բոնակոթ գիւղը: Կրթութիւնը ստացած է ծննդավայրի ու Շուշիի դպրոցներուն, Գէորգեան նեմարանի, Ս. Փէթրոսպոլսկի, Լոմոնոսի ու Փարիզի համալսարաններուն մէջ՝ հետեւելով պատմաբանասիրական ուսմանց: Կուսակրօն ֆահանայ ձեռնարուած է Խրիմեան Հայրիկէ: Վարած է ուսուցչական պաշտօններ, ինչպէս նաեւ առաջնորդական պարտականութիւններ զանազան թեմերէ ներս: Եղած է Հիւսիսային Ամերիկայի թեմակալ առաջնորդ: Ձեռնարուած է եպիսկոպոս: Վախճանած է Նիւ Եորքի մէջ, 29 Մարտ 1956-ին (տե՛ս «Էջմիածին», Յունիս 1956, թիւ 2, էջ 24-25):

²⁹ Տիրայր Արեւայիսկոպոս Ֆրիկի «Դիւան»ը (756 էջ) ընդարձակ ուսումնասիրութեամբ եւ յաւելուածներով հրատարակած է 1952 թուականին Նիւ Եորքի մէջ, ՀԲԸՄ-ի Մեղգոնեան հիմնադրամի միջոցներով: Թէեւ աշխատասիրութիւնը նախնական հրատարակութիւն մը ունեցած էր արդէն Մայր Աթոռի «Արարատ» հանդէսի 1918-ի գոյգ թիւերուն մէջ:

- Կտրիճ մի հեծեր զիւր քուռակ շորին, իմ տուն, կերթար սուտ ի հետ:
 Գնաց եւ ասաց. «Այդ պաղտակ շորէդ, իմ տուն, խիստ եմ ծարաւած:»
- «Երկինք՝ ամպ ու ջուրն՝ պաղ ու պինտ, իմ տուն, չի կարնամ տամ քեզի:»
- «էն առջի սիրուն դու պագ մի պարտիս, իմ տուն, պիտի վճարես:»
- «Մօյ լաճ բե՛ր վկայ, թէ քեզ ե՛րբ պարտիմ, իմ տուն, հազար վճարեմ:»
- «Երկինք քեզ վկայ, երկիր եւ գետին, իմ տուն, աստեղքն եւ լուսին:»
- «Մօ լաճ դու գնա՛, ճամբէդ մի՛ մնար, իմ տուն, քո եարն չեմ ես:»
- «Քեզ գերի լինեմ, հող եմ քո ոտին, ճա՛ն, ճամբիս որ քայլեմ:»
- «Մօ լաճ խենթեցա՛ր, խելաց թափեցա՛ր, իմ տուն, կամ թէ գինո՞վ ես:»
- «Այս քո կարօտուն խելքունքս է գացեր, իմ տուն, միտս է մոլորեր:»
- «Մօ լաճ կու վախեմ հօրէս, իմ մօրէս, իմ ճան, մէկիկ եղբօրէս:»
- «Քո հայրդ մեռնի, քո մայրդ վերնաշի, իմ ճան, եղբայրդ ի գինին:»
- «Կամ ի՞նչ շահեցար այդ երկու բանէն, իմ տուն, ինձ զերդ կամեցար:»
- «Քո հայրդ ինձ աներ, եւ մայրդ ինձ զոքանչ, իմ տուն, եղբայրդ՝ կթղընկեր:»
- «Եկ որ քեզ առ[ն]եմ, կարօտ չի մեռնեմ, իմ տուն, հանգչի իմ հոգին:»
- «Այս է սէր մարմնոցն եւ որ է բարին, իմ տուն, մեզ վայելչութիւն:»

(Մատենադարան Ս. Երուսաղէմի, Ձեռ. Թիւ 1537:)

Օրինակեց՝ Մեսրոպ վ. Նշանեան

*

Երուսաղէմ, 25/7 հոկտ. 1912

Սիրելի պ. Զօպանեան

Կը ղրկեմ Ձեզի մեր այս փոքրիկ հրատարակութիւնը³⁰, որ իր տեսակին մէջ աննախընթաց բան մըն է:

Գրքոյկիս պարունակութեան հարազատութիւնը վեր է ամէն տարակոյսէ:

Հաւատացէ՛ք թէ հաղորդակցած ենք միմիայն ոգիներու հետ, որոնք բոլորովին նոր աշխարհ մը պարզած են մեր առջեւ հրաշալի եւ հոգեթով:

Եթէ ցարդ այս երեւոյթը բացատրուած իսկ չըլլայ գիտական օրէնքներով, սակայն կան ու կը մնան միշտ իրական փաստերը, որ կը ցրուեն ամէն կասկած ու թերահաւատութիւն: Մեր այս հրատարակածներէն զատ՝ դեռ ունինք ուրիշ քերթուածիկներ՝ միշտ հոգիներէն տրուած: Այս պահուս Պետրոս Դուրեանի ոգիէն առնելու վրայ ենք բաւական սիրուն ու երկարաշունչ մանկական թատերգութիւն մը:

Ուրախ պիտի ըլլայինք՝ եթէ Ձեր տպաւորութիւնը, գոնէ համառօտ կերպով, յայտնէիք մամուլի միջոցաւ:

Խ. յարգանօք՝ Մեսրոպ վ. Նշանեան

³⁰ Խօսքը կը վերաբերի «Անդրաշխարհեան արձագանգ» հատորին, զոր Մեսրոպ Վրդ. Նշանեան «ոգեկոչած է» Վահան-Ասլանի հետ: Հատորը հրատարակուած է Երուսաղէմ, 1912-ին, 32 էջ:

*

Երուսաղէմ, 15/28 յուլիս 1914

Յարգելի

Պր. Ա. Զօպանեան

Ստացայ 18 յուլիս թուականով նամակնիդ³¹:-

Աղէքսանդրի վարուց մէջ գտնուած կաֆաները սկսած եմ օրինակել. բայց բազմաթիւ զբաղումներով բեռնաւորուած ըլլալու համար, գործէ ազատ ժամերուս միայն ձեռք կ'առնեմ ընդօրինակութիւնը, որ բաւական շատ կէտէ կ'ախտի գրաւէ: Չեմ կրնար այժմէն ըսել թէ ե՞րբ պիտի կրնամ աւարտել, միայն ապահով եղէք, քանի որ գործը ձեռք առած եմ կը վերջացնեմ թերեւս մինչեւ երկու ամիս, քանի որ դուք ալ աճապարելու պէտք չէք ցուցներ:

Ես ալ ձեռքս գործ մը ունիմ.- հրատարակելու վրայ եմ Դարանաղցի Գրիգոր վարդապետի³² «Ժամանակագրութիւնը», հեղինակի միակ ինքնագիր օրինակը, որ կը զբտնուի մեր Մատենադարանին մէջ³³: Կը պարունակէ ԺԶ-ԺԷ դարու 50 տարուան ազգային-եկեղեցական ու քաղաքական դէպքերու պատմութիւնը, որ քննասէրներու համար կարեւոր աղբիւր մը պիտի ըլլայ նոյն ժամանակին անծանօթ մնացած դէպքերն ու դէմքերը, բարքերն ու հայեացքները երեւան բերելու համար: Թէպէտ ոճը ճապաղ, պատմուածքը միաձոյլ ու կանոնաւոր շարադասութենէ զուրկ, այնու հանդերձ իբրեւ պատմական նորութիւն մը ընդունելութեան պիտի արժանանայ քննասէրներու կողմէ: Հատորը պիտի բաղկանայ մօտաւորապէս 650 երեսներէ եւ կը յուսամ թէ տպագրութիւնը աւարտի երեք ամիսէն:

Սիրալիր բարեւներով

Մնամ յարգանօք

Մեսրոպ Վ. Նշանեան

³¹ Այս նամակը հրատարակած է Արայ Գալայնեան, տե՛ս «Սիոն», Նոյեմբեր-Դեկտեմբեր 1972, թիւ 11-12, էջ 421:

³² Գրիգոր Կամախեցի կամ Դարանաղցի, մականունաւեալ Բոմ, ծնած է 1567-ին: Մանկական ու պատանեկան տարիները կ'անցնէ Սեպուհ լեռան վանքերու մէջ եւ 1597-ին քահանայ կը ձեռնադրուի Ս. Լուսաւորչի վանքի մէջ: Կ'աշակերտի Սրապիոն Բաբերդցի Վարդապետին: Ջալալիներու ապստամբութեան եւ տիրող երաշտի պատճառով կը սկսի սաստիկ սով մը: Այդ շրջանին կ'անցնի Արարատեան գաւառ, ուր կը հաստատուի Սաղմոսավանքի մէջ: Երեւ տարի հոն ու շրջակայք մնալէ ետք, կը վերադառնայ Բաբերդ, ուր 1603-ին կը ստանայ վարդապետական գաւազան իր ուսուցչէն՝ Սրապիոն Վարդապետէ: Ջալալիներու ապստամբութեան հետեւանքով 1604-ին տեղի կ'ունենայ հայոց բռնագաղթը: Միջոց մը աստ ու անդ թափառելէ ետք, 1608-ին կը դառնայ Ռոտոսթայի թեմակալ առաջնորդ: Ջալալիներու ապստամբութեան ճնշուելէն ետք, 1610-ին գաղթականներու բազմահագարանոց կարաւանը կ'առաջնորդէ հայրենիք: Բեղուն ու արկածալի կեանքը կը կնքէ 1643-ին, Ռոտոսթո, ուր ալ կ'ամփոփուի իր մարմինը, Ս. Փրկիչ եկեղեցու մէջ: Թէեւ հանչուած է որպէս վարդապետ, սակայն եպիսկոպոսական աստիճան ալ ունեցած է:

³³ Դարանաղցի «Ժամանակագրութիւն»ի բնագիրը ձեռագրատան 1069 թուակիր մատեանն է, զոր Մեսրոպ Վարդապետ հրատարակած է 1915-ին, Ս. Յակոբեանց տպարանէն (667 էջ), մեկնասութեամբ Սուփիաս Արք. Պարզեանցի: Այս առթիւ ձեռագրի թղ. 245բ-ի վրայ Նշանեան ձգած է հետեւեալ յիշատակարանը. «Յիշեցի գՄեսրոպ Վարդապետն Նշանեան Բիւզանդացի, որ հրատարակութեամբ ի լոյս էած զԺամանակագրութիւն Գրիգոր Վարդապետի Դարանաղցու: Դարձեալ յիշեցի գնոգի նորոգ հանգուցեալ Տէր Սուփիաս Արքեպիսկոպոսի Պարզեանց միաբանի Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, որ ինքնայօժար նուիրաբերութեամբ սատարեաց տպագրութեան մատենիս: 1 Յունուար 1915, Երուսաղէմ, ի Վանս Ս. Յակոբեանց» (տե՛ս «Մայր ցուցակ», հտ. Դ, էջ 96-97):

*

Երուսաղէմ, 13 Հոկտեմբեր 1918

Մեծ. Տիար Արշակ Զօպանեան

Փարիզ

Սիրելի Հայրենակից,

Զեմ մոռցած 1914 յուլիս 18 թուակիր նամակով Ձեր ինծի ըրած յանձնարարութիւնը, այն է՝ Աղէփսանդրու վարուց հայերէն հին թարգմանութեան մէջ գտնուող Խաչատուր Կեչառեցիի³⁴ ու Գր. Աղթամարցիի³⁵ ոտանաւորներուն կամ «կաֆա»ներուն ամբողջական ընդօրինակութիւնը կատարել ու տալ կարելոր ծանօթութիւններ³⁶: Այս աշխատութիւնը ձեռքս էր երբ Թուրքիան ալ մտաւ ընդհանուր պատերազմին մէջ³⁷, ու յարաբերութիւններն ընդհատուեցան:

Այժմ կու գամ յայտնել՝ թէ աւարտած եմ գործին ամբողջ ընդօրինակութիւնը եւ ուրիշ լաւագոյն ձեռագրի մը հետ համեմատելով տարբերութիւնները նշանակած եմ մանրամասնօրէն: Ընդօրինակութեանս ձեռագիրը կը բաղկանայ գրեթէ 140 մեծ երեսներէ: Կը յիշեմ որ շորս տարի առաջ այդ գրքի նկարներէն 15 հատի շափ Ձեզի համար լուսանկարել տուի ու Օրմանեան սրբազանն³⁸ ալ զրկեց:

Եթէ ձեռագիրը շղրկեցի ցարդ, պատճառն այն էր որ կը սպասէի թղթատարի երթեւեկութեան աւելի կանոնաւորուելուն: Միւս կողմէ չէի գիտեր՝ թէ սիրտ ու տրամադրութիւն ունէի՞ք ասանկ գործերով զբաղելու ճգնաժամային այս օրերուն, երբ կեանքի ու մահուան հսկայ պայքարը կը մղուի ազգովին եւ Դուք Ձեր ամբողջ ջանքն ու ժամանակը նուիրած էք ազգային դատին³⁹:

Ամէն պարագայի մէջ ընդօրինակութիւնս զրկելու համար կը սպասեմ Ձեր պատասխանին:

Քիչ մըն ալ տեղեկութիւններ տամ:

Ինչպէս գիտէք՝ Դամասկոս ալ ինկաւ⁴⁰: Տեղույն Հայութեան մասին այստեղ որոշ լուրեր չեն հասած տակաւին: Կողմնակի աղբիւրներէն կը լսենք՝ թէ մաս մը կիլիկեցիներ արդէն մեկնած են իրենց տեղերը այնպէս որ այս կողմերը գտնուող գաղթական-

³⁴ Բանաստեղծ, Կեչառիսի վանահայր, որ ապրած է շուրջ 1260-1331 թուականներուն: Իր ջանքերով վերականգնուած է «Վարժ Աղէփսանդրի» հայերէն թարգմանութեան բնագիրը:

³⁵ Կաթողիկոս (1512-1544), ծաղկող ու բանաստեղծ, որ ապրած է ԺԵ-ԺԶ դարերուն: Բնակած է Մեծոփի, Վարագի, Արմէնի եւն. վանքերու մէջ, ուր գրած է տաղեր, գանձեր, ընդօրինակած ու ծաղկած է բազմաթիւ ձեռագրեր:

³⁶ Հաւանաբար խնդրոյ առարկան թիւ 473 ձեռագիրն է, որ «կը պարունակէ մեծ թիւով կաֆաներ թէ ի. Կեչառեցիէն եւ թէ Գր. Աղթամարցիէն» (տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց Ա. Յակոբեանց», Նորայր Եպս. Պողարեան, հտ. Ա, Երուսաղէմ, 1967, էջ 460-466):

³⁷ Ընդհանուր պատերազմը, հետագային՝ Առաջին աշխարհամարտը, սկսած էր 28 Յուլիս 1914-ին: Օսմանեան կայսրութիւնը պատերազմի մասնակից դարձած է 30 Հոկտեմբեր 1914-ին, երբ օսմանեան նաւատորմին միացած դաշնակից Գերմանիոյ երկու ռազմանաւերը ուժակոծած են ռուսական նաւահանգիստները՝ Օտեսան ու Սեաստոպոլը:

³⁸ Մաղափա Արք. Օսմանեան Երուսաղէմ էր Ապրիլ 1914-էն մինչեւ Նոյեմբեր 1917-ը:

³⁹ Այդ թուականներուն Զօպանեան եռանդուն գործունէութիւն կը ծաւալէր Փարիզի Հայկական մատուրական միութեան երդիքին տակ՝ կազմակերպելով երեկոյթներ, հանդէսներ, սարքելով բանախօսութիւններ: 1917-ին հրատարակած էր «Ֆրանսան եւ հայ ժողովուրդը», «Հայաստան եւ թրքական լուծը», իսկ 1918-ին՝ «Հայ կիւնը» աշխատութիւնները, ֆրանսերէնով: 1918-ին ալ կը ստանձնէ «Վերածնունդ» պարբերականի խմբագրակազմի պաշտօնը (տե՛ս «Արշակ Զօպանեան», Կարլէն Դալլաֆեան, Երեւան, 1987, էջ 334):

⁴⁰ Դամասկոսը օսմանեան զօրքին յաղթած անգլիական ու արաբական միացեալ զօրքերու հսկողութեան կ'անցնի 1 Հոկտեմբեր 1918 թուականին:

ներու թիւը 10000-12000ին մէջ է եղեր: Սահակ կաթողիկոս⁴¹ իր ժողովականներով Դամասկոս կը մնայ⁴²: Թուրքերը իրենց փախուստի խուճապին մէջ ժամանակ չեն ունեցեր զանոնք տեղերնէն շարժելու:

Նոր գրաւուած վայրերէն (Նապլուս, Աման, Սալթի շրջականներ եւն.) գաղթականներ կը հասնին հետզհետէ: Ատոնց մէջ հազուագիւտ են քիչ շատ ապրուստի միջոց ունեցողները: Սակայն շնորհիւ Անգլ. Կառավարութեան խնամոտ հոգածութեան չքաւորները կը կերակրուին ու կը պատսպարուին: Ոչ նուազ օգնութիւններ կ'ըլլան Ամերիկեան Relief-ի⁴³ կողմէ ալ:

Պաղեստինեան ճակատի գերիներու կարեւոր մէկ մասը գունդ գունդ Քաղաքէս կ'անցնի 20 օրէ ի վեր: Անոնց մէջ անմիջապէս աչքի կը զարնեն հայերը, որոնք հպարտ ու գոհունակ երեւոյթով կը քալեն իրենց ընկճուած ու կորագլուխ թուրք ընկերներու կողքին: Անոնք գիտեն՝ թէ այդ գերութեամբ իսկական գերութեան շղթաները կը փշրուին, ու մինչ թուրք զինուորի ազատութեան արեւը կը խաւարի, իրենց համար փրկութեան նոր արշալոյս կը բացուի: Այս գիտակցութեամբ կը մեկնին ուրախ ու ժպտուն, թերեւս վաղը իրենց երիտասարդական ուժն ու բազուկները ի սպաս դնելու համար ազգային ազատագրութեան սուրբ նպատակին, դաշնակիցներու վեհապանծ ու յաղթական դրօշին տակ:

Սիրալիր բարեւներով՝ Մեսրոպ վ. Նշանեան

*

Երուսաղէմ, 22 ապրիլ 1920

Մեծայարգ

Տիար Արշակ Զօպանեան

Փարիզ

Ազնիւ եւ սիրելի Հայրենակից,

Կը ներկայացնեմ Ձեզ գրաբերս Մալկարացի պ. Տաճատ Կարապետեան, որ Փարիզ կը մեկնի ուսումը կատարելագործելու նպատակով: Ինքը Արմաշի Դպրեվանուց⁴⁴

⁴¹ Ծնած է 1849-ին Խարբերդի Դատեմ Եղեգի գիւղը: Կրթութիւնը ստացած է Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանի ու Կ. Պոլսոյ մէջ: 1877-ին կուսակրօն ֆահանայ ձեռնադրուած է Եսայի Պատրիարքէ: 1874-1881 թուականներուն եղած է «Սիօն»ի խմբագիրը: 1885-ին ընտրուած է լուսարարապետ: Նոյն թուականին ձեռնադրուած է եպիսկոպոս, Մակար Ա. Կաթողիկոսէ: 1902-ին ընտրուած է Սիսի Կաթողիկոս: Վախճանած է 1939-ին, Անթիլիաս:

⁴² Ա. աշխարհամարտի շրջանին, Օսմանեան կառավարութեան կարգադրութեամբ կը ջնջուի Ազգ. սահմանադրութիւնը եւ 1 Օգոստոս 1916 թուակիր հրամանագրով ի գօրու կը դառնայ Հայոց կաթողիկոսութեան եւ պատրիարքութեան կանոնագիրը, որ կը միացնէր Սիսի ու Աղթամարի կաթողիկոսութիւնները եւ անոնց կը կցէր Երուսաղէմի ու Կ. Պոլսոյ պատրիարքութիւնները՝ ամբողջապէս խզելով արեւմտահայութեան առնչութիւնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ (Այս կանոնադրութիւնը ուժի մէջ մնաց մինչեւ նոյեմբեր 1918): Կաթողիկոս-պատրիարք կը նշանակուի Սիսի Սահակ Բ Խաչատրեան Կաթողիկոսը, որու նստավայրը պիտի ըլլար Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքը: Երուսաղէմ հասնելով Յուլիս 1916-ին՝ Խաչատրեան կը ստանձնէ կաթողիկոս-պատրիարքի պարտականութիւնները: Նոյեմբեր 1917-ին պատերազմը կը հասնի Երուսաղէմ, երբ անգլիական բանակը կը գրաւէ Յոպպէն ու Քերոնը: Օսմանեան կառավարութեան կարգադրութեամբ, հայ. յոյն եւ լատին պատրիարքները, իրենց ժողովականներու հետ, նախ կը մեկնին Նազարէթ, հոնկէ ալ Դամասկոս: Սահակ կաթողիկոս-պատրիարքի ժողովականներու կարգին էին Եղիշէ Զիլինկիրեան, Կարապետ Մազլըմեան, Պետրոս Սարահեան եպիսկոպոսները, Գրիգորիս Պոյաճեան ու Գարեգին Խաչատուրեան Վարդապետները եւն.: Անոնք կը բնակէին տեղայն ազգային կալուածներուն մէջ: Իրենց հետ էր նաեւ Մաղափա Արք. Օրմանեան:

⁴³ Հաւանաբար նկատի ունի American Committee for Relief in the Near East նպաստամատոյց կազմակերպութիւնը, որ հիմնադրուած էր 1915-ին:

⁴⁴ Կ. Պոլսոյ պատրիարքութեան հոգեւոր բարձրագոյն ուսումնական հաստատութիւնը, որ հիմնադրուած

նախկին սաներէն էր, եւ Օսմ. կառավարութեան ձեռամբ ընկերներուն հետ տեղափոխուեցաւ այստեղ⁴⁵, ուր ժամանակ մը ուսումը շարունակեց⁴⁶:

Պ. Տաճատ բարեբարոյ, ազնիւ ու աշխատասէր երիտասարդի մը տպաւորութիւնը թողած է մեր վրայ ու տարակոյս չունիմ թէ այդ գովելի յատկութիւններով պիտի յաջողի նպատակին հասնիլ ու օգտակար անդամ մը ըլլալ իր ցեղին:

Կը խնդրեմ յատկապէս որ բարեհաճիք ի հարկին փորձառու խորհուրդներով օգնել ու շղանալ Ձեր բարոյական աջակցութիւնը պ. Տաճատին, որ վերջին տեղահանութեանց ժամանակ անհետացած ընտանիքէն միակ անդամը մնացած է ու ամէն մասամբ արժանի է Ձեր ու Ձեր միջոցով ազգային բարեսէր անձերու մասնաւոր ուշադրութեան:

Կանխայայտ շնորհակալութեամբ եւ յարգանքներով,

Ձերդ՝ Մեսրոպ վ. Նշանեան

*

Երուսաղէմ, 16 Մայիս 1921

Սիրելի Բարեկամ,

Ստացայ Դամասկոսէն զրկած Ձեր 11 մայիս թուակիր նամակը: Այստեղ նորութիւն մը չկայ Ձեզ հաղորդելու արժանի: Պոլիսէն ո՛չ մէկ լուր Դուրեան Սրբազանի մեկնումի մասին: Անպատճառ ճամբայ ելլելէ առաջ նամակի կը սպասէ: Հարկաւ Դուք գրեցիք տեղէդ, ինչպէս մտադրած էիք. թերեւս Ձեր գիրը ստանալէ յետոյ փութացնէ մեկնումը: Երէկ գիր մը առի Տ. Սահակ կաթողիկոսէն, որ, ի միջի այլոց, կը գրէր հետեւեալը. «Իցիւ Պ. Զօպանեան պատրիարքական ընտրութիւնը յաջողցնէր. երկար ատեն Աթոռին թափուր մնալը շատ տուժել տուաւ Միաբանութեան նիւթապէս եւ բարոյապէս: Ըստ մեզ ներսէնի, դուրսէնի⁴⁷ խնդիրը փակուած համարելու է: Դուրեան Սրբազանը⁴⁸, որոյ մասին թերթերը կարծեմ ակնարկութիւններ ըրին, շատ հեզահամբոյր եւ նոյնիսկ օտարներէն ալ սիրուած է, իսկ իր բազմակողմանի հմտութեամբ հսկայ մի է հայ հոգեւորականութեան մէջ⁴⁹. Միաբանութեան բարոյական եւ մտաւորական զարգացման մեծ մղում եւ

Էր 1889-ին, Խորէն Արք. Աշրգեան Պատրիարքի շրջանին, Մաղափա Եպս. Օրմանեանի վերատեսչութեամբ: Դպրեվանքի սաներու շարքին եղած են Բաբգէն Կիլիկեանի, Թորգոմ Գուշակեանի, Գարեգին Խաչատուրեանի, Մեսրոպ Նարոյեանի եւն. նման մեծանուն հոգեւորականներ: 1916-ին վանքը դադարեցուցած է իր գործունէութիւնը:

⁴⁵ Կ. Պոլսոյ ու Երուսաղէմի պատրիարքութեանց միացումէն ետք Արմաշի դպրեվանքի աշակերտութեան մնացորդացը Յունիս 1916-ին տաճանելի համբողջութեամբ կը դրկուի Երուսաղէմ, գլխաւորութեամբ Մամբրէ Սիրունեան ու Խորէն Թաշնեան նորոգ ձեռնարկելով արեւմտեան: Անոնք Երուսաղէմ կը հասնին Յուլիսի վերջերուն (տե՛ս «Ազգապատում», դրկտ. Տ. Զաւէն Ա. Քննյ. Արզումանեան, հտ. Դ, Նիւ Եորք, 1995, էջ 143):

⁴⁶ Համաշխարհային պատերազմի շրջանին դասաւանդութիւնը շարունակուած է ժառանգաւորաց վարժարանէ ներս: Մաղափա Արք. Օրմանեան, որ նոյն շրջանին կը գտնուէր Երուսաղէմ, միանգամայն կը դասախօսէր երեք դասարաններու: Իր իսկ վկայութեամբ, դասերը կը դադրին 25 Ապրիլ 1917-ին, երբ կը զինուորագրուին աշակերտները (տե՛ս «Խոհի եւ Խօսի», Մաղափա Արք. Օրմանեան, Երուսաղէմ, 1929, էջ 345-346):

⁴⁷ Երուսաղէմի Առաքելական Ս. Աթոռի Պատրիարքը կ'ընտրուէր Կ. Պոլսոյ Ազգային Երեսփոխանական ժողովի կողմէ, միաբանութեան կողմէ ներկայացուած ընտրելիներու մէջէն: Ըստ Ազգ. Սահմանադրութեան (1863) եւ Միաբանական կանոնագրին (1909) ընտրելիները պէտք է ըլլային Երուսաղէմի Ս. Յակոբեանց միաբանութեան անդամ: Յարութիւն Արք. Վեհապետեան Պատրիարքի 1910-ին պատահած վախճանումէն ետք հանրային ֆինանսական նիւթ կը դառնայ պատրիարքական թեկնածուներու շարքին միաբանութեան դուրսէն եւ ընտրելիներ ընդգրկելու հարցը:

⁴⁸ Եղիշէ Արք. Դուրեան (1860-1930), որ Երուսաղէմի միաբանութեան անդամ չէր, երկար տարիներ եղած էր Արմաշի դպրեվանքի մղիչ ուժը, Զմիտնիոյ առաջնորդ. Կ. Պոլսոյ Պատրիարք, Ազգային կեդրոնական վարչութեան եւ Կրօնական ժողովի ատենապետ: Այնքան մեծ էր իր վայելած հեղինակութիւնը, որ 1911-ի կաթողիկոսական ընտրութեան արդիւնքին ձայն մը պակաս ստացած էր Գէորգ Ե. Կաթողիկոսէն: Դուրեան յայտնի էր նաեւ իր գիտական ուսումնասիրութիւններով ու գրական ստեղծագործութիւններով:

⁴⁹ «Ժամանակ» օրաթերթի խմբագիր, յայտնի հրապարակագիր Քասիմ (Միսսի Գօշունեան, 1863-1913), որ շըր-

զարկ կրնայ տալ: Աշխատելու է ընտրութիւնը յաջողցնելու համար»: Ուրախալի է որ ամէն կողմէ միտքերը պատրաստուած են միեւնոյն ուղղութեամբ, միայն աշխատելու է որ Պոլսոյ մէջ ընտրական ձեւակերպութիւններու չկառչին եւ որեւէ կերպով նպատակը իրականանայ: Ասոր համար ալ հարկ է Դուրեան Սրբազանի փութով ժամանումը⁵⁰, քանի յապաղի, կը վախնամ թէ գործը երթալով պաղի:

Շատ ուրախ պիտի ըլլանք եթէ Պերութի մեր հողային խնդիրը արդար լուծում մը գտնէ. անհամբեր կը սպասենք Ձեր աւետաբեր լուրին: Ձեր հասցէին երեք նամակներ եկան. երկուքը՝ Եգիպտոսէն, մէկը՝ Պերութէն: Ենթադրելով թէ կրնան կարեւոր պարունակութիւն ունենալ, դարձուցի Պերութ Barun՝ի հասցէին: Հեռագիր չէ եկած:

Լուսանկարիչ Թումայեան լուսանկարները եւ ապակիները բերաւ, ըստ հետեւեալի՝

| | | |
|-------------------------------------|--------------|---------------|
| 102 ապակի | 13x18, 30 էն | 3060 Եգ. ՂՐԶ. |
| 112 ապակի | 9x12, 12 էն | 1344 Եգ. ՂՐԶ. |
| 5 ապակի | 24x30, 50 էն | 250 Եգ. ՂՐԶ. |
| | | 4654 Եգ. ՂՐԶ. |
| Դուք կանխաւ վճարած էիք | | 3000 Եգ. ՂՐԶ. |
| Ստացագրի փոխարէն վճարեցի մնացորդացը | | 1654 Եգ. ՂՐԶ. |

Ապակիներն ու լուսանկարները առանձին 15 տուփերու մէջ քովս պահած եմ:

Լուսանկարիչ Ծերունեանը այսօր պիտի տեսնեմ ու հաղորդեմ Ձեր գրածները:

Հայր Մատթէոսին⁵¹ չպիտի կրնանք խաղալ դժբախտաբար Ձեր սարքած comedien, որովհետեւ իր ներկայութեան նամակնիդ սկսայ կարգալ, ու այդ մասը չկրցայ իրմէ ծածկել: Խնդալէն մարեցաւ:

Փոխադարձ կը բարեւեն ինծի հետ Հ. Դաւիթ⁵², Հ. Մատթէոս, Հ. Սիմէոն⁵³, պ. Դաւիթ Յովհաննէսեան⁵⁴ եւ Մուրատեան⁵⁵:

Ձերդ սիրով
Մ. վ. Նշանեան

ջանի անուանի մտատրականներէն մին էր, Դեկտեմբեր 1912-ին հրատարակած «Իրապէս մեծ մարդ ունի՞նք մեր մէջ» յօդուածի հետեւեալ վկայութեամբ կը հաստատէ Սահակ Կաթողիկոսի խօսքը. «Դուրեան սրբազան մեր արդի հրատարակիչն վրայ ամէնէն զարգացած ու ամէնէն շատ պաշար ունեցողն է» (տե՛ս Քասիմ, «Օրուան մտածումներ (1908-1913)», աշխատասիրութեամբ՝ Սեւան Տէյիրմենեանի, 2014, Պոլիս, էջ 441):

⁵⁰ Եղիշէ Աւբ. Դուրեան Եգիպտոսէն, «Բէնէ» նստով Յոպպէ կը հասնի 24 Յունիս 1921-ին: Տեղւոյն Ս. Նիկողայոս վանքի պատրիարքարանի յարկաբաժինը կարճ միջոց մը բժշկական մեկուսացումի ենթարկուելէ ետք, ան յաջորդ օրը՝ 25 Յունիսին, շոգեկառնով կը մեկնի Երուսաղէմ (տե՛ս Մեսրոպ Վրդ. Նշանեանի օրագրութիւնը, Երուսաղէմի պատրիարքարանի Ս. Թէոդորոս ձեռագրատուն, քիւ 3746):

⁵¹ Մատթէոս Գայրգնեան, աւագանի անունով Պետրոս, 1861-ին ծնած էր Պոլիս: Կրթութիւնը ստացած է Երուսաղէմի ժառանգատրաց վարժարանի մէջ: Ձեռնադրուած է 1886-ին: Վանքէն ներս, տարբեր ժամանակներուն, վարած է հաշուակալի, ելեւտից ու կալուածոց տեսուչի պաշտօններ, եղած է անդամ Տնօրէն ժողովի: 1924-ին եպիսկոպոս ձեռնադրուած է:

⁵² Դաւիթ Տէրտէրեան, 1872-ին ծնած է Չնֆոլ: Ձեռնադրուած է 1898-ին: Վարած է լուսարարապետի պաշտօն, 1907-էն մինչեւ իր ողբերգական մահը, 1 Սեպտեմբեր 1921-ը, երբ իր իսկ յարկաբաժինի մէջ դաշունահարուեցաւ մարաշցի Սարգիս Ճամպազեան անուն անձէ մը:

⁵³ Սիմէոն Թէլեան, ծնած է 1870-ին, Պոլիս, ձեռնադրուած՝ 1898-ին: Վարած է տեսչական պաշտօններ: Վախճանած է 1928-ին:

⁵⁴ Յայտնի խեցեգործ (1884-1953), որ անգլիական իշխանութեանց կողմէ՝ Քէօքսհիպլէն յատկապէս Երուսաղէմ բերուած էր վերանորոգելու համար քաղաքի պատմական յուշակոթողներու յախնապակեայ մասերը: Կը նկատուի հայկական աւանդական յախնապակեգործութեան հիմնադիրը Երուսաղէմի մէջ:

⁵⁵ Յայտնի գեղանկարիչ Աւետիս Մուրատեան, որ միջոց մը հանգրուանած է Երուսաղէմի վանքը:

*

Երուսաղէմ, 22 Օգոստոս 1921⁵⁶

Ազնիւ եւ սիրելի Բարեկամ,

Ստացայ Աղէքսանդրիայէն ամսոյս 9 թուականով Ձեր նամակը:

Ձեր մեկնելէն⁵⁷ վերջ քանի մը նամակներ եկան, որոնցմէ քանի մը հատը ղրկեցի Աղէքսանդրիա Պ. Կիրճեանի⁵⁸ միջոցաւ, մնացեալները Փարիզ Ձեր հասցէին. կը յուսամ թէ ստացած էք:

Քանի մը օր առաջ ձեռագիրները լուսանկարող Ամերիկացիէն գիր մը առի, որ կը յանձնարարէր հետեւեալը.

En écrivant a Mr. Le Professeur Tchobanian, ayes la bonté de lui demander, s'il veut imprimer, en petit style, sous chaque reproduction des anciens, M. S. S. Arméniens, que nous avons photographies, "PHOTO. AMERICA COLONY. JERUSALEM." car il attend savoir dans quelle manière nous voulions le nom de notre maison à figurer⁵⁹.

Կը փութամ զայս տեղեկացնել Ձեզ, որպէսզի հարկ եղածը կատարէք: Լուսանկարող Ամերիկացիին հասցէն է.

Mr. G. E. Matsson, Pour Dept. Photographique,

Colonie Américaine. Jérusalem.

Ձեմ տարակուսիր թէ զուարթ ու հաճելի ծովային ճամբորդութիւն մը ունեցաք եւ ըստ բաւականի կազդուրեցիք Ձեր գրգռուած ու վաստակաբեկ շիղերը: Եւ այդ շատ պէտք էր պատրաստուելու համար նորանոր աշխատանքներու եւ յոգնութիւններու: Ինչպէս քանիցս ըսած եմ, այնքան վարժուեցանք Ձեր հաճելի ընկերութեան, որ մեկնելովնիդ զգալի պարապ մը թողուցիք Ձեր ետեւ: Շարունակ վրանիդ կը խօսինք ու անհամբեր կը սպասենք Ձեր լուրերուն:

Հաւանական է որ Պոլսոյ Ազգ. Ժողովը Յառաջիկայ ուր, ամսոյս 26ին կատարէ Երուսաղէմի պատրիարքական ընտրութիւնը. չեմ կարծեր որ տեղի տան յապաղումներու եւ ձգձգումներու⁶⁰: Պէտք է Պատրիարքը որքան կարելի է շուտով պաշտօնին գլուխը անցնի⁶¹. այդ կը պահանջեն Վանքին կենսական շահերը ու աւագ կարեւորութիւն ունեցող խնդիրները:

⁵⁶ Նամակը մեքենագրուած է:

⁵⁷ Չօպանեան Երուսաղէմէն կը հեռանայ 6 Օգոստոս 1921-ին եւ Աղեքսանդրիոյ համբով կը մեկնի Փարիզ (տե՛ս Մեսրոպ Վրդ. Նշանեանի օրագրութիւնը, Երուսաղէմի պատրիարքութեան Ա. Թէոդորոս ձեռագրատուն, թիւ 3746):

⁵⁸ Հաւանաբար խօսքը արեւմտահայ անուանի գրող Միխայել Կիրճեանի (Պոլիս, 1879-1965, Գահիրէ) մասին է, որ այդ շրջանին կ'աշխատէր Աղեքսանդրիոյ Օսմանեան դրամատան մէջ (տե՛ս Հայկ. Սովետական հանրագիտարան, հ. 5, էջ 494):

⁵⁹ «Երբ փրոֆ. Չօպանեանի գրէք, բարեհաճեցէք իրեն հարցնել, թէ արդեօք կը փափաքի՞ մեր լուսանկարած հին հայկական ձեռագրերուն (M.S.S Armeniens) իրաբանչիւր վերարտադրութեան տակ, փոքր տառերով տպուի՞ «PHOTO. AMERICA COLONY. JERUSALEM.», քանի որ ան կը սպասէ գիտնալու, թէ ինչ ձեւով կ'ուզենք, որ երեւի մեր հրատարակչութեան անունը» (Ֆր.):

⁶⁰ Եղիշէ Արք. Դուրեան Պոլսոյ Ազգային ժողովի կողմէ Երուսաղէմի պատրիարք կ'ընտրուի 23 Օգոստոս / 5 Սեպտեմբեր 1921-ին, Երկուշաբթի («Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», 24 Օգոստոս / 6 Սեպտեմբեր 1921):

⁶¹ Դուրեանի պատրիարքական ընտրութիւնը կը հաստատուի Մեծն Բրիտանիոյ ճորն Ե. թագաւոր-կայսեր կողմէ, 29 Հոկտեմբեր 1921-ին: Պատրիարք Սրբազանի գահակալութեան աշխարհիկ ու եկեղեցական պաշտօնական գոյգ հանդէսներն ալ տեղի կ'ունենան 7 Նոյեմբերին, Երկուշաբթի («Ժողովուրդի ձայնը-Ժամանակ», 9 / 22 եւ 19 / 23 Նոյեմբեր 1921):

Իզմիրի ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼԸ⁶² Չիլիսկիրեան Եպիսկոպոսի⁶³ թեկնածութիւնը կը պաշտպանէ ու այդ ուղղութեամբ բրօքականտ կ'ընէ⁶⁴: Վերջինս շաբաթ մը առաջ մեկնեցաւ, ըստ երեւոյթին անդարձ, որովհետեւ ամբողջ գոյքերը հետը տարաւ, մնացեալները ցրուեց ու սենեակներուն բանալիները յանձնեց:

Մանօթ դատերը վերջին ծայր կը զբաղեցնեն ու կը մտահոգեն մեզի: Ատոնց տոսիէները մօտերս պիտի զրկուին Վսեմ. Տիար Նորատունկեանին⁶⁵, ինքը կրնայ ծանօթ ըլլալ Կարկուրի խնդրոյն⁶⁶, որ ժամանակին Ազգ. Պատրիարքարանը այնքան զբաղեցուց. թերեւս օգտակար խորհուրդներ տայ ու թելադրութիւններ ընէ:

Պերութի տեսուչը կը գրէ թէ Ֆրանսացի փաստաբանը մօտ ժամանակէն պիտի սկսի դատի ու ամէն ապահովութիւն կուտայ եղեր թէ պիտի շահի: Խաղ Վարդապետ⁶⁷ այժմ սկսած է գնահատել Տոբթոր Մելքոնեանի այդ գործին մէջ ցոյց տուած եռանդն ու աշակցութիւնը:

Ինծի հետ ծանօթներ եւ բարեկամներ ջերմապէս ու սիրով կը բարեւեն զՁեզ:
Ձերդ Մեսրոպ վ. Նշանեան

[ձախիւն ձեռագրով]

Լուսանկարներու ապակիները յանձնուեցան ամբողջութեամբ:

*

Երուսաղէմ, 26 Յունիս 1923

Սիրելի Բարեկամս,

Որքա՛ն ամօթապարտ եմ քովերնիդ՝ Ձեր նամակներուն պատասխան չգրելու համար: Եթէ զբաղումներուս առատութիւնը պատճառ բերեմ, չպիտի արդարանամ եւ իրա-

⁶² Ազգային, գրական եւ քաղաքական պարբերական, որ 1871-1909 եւ 1919-1922 թուականներու միջեւ հրատարակուած է Զմիւտնիոյ մէջ, տարբեր պարբերականութեամբ: Խմբագիրներն եղած են Մատթէոս Մամուրեան, ապա Հրանդ Մամուրեան:

⁶³ Եղիշէ Եպս. Չիլիսկիրեան ծնած էր Խարբերդ, 1863-ին: Սան Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանի: Կը ձեռնադրուի 1886-ին: Երուսաղէմի վանքին ներս վարած է տարբեր պաշտօններ: Եղած է Բաղէշի առաջնորդ: Եպիսկոպոս՝ 1910-ին: Ունի բազմաթիւ հրատարակութիւններ:

⁶⁴ Այս կարգի հրատարակութիւններու իբրեւ օրինակ կարելի է ցոյց տալ թ՝ Պ. ստորագրութեամբ «Երուսաղէմի պատրիարքութիւնը» («Արեւելեան մամուլ», 2 Օգոստոս 1921), Լոյօֆէթ Մալխասեան ստորագրութեամբ «Երուսաղէմի պատրիարքի ընտրութեան առթիւ» (անդ, 6 Օգոստոս 1921) եւն. յօդուածները:

⁶⁵ Գաբրիէլ Նորատունկեան (Պոլիս, 1852-1936, Փարիզ), յայտնի դիւանագէտ, քաղաքական գործիչ ու փաստաբան: 1912-1913 թթ. միջեւ կարճ միջոց մը վարած է Օսմանեան կայսրութեան արտաքին գործոց նախարարի պաշտօնը: Եղած է Ազգային պատմութեան անդամ, ՀԲԸՄ-ի փոխնախագահ:

⁶⁶ Յովհաննէս Ը. Զմիւտնիացի Պատրիարք, իր գահակալութեան տարիներուն (1850-1860) Ս. Յակոբեանց վանքին համար գնած էր Յոպպէի ու Մամիլլայի պողոտաներուն միջեւ ընդարձակ տարածք մը (Մեծ Արտ անուանեալ): Իր յաջորդի՝ Եսայի Դ. Թալասցի Պատրիարքի շրջանին, ձիպրայէլ Կարկուտ անուն փաստաբան մը սեփականութեան թողութիւն կեղծելով դատ կը բանայ՝ նոյն տարածքին տիրանալու համար: Այս դատը տասնամեակներ շարունակ լուրջ գլխացաւանք մը դարձած է Երուսաղէմի, ինչպէս նաեւ Կ. Պոլսոյ պատրիարքութեանց համար: Կարկուտի ժառանգորդները 1919-ին, օգտուելով օսմանեան իշխանութեանց հետաքննման տեղի ստեղծուած վարչական տակնուվրայութենէ, դարձեալ դատ բացած էին Ս. Աթոռոյ դէմ (տե՛ս «Տեղեկագիր Կարկուտեան դատին», Կալուածոց տեսուչ Տ. Մատթէոս Եպս. Գայրգնեանի տեղեկագիրը՝ կարդացուած յԱտենի Տնօրէն ժողովի, «Միոն», Փետր.-Մարտ 1929, թիւ 2-3, էջ 80-91):

⁶⁷ Խաղ Վրդ. Աջապահեան ծնած էր 1883-ին, Սիս: 1909-ին Սիսի Մայր տաճարին մէջ ձեռնադրուած էր կուսակրօն ֆահանայ: 1916-1922 թթ. միջեւ վարած է Երուսաղէմի պատրիարքութեան Պէրոյթի տեսչութեան պաշտօնը: 1929-ին Եպիսկոպոս օծուած է Հալէպի մէջ, ձեռամբ Տանն Կիլիկիոյ Սահակ Բ. Կաթողիկոսի: Վախճանած է 1968-ին, Պէրոյթի մէջ:

ունք պիտի ունենաք առարկելու թէ ծանրագրադ ըլլալը չկրնար արդարացնել բարեկամները բոլորովին մոռնալը: Հետեւապէս ինձ կը մնայ եղբայրական ներողամտութիւննիդ խնդրել, բայց միեւնոյն ժամանակ հաւաստիացնել՝ թէ Ձեր անուշիկ յիշատակը անեղծ պահած եմ ու անկեղծ զգացումներ կը տածեմ միշտ Ձեզ հանդէպ:

Վերջին անգամ ստացայ *Roseraie*ի երկրորդ հատորը⁶⁸ 17 մարտ թուակիր նամակով⁶⁹: Այդ նամակին մէջ գրած էիք. «Կը զրկեմ Ձեզի նաեւ 10 օրինակ, զոր կը խնդրեմ յանձնէք Պատրիարքին, եւ միասին որոշեցէք թէ հող որո՞նց նուէր տալու է եւն.»: Բնականաբար ես կը սպասէի գիրքերու ծրարին հասնելուն, մինչդեռ Դուք Սրբազան Պատրիարքին զրկած էք եղեր գիրքերը: Անիկա Ձեր նամակին կը սպասէ եղեր, ես ալ գալիք գիրքերուն ու ասանկով երկու ամիս ժամանակ կ'անցնի, առանց իրարմէ տեղեկութիւն ունենալու: Անցեալները դիպուածով խօսք բացուեցաւ գիրքերու մասին ու խնդիրը պարզուեցաւ: Ահա կը տեսնէք թէ Ձեր վերջին նամակի պատասխանը այսքան յապաղելուն պատասխանատու չեմ:

Անմիջապէս Սրբազան Պատրիարքի հետ որոշեցինք եւ Նորին Ամենապատուութեան քառթերով *Roseraie*ներ զրկուեցան հետեւեալներուն. Սրբ Հէրպըրթ Սամուէլի⁷⁰, Երուսաղէմի կառավարչի օգնական Մր. Լիւքի⁷¹, Լատինաց Պատրիարք Մօնս, Լուի Պարլասինայի⁷², Ֆրանչիսկեաններու Կիւսթոտին⁷³, Յունաց Պատրիարք Տ. Դամիանոսի⁷⁴ եւ Տոմինիկեան Միաբանութեան: Առաջին շորսերը շնորհակալութեան եւ գնահատական նամակներ զրկեցին Պատրիարք Հօր: Ատոնց օրինակները կը ներփակեմ: Երուսաղէմի Կառավարիչ Մր. Սթորս⁷⁵ այժմ Լոնտոն կը գտնուի, երբ վերադառնայ, հատ մըն ալ անոր պիտի զրկուի: Կը մնան երեք հատ, որոնք պիտի տրուին ըստ յարմարութեան եւ արժանաւորութեան:

Մասնաւոր շնորհակալութիւն ինծի նուիրուած հատորին համար, որ սիրուն անակրնկալ մը ու գրական հաճելի վայելք մը եղաւ: Գիրքը կատարելապէս յաջողած է ամէն մասերով, թէ տպագրութեան մաքրութեամբ եւ թէ նկարներու յստակութեամբ: Հրատարակուած այնքան հիացական ու գնահատական յօդուածներու շարքին քով, որուն հետեւեցայ ուշադիր ընթերցումով, իմ գնահատականս շատ տկար պիտի ըլլար: Ինձ կը մնայ միայն շնորհաւորել սրտանց ու մաղթել, որ բախտ ունենաք յաջորդները հետզհետէ հրատարակելու:

Աւելորդ է ըսել՝ թէ այս կարգի գործերը մեր ազգային դատին ամէնէն արժէքաւոր բրոքականտներ են, եւ դուք այս կողմէն, երկար տարիներու ընթացքին, անզուգական ծառայութիւն ըրած էք: Թո՛ղ Տէրը Ձեզի երկա՛ր, քաջողջ ու բարեյաջող կեանք պարգեւէ, Սիրելիս, որ այդ ուղղութեամբ կարողանաք շարունակել Ձեր ազնիւ ու անզ-

⁶⁸ La Roseraie d'Arménie-ի այս երկրորդ հատորը հրատարակուած էր Փարիզի մէջ, Ernest Leroux հրատարակչատան կողմէ: Հատորը կը ներկայացնէ միջնադարեան հայ գրականութենէ ընտիր նմոյշներ՝ Ֆրիկի, Կոնստանդին Երզնկացիի, Յովհաննէս Թլկուրանցիի, Առաքել Բաղիշեցիի եւն. հեղինակութեամբ:

⁶⁹ Այս նամակը հրատարակած է Արայ Գալայնեան, տե՛ս «Սիօն», Նոյեմբեր-Դեկտեմբեր 1972, թիւ 11-12, էջ 424:

⁷⁰ Հէրպըրթ Սամուէլ (1870-1963) 1920-1925 թուականներու միջեւ, երբ Երուսաղէմ կը գտնուէր անգլիական հովանաւորութեան տակ, եղած է Պաղեստինի Բարձր կոմիսարը:

⁷¹ Հէրի Լիւք (1884-1969) 1921-1926 թուականներու միջեւ եղած է Երուսաղէմի կառավարչի օգնական:

⁷² Պարլասինա, որ ծնած էր 1872-ին Քաստելնուօ, Իտալիա, որպէս Երուսաղէմի լատին պատրիարք պաշտօնավարած է 1918-էն մինչեւ մահը՝ 1947 թուականը:

⁷³ Այդ թուականին Ֆրանչիսկեան միաբանութեան Ս. Տեղեաց Կիսթոտն էր Ֆլետինանթօ Տիոթալեվի (1872-1936), զոր այդ պաշտօնը վարած է 1918-1924 թուականներուն:

⁷⁴ Յունաց Դամիանոս Ա. Պատրիարքը (1848-1931) պաշտօնավարած է 1897-1931 թուականներու միջեւ:

⁷⁵ Ռանըլտ Սթորս (1881-1955) որպէս Երուսաղէմի կառավարիչ պաշտօնավարած է 1917-1926 թուականներուն:

նահատելի գործունէութիւնը:

Այստեղ մեր գործերը կարելիին չափ կանոնաւոր կ'ընթանան, թէեւ մտահոգութիւններ պակաս չեն, գլխաւորապէս դրամական անձկութեան եւ պարտապահանջներու պատճառած տաղտուկներու երեսէն: Ա՛խ ե՛րբ պիտի ազատէինք այս անիծեալ պարտքէն, որ կարողանայինք քիչ մը ազատ շունչ առնել:

Դատերը կը մնան հոն, ուր էին երկու տարի առաջ: Կարկուրի խնդրին մէջ փաստաբանները պիտի աշխատին դատը մերժել տալ պատճառաբանելով նախ Միւրուրի գէմանի⁷⁶ պարագան եւ երկրորդ՝ թէ դատ մը, որ նախորդ կառավարութեան օրով օրինական ամէն խողովակներէ անցած եւ վերջնական վճիռ ստացած է, այլեւս կարելի չէ որ լսուի: Եթէ յաջողին, աղէկ. հակառակ պարագային, գործը շատ ու շատ պիտի երկարի. որովհետեւ հակառակորդ կողմը մեծ եռանդ ու գործունէութիւն ցոյց կու տայ եւ ամէն միջոցներով կը հետամտի պաշտպաններ ու համակիրներ շահիլ: Մենք ալ պարտաւորուած ենք մարդիկ շահելու համար որեւէ զոհողութեան առջեւ կանգ չառնել: Արդէն փաստաբաններու համար ոսկեհանք մը եղան այս խնդիրները: Սակայն կը վախնամ որ այս խնդիրները վերջը վերջը ելմտական *catastrophe* մը պիտի պատճառեն վանքին: Ճէմալ փաշայի⁷⁷ գրաւած եւ քաղաքապետութեան իւրացուցած գետնին դատը չէ սկսուած տակաւին: Փաստաբանը կ'ըսէ թէ երբ դատի մտնենք, այն ժամանակ Կարկուրները, իբրեւ շահակից կողմ, իրենք ալ պիտի միջամտեն, ինչ որ աղէկ չ'զտներ զանազան նկատումներով⁷⁸:

Երբ Հայաստան եւ Պոլիս մուտքի արտօնութիւններ ստացուին, որուն համար դիմումներ եղած են, ես, Սիմէոն⁷⁹ եւ Մատթէոս վարդապետներ պիտի մեկնինք էջմիածին եպիսկոպոսանալու⁸⁰: Մեզի պիտի ընկերանան Ռումանիոյ եւ Պեսարապիոյ առաջնորդ Յուսիկ վրդ. Զոհրապեան, որ Պոլիս կը սպասէ, Սմբատ վրդ.⁸¹ եւ Սեբաստիոյ առաջնորդ Սարգիս վրդ. Աճէմեան⁸²: Իրաւ է որ երբեք խոհեմութիւն չէ ասանկ ժամանակ մը ճամբորդութիւն ընել, բայց մարդ երբեմն կը ստիպուի առանց իր կամքին հոսանքէն քշուիլ: Մենք ալ հիմա այդ դիրքին մէջ կը գտնուինք:

Բարգէն Սրբազան⁸³ ժամանակէ մը ի վեր հոս է եւ ուսումնասիրութիւններով կը

⁷⁶ Վաղեմութեան ժամկէտ (թրք.):
⁷⁷ Օսմանեան կայսրութեան վերջին շրջանի ռազմական ու քաղաքական առաջնորդներէն, Իթթահատ եւ Թէրաֆի կուսակցութեան յայտնի ետեակի անդամ՝ Թալէաթի ու Էնվէրի հետ: Ա. Աշխարհամարտի ընթացքին Ճէմալ փաշա եղած էր Սուրիոյ եւ Պաղեստինի ռազմական ու քաղաքական կառավարիչը, մինչեւ 1917 թիւը, երբ անգլիական զօրքը վերջ դրաւ տարածաշրջանէ ներս օսմանեան իշխանութեան:
⁷⁸ Ճէմալ փաշայի բաղձանքներէն մէկն էր հանրային պարտէզներ ստեղծել Երուսաղէմի մէջ: Այդ նպատակին համար ան Ս. Աթոռէն կը պահանջէ վանքին ետեւը պարիսպներու ներքեւ եղած ընդարձակ գետինը կամ Մեծ արտը, որ կը գտնուէր պարիսպէն դուրս, Մամիլլայի ու Յոպպէի պողոտաներու շրջակայքը: Մեծ արտի անյարմարութեան պատճառով, Ճէմալ ուզեց վանքի մերձակայ տարածքը, որ յանձնուեցաւ քաղաքապետարանի իրաստութեան (տե՛ս, Մաղաֆիա Արք. Օսմանեան, «Խոհի եւ Խօսք», Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1929, էջ 349):
⁷⁹ Սիմէոն Մ. Վրդ. Թէլեան (1870-1928) դժբախտաբար հիւանդութեան պատճառով չէ կրցած մեկնիլ Մայր Աթոռ եւ վաղահաս վախճանի պատճառով չէ եպիսկոպոսացած:
⁸⁰ Միաբանական ընդհ. ժողովը 6 Փետր. 1923-ի նիստին եպիսկոպոսութեան արժանի նկատած էր այս անունները, սակայն անոնք դէպի Մայր Աթոռ ճամբայ պիտի կարենային ելլել 5 Օգոստոս 1924-ին (տե՛ս Մետրոպ Վրդ. Նշանեանի օրագրութիւնը, թիւ 3748):
⁸¹ Սմբատ Վրդ. Գագազեան 1910-էն սկսեալ երկար տարիներ եղած է Երուսաղէմի Պատրիարքական փոխանորդը Պոլսոյ մէջ, ուր վարած է նաեւ վարչական պաշտօններ:
⁸² Սարգիս Վրդ. Անէմեան ծնած էր 1857-ին, Պիլէնիկ: 1898-ին ձեռնադրուած էր կուսակրօն քահանայ: 1920-1924 թուականներուն կը վարէր Սեբաստիոյ առաջնորդութիւնը: Կը վախճանի 1926-ին, Մարտիլի մէջ:
⁸³ Բարգէն Արք. Կիլիկեան (Այնթապ, 1868-1936, Անթիլիաս) բանասէր, պատմաբան, աստուածաբան, վարած է առաջնորդական պաշտօններ: 1924-1930 թուականներուն Երուսաղէմի մէջ կ'ուսուցչագործէ ժառանգաւորաց

զբաղի⁸⁴: Կ'ըսուի թէ մօտերս պիտի գայ նաեւ Իզմիրի նախորդ առաջնորդ Ղեւոնդ Եպս. Դուրեան⁸⁵:

Ինծի հետ սիրով կը բարեւեն Ձեզ Մատթէոս վրդ. եւ պ. Դաւիթ Յովհաննէսեան:

Ձերդ սիրով,
Մեսրոպ վ. Նշանեան

*

Երուսաղէմ, 13 Օգոստ. 1923

Սիրելի Բարեկամս,

Հաճոյքով ստացայ Ձեր 22 յուլիս ամսաթիւ երկար նամակը⁸⁶:

Քաղաքիս կառավարիչ Mr. Storrs նոր վերադարձած ըլլալով Անգղիայէն, Սրբազան Պատրիարքը անոր ալ *Roseraie* մը ղրկեց եւ ստացաւ ներփակ շնորհակալութեան քառթը:

Առիթ ունեցայ Գրիգոր Վարդապետ Գուսանի⁸⁷ հետ տեսնուելու Կոմիտաս Վարդապետի ձեռագիր աշխատութիւններու մասին: Գրիգոր վարդ. կը յանձնարարէ թէ Անոր գործերէն պատառիկ մը անգամ չ'գտնուիր իր քով եւ թէ բոլոր ունեցածները յանձնուած են պատրիարքարան: Վարդապետը իմ խնդրանքովս իր յայտարարութիւնը գրի առաւ ինծի ուղղեալ մասնաւոր նամակով մը, զորոնք կը ներփակեմ:

Արարատի⁸⁸ մէջէն անձամբ օրինակեցի Գագիկի աւետարանին վրայ Մեսրոպ Եպիսկոպոսի⁸⁹ ուսումնասիրութիւնը⁹⁰, զոր կը ստանաք ներկայիս հետ: Չուզեցի ուրիշի յանձնել, կասկածելով որ մի գուցէ անխնամ ընդօրինակութիւն մը ընեն:

Ձեր կողմէ պատրաստուած օրինակուելիք բնագիրներու ցուցակը շատ փնտռեցի ու չկրցայ գտնել դժբախտաբար. չեմ գիտեր ո՞ր ծակը պահուերտեր է: Եթէ օրինակը կայ քովերնիդ, հաճեցէք հատ մը ղրկել:

Բարգէն Եպիսկոպոս հոս է տակաւին եւ կը պատրաստուի Ամերիկա ուղեւորուիլ, եթէ յաջողի իր եղբօրն ու պարագաներուն անցագրի գործողութիւնները լրացնել, ինչ որ, կ'երեւի թէ, այս տարի կարելի չպիտի ըլլայ, Պաղեստինի քօթան լեցուած ըլլալուն համար: Սրբազանը այստեղ պարապ նստած չէ, այլ կ'աշխատի քանի մը ուսումնասիր-

վարժարանի մէջ, կ'ըլլայ «Սիոն»ի նոր շրջանի խմբագիրը: 1931-էն մինչեւ վախճանը՝ 1936 թիւը՝ արձուակից-կաթողիկոս Տանն Կիլիկիոյ:

⁸⁴ Բարգէն Եպս. Կիլիկիւնեան 1923-ին ուխտաւորաբար կ'այցելէ Ս. Յակոբեանց վանք, ուր միջոց մը մնալէ ետք կը նամբորդէ դէպի Եւրոպա:

⁸⁵ Ղեւոնդ Վրդ. Դուրեանի Երուսաղէմ այցելութեան վերաբերեալ որեւէ արձանագրութեան չհանդիպեցանք:

⁸⁶ Այս նամակը հրատարակած է Արայ Գալայնեան, տէս «Սիոն», Նոյեմբեր-Դեկտեմբեր 1972, թիւ 11-12, էջ 425-427:

⁸⁷ Պոլսեցի, ծնած էր 1891-ին: Զայնագրութիւն եւ երաժշտութիւն ուսանած է Կոմիտաս վարդապետէ: 1923-ին ուխտաւորաբար կ'այցելէ Երուսաղէմ, ուր Արարատեան եւ Վասպուրական որբանոցներու մէջ կը կազմէ երկսեւ երգչախումբեր:

⁸⁸ Կրօնաբարոյական, բանասիրական եւ հայագիտական ամսագիր, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտօնական հրատարակութիւնը: Լոյս տեսած է 1868-1919 թուականներու միջեւ:

⁸⁹ Մեսրոպ Եպս. Տէր Մովսիսեան, Մագիստրոս (1865-1939), ակամատր եկեղեցական, եղած է Մայր Աթոռի մատենադարանի հիմնադիրը եւ վարիչը, վարած է առաջնորդական պաշտօններ, հրատարակած է բազմաթիւ յօդուածներ: Զոհն է համայնավարական բռնանշումներու:

⁹⁰ Տէս Մեսրոպ Եպիսկոպոս, «Գագիկ թագաւորի Աւետարանը», «Արարատ», Ապրիլ 1910, թիւ 4, էջ 332-341:

րուծիւններով, որոնք գրեթէ աւարտած են: Եթէ Ամերիկա երթալու ըլլայ, կը յուսայ նպաստներ ճարել յօգուտ վարժարանի եւ Տպարանի: Յարդ սանթիմ մը իսկ օգնութիւն չէ հասած մեզի ոչ Ամերիկայէն, ոչ Եգիպտոսէն: Այդ ուղղութեամբ Սրբազան Պատրիարքը կարեւոր անձնաւորութեանց դիմումներ կատարեց Ամերիկա եւ Բաբելոն եպս.ի պաշտօն տրուած է՝ յաջողութեան համար հետապնդումներ ընելու տեղւոյն վրայ:

Կարկուրի խնդրոյն առած երեւոյթը կարծեմ գրուած է Ձեզի: Եթէ Կարկուրի Գասթեմունի տարագրութեան եօթն տարիները հաշուի առնուի, այն ժամանակ Միւտոյի գէմանի պարագան հաստատուած պիտի ըլլայ եւ Երուսաղէմի դատարանէն պիտի մերժուի դատը: Այս պատճառաւ մինչեւ յառաջիկայ նոյեմբեր Կարկուրի ժառանգորդներուն ժամանակ տրուեցաւ, որպէսզի ապացուցանեն թէ հայրերնին տարագրութեան տարիներուն զրկուած էր իր իրաւունքները պաշտպանելէ անձնապէս կամ փոխանորդներու միջոցաւ: Եթէ ապացոյցներ չկարողանան ներկայացնել, դատը մեզի ի նպաստ շահուած պիտի ըլլայ նախնական դատարանին մէջ, սակայն հակառակորդները իրաւունք պիտի ունենան վերաքննութեան դիմելու: Նորատունկեան էֆ. իր վերջին նամակով կը բացատրէր թէ չկայ օրէնք մը, որ այդ տեսակ իրաւունքէ մը զրկէ որեւէ աքսորական կամ բանտարկեալ: Մեր կողմէ գրուեցաւ Պոլիս որպէսզի հետամուտ ըլլան ու տեղեկանան թէ Կարկուր այդ եօթն տարուան ընթացքին դատեր վարած է ի պաշտպանութիւն իր իրաւունքներուն:

Մեր փաստաբանները խորհուրդ կու տան առայժմ չմտնել ճէմալ փաշայէ բռնագրաւուած գետնի դատին մէջ, որովհետեւ, կ'ըսեն, Կարկուրները, իբրեւ շահագրգռուող կողմ, քիթերնին մէջը պիտի խօթեն, ու այդ տեսակ անհաճոյ միջամտութիւն մը աղէկ տպաւորութիւն չպիտի թողու: Ինչպէս անցեալ նամակովս գրեցի, դարձեալ կը կրկնեմ թէ այս խնդիրներուն մէջ ամէնէն ամուր գէնքն եւ ուժեղ փաստը դրամն է: Մենք ստիպուած ենք ծախքերու առջեւ կանգ չառնել, չզրկելու համար վանքը իր գոյութեան միակ աղբիւրը եղող ստացութիւններէն: Եւ այս շնախատեսուած ծախքերն են որ հիմնովին կը խախտեն մեր հաւասարակշռութիւնը ու երկիւղ ունինք որ *catastrophé*ի մը յանգի հետեւանքը:

Նիւթական այս աննախընթաց տագնապը բնականաբար միջոց եւ հնարաւորութիւն չի տար Տպարանը վերաբանալու եւ նոր հրատարակութեանց ձեռնարկելու, ցորքան ապահովութիւնը չունենանք որ արդիւնքով կարելի պիտի ըլլայ գէթ ընելիք ծախքը ծածկել:

Կոմիտաս վարդապետը Երուսաղէմ փոխադրելու ծրագիրը կը ցաւիմ որ անիրագործելի է: Վանքի բնակարանները ամբողջութեամբ գրաւուած են գաղթականներէ, այնպէս որ պարապ խորշ մը կամ անկիւն մը չէ մնացած: Նոյնպէս եւ վանականներու թաղը: Եթէ պարապ սենեակ գտնուէր իսկ, զուրկ պիտի ըլլար այն յարմարութիւններէն, որ կը պահանջէ Կոմիտաս Վարդապետի վիճակը ունեցող հիւանդ մը:

Կը յուսամ թէ ներկայ օդափոխութիւնը կը կազդուրէ ու կը զօրացնէ Ձեզ ֆիզիքապէս եւ Փարիզ վերադարձնուող նոր ուժով ու նոր եռանդով կը լծուիք Ձեր աշխատութեանց ու կարող կ'ըլլաք գլուխ հանել Ձեր առաջագրած գրական վաստակները: Ընդունեցէք շերմագին բարեւներս:

Ձերդ միշտ սիրով
Մեսրոպ Վ. Նշանեան

*

Երուսաղէմ, 24 հոկտ. 1923⁹¹

Սիրելի Բարեկա՛մ,

Ամսոյս 15 թուակիր նամակով ըրած խոստումիս համաձայն, աւարտելով Թուլկուրանցիի երկար քերթուածի օրինակութիւնը, Ձեր հասցէին առանձին ապահովագրեալ ծրարով ներկայիս հետ կը յանձնեմ թղթատարին:

Քերթուածը օրինակեցի խնամքով գրուած ամէնէն հին ձեռագրէն եւ համեմատելով ուրիշ մէկ լաւագոյն ձեռագրի հետ, տարբերութիւնները նշանակեցի լուսանցքներում:

Նոյն քերթուածը ուրիշ հինգ ձեռագրերու մէջ ալ կը գտնուին, բայց համեմատաբար նորագոյն ժամանակներու օրինակութիւններ են, եւ շատ տեղեր աղաւաղուած ու սխալաշատ, այդ պատճառաւ աւելորդ աշխատանք պիտի ըլլար մէկիկ մէկիկ անոնց հետ ալ համեմատել ու տարբերութիւնները նշանակել: Կը յուսամ թէ ներկայս պիտի կարողանայ գոհացնել Ձեզ:

Թիւ 1647 ձեռագրին⁹² ետեւ Թուլկուրանցիի մէկ ոտանաւորը կար, որ կը սկսէր «Աչեր ի՞նչ ես անցեր յետեւս» տողով:

Ենթադրելով որ թերեւս չունիք, այդ ոտանաւորն ալ օրինակեցի եւ կը ներփակեմ:

Ձերմագին սիրով եւ բարեւներով,

Ձերդ՝

Մեսրոպ Վ. Նշանեան

*

Երուսաղէմ, 12 Փետր. 1924⁹³

Սիրելիս պ. Զօպանեան,

Գիտեմ թէ ինչ աստիճան կը հետաքրքրուիք, այդ պատճառաւ կը փութամ աւետել թէ այսօր Երուսաղէմի Նախնական Դատարանը Կարկուրեան դատի վճիռը արձակեց ի նպաստ մեզի:

Վճիռը տրուեցաւ հետեւեալ հիմերուն վրայ.

1. Դատարանը իրաւասու չէ այդ դատը տեսնելու.
2. Պարտականութիւն չունի առ այդ.
3. Դատը ժամանակին Հանգուցեալ Եսայի պատրիարքի⁹⁴ անձին դէմ բացուած ըլլալուն՝ Վանքին վրայ շտարածուիր.

4. Վաթսուն տարիներէ ի վեր Վանքը սեփականատէր եղած է խնդրոյ առարկայ գետնին եւ գործին մէջ ժամանցութեան (միւրուրի գէման) պարագայ կայ:

Վճռագրին մէջ ընդարձակօրէն բացատրուած են այս պատճառաբանութիւնները, որոնց հիման վրայ դատարանը մերժեց դատը, առանց անոր էութեան մէջ մտնելու:

⁹¹ Նամակը գրուած է «Լուսարարապետութիւն Առաք. Ս. Աթոռն Երուսաղէմի» պաշտօնաթուղթին վրայ:

⁹² Թիւ 1647 ձեռագիրը, որ Բերթոլդական ժողովածոյ մըն է, գրուած է Ամիր Բաղաթի մէջ, 1485 թուականին («Մայր ցուցակ ձեռագրաց Ս. Յակոբեանց», հտ. Ե, Երուսաղէմ, 1971, էջ 467-468):

⁹³ Նամակը գրուած է «Լուսարարապետութիւն Առաք. Ս. Աթոռն Երուսաղէմի» պաշտօնաթուղթին վրայ:

⁹⁴ Ծնած է 1825-ին, Թալաս: Պատրիարքութեան պաշտօնը վարած է 1864-էն մինչեւ իր մահը՝ 1885 թուականը: Ինքն է հիմնադիրը «Սիօն» հանդէսի, զարգացնողը վանքի տպարանի, բացողը լուսանկարչանոցի:

Հաւանական է որ հակառակորդք վերաքննութեան դիմեն: Բայց ներկայ վճիռը մեծապէս կ'ազդէ վերաքննիչ Ատեանին վրայ եւ կ'ասկած չկայ որ հոն ալ գործը ի նպաստ մեզ կը լուծուի:

Կարկուրի ժառանգորդները երկու տարիէ ի վեր յոխորտ կեցուածք մը ունէին ու ժամանակ ժամանակ կը տարածայնէին՝ թէ դատը շահելու վրայ են:

Հեռաւոր ու մօտաւոր ազգականներ ալ խմբուած էին Երուսաղէմ, կարկանդակէն իրենց բաժինը ստանալու համար: Հիմա ամէնքն ալ կորագլուխ եղան:

Այս յաջողութիւնը իսկապէս շնորհաւորելի է, թէեւ շատ սուղի նստաւ ու պիտի նստի տակաւին, եթէ դատը վերաքննուի:

Անուրանալի է այս գործին մէջ մատուցած ծառայութիւնը Տիար Մոստիշեանի⁹⁵, որ Պոլսոյ պետական դիւաններէն կարելոր փաստաթուղթեր հայթայթեց, որոնք մեծապէս օգնեցին ժամանցութեան պարագան հաստատելու համար ու ապահովեցին մեր յաջողութիւնն ու յաղթանակը:

Կը յուսամ թէ քաջառողջ էք ու կը հետեւիք ձեր գրական զբաղումներուն:

Մենք ալ աղէկ ենք ու Ձեր որպիսութիւնը կը հարցնենք:

Սիրով ու կարօտով
Ձերդ՝ Մեսրոպ Վ. Նշանեան

*

Երուսաղէմ, 21 Մարտ 1928⁹⁶

Սիրելի Պարոն Զօպանեան,

Ստացայ ամսոյս 11 թուակիր Ձեր նամակը ու շատ ուրախացայ կարդալով որ ՌՕԶԸՐԷ-ի երրորդ հատորը մամլոյ տակ է⁹⁷: Կը մաղթեմ որ յաջողութեամբ ի կատար ածէք զայն:

Ձեր նշանակած ձեռագրերու մասին կը փութամ պատասխանել:

Թիւ 1133⁹⁸ - Տաղ: Երգ Սոխակիմ: Գովեստ հաւուց, եւն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ - «Զստացող գրոցս զմեղապարտ (անունը անընթեռնելի) եւ ծնողս իւր Պապին, Մարիամն եւ զամենայն մերձաւորս նորա զկենդանիս եւ զհանգուցեալսն ի Քրիստոս: Ընդ նոցին զՄիքայէլ գրչի, եւ թէ զմեզ յիշէք սրտի մտօք եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ: Ի թվականութեանս Հայոց ՌՃԺԲ (1663) գրեցաւ, Օգոստոսի Ա ումն, որ է օրհնեալ յաւ»:

Թիւ 1239⁹⁹ - Բաղգիրք Երեմիայի: Յովհ. Տաղբ թոչնոց: Եպիփանու վասն բարուց կենդանեաց: Մատթ. Պատասխանիք Տանկաց:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ չունի: Գիրն է բոլորգիր եւ նոտրգիր խառն: ԺԵ-ԺԶ դարերու գրութիւն կը կարծուի:

⁹⁵ Յարութիւն Մոստիշեան, ծնած 1859-ին, Կեսարիա: Յայտնի իրաւագէտ, անդամ Օսմանեան պետութեան Վերաբնիչ ատեանի, վարած է ազգային տարբեր պաշտօններ ալ: Յիշեալ թուականին Մոստիշեան կ'ատենապետէ Ազգային ժողովին:

⁹⁶ Նամակը մեքենագրուած է:

⁹⁷ Զօպանեանի La Roseaie d'Arménie-ի երրորդ հատորը հրատարակուած է 1929-ին, Փարիզի մէջ:

⁹⁸ Տե՛ս՝ «Մայր ցուցակ ձեռագրաց Ս. Յակոբեանց», հտ. Դ, Երուսաղէմ, 1969, էջ 205-209:

⁹⁹ Անդ, էջ 391-394:

Թիւ 1647 - Պատմութիւն Յովասափի: Մեկնութիւն Արարածոց գրոց: Պատմութիւն Լուսաւորչի: Պատմութիւն եւ Խրատ Խիկարայ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ - «Գրեցաւ գեղեցիկ Տաղարանս պատմութեան ձեռամբ Մովսէս Երիցու Արծկէցոյ, ի քաղաքս Ամիթ, ընդ հովանեաւ կաթուղիկէ Սուրբ Թէոդորոսին, ի ԶԼԴ (1485) ամին, ի վայելումն համշիրաք եղբօր մերում Տէր Յովանիսին եւ զաւակացն Հապիպշին եւ Դաւթին որ յայսմ ամի ծնաւ, զոր Տէր Աստուած ընդ երկայն աւուրս պահեսցէ, ամէն»:

Կարսի Գագիկ Թագաւորի Աւետարանին մէջ գտնուած նկարներուն տիրող գոյներն են կապոյտ եւ կարմիր, յետոյ կու գան մուշ դեղին, սեւ եւ երբեմն ալ մանիշակագոյն:

Առողջութիւնս լաւ է, բայց կը զգամ թէ հետզհետէ կը ծերանամ եւ ուժերս կը նուազին, այսու հանդերձ կարողութեանս ներածին չափ գործերովս կը զբաղիմ: Վանական կեանքը կանոնաւոր կ'ընթանայ: Սրբազան Պատրիարքի անցեալ տարուան հիւանդութիւնը շատ մտահոգեց ու տագնապեցուց մեզի: Հիմա աղէկ է, բայց մեծ զգուշութեամբ կը պահենք ու կը խնամենք զինք, որովհետեւ վերջին հիւանդութենէն բաւական ընկճուեցաւ Սրբազանը:

Թէպէտ ժամանակէ մը ի վեր ընդհատեցան մեր թղթակցութիւնները, բայց ես թէ ի լրոյ եւ թէ թերթերու հրատարակութիւններէն միշտ տեղեկացած եմ Զեր Ամերիկա ճամբորդութեան ու գործօն կեանքի մասին: Շատ ուրախ եմ որ առողջ էք ու միեւնոյն եռանդով կը շարունակէք Զեր ազգային ու գրական օգտակար գործունէութիւնը: Բոլոր սրտով կը մաղթեմ որ երկար ապրիք, միշտ առողջ ու միշտ զուարթ:

Ընդունեցէք ջերմագին բարեւներս:

Մեսրոպ Եպս. Նշանեան

*

15 Մայիս 1930¹⁰⁰

Սիրելի Բարեկամ,

Ընդունեցայ երէկ ամսոյս 9 ամսաթիւ Զեր ցաւակցականը: Մեզ համար ալ անսպասելի եղաւ մեր ողբացեալ Սրբազանին մահը¹⁰¹: Զատկի Կիրակի կէսօրին անկողին մտաւ եւ ճիշդ եօթնեակ մը վերջ հոգին աւանդեց: Սակայն վերջին տարին մանաւանդ կը նկատէինք որ հետզհետէ կը տկարանար եւ ուժերը կը նուազէին: Մահը առաջ եկաւ բրօսթաթի մեծնալէն որ սկսաւ դժուարամիզութիւն պատճառել ու նեղացնել զինքը: Բրօսթաթը արդէն գոյութիւն ունէր սկիզբէն: Երեք տարի առաջ վէրք մը գոյացած էր միզանցքին վրայ, զոր գործողութեամբ ճեղքեցին ու մաքրելով անցքը՝ հանգստացուցին զինք: Իսկ բրօսթաթը հանելու համար նոր գործողութիւն մը կարեւոր էր, սակայն բժիշկները նկատի ունենալով իր տկար կազմն ու առաջացած տարիքը, կը վախնային որ կրնայ վտանգաւոր հետեւանք ունենալ, ինչպէս շատերուն կը պատահի եղեր ատանկ պարագաներուն: Հանգուցեալն ալ կարեւորութիւն չէր տար ու հեզութեամբ կը պատասխանէր բժիշկներու զգուշական խորհուրդներուն եւ կատակի կը տանէր: Երկու ամիս առաջ սկսեւ է եղեր արիւն հոսիլ միզանցքէն, ու իր հիւանդապահին խստիւ կը պատուիրէ եղեր որ մարդու բան չըսէ, ան ինքնիրեն կ'անցնի ըսելով: Մահէն ետք իմա-

¹⁰⁰ Այս մեքենագիր նամակը փաղուած է «Անձնական նամակներ Մեսրոպ Արք. Նշանեանի» հաւաքածոյէն, որ ի պահ կը մնայ Երուսաղէմի Կիլիկեան մատենադարանի մէջ:

¹⁰¹ Եղիշէ Արք. Դուրեան վախճանած է 27 Ապրիլ 1930-ին:

ցանք ասիկա:

Ամէնքս հիմա կը զգանք թէ անժամանակ էր այս կորուստը: Սրբազանը ժամանակ մըն ալ պէտք էր ապրէր, որպէսզի գլուխ հանէր սկսած գործը ու գոնէ քանի մը սերունդներ հասցնէր: Իր ներկայութիւնը միայն մեծ յենարան մըն էր Միաբանութեան համար, ըլլալով ինք Հոգատար Կառավարութենէն վերջին աստիճան յարգուած եւ օտարներուն քով յարգ ու վարկ վայելող մեծ անձնաւորութիւն մը: Հիմա կատարեալ անելի մը առջեւ կը գտնուինք, մանաւանդ յաջորդ Գահակալին ընտրութեան եղանակը հիմակուրնէ սկսած է մտահոգել մեզ: Կառավարութիւնը իր ուրոյն տեսակէտը ունի այս խնդրին մէջ, զոր դուք ալ գիտէք, թերթերը, մանաւանդ կուսակցականները, եւ այս ու այն մէջմէկ կողմ կը քաշեն ընտրութեան հարցը: Ազգին բաղձանքները, Միաբանութեան իրաւունքները ու Կառավարութեան տեսակէտը իրարու հետ հաշտեցնելը բաւական բարդ խնդիր մըն է, որուն տակէն ելլելը դիւրին չէ: Ներքին դժուարութիւններն ալ պակաս չեն: Տնտեսական յոյժ ծանր ճգնաժամ մը անցընելու վրայ է այս պահուս վանքերնիս, ճնշուած ըլլալով աւելի քան 90000 անգլիական ոսկի պարտքի մը տակ: Զանազան դատավարութիւններ, որոնց մեծագոյնն էր Կարկուռեանը, ու անակնկալ պատահարներ պատճառ եղան պարտքերու աճումին: Միւս կողմէ, պէտք է խոստովանիլ թէ տնտեսութենէ ու հաշիւէ չէր հասկնար մեր սիրելի Հանգուցեալը եւ ոչ անհրաժեշտ պէտքերու եւ լիւքսի համար մեծամեծ ծախքեր ընել կու տար, առանց վանքին նիւթական կացութիւնը նկատի առնելու: Այսու հանդերձ մեծագոյն ապերախտութիւն պիտի ըլլար ուրանալ այն երախտիքը, զոր ունեցաւ ան կրթական ու գրական տեսակէտով, ու այսօր կ'ողբանք դառնապէս որ իր սկսած գեղեցիկ եւ ազգօգուտ ձեռնարկները իրենց լրման չհասցուցած բաժնուեցաւ մեզմէ առյաւէտ: Օրհնեալ ըլլայ իր անուշիկ յիշատակը:

Ամսոյս 5-ին գումարուած Միաբանական Ընդհանուր Ժողովը Պատրիարքական Տեղապահ ընտրեց մեզ, ու երկու <օր> յետոյ Հոգատար Կառավարութեան ներկայացուելով, սկսանք գործի գլուխ անցնիլ: Միաբանութեան համակրանքին հետ Ազգին գէթ բարոյական օժանդակութիւնն ալ պէտք է, որպէսզի կարենանք յաջողապէս գլուխ հանել պաշտօնը, ու կարելի փութով մեծանուն Հանգուցեալին արժանաւոր յաջորդ մը նստեցնել Երուսաղէմի Պատրիարքութեան այրիացած Գահին վրայ: Ի լրումն դժբախտութեան Ընդհանրական Հայրապետին մահն ալ վրայ հասաւ¹⁰², երկրորդ կնճիռ մը ստեղծելով Ազգին համար:

Սրտագին բարեւներով, Զերդ
Մեսրոպ Եպս. Նշանեան

*

Երուսաղէմ, 26 Օգոստոս 1930¹⁰³

Մեծայարգ
Տիար Արշակ Զօպանեան
ՓԱՐԻԶ

Պատուական եւ Սիրելի Բարեկամ,

Մեծագոյն հաճոյքով ստացայ Զեր ամսոյս 10 թուակիրը: Կը յուսամ թէ մինչեւ պատասխանագրիս Զեզ հասնիլը կատարելապէս կազդուրուած ու վերադարձած կ'ըլլաք Փարիզ ի գլուխ Զեր աշխատութեանց: Կը մաղթեմ որ միշտ ըլլաք քաջողջ ու կորովի ու

¹⁰² Ամենայն Հայոց Գեորգ Ե կաթողիկոսը վախճանած էր 8 Մայիս 1930-ին:
¹⁰³ Այս նամակը մեքենագրուած է:

տակաւին շատ ու շատ տարիներ նուիրէք Ձեր բեղմնաւոր կեանքը Հայ դատին եւ Հայ գրականութեան:

Ներկայ բազմազբաղ վիճակիս մէջ հազիւ այսօր ժամանակ գտայ գրելու պատասխանագիրս: Գործերուս առատութիւնը եւ զանազան մտահոգութիւններ զափազանց գրգռած են ջիղերս, ու կը զգամ թէ երկար հանգիստի մը պէտք ունիմ ես ալ: Բայց կ'երեւի թէ այդ հանգիստը պիտի չկրնամ վայելել ցորքան շրջանորոշի տակաւին պատրիարքնիս ու թափուր մնայ Աթոռնիս: Ընտրութիւնը կախում ունի Հոգատար Կառավարութեան տալիք պատասխանէն, ու մենք այդ պատասխանին կը սպասենք, որ երկու ամիսը անցաւ ու չէ հասած տակաւին: Երկու անգամ լուր զրկեցի Քաղաքիս Կառավարչին, որ յայտնեց թէ Լոնտոն Ֆօրէն Օֆիսին յանձնուած է գործը ու անկէ պիտի գայ պատասխանը: Այստեղ կը կարծուի թէ Կաթողիկոսի միջամտութիւնը մտածել կու տայ կեդրոնի Կառավարութիւնը, ըստ որում անիկա կը գտնուի Պոլշէվիկեան երկրի մը մէջ:

Այս խնդրին մէջ զուր տեղը կը խժբծուի Երուսաղէմի Միաբանութիւնը, իբր թէ անիկա իւրացուցած ըլլայ պատրիարքին ընտրութիւնը եւ կապտած ըլլայ Ազգին մասնակցութեան իրաւունքը: Դուք պէտք է յիշէք թէ հանգուցեալ Դուրեան Սրբազանի ընտրութեան ժամանակ Հոգատար Կառավարութիւնը բացայայտօրէն ըսաւ թէ պատրիարքական ընտրութեան մէջ չի կրնար ընդունիլ արտասահմանի մասնակցութիւնը: Այն ատեն թէ՛ այստեղէն եւ թէ՛ Պոլշէն, որ դաշնակիցներու գրաւման տակ կը գտնուէր տակաւին, եղած դիմումներուն վրայ հաւանեցաւ որ ըստ Սահմանադրութեան կատարի ընտրութիւնը, պայման դնելով որ ատիկա նախընթաց մը չըլլայ յառաջիկայ ընտրութեանց պարագային, ու առաջարկեց որ ընտրական նոր Սթաթիւ մը մշակուի՝ իր խորհրդակցութեամբ: Դժբախտաբար Հանգուցեալը չուզեց անդրադառնալ այս յոյժ կարեւոր ու կենսական խնդրին, հակառակ բազմիցս մեր կողմէ իրեն եղած թելադրութեանց ու խնդրանքներուն, ու այսօր մեզի այսպէս դժուարին կացութեան մը մէջ դրաւ: Իմ տեղապահ ընտրուելէս յետոյ երեք անգամ տեսակցութիւն ունեցայ Երուսաղէմի Կառավարիչ Մր. Քիթրոշի¹⁰⁴ հետ, անիկա ամէն անգամին ալ վճռական կերպով յայտնեց Հոգատար Կառավարութեան կամքը այս մասին: Մէկ տեսակցութեան ներկայ էր նաեւ Թորգոմ Սրբազան¹⁰⁵: Այն անգամին մեր կողմէ առաջարկ եղաւ որ արտասահմանի թեմակալ առաջնորդները մասնակցին ընտրութեան եւ կամ գոնէ մասնակցի Բրիտանական թեւարկութեան տակ գտնուող Ազգին հատուածը, ու շարժանացաւ ընդունելութեան: Ես ուրիշ վախեր ալ ունիմ: Խոստովանաբար գրեմ (ու կը խնդրեմ որ շտարածայնուի ասիկա), թէ Կառավարիչը անգամ մը ինծի առանձին ըսաւ որ առաջ 120 աչքեր (ակնարկ Ազգային Երեսփոխանական Ժողովին) կը նայէին քանտիտաներու ցուցակին վրայ, հիմա այդ դերը պիտի կատարեն երկու աչքեր, այսինքն իմս ու Բարձր Գօմիսէրինը: Ես չհասկնալու զարկի ըսածը, ու ատոր վրայ է որ փոփոխեալ Յօդուածներու նախագիծը ներկայացուցինք Կառավարութեան, որպէսզի թումբ մը քաշած ըլլանք ոեւէ պատահականութեան առջեւ: Անշուշտ ես զգուշացայ Կառավարչի յիշեալ խօսքերը յայտնել յատենի Ժողովին, քանի որ մասնաւոր տեսակցութեան մը ժամանակ եղած խօսքեր էին անոնք:

¹⁰⁴ Էտուարտ Քիթ-Ռոշ (1885-1954) բրիտանացի դիւանագետ, որ 1926-1945 թուականներուն եղած է Երուսաղէմի կառավարիչը:

¹⁰⁵ Խօսքը կը վերաբերի այդ ժամանակուան եգիպտոսի թեմակալ առաջնորդ Թորգոմ Եպս. Գուշակեանի (1874-1939): Ծնած էր Պարտիզակ գիւղը: Կրթութիւնը կը ստանայ Արմաշու Դպրեվանմիւսն մէջ: Առաջնորդական պաշտօններ վարած է Սեբաստիոյ ու Եգիպտոսի մէջ: Որպէս հայրապետական նուիրակ այցելած է Հնդկաստան: 1931-ին ըմտրուած է Երուսաղէմի պատրիարք: Աշխարհաբարի վերածած է Նարեկացիի «Մատեան ողբերգութեան»ը:

Գալով ընտրելիի անձին, հեռու է ինձմէ այդ մասին ոեւէ ձգտում կամ յաւակնութիւն, կրնաք վստահ ըլլալ: Համակիրներուս իսկ (ու անոնք բազմաթիւ են թէ յայտեղ եւ թէ մանաւանդ դուրսերը) կը յայտարարեմ միշտ թէ իմ անձս նկատի չունենան բնաւ, այլ աշխատին բերել այնպիսի մէկը որ կարող ըլլայ բարձրացնել Աթոռին պատիւն ու հմայքը: Անձնապէս ես ալ համակիրող մըն եմ Թորգոմ Սրբազանին եւ գնահատող անոր արժանիքները: Իր Երուսաղէմ վերջին այցելութեան ժամանակ անձամբ յայտնեցի իրեն իր մասին տածած փափաքս, ու այդ ուղղութեամբ ալ կը թելագրեմ ամէն անոնց որոնք ձայն ունին ընտրութեան մէջ: Ես պատրաստ եմ ծառայութիւնս տրամադրել Աթոռին արժանաւոր ժառանգին, որքան որ ներեն տկար ուժերս: Բայց բոլոր ուժովս կը ծառայեմ ամէն անոնց դէմ, որոնք իրենց անձնական շահերուն աղբիւր ու փառասիրութեան պատուանդան ընել ուզեն Սուրբ Աթոռը: Անշուշտ ինծի պէս մէկը, որ քառասուն երեք տարիներու ծառայութեան բեռ մը շալկած ունի Երուսաղէմի մէջ, պիտի ուզէր Վանքին աղէկ օրերը տեսնել ու այնպէս փակել աչքերը առյաւէտ:

Վսեմ. Գալուստ Կիւպէնկեանի¹⁰⁶ վեհանձն նուիրատուութեամբ կառուցուելիք Մատենադարանի շէնքը փութոյ պնդութեամբ առաջ կը տարուի հոս, եւ գալ տարի այս ժամանակ կը յուսանք թէ կազմ ու պատրաստ ըլլայ Մատենադարանը իր ներքին մանրամասնութիւններով¹⁰⁷: Ասկէ զատ ունինք գումար մը 3554 Անգլիական ոսկիի, գոյացած հանգուցեալ Պատրիարքին Յոբելեանին առթիւ եղած հանգանակութենէն: Վերջին կարգադրութեան համաձայն այդ գումարով պիտի կառուցուի վայելուչ շէնք մը Տնօրէն Ժողովին նուիրած հողին վրայ, որմէ կը յուսացուի 10% տարեկան վարձք մը ընդունիլ: Այդ արդիւնքով պիտի ըլլան հրատարակութիւնները ԴՈՒՐԵԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐԱՆ անուան տակ¹⁰⁸: Հրատարակելի հատորներու մասին ծրագիր մըն ալ մշակուած է ըստ հայեցողութեան Հանգուցեալին: Այդ ծրագրին մէջ կը մտնեն նաեւ Ն. Ադոնցի¹⁰⁹ աշխատութիւնները¹¹⁰, բայց տակաւին ժամանակի կը կարօտի մինչեւ շէնքին մէջտեղ ելլելը: Այս մասին գրած եմ նաեւ Տիար Ադոնցին:

Փարիզի ազգայնոց հաւաքումի մասին առաջին անգամ տեղեկացայ Ձեր նամակէն: Երկու օր առաջ Պոլսէն Սմբատ Եպիսկոպոս ալ գրած էր թէ Տիար Գէորգ Թորգոմեան¹¹¹ Փարիզէն հետը տարեր է հաւաքումին իղձերը կամ եզրակացութիւնները ու ներկայացուցեր է իսառն ժողովին, ուր յետ երկար խորհրդակցութեան որոշեր են Ազգային, Կրօ-

¹⁰⁶ Գործարար ու ազգային բարեար Գալուստ Կիւպէնկեան (1869-1955) եղած է Ս. Աթոռոյ նուիրատուներէն մէկը, որու բարեգործութեամբ ալ կառուցուած է Կիւպէնկեան մատենադարանը՝ Եղիշէ Ա. Պատրիարքի յոբելեանին առթիւ:

¹⁰⁷ Մատենադարանի նորակառոյց շէնքի շինարարութիւնը կը սկսի 26 Հոկտ. 1929-ին, Եղիշէ Ա. Պատրիարքի օրհնութեամբ: Հիմնարկէր կը կատարուի իր վախճանումէն ետք, 8 Օգոստոս 1930-ին, տեղապահ Մեսրոպ Եպս. Նշանեանի կողմէ: Իսկ բացման հանդիսութիւնը տեղի կ'ունենայ 23 Հոկտեմբեր 1932-ին, Ս. Թարգմանչաց տօնին, որ միաժամանակ երջանկայիշատակ Եղիշէ Ա. Պատրիարքի տարեդարձն էր:

¹⁰⁸ Յիշեալ հասոյթով 1930-ականներու սկզբին Երուսաղէմի նոր ֆաղափին մէջ կը կառուցուի Դուրեանաշէն կոչուող շէնքը, Յոպպէի պողոտայի շրջակայքին: Այս շէնքի հասոյթով կը հաստատուի «Դուրեան մատենադարան» տիտղոսով հայագիտական ուսումնասիրութեանց մատենաշար մը, ինչպէս նաեւ «Սրբոց Թարգմանչաց-Դուրեան գրական մրցանակ»՝ որպէս շարունակութիւնը Կ. Պոլսոյ Պատրիարքութեան Իզմիրեանց գրական մրցանակի, որ պարագաներու բերմամբ դադրած էր:

¹⁰⁹ Յայտնի պատմաբան, բիւզանդագէտ ու բանասէր: Ծնած է 1871-ին, Սիւնիի Բոնակոթ գիւղը եւ մեռած 1942-ին, Պրիստել: Ադոնցի մահուան առթիւ «Սիռն»ի մէջ հրատարակուած մահագրականին մէջ նշուած է, թէ երջանկայիշատակ Թորգոմ Ա. եւ ներկայի Մեսրոպ Պատրիարքները կը մտածէին զինք Ս. Աթոռ հրաւիրելով օգտուիլ իրմէ իմացականօրէն բարձրացնելու համար Երուսաղէմը («Սիռն», Մարտ-Ապրիլ 1942, էջ 96):

¹¹⁰ Դուրեան մատենաշարը կեանքի կոչուած ըլլալով հանդերձ, Ադոնցէ որեւէ հրատարակութիւն չէ կատարուած:

¹¹¹ Անուանի գիւղատնտես, Պուրսայի Շերամբուժական վարժարանի հիմնադիրը, որ ապրած է 1859-1950 թուականներու միջեւ: Եղբայրը՝ անուանի բանասէր ու բժիշկ Վահրամ Թորգոմեանի:

նական եւ Քաղաքական ժողովներու դիւաններէն կազմուած յանձնաժողովի յանձնել խնդրին ուսումնասիրութիւնը, ապա ձեւ մը գտնել Երուսաղէմի պատրիարքական ընտրութեան մասնակցելու, եւ զայն իբրեւ իղձ ներկայացնել Ամենայն Հայոց Հայրապետին: Մենք այդ մասին այստեղ ոեւէ գիր չստացանք Փարիզէն:

Բայց, ինչպէս վերեւ ըսի, ընդհանուր մտայնութիւնը այն է թէ արգելքը կամ չկամութիւնը Միաբանութեան կողմէն է, ապա թէ ոչ ինչո՞ւ համար Կաթողիկոսին դիմէին: Անիկա շատ շատ համակերպելու յորդոր մը պիտի ուղղէ: Բայց մեր ձեռքը ի՞նչ կայ: Եթէ կրնան Անգլիական կառավարութեան թող խօսք հասկցնեն:

Սիրալիր բարեւներով եւ յարգանաց հաւաստեօք՝
Ձերդ
Մեսրոպ Եպս. Նշանեան

*

7 Փետրուար 1931¹¹²

Սիրելի Բարեկամս Մեծ. Տիար Ա. Զօպանեան,

Ի ձեռին ունիմ Ձեր երկու նամակները 20 Դեկտեմբեր եւ 18 Յունուար թուակիր:

Քանի մը օր առաջ Ձեր հասցէին թղթատարին յանձնեցի 1 օրինակ ԽՈՂՔ ԵՒ ԽՕՍՔ¹¹³ հանգուցեալ Օրմանեան Սրբազանի եւ մէկ օրինակ երկու հատոր ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ¹¹⁴ Սաւալանեանցի¹¹⁵, աշխարհաբարի թարգմանուած իմ կողմէ: Կը յուսամ թէ ընդունած կ'ըլլաք զանոնք ցարդ:

Ներփակ պատճեններէն կը տեղեկանաք մեր պատրիարքական խնդրին առած երեւոյթը: Այս խնդրին մէջ Բրիտանական Կառավարութեան դիրքը խիստ բացորոշ է: Բնաւ չ'ընդունիր արտասահմանի մասնակցութիւնը ընտրութեան մէջ: Կարծեմ պիտի յիշէք թէ հանգուցեալ Դուրեան Սրբազանի ընտրութեան ժամանակ ալ միեւնոյն պահանջը դրաւ, եւ հուսկ ուրեմն պաշտօնագրով մը (օրինակը ներփակ) յայտարարեց թէ կը հաւանի ըստ Սահմանադրութեան¹¹⁶ կատարել ընտրութիւնը, պայմանաւ որ առաջիկայ ընտրութեանց ժամանակ Կառավարութիւնը կաշկանդող նախընթաց մը չըլլայ այն:

Պաղեստինի մանտան 1922-ին վերջնականապէս Անգլիոյ անցնելէն յետոյ, երկրին վարչութեան համար Օրէնք մը հրատարակուեցաւ, որուն 83րդ յօդուածով կը յայտարարուի թէ, Պաղեստինի հասարակութիւնները պիտի կրնան ազատ ըլլալ իրենց ներքին գործերուն մէջ, պայմանաւ որ իրենց սահմանադրութիւնները ընդունուած ու վաւերացուած ըլլան Բարձր Գօմիսէրի կողմէ այդ մասին հրատարակուած օրէնքով մը:

Հիմնուելով այդ յօդուածին վրայ Պաղեստինի Կառավարութիւնը 1926 Փետրուար

¹¹² Նամակը մեքենագրուած է «Աթոռ Առաքելական Սրբոց Յակովբեանց Երուսաղէմ» պաշտօնաթուղթին վրայ: Մեսրոպ Սրբազան իր ձեռագրով աւելցուցած է «Անձնական» նշումը:

¹¹³ Մաղափա Առք. Օրմանեանի «Խոնք եւ խօսք»ը (500 էջ) հրատարակուած էր 1929-ին, Ս. Յակոբեանց տպարանէն, Երուսաղէմ՝ Տ. Մատթէոս Եպս. Գայրգեանի մեկենասութեամբ:

¹¹⁴ Տիգրան Սաւալանեանցի «Պատմութիւն Երուսաղէմի» երկհատոր աշխատութիւնը (1387 էջ) Մեսրոպ Եպս. Նշանեանի աշխարհաբարի վերածմամբ եւ յաւելածներով հրատարակուած էր 1931-ին, Երուսաղէմ:

¹¹⁵ Զմիտնիացի բանասէր, կրթական մշակ Տիգրան Սաւալանեանց (1821-1896) երկար տարիներ պաշտօնավարած է Ս. Յակոբեանց վանքէն ներս՝ վարելով տարբեր պաշտօններ ըլլալով նաեւ «Սիօն» պաշտօնաթերթի հիմնադիր-խմբագիրը:

¹¹⁶ Խօսքը 1863-ի Ազգային Սահմանադրութեան մասին է, որու համաձայն Երուսաղէմի հայոց պատրիարքը կ'ընտրուի Կ. Պոլսոյ Ազգային ժողովներուն կողմէ, Երուսաղէմի միաբանութենէ ներկայացուելիք ընտրելիներու ցուցակէ մը:

15-ին հրատարակեց օրէնք մը որով կը յայտարարէր թէ, որեւէ կրօնական հասարակութիւն եթէ ներկայացնէ իր կազմակերպութեան ծրագիրը, ինք պիտի քննէ զայն նախապէս, ու ապա պիտի ենթարկէ նորին Վեհափառութեան նախարարներէն մէկուն հաստատութեան, ու այնուհետեւ նոյն հասարակութեան տիրող օրէնքը պիտի ըլլայ այդ ծրագիրը:

Արդէն 1921 Մայիս 15-ին Բրիտանական Կառավարութիւնը նկատի առնելով Իսլամ հասարակութեան մէջ ծագած դժուարութիւնները եւ Պաղեստին անշատ երկիր մը ըլլալուն հետեւանքով Իսլամ կրօնական կազմակերպութեան առած նոր հանգամանքը, կանխեց հրատարակելիք Օրէնքը, եւ, Իսլամներու համաձայնութեամբ, հանեց օրինագիծի մը յայտարարութիւնը, որուն օրէնքի ուժ տուաւ, ու ըստ այնմ կը կառավարուին ցարդ իսլամները:

Յունաց Պատրիարքարանը 1920-ին երկու դժուարութիւններ ունէր մին ժողովրդական եւ միւսը ելմտական, որոնք յանձնուեցան պետական գոմիսիօնի մը ի քննութիւն: Այս առթիւ Յոյները ներկայացուցին իրենց Կանոնագիրը, որուն մէջ ստեղծուած նոր կացութեան համապատասխանող բարեփոխութիւններ մտցուցած էին: Այս Կանոնագրին մէջ պատրիարքական ընտրութեան վերաբերեալ որեւէ դժուարութիւն չունեցան անոնք, վասնզի, ա) Թուրքերու ժամանակին ալ Յունաց Երուսաղէմի պատրիարքութիւնը անկախ էր բոլորովին, նման միւս պատրիարքութեանց, ու կապուած չէր ուրիշ Աթոռի մը: բ) Այն ատեն պատրիարքի ընտրութեան կերպը ուղղակի ենթարկուած էր Օսմանեան կառավարութեան քննթրոլին, այսինքն Միաբանութեան կազմած ընտրելեաց ցուցակը կը ներկայացուէր նախ Կառավարութեան, եւ ցուցակը վերադարձուէին յետոյ Երուսաղէմի Սինօդը կ'ընտրէր իր պատրիարքը: Այդ Կանոնով Օսմանեան Կառավարութեան ունեցած դերը փոխանցուեցաւ Անգլիական Կառավարութեան:

Վերոյիշեալ 1926-ի կառավարական Յայտարարութենէն անմիջապէս ետք Հրեաներն ալ իրենց կրօնական կազմակերպութեան օրէնքի ծրագիր մը ներկայացուցին, ու Կառավարութիւնը, ըստ սովորութեան, հրատարակեց այդ ծրագիրը ի գիտութիւն շահագրգռողներուն, եւ այդ մասին բանակցութիւնները կը շարունակուին ցարդ:

Այս մասին որեւէ ձեռնարկ չէ ըրած Ֆրանչիսկեանց Կիւսթոտին, որ ըստ Ֆէրմաններու լատին հասարակութեան կրօնական կազմակերպութիւնն է, հաւասար Հայ եւ Յոյն պատրիարքութեանց: Կիւսթոտը (Ֆրանսիչկեանց մեծաւորը) վեց տարուան համար կը նշանակուի իբրեւ պետ լատին կրօնական հասարակութեան ու անփոփոխ կը մնայ ընտրութեան այս եղանակը, այդ պատճառաւ պէտք չի տեսնուիր ամէն անգամ նշանակուած նոր կիւսթոտը պետութեան հաստատութեան ենթարկել: Այսպէս էր նաեւ Թուրքերու ժամանակ: Իսկ լատինաց պատրիարքը եւ նոնսը օրինական տեսակէտով պապական նուիրակներ կը համարուին, հետեւապէս դուրս կը մնան լատինաց ներքին կազմակերպութենէն:

Ահա կը տեսնէք թէ միւս համայնքները աւելի կամ նուազ շարժումներ մը ըրած են իրենց սահմանադրութիւններն ընդունել տալու Հոգատար կառավարութեան: Մնացինք միայն մենք: 1926 թուականէն մինչեւ իր վախճանը ամէն առիթներով թելադրութիւններ ու խնդրանքներ կ'ըլլային հանգուցեալ Դուրեան Սրբազանին, որ քանի կենդանի է կարգադրէ ու վերջ մը տայ այս խնդրին, մանաւանդ թէ, կ'ըսուէր, մեծապէս յարգուած անձ մըն է ինք Կառավարութեան քով, ինչոր կրնայ նպաստել իր դիմումներուն յաջող կարգադրութեան: Սակայն Հանգուցեալը նկատի առնելով պատրիարքական ընտրութիւնը Պաղեստինի սահմաններէն դուրս շտարածելու Կառավարութեան

տեսակէտն ու տրամադրութիւնը, ու անոր հետեւանքով ամէն կողմէ ըլլալիք քննադատութիւններն ու բարձրանալիք ձայները, զգուշացաւ այդ խնդրին մօտենալէ: Եւ այսօր ահա՛ փոթորիկը մեր գլխուն կը պայթի ու մենք կը կրենք դժուարութիւնները:

Սակայն անիրաւ տեղը կը մեղադրուինք ես ու Միաբանութիւնը թէ մեզի մենաշնորհ ընել կ'ուզենք պատրիարքական ընտրութիւնը: Ի՞նչ կրնանք ընել երբ Կառավարութիւնը առաջին օրէն բացարձակ դէմ է արտաքին մասնակցութեան: Դուրեան Սրբազանի վախճանէն յետոյ այստեղ էր Թորգոմ Սրբազան, ու անգամ մը անոր հետ միասին այցելեցինք Երուսաղէմի անգլիացի կառավարչին, ու հոն այս խօսքը բացուեցաւ: Սրբազանը բացատրելով Երուսաղէմի հայ պատրիարքութեան ընդհանրական հանգամանքը, շեշտեց ազգային մասնակցութեան անհրաժեշտութիւնը, ու աւելցուց թէ հակառակ պարագային հերձեալ կը նկատուի Երուսաղէմի Աթոռը ու կը դադրեցնեն պատարագներու մէջ յիշատակել պատրիարքին անունը: Ապա առաջարկեց որ ընտրութեան մասնակցին Պոլիս եւ գաղութներու այն վիճակները որոնք թեմական կազմակերպութիւն ստացած են: Կառավարիչը շնորհունեցաւ այդ առաջարկը: Թորգոմ Սրբազան ըսաւ՝ որ գէթ անգլիական հովանաւորութեան տակ գտնուող երկիրներու հայերը մասնակցին: «Որո՞նք են այդ երկիրները» ըսաւ Կառավարիչը: «Զոր օրինակ Հնդկաստան, Իրազ եւայլն» պատասխանեց Սրբազանը: «Պաղտատ գտնուող հայերը ի՞նչ կապ ունին Երուսաղէմի հետ» եղաւ Կառավարչին պատասխանը:

Մենք այստեղ Միաբանական Ընդհանուր Ժողովով խորհեցանք որ գէթ կապ մը պահելու համար Ազգին հետ, Ազգին ամբողջութենէն ընտրուած Հայրապետին վաւերացման պայմանը դնենք, բայց ատիկա ալ մերժուեցաւ դժբախտաբար: Ներփակ պատճենին մէջ Երուսաղէմի Կառավարչին այդ մասին ըրած առարկութիւնը պատճառանք է լոկ: Բուն պատճառն այն է, որ կը կասկածին թէ Սովիէթ կառավարութեան ազդեցութեան տակ կը գործէ Հայրապետը, ինչպէս Դուք ալ շատ ճիշդ դիտած էիք Ձեր նամակին մէջ:

ԱԶԳԱՐԱՐ-ի¹¹⁷ եւ ուրիշ Դաշնակցական թերթերու գրողներն են տեղիս խումբ մը Դաշնակցականները, որոնք ամէն ճիգ կը թափեն Պաղեստինի հայերէն ընտրուած քանի մը աշխարհականներու տալ Ազգային Երեսփոխանական Ժողովի ասկէ առաջ կատարած դերը, այսինքն Ընտրելեաց ցուցակներու վրայէն անոնք ընտրեն Երուսաղէմի պատրիարքը: Իրենց ծուղակը ձգած են նաեւ քանի մը միամիտ երուսաղէմացիներ, ու իրենք վարագոյրի ետեւը կեցած զանոնք առաջ կը քշեն, ու այդ ուղղութեամբ դիմումներ ընել կու տան Կառավարութեան մօտ, Գահիրէի ՅՈՒՍՍԻՅԵՐ-ի¹¹⁸ խմբագրատունէն իրենց ընդունած հրահանգներուն համաձայն, ինչպէս կը հաւաստեն իրազեկները: Գիտէք անշուշտ թէ Դաշնակցականներու ուղղութիւնն է խառնել ամէն տեղ, որպէս զի պղտոր ջուրի մէջ ձուկ որսան: Յաւալի է որ Պարոն Թէքէեան¹¹⁹ եւս, չըսեմ չարամիտ,

¹¹⁷ Ազգային, ֆաղափական ու գրական օրաթերթ, որ 1927-1936 թուականներու միջեւ հրատարակուած է Պոլիս: Արտօնատէրն ու պատասխանատու տնօրէնն էր Մանուկ Ասլանեան: Այս թերթը հանդիսացած է «Ճակատամարտ»ի շարունակութիւնը: «Ազգարար» 17-18 Յունուար 1931-ի յաջորդական երկու թիւերուն մէջ հրատարակած էր «Յանցանքը ակելի կը ծանրանայ» խորագրեալ անստորագիր յօդուած մը, որպէս «Մեր խօսքը»: Այս եւ այլ յօդուածներով քննադատութեան առարկայ կը դառնար տեղապահ Տ. Մեսրոպ Եպս. Նշանեանի եւ Երուսաղէմի միաբանութեան՝ Հոգատար կառավարութեան որոշումներուն համակերպող ընթացքը: Նշանեանի ակնարկը հաւանաբար կ'երթայ 25 Յունուար 1931-ին «Ազգարար»ի մէջ հրատարակուած «Ընտր. Պայքարը Երուսաղէմի մէջ Մեսրոպ Եպսկ. թէ Թորգոմ արժեպակ.» յօդուածին, որու հեղինակն է «Ազգարար»ի «սեփական թղթակիցը»:

¹¹⁸ Ազգային, ֆաղափական, տնտեսական եւ գրական օրաթերթ, որ կը հրատարակուի Գահիրէի մէջ, 1913-էն ի վեր: 1923-ին դարձած է Հ. Յ. Դաշնակցութեան պաշտօնաթերթը:

¹¹⁹ Յայտնի բանաստեղծ, հրապարակագիր (1878-1945), որ երկար տարիներ վարած է Եգիպտոսի «Արեւ»ի խմբ-

այլ սխալ ու խեղաթիւրուած իր խմբագրականներով ԱՐԵԻ-ի¹²⁰ մէջ, իւր կը քսէ անոնց հացին, ու ԱԶԴԱՐԱՐ կ'արտատպէ այդ խմբագրականները¹²¹:

Մեր վերջին բանակցութիւններուն վրայ տեղիս Կառավարութիւնը նոր տեղեկագիր մը ղրկեց Լոնտոն: Ընտրութեան ձեռնարկելու համար կը սպասուի այնտեղէն գալիք հրահանգին:

Ջերմագին սիրոյ ողջոյններով եւ յարգանաց հաւաստեօք,
Ձերդ՝ Մեսրոպ եպս. Նշանեան

*

11 Յուլիս 1931¹²²

Սիրելի եւ պատուական բարեկամ
Տիար Արշակ Զօպանեան
ՓԱՐԻԶ

Մեծագոյն հաճոյքով ընդունեցայ Ձեր Յունիս 23 թուակիր նամակը որով կը շնորհաւորէիք Երուսաղէմի պատրիարքի ընտրութիւնը¹²³ յանձնին Տ. Թորգոմ Արքեպիսկոպոսի: Ընդունած եմ նաեւ տարւոյս 13 Մարտ թուակիր նամակնիդ պատրիարքական ընտրութեան խնդրոյն վերաբերեալ: Կարդացի ՊԱՅՔԱՐ-ի¹²⁴ մէջ Ձեր յօդուածաշարքը¹²⁵ որ այդ խնդրոյն շուրջ գրուածներուն ամենէն յստակատես եւ ողջամիտ գրութիւնն էր:

Այժմ նորընտիր Պատրիարքին կը մնայ ընդունել տալ կառավարութեան ներկայ պայմաններուն պատշաճեցուած ընտրական Սթաթիս մը, որ համաձայն ըլլայ միանգամայն ազգի բաղձանքներուն: Տարիէ մը ի վեր մեր մտահոգութիւնը այն եղած էր որ երկար ատեն թափուր չմնայ Աթոռը եւ ունենայ իր արժանաւոր գահակալը: Ուրախ եմ այս բարեյաջող արդիւնքին համար եւ կը յուսամ թէ Թորգոմ Սրբազան պիտի կրնայ պսակել իր վրայ դրուած յոյսերը: Մենք պատրաստ ենք մեր տկար ուժերուն ներած չափով աջակցիլ իրեն ու տրամադրել մեր ծառայութիւնները: Առայժմ կը սպասենք Անգլիոյ Թագաւոր-Կայսեր վաւերացումին¹²⁶, որուն հասնելէն անմիջապէս ետք եպիսկոպոս մը եւ երկու վարդապետներ պիտի ղրկուին իբրեւ հրաւիրակ, իր Աթոռը առաջնորդելու համար Նորընտիր պատրիարքը¹²⁷: Եպիսկոպոս հրաւիրակ որոշուած է Կ. Պոլսի փոխանորդ Սմբատ Սրբազան, որուն գրուեցաւ արդէն ու տրուեցան պէտք եղած հրահանգ-

բագրի պաշտօնը: Նախքան եգիպտոս անցնիլը, Թէֆէեան 1914-1915 թուականներուն որպէս Կ. Պոլսոյ Ազգային ժողովի ներկայացուցիչը պաշտօնավարած էր Երուսաղէմի վանքէն ներս:

¹²⁰ Ազգային, քաղաքական ու գրական օրաթերթ, որ լոյս կը տեսնէ 1915-էն ի վեր, նախ Աղեփսանդրիոյ, ապա Գահիրէի մէջ: 1922-էն ետք դարձած է Ռամկավար-Ազատական կուսակցութեան պաշտօնաթերթը:

¹²¹ Օրինակ, «Ազգին ուղղուած հեգնութիւն մը (Երուսաղէմի ընտրական խնդրոյն առթիւ)», «Ազգաբար», 22 Յունւար 1931:

¹²² Այս մեքենագիր նամակը քաղուած է Մեսրոպ Սրբազանի անձնական նամակներու հաւաքածոյէն:

¹²³ Թորգոմ Արք. Գուշակեան Միաբանական ընդհանուր ժողովի կողմէ պատրիարք ընտրուած է 16 Յունիս 1931-ին:

¹²⁴ Ազգային, քաղաքական ու գրական օրաթերթ, որ կը հրատարակուի Պոստոնի մէջ, 1922-էն ի վեր, որպէս պաշտօնաթերթը Ռամկավար-Ազատական կուսակցութեան:

¹²⁵ Զօպանեանի յօդուածաշարքը «Սաղիմական» խորագրով լոյս տեսած է 31 Մարտ-3 Ապրիլ 1931 թուականներու միջեւ:

¹²⁶ Բրիտանիոյ Գեորգ Ե. թագաւոր-կայսեր 22 Հոկտեմբեր թուակիր վաւերացման նամակը վանք կը հասնի 31 Հոկտեմբեր 1931-ին:

¹²⁷ Նորընտիր պատրիարքը Երուսաղէմ կը մտնէ 26 Նոյեմբեր 1931-ին եւ «Հրաշափառ»ով կ'առաջնորդուի Մայր տանար, ուր «Ուր էնն յէութեան» շարականի երգեցողութեամբ իր ուխտը կը կատարէ Ս. Գլխադրի մատուան մէջ: Իսկ գահակալութեան աշխարհիկ ու եկեղեցական հանդէսները տեղի կ'ունենան 1 Դեկտեմբեր 1931-ին:

ները: Սմբատ եպիսկոպոս կամ ուղղակի պիտի երթայ Գահիրէ եւ կամ նախապէս հոս պիտի գայ ու այս տեղէն պիտի երթայ իրեն ընկերակից նշանակուած վարդապետներուն հետ:

Մխիթարութիւն մըն է ինձ համար որ յաջողեցայ Դուրեան Սրբազանի վախճանէն ի վեր, ամբողջ տասնըհինգ ամիս, խաղաղութեան մէջ պահել վանքը, հակառակ Միաբանութիւնը խռովելու համար կատարուած ճիգերուն: Արթուն հսկեցի որ ձեռք առնելին կարելի եղած խնայողութիւններ ու չը բարդուի վանքին պարտքը: Պարտամուրհակներուն հարիւրին ութէն մինչեւ տասը տոկոսները առհասարակ հարիւրին վեցի իջեցուցի, ու այս տարի կ'աշխատիմ հարիւրին հինգի իջեցնել: Այս աշխատանքով մօտ 2500 անգլ. ոսկիի խնայողութիւն մը եղաւ յօգուտ վանքին, եւ այս տարի հաշիւները գոցեցինք 84752 ոսկի բացով: Աւելի կրնայինք իջեցնել պարտքը, բայց դժբախտաբար տիրող ընդհանուր քրիզին հետեւանքով զգալիօրէն նուազեցան մեր եկամուտները: Կալուածներու վարձքերը իջան ընդհանրապէս, մաս մըն ալ պարապ կը մնայ տակաւին: Տարւոյս ընթացքին գլխաւոր մէկ աշխատանքս ալ եղաւ Հանգուցեալ Պատրիարքի օրով ստեղծուած կարգ մը անպէտք ծախքեր կրճատել բոլորովին, կարեւորութիւն չտալով բնաւ գանգատներու ու անձիս դէմ ստեղծուած հակակրութեանց: Եւ հիմակ ուրախ եմ որ տնտեսական տագնապի մը առջեւ պիտի չգտնէ ինքզինքը նորընտիր Պատրիարքը, որուն կը մնայ այլեւս իմաստութեամբ ու հեռատեսութեամբ տնտեսել հաստատութիւնը ու ազատել ազգը Երուսաղէմի պարտքին յաւիտենական մղձաւանջէն:

Կ'ողջունեմ զՁեզ ջերմապէս եւ խոհուն ու իմաստուն ճակտէդ կը համբուրեմ կարօտալիր զգացմամբ: Ուր էր թէ անգամ մըն ալ գայիք Երուսաղէմ ու վայելէինք զիրար կուշտ ու կուռ:

Ձերդ սիրով՝
Մեսրոպ Եպս. Նշանեան

*

8 Օգոստոս 1931

Մեծայարգ Տիար Արշակ Զօպանեան

ՓԱՐԻԶ

Ստացայ Ձեր Յուլիս 29 թուակիր նամակը եւ հասու եղայ պարունակութեան: Մեծապէս շնորհակալ եմ Ձեր քաջալերական ու գնահատական տողերուն համար, որոնք կու գան, վստահ եմ, Սրբոց Յակոբեանց մեր այս պանծալի հաստատութիւնը սիրող անկեղծ բարեկամէ մը:

Թորգոմ Սրբազան տարակոյս չկայ թէ վանքերնուս օգտակար ըլլալու առաջադրութեամբ պիտի գայ բազմիւ իր Աթոռը ու պիտի աշխատի իր վրայ դրուած յոյսերը պսակել, անշուշտ մեր գործակցութեամբ եւ Միաբանութեան երիտասարդ ուժերը գործի լծելով: Սակայն ամենէն աւելի հոգածութիւն նուիրելիք կէտը վանքին նիւթական կացութեան բարւոքումն է: Յայտնի է որ եթէ հաստատութեան մը նիւթականը ամուր ու ապահով հիմերու վրայ դրուած չըլլայ, այն ատեն ամուրութեան կը դատապարտուին յղացուած ամէն գեղեցիկ ծրագիրներ ու օգտակար փափաքներ:

Ուշադրութեամբ կարդացի Պ. Զօրիկ Զօրայեանի¹²⁸ մասին Ձեր գրածները: Հիմա-

¹²⁸ Շրջանի մտաւորական դէմքերէն մէկը, որ հեղինակն է «Անգլիերէն լեզուի հնչումներուն, յատկաբանութիւններուն, ոճերուն եւ հոմանիշներուն նրբութիւնները բացատրող անգլիերէն-հայերէն համայնագիտական բառարան» (Կիպրոս, 1949) աշխատութեան: Աշխատակցած է նաեւ Զօպանեանի «Անահիտ»ին:

կուհիմա ես ինքնիրմէս շեմ կրնար որոշում մը տալ կամ կարծիք յայտնել: Քանի որ Թորգոմ Սրբազանին ալ գրած էք, այն ատեն հարկ կ'ըլլայ սպասել Սրբազանի գալուն, որպէսզի խորհրդակցաբար կարենանք որոշում մը տալ թէ հա՞րկ է արդեօք ելմտագէտ պաշտօնեայ մը հրաւիրել տեղս: Այդ պարագային անշուշտ նկատի կ'ունենանք Ձեր ներկայացուցած անձը:

Ձերմագին բարեւներով եւ յարգանաց հաւաստեօք,
Ձերդ անկեղծօրէն
Մեսրոպ Եպս. Նշանեան

*

2 Օգոստոս 1934¹²⁹

Մեծայարգ Տիար Արշակ Զօպանեան սիրելի,
ՓԱՐԻԶ

Ընդունեցայ Ձեր 26 Մայիս եւ 22 Յուլիս թուակիր երկու նամակները: Առաջինին չկարենալ պատասխանելուս պատճառն այն է որ երկուքուկէս ամսէ ի վեր ատամներու նեղութիւն կը կրեմ: Արմատները ապսէ գոյացած ըլլալով ամէնքը քաշել տուի ու կեղծ ատամնաշար անցուցի բերանս: Հազիւ վերջին քանի մը օրերս ազատեցայ այդ անտանելի նեղութենէն: Միւս կողմէ աչքերէս ալ սաստիկ կը նեղուիմ, շեմ կրնար ոչ կարգալ եւ ոչ գրել: Երբ քանի մը էջ կարդալու ըլլամ, կոպերուս մէջ սաստիկ այրուցքներ կը զգամ ու այս վիճակը գրեթէ զիս անգործութեան դատապարտած է: Ձեռագրական այլ եւ այլ խնդիրներու մասին ուրիշ կողմերէ ալ եղած հարցումները ստիպուած եմ անպատասխանի թողուլ: Այս է ահա լռութեանս պատճառը: Կը յուսամ թէ չէք մեղադրեր զիս:

Երբ առի Ձեր երկրորդ նամակը, բերել տուի Ձեր մատնանշած թիւ 2323 ձեռագիրը¹³⁰, ուշադրութեամբ աչքէ անցուցի զայն խօթացեալ աչքերով, Քուչակեան գրութիւն մը չգտայ հոն ոչ ոճով եւ ոչ իմաստով: Այսու հանդերձ ամբողջ ձեռագրին բովանդակութիւնը կը ներփակեմ, որպէսզի դուք ալ աչքէ անցընէք: Ատոնց մէջէն որն որ է Ձեր ուզածը, գրեցէք ինձ, ու ես օրինակելով զայն կը փութամ ղրկել Ձեզ:

Կը շնորհաւորեմ կանխաւ Ձեր նոր աշխատանքը ու կը մաղթեմ որ յաջողութեամբ յաւարտ ածէք զայն: Միայն կը վախնամ որ եթէ Երեւանի մէջ տպուի գործերնիդ, իրենց անճոռնի ուղղագրութեամբ այլանդակեն գիրքը:

Մեր Սրբազան Պատրիարքը մօտերս կ'ուղեւորուի Եւրոպա ի դարման անձին¹³¹: Կը յուսամ թէ առիթ կ'ունենաք անձամբ տեսնելու զինքը:

Սիրալիր բարեւներով եւ յաջողութեան մաղթանքներով,
Ձերդ՝
Մեսրոպ Եպս. Նշանեան

¹²⁹ Այս մեքենագիր նամակը փաղուած է Մեսրոպ Սրբազանի անձնական նամակներու հաւաքածոյէն:
¹³⁰ Յիշեալ ձեռագիրը ժէ դարու պատկանող ժողովածոյ մըն է (տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց Ա. Յակոբեանց», հտ. է, Երուսաղէմ, 1974, էջ 428-431):
¹³¹ Երուսաղէմի Թորգոմ Ա. Պատրիարքը Եւրոպա կ'ուղեւորուի 12 Օգոստոս 1934-ին: Ան արձու կը վերադառնայ 5 Հոկտեմբեր 1934-ին:

*

22 Փետրուար 1935¹³²

Միրելի Տիար Զօպանեան,

Ընդունեցայ Ձեր ամսոյս 9 թուակիրը, ընդունած եմ նաեւ Ձեր առաջուան նամակներն ալ: Յիրաւի շատ ամօթով մնացած եմ քովերնիդ չկարենալ գոհացնելուս համար զՁեզ:

Ծանօթ են Ձեզ մեր մատենադարանի այն ձեռագրերը, որոնք միջնադարեան բանաստեղծութիւններ կը պարունակեն, ու կը գրէք թէ անոնց մէջ չկան քուչակեան տաղեր: Մատնանիշ ըրած էիք թիւ 2323 ձեռագիրը, որմէ կ'ըսէիք թէ Քիւրտեան¹³³ Քուչակի մէկ տաղը հրատարակած է ԲԱՉՄԱՎԷՊԻ¹³⁴ մէջ¹³⁵: Դրկեցի Ձեզ այդ ձեռագրին պարունակութիւնը ու տեսնուեցաւ որ այդպիսի բան գոյութիւն չունի հոն¹³⁶: Հակառակ տկարութեանս աչքէ անցուցի նոր ձեռագրերու ցուցակը եւ Ձեր ուզածներուն հետքը չգտայ անոր մէջ: Տեղ մը գրած էք թէ Ձեր նշանակած թուահամարներուն համապատասխան ձեռագրերու նկարագրութիւնը դրկեմ: Ահա անոնցմէ մէկը ցուցակագրեցի ու կը ներփակեմ: Եթէ այդ է ուզածնիդ, մնացեալներն ալ այս ձեւով ցուցակագրեմ ու դրկեմ: Շատ կը փափաքիմ օգտակար ըլլալ Ձեզ, բայց անհրաժեշտ է որ ուղեցոյց մը ունենամ ձեռքս, որպէսզի ծրագրով մը աշխատիմ: Որքան դիւրին պիտի ըլլար, եթէ ցոյց տրուէին այն ձեռ[ա]գրերը, որոնցմէ կարելի լինէր ընդօրինակութիւններ կատարել: Չունինք դժբախտաբար կանոնաւոր ցուցակներ ու չենք կրնար անմիջապէս գտնել փնտռուած ոեւէ գրութիւն: Տարիներէ իվեր ես թողած եմ Ձեռագրաց Մատենադարանը եւ ուրիշի ձեռք կը գտնուի այն, ու այդ ուրիշն ալ, նաեւ նորահասները, չեն հետաքրքրուիր բնաւ ձեռագրերով ու անոնց աշխատակցութենէն խեր չենք կրնար սպասել, գոնէ առայժմ:

Սպասելով Ձեր պատասխանին, կը բարեւեմ Ձեզ ջերմագին սիրով:

Մեսրոպ Եպս. Նշանեան

*

8 Ապրիլ 1935¹³⁷

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ

ՄԻՐԵԼԻ ԲԱՐԵԿԱՄ,

ՓԱՐԻՉ

Ընդունեցայ Ձեր մարտ 26 թուակիր վերջին նամակը եւ տեղեկացայ պարունակութեան:

Ուշադրութեամբ աչքէ անցուցի թիւ 2323 ձեռագիրը ու բարեբախտաբար գտայ հոն Ձեր մատնանշած ոտանաւորը, զոր ընդօրինակելով կը ներփակեմ:

¹³² Այս մեքենագիր նամակը փաղուած է Մեսրոպ Մրբագանի անձնական նամակներու հաւաքածոյէն:

¹³³ Յայտնի բանասէր ու հնագէտ, որ 1901-ին ծնած է Սիլիստրա, երգնկացի ծնողքէ, մեռած՝ 1976-ին, Միացեալ Նահանգներ, ուր կայք հաստատած էր 1923-ին: «Բազմավէպ»ին բերած իր անգնահատելի աշխատացութիւնը նկատի ունենալով, Միսիթարեան միաբանութեան հայրերը զինք ընտրած են անդամ Ս. Լազարի կանադի:

¹³⁴ Միսիթարեան միաբանութեան կողմէ Վենետիկի Ս. Լազար կղզիի մէջ հրատարակուող հայագիտական հանդէս, որու առաջին թիւը լոյս տեսած է 1843-ին:

¹³⁵ Տե՛ս Յ. Քիւրտեան, «Քուչակեան նոր տաղաշարք մը», «Բազմավէպ», Հոկտ.-Նոյ. 1932, թիւ 10-11, էջ 464-472:

¹³⁶ Մինչդեռ Նորայր Արք. Պողոսեան զայն նշանակած է յիշեալ ձեռագիր մատենանի նկարագրութեան մէջ, թղ. 121բ-է սկսեալ (տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց Ս. Յակոբեանց», հտ. է, Երուսաղէմ, 1974, էջ 430):

¹³⁷ Նամակը մեքենագրուած է «Լուսարարապետ Ս. Աթոռոյն Երուսաղէմի» պաշտօնաթուղթի վրայ:

Ձեռագրին հարազատ մէկ ընդօրինակութիւնն է ներփակեալը, զոր յետոյ տող առ տող բաղդատեցի ձեռագրին հետ եւ ուղղեցի սպրդած սխալները: Բացի կէտադրական ինչ ինչ ուղղումներէն պահած եմ նաեւ ձեռագրին ուղղագրութիւնը: Ընդօրինակած ատենս ես ալ ոգեւորուեցայ անոր պարունակութեամբ. շատ ճարտար ու իմաստալից գտնելով զայն: Ձեռագիրը 153 թուղթէ բաղկացեալ հատոր մըն է. ու կը պարունակէ Վարդանայ առակաները, Կանոնք Թաղէոսի առաքելոյ, քանի մը քարոզներ, Տոմարական գիտելիքներ, շարականներ, գանձեր եւ տաղեր: Դժբախտաբար չունի յիշատակարան, վերջէն թուղթեր ինկած ըլլալուն համար: Գրչութեան տեսակէն դատելով, կարելի է ժՁ-ժէ դարու գործ համարիլ:

Գալով թիւ 743¹³⁸ ձեռագրի Ձեր մատնանշած կտորներուն, անոնց առաջին շորս տողերը կը դնեմ ստորեւ, թղ. 110ա,

(Երգնկացիէն)

Յամենահրաշագործ արարչին որ գոյացան,
Մեծ եւ ահեղ ըսքանչելիք ներգործեցան,
Ոմանք ի տես զարմանալեաց յօրինեցան,
Եւ այլք ի պէտս վայելչութեան մարդկան տվան:

Հանրական արարածոց մասունք լրման,
Ի յերկեակ թիւ որոշեալ բաժանեցան,
Աշխարհի սկիզբն եւ հիմունք հաստատեցան,
Ի յերկուս անկիւնագիծս առկայացան: Եւ այլն

(Ամբողջութիւնը կը կազմէ 1046 տող):

Թղ 121բ,

(Բանք խրատու իմաստասիրաց)

Չորս իրք է որ զթագաւորութիւնն հաստատ պահէ, որ ուննա հաւատ սուրբ եւ ուննա պոխքսիմոս հաստատուն, ի բան պահէ զժողովուրդն եւ օժտէ զարժանաւորքն: Չորս իրք պիտո է թագաւորին, իրաւունս առնել աղքատաց որպէս եւ մեծատանցն, եւ թշնամոյն ոչ կարէ յաղթել քան թտպրով, եւ հետ շարկամաց սէր ոչ կարէ դնել քան խոնարհութեամբ, եւ ի կամս սրտին ոչ հասանի քան համբերութեամբ, եւ այլն:

Կը կանխեմ ջերմապէս շնորհաւորել յառաջիկայ Սուրբ Յարութեան տօնը, մաղթելով Ձեզ լիակատար առողջութիւն եւ ամենայն յաջողութիւն:

Ընդունեցէք սիրալիր ու սրտագին բարեւներս:

Ձերդ սիրով,
Մեսրոպ Եպս. Նշանեան

*

1 Փետրուար 1937

Սիրելի Բարեկամս Տիար Ա. Զօպանեան,

Ներփակ երկու նամակները, իբրեւ կարեւոր վաւերագրեր, Ձեզ կը ղրկեմ հրատա-

¹³⁸ Թիւ 743 ձեռագիրը գրչագրուած է Իլով, 1618 թուականին:

րակելու համար ԱՆԱՀԻՏ-ի դ մէջ, եթէ, անշուշտ, յարմար դատէք¹³⁹: Հակառակ պարագային հաճեցէք ինձ դարձնել:

Այս նամակները գրուած են Խրիմեան Հայրիկի¹⁴⁰ ընտրութենէն շուրջ տարի մը առաջ, երբ սուր կերպարանք մը առած էր կաթողիկոսական ընտրութեան հարցը եւ ռուսահայ երկու կուսակցութիւններ-Մշակական¹⁴¹ եւ Նորդարական¹⁴²- բուն պայքար կը մղէին իրարու դէմ:

Կը կարծեմ թէ իր ժամանակին յայտնի երկու եկեղեցականաց այս նամակներու հրատարակութիւնը զուրկ չէ շահեկանութենէ՝ կէս դար առաջուան մեր պատմութեան տեսակէտով ու պիտի կարգացուի հետաքրքրութեամբ:

Սիրոյ ողջունիւ եւ յարգանաց հաւաստեօք,
Աղօթանուէր
Մեսրոպ Եպս. Նշանեան

*

17 Յունուար 1939

Սիրելի Հայրենակիցս Պարոն Արշակ Զօպանեան,

Մեծ ուրախութեամբ ընդունեցայ Ձեր Վալանսէն ղրկած ամսոյս 7 թուակիր նամակը եւ հասու եղայ պարունակութեան:

Ձեր փափաքին համաձայն կը ներփակեմ Մելքիսեդեկ¹⁴³ եւ Երեմիա¹⁴⁴ եպիսկոպոսներու նամակները, որոնց մէկ օրինակը քովս պատրաստ ունէի բարեբախտաբար ու ազատեցայ զանոնք երկրորդ անգամ օրինակելու յոգնութենէն:

Շատ շնորհակալ եմ Նոր Տարիի եւ Սուրբ Ծնունդի առթիւ Ձեր բարեմաղթութիւններէն: Նոյնը կը մաղթեմ Ձեզ փոխադարձաբար, աւելցնելով որ ըլլաք միշտ քաջողջ ու կայտառ ու չսպառին բնաւ Ձեր կորովն ու եռանդը, զորս այնքան անձնուիրութեամբ ու աշխոյժով ի սպաս կը դնէք Հայ դատին եւ Հայ Գրականութեան:

Ձեր յոբելեանին առթիւ արդէն շնորհաւորական հեռագրեցի ժամանակին: Չափազանց ուրախ եմ որ այս անգամուան Յոբելեանը համազգային բնոյթ մը ունեցաւ ու Հայութեան ամէն խաւերն ու հոսանքները անխտիր իրենց յարգանքի ու գնահատութեան տուրքը ընծայեցին մեծարժէք ու բազմավաստակ Յոբելեարիդ: Ապրիք երկար, որպէսզի բախտն ու պատեհութիւնը ունենաք տօնելու նաեւ Ձեր աղամանդեայ Յոբելեանը: Ձեմ գիտեր թէ ես պիտի հասնի՞մ այդ օրուան, վասնզի ծերութիւնը արդէն սկսաւ ճնշել

¹³⁹ «Անահիտ»ի մէջ շհանդիպեցանք այս նամակներուն:
¹⁴⁰ Մկրտիչ Ա. Վանեցի (Վան, 1820-1907, Վաղարշապատ), Հայ եկեղեցոյ 125-րդ կաթողիկոսը, որ գահակալած է 1893-ին: Խրիմեան Պոլսոյ պատրիարքութենէ հեռանալէ ետք, նախան կաթողիկոս ընտրուիլը, քանի մը տարի մնացած է Երուսաղէմի վանքը:
¹⁴¹ «Մշակ» թերթը հրատարակուած է Թիֆլիսի մէջ, 1872-1921 թուականներուն: Թերթի հիմնադիրն ու առաջին խմբագիրն էր Գրիգոր Արծրունի: Ալեքսանդր Քալանթար եւ Լէօ Նոյնպէս վարած են թերթի խմբագրութիւնը:
¹⁴² «Նոր Դար» հրատարակուած է Թիֆլիսի մէջ, 1883-1916 թուականներու միջեւ: Թերթի խմբագիրն էր Սպանդար Սպանդարեան:
¹⁴³ Մելքիսեդեկ Եպս. Մուրատեան ծնած էր 1836-ին, Տաւուշ: Եղած է Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանի ուսուցիչն ու տեսուչը, «Սիօն»ի խմբագիրը: Վարած է նովրակոսութեան պաշտօններ: Անհամաձայնութեան մը պատճառով հեռացած է Երուսաղէմէն: Վախճանած է 1903-ին Զմիւտնիա, ուր առաջնորդական պաշտօն կը վարէր: 1885-ին կաթողիկոս ընտրուած է, սակայն ընտրութիւնը չէ հաստատուած կայսեր կողմէ:
¹⁴⁴ Հաւանաբար խօսքը կը վերաբերի Երեմիա Եպս. Տէր Սահակեանի, որ 1842-ին ծնած էր Խարբերդ, Քէտերիկ գիւղը: Եղած է Ս. Յակոբեանց միաբանութեան ակնառու անդամներէն՝ վարելով տարբեր պաշտօններ: 1892-ի կաթողիկոսական ընտրութեան քառանկուն ցանկին վրայ էր: Վախճանած է 1900-ին, Երուսաղէմ:

զիս, մանաւանդ երկու տարիէ ի վեր սրտի վիճակ մը երեւան եկած է վրաս, որ ըստ բաւականին մտահոգիչ հանգամանք ունի: Ամէն պարագայի մէջ Տիրոջ կամքը օրհնեալ թող ըլլայ:

Պաղեստինի խռովայոյզ վիճակը աւելի քան երկու տարիէ ի վեր իսկապէս անտանելի կացութիւն մը ստեղծած է ամբողջ երկրին մէջ¹⁴⁵: Ատոր հակազդեցութիւնը վանքերնիս նաեւ կրելու վրայ է: Խանգարուեցաւ մեր ելեւմտական հաւասարակշռութիւնը ու տնտեսական ծանր տագնապի մը առջեւ կը գտնուի այս պահուս Միաբանութիւնը: Երեւակայեցէք որ միայն վերջացող տարիի ընթացքին մօտաւորապէս վեց հազար անգրղիական ոսկրի վնաս մը ունինք Երուսաղէմի ու Յաֆայի կալուածական հասոյթներէն: Ու տակաւին անստոյգ է ապագան ու չենք գիտեր թէ ինչ անակնկալներ պիտի պատահին:

Այս վիճակն է ահա պատճառ, ինչպէս Դուք ալ ենթադրած էք, Աւետիս Մուրատեանի նամակները անպատասխանի ձգելուս: Այսու հանդերձ Մուրատեան իր մտադրութեան համաձայն թող մեկնի Կիպրոս ու այնտեղէն գրէ ինձ, որպէսզի աշխատինք իր Պաղեստին մոտքի արտօնութիւնը ստանալ: Յարմար առիթով մը ես ալ կը գրեմ իրեն:

Պատուիրեցի մեր Տպարանի Տեսչին որ իմ նոր հրատարակած Երեմիա Զէլէպի Քէօմիւրճեանի ՕՐԱԳՐՈՒԹԵՆՆԷՆ¹⁴⁶ օրինակ մը իմ կողմէ ղրկէ Ձեզ: Կը յուսամ թէ ցարդ ընդունած էք զայդ: Այդ գիրքի մասին յոյժ գնահատական նամակներ ընդունեցայ Հայր Ակինեանէ¹⁴⁷ եւ Տորթոր Թորգոմեանէ¹⁴⁸: Կը յուսամ թէ Դուք եւս պիտի հաճիք պատուել զիս Ձեր ԱՆԱՀԻՏ-ին մէջ¹⁴⁹:

Սիրոյ եւ բարեկամական սրտագին ողջոյններով,
Ձերդ
Մեսրոպ Եպս. Նշանեան

*

4 Մայիս 1939

ԱԶՆՈՒԱՇՈՒՔ ՏԻԱՐ ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ
Ի ՓԱՐԻԶ

Սիրելի բարեկամ եւ հայրենակից,
Յաջորդաբար ընդունած եմ Ձեր տարւոյս Յունուար 27, Փետրուար 21, եւ Մարտ 20 նամակները:
Մեր յաւէտ երջանկայիշատակ Ս. Պատրիարքի անակնկալ եւ յանկարծահաս վախ-

¹⁴⁵ 1936-1939 թուականներուն Պաղեստինի արաբները ապստամբութիւն բարձրացուցած էին բրիտանական հոգատարութեան դէմ՝ յանուն արաբական անկախութեան եւ հրէական երկիր մը ստեղծելու փաղափականութեան դէմ:

¹⁴⁶ Երեմիա Զէլէպի Քէօմիւրճեան, «Օրագրութիւն», հրատ. Մեսրոպ Արք. Նշանեան, տպ. Ս. Յակոբեանց, Երուսաղէմ, 1939:

¹⁴⁷ Անուանի բանասէր, ձեռագրագէտ: Ծնած է Արդոփն, 1883-ին, վախճանած՝ 1963-ին, Վիեննա: Անդամ՝ Վիեննական Միաբանեան միաբանութեան, երկարամեայ խմբագիր «Հանդէս ամսօրեայ»ի: Ունի մեծագրութիւն մը Քէօմիւրճեանի մասին:

¹⁴⁸ Յայտնի բանասէր, հանրային գործիչ: Ծնած է 1858-ին, Պոլիս եւ մեռած 1942-ին, Փարիզ: Իր կարեւոր հրատարակութիւններէն է Քէօմիւրճեանի «Ստամպոլայ պատմութիւն»ը, երեք հատորով, հոխ ծանօթագրութիւններով: Իր յուշագրական հատորը՝ «Անցուկը մոռցուկ», մեր կողմէ հրատարակուած է Պոլիս, 2020-ին:

¹⁴⁹ Նշանեանի հատորին առթիւ կատարուած յատուկ անդրադարձի մը շնամոտիպեցանք, թէեւ ան նշուած է «Ստացած հրատարակութիւններ»ի շարքին (տե՛ս «Անահիտ», թիւ 1-3, Յունուար-Մարտ 1940, էջ 45):

ճանուամին¹⁵⁰ ազդած յուզումը՝ որուն ազդեցութիւնը կրելու վրայ եմ տակաւին, թոյլ չտըլաւ ինձ օրը օրին պատասխանելու անոնց: Ատոր համար կը յուսամ թէ ներողամիտ կը լինիք:

ՍիՈՆ-ի բացառիկ թիւին տպագրութիւնը աւարտելու վրայ էր՝ երբ վերջին պահուն հասաւ Ձեր ձեռագիրը եւ Ձեր փափաքին համաձայն կարելի եղաւ զետեղել զայն նոյն թիւին մէջ¹⁵¹:

Ամենէն վերջ ընդունեցայ Ձեր Ապրիլ 24 թուակիր շնորհաւորականը Պատրիարք ընտրուելուս առթիւ¹⁵²: Դուք ալ գիտէք թէ բաւական յառաջացած եմ տարիքով եւ վանական երկարամեայ պաշտօնավարութիւններս չափազանց յոգնեցուցած ու տկարացուցած են զիս, այնպէս որ այլեւս իրաւունքս էր քաշուիլ գործերէ եւ երեկոյացած կեանքիս մնացեալ օրերուն մէջ քիչ մը հանգիստ վայելել: Բայց միաբանակից աւագ եւ կրտսեր եղբայրներուս միահամուռ բաղձանքը պարտաւորեց զիս համակերպիլ եւ ստանձնել պաշտօնը վստահանալով անոնց սիրոյն եւ աջակցութեան:

Շնորհակալ եմ Ձեր շնորհաւորութեանց եւ մաղթանքներուն համար, որոնց անկեղծութեան բնաւ չեմ տարակուսիր, քաջածանօթ ըլլալով թէ վաղեմի եւ սիրելի բարեկամի մը սրտաբուխ արտայայտութիւններն են անոնք:

Կ'ողջունեմ զՁեզ սիրով եւ Ձեր յաջողութեան եւ քաջողջ արեւշատութեան համար եմ միշտ ի բոլոր սրտէ աղօթարար՝

Մեսրոպ Արք. Նշանեան
ՊԱՏՐԻԱՐՔ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

*

26 Հոկտեմբեր 1939

Սիրելի հայրենակից Տիար Ա. Զօպանեան,

Շատ շնորհակալ եմ որ չմերժեցիք խնդրանքս ու հրատարակուելիք ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄ-ի համար զրկեցիք Ձեր շատ սիրուն եւ յոյժ շահեկան գրութիւնը:

Սակայն դժբախտական քաղաքական անակնկալ իրադարձութիւններ յանկարծ տնտեսական անձկութեան մատնեցին վանքերնիս ու մեզ ստիպեցին առժամապէս յետաձգելու գործադրութիւնը կարգ մը ծրագիրներու, որոնց կարգին է նաեւ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄ-ի հրատարակութիւնը¹⁵³:

Արդէն Պաղեստինի ծանօթ կացութիւնը երեք տարիներէ ի վեր կը ճնշէր մեր վրայ ու տակաւ կը խանգարէր մեր ելմտական հաւասարակշռութիւնը եւ արգելք կ'ըլլար վանքին պարտքը շիջուցանելու մասին եղած կարգադրութեանց իրականացման: Մինչ կը յուսայինք թէ շնորհիւ Բրիտանական Կառավարութեան ձեռք առած իմաստուն եւ շրջահայեաց միջոցներուն բնականոն վիճակը պիտի վերահաստատուէր, անակնկալօրէն վրայ հասաւ շարաղէտ պատերազմը ու աւելի ծանր կացութեան մը առջեւ դրաւ մեզ:

¹⁵⁰ Թորգոմ Արք. Գուշակեան Պատրիարքը իր մահկանացուն կնքած էր 10 Փետրուար 1939-ին, սրտի կաթուածի մը հետեանմով:

¹⁵¹ Տէս Արշակ Զօպանեան, «Մեծ հայ դէմք մը», «Սիոն», Մարտ-Ապրիլ 1939, էջ 140-143:

¹⁵² Մեսրոպ Արք. Նշանեան Երուսաղէմի պատրիարք ընտրուած էր 19 Ապրիլ 1939-ին:

¹⁵³ «Հայ Երուսաղէմ»ի հրատարակութիւնը թէւ չ'իրականանար, սակայն նոյն խորագրով ու Հայ Երուսաղէմը ծանօթացնելու միտնոյն նպատակով, սակայն խմբագրական այլ մօտեցումով մը 1948-ին Պոստոնի մէջ կը հրատարակուի պատկերազարդ ուրիշ գրքով մը, Երուսաղէմի միաբան Սիոն Եպս. Մանուկեանի աշխատասիրութեամբ:

Մաղթենք որ ոչ շատ ժամանակէն բրիտանական ու ֆրանսական ազնիւ եւ վեհանձն պետութիւնները յաղթապանծ դուրս ելլեն այս դժնդակ պայքարէն, զոր ստիպուած են մղել արդար դատի մը ի պաշտպանութիւն¹⁵⁴:

Զեր ձեռագիրը կը պահենք խնամքով ու պիտի հրատարակենք զայն ներկայացած առաջին իսկ առիթով:

Մեր պաշտօնի հաստատութեան արքայական հրովարտակը Պաղեստինի եւ Անդր-յորդանանի Բարձր Գոմիսէրութեան ապարանքին մէջ Սեպտեմբեր 27-ին մեզ յանձնուեցաւ, պատուամեծար արարողութեամբ, նոյնինքն Վսեմ. Բարձր Գոմիսէրի¹⁵⁵ ձեռամբ: Այդ առթիւ տեղի ունեցած հանդէսներու նկարագրութիւնը կը կարդաք ՍիՈՆ-ի Հոկտեմբեր-Նոյեմբեր միացեալ համարին մէջ:

Կը յուսամ թէ հանգիստ ու քաջառողջ էք, Սիրելի Բարեկամս, որուն համար միշտ աղօթող եմ սրտիս բոլոր ջերմութեամբ: Երանի թէ առիթ մը ստեղծէիք անգամ մըն ալ Երուսաղէմ գալու եւ իմ մեծարելի հիւրս ըլլալու: Աւելորդ է ըսել թէ ատիկա մեծամեծ ուրախութեան եւ մխիթարութեան պատճառ պիտի ըլլայ ինձ: Վստահ եմ որ Զեր ազգանուէր ու հայրենասէր սիրտն ալ պիտի հրճուէր անցնող քսանամեակի ընթացքին Սուրբ Աթոռիս մէջ տեղի ունեցած յառաջդիմութեանց եւ բարեկարգութեանց ի տես:

Զերմագին ողջոյններով, Զերդ միշտ սիրով,

Մեսրոպ Արք. Նշանեան

Յ. Գ. Մօտ երկու ամսէ ի վեր Հայր Ն. Ակինեան քաղաքս կը գտնուի ու իր ուսումնասիրութիւններով կը պարապի մեր մատենադարանին մէջ:

ԴՈԿՏ. ՆԱՐԵԿ ՔԱՎԱՆԱՅ ՏԷՅԻՐՄԵՆՃԵԱՆ



¹⁵⁴ Կ'ակնարկէ Երկրորդ աշխարհամարտին, որ սկսած էր 1 Սեպտեմբեր 1939-ին՝ Գերմանիոյ կողմէ Լեհաստանի գրաւումով: Բրիտանիա ու Ֆրանսա Գերմանիոյ դէմ պատերազմ յայտարարած էին 3 Սեպտեմբերին:

¹⁵⁵ 1938-1944 թուականներուն Պաղեստինի Բարձր Կոմիսարն էր Հերլա Մաք Մայքլը (1882-1969):

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**ԳԻՄԱԿ՝ ԱԿՆՈՅԻ ՓՈԽԱՐԷՆ**

Ակնոցը

այսօր իր լիազորութիւնները

վստահած է դիմակին:

Ակնոցով աշխարհը

այլ էր... հիմա միայն

խօսիլս չի գար —

աչքերս են որ կը տեսնեն,

կը զգան, յաճախ ալ՝

կը թքնեն:

Ես կը սիրեմ

ակնոցիս գոյնը —

կապոյտ է, իմ ամենէն սիրելի երանգը:

Թերեւս խաղաղութեան

պատկերացումներու հետ ձուլուած է:

Դիմակն այսօր

մէկով աւելցած է.

եղած են շատ դիմակներ

մարդոց դէմքերուն վրայ,

այսօր մէկ մըն ալ աւելցաւ՝

տեսնենք՝ նո՞յնն է, թէ աւելի թունդ:

Տեսնենք՝ աշխատող

մարմինը

ինչպէ՞ս կը շնչէ

հղփացած կեցուածքով.

ես հաստատ չեմ կրնար երեւակայել,

շունչս պիտի կտրուի... կը կարծեմ:

Դիմակը ինչպէ՞ս

կը կրեն...

— ինչպէս միշտ՝ առանց ամօթի...

Ակնոցը թափանցիկ է,

իսկ դիմակը կը ծածկէ

ակնոցի

իրական կերպարը,

որովհետեւ այդպէս է միշտ եղած,

այդպէս է ձեռնտու:

ՎՈՎԱ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

* * *

Մոխիրը կը խառնուի
 արեւին.
 Գիշե՞ր, ցերե՞կ...
 երկուքն ալ
 տարօրինակ են:
 Աչքերը դարձեալ
 սահմանապահներ են —
 Զինուորս դողալ չի գիտեր,
 հողի ու երկնքի հետ կը շնչէ:
 Օրը նորէն կը սպասէ,
 Օրը նորէն կը տանի,
 Օրը յաճախ դատարկ է:

Պայթումի ձայնին տակ օդը կը պարէ,
 Այդ օդը դարձեալ մենք կը շնչենք
 ու նորէն կը դառնանք ան (զինուոր),
 ու նորէն կը դառնանք ՄԵՆՔ:

Ձեռքդ տուր,
 նկարդ մի՛ սեւցներ, երկիրք,
 Դեռ խաղաղութիւն պիտի նուիրեն
 զինուորները քեզ, մեզ ու բոլորին:

ՎՈՎԱ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

* * *

Ամէն անգամ դանդաղ սահող ցուրտը
ինձի կը յիշեցնէ անշար պատմութիւն մը
փողոցներէն մէկուն մասին,
ուր միշտ վերջին հանդիպումները կ'ըլլան,
եւ գրեթէ երբեք օծանելիքի հոտ չես գտներ:

Քիչ մը անդին անկարեկից ժպիտներ կը նշմարուին
աւտոբուսներու ապակիներէն,
անհեթեթ, փշոտ,
փշրուած աչքերով ժպիտներ:
Ինչ տխուր է այս ամէնը փոքրիկ քաղաքի մը մէջ,
ուր գիրքերը երբեմն իրենց հեղինակները կը գտնեն...

Ամէն անգամ կը լռէ
սահմանափակ ժամանակով
պտտող այս մոլորակը,
երբ կը հարցնեմ՝
ո՞ւր հեռացած է ան...

ՎՈՎԱ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

* * *

Կ'անձրեւես,
 Կ'անձրեւես նորէն,
 չես հեռանար, ինչպէս սովորաբար կ'ընեն մեծ քաղաքի բնակիչները,
 բայց չես խոստանար նաեւ մնալ, ինչպէս քչերուն տրուած է:

Քաղաքին մէջ պտտող փոշին դուրս կու գայ
 առանց անձրեւանոց...
 Թերեւս տեսած ես անոր պատուած կիսաշրջագգեստը,
 որուն վրայ կը ննջեն մարդիկ,
 տխուր մարդիկ,
 տխուր սրտեր,
 տխուր արեւներ:

Հիմա հերթական աշունը կը պտտի մեր երկրին մէջ
 առանց գրահաբաճկոն...
 Թերեւս տեսած ես տուն վերադարձողներուն ծիծաղը,
 որմէ ետք կեանքը կ'երջանկանայ,
 եւ գիրքերու միջեւ շորցած ծաղիկները
 չեն երթար հողաթումբերուն մօտ:

Թերեւս դուն տեսած ես երջանկութիւնը,
 որ յաճախ տունէն դուրս կու գայ
 ու այլեւս չի վերադառնար,
 որքան ալ ոստիկանութիւնը կը փնտռէ
 եւ անուժ է գտնելու:

Թերեւս դուն,
 թերեւս դուն գիտես
 ինչու այս անձրեւը այսքան երկար կը մաղէ
 իմ տակաւին շորցած աչքերուս վերեւ:

Դանդաղ ու քաղցր աշուն մը յայտնուած է հիմա քաղաքին մէջ,
 դանդաղ քալող ու քաղցր շուն մըն է,
 որ կը հոտոտէ կօշիկներս:

Թերեւս գիտես՝
 այս անգամ ո՞վ հեռացած է քաղաքէն...

ՎՈՎԱ ԱՐՋՈՒՄԱՆԵԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔԵԱՆ
ԲՆՈՐԴԸ ՅՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ**

«Ռոմանոս Մելիքեանը մեր երաժշտութեան Տէրեանն է... Երկուսն էլ բացարձակ հայ են իրենց տխրութեամբ ու ժպիտով, իրենց մտորումներով ու իտէալներով, իրենց ստեղծած արուեստային աշխարհի ողջ մթնոլորտով ու ներքին էութեամբ»:

Մ. Սարեան

Հայ երաժշտարուեստի նուիրեալների աստղաբոյլը չի կարելի պատկերացնել առանց Ռոմանոս Մելիքեանի: Նրա երգերն ու ռոմանսները բացառիկ նշանակութիւն են ունեցել հայ երաժշտական մշակոյթի զարգացման գործում: Եթէ կեանքում նա մեծ եռանդի տէր, աշխատանքի նուիրեալ ու մաքառող անձնաւորութիւն էր, ապա ստեղծագործական տիրոյթում բացառիկ լիրիկ էր, Ա. Իսահակեանի բնորոշմամբ՝ «ամենալիրիկականը հայ երգահաններից»: Նա իր մտքի թռիչքով, երաժշտական բարձր մշակոյթով օժանդակել ու թեւեր է տուել բազմաթիւ արուեստագէտների: Պատահական չէ, որ նրա մասին յուշերը այդքան ջերմ են ու սրտառուչ: Յուշագիրներից շատերը՝ Ա. Իսահակեանը, Ս. Զօրեանը, Գ. Սարեանը, Գ. Լեւոնեանը, Ա. Մանուկեանը, Մ. Նունեանը եւ ուրիշներ, կենսագրական մանրամասներ են նրբագծել մեծ երգահանի մասին, ներկայացրել նրա մարդկային եւ հասարակական գործունէութեան մանրամասներ:

Յօդուածում այդ կենսապատումից քաղաբերել ենք որոշ դրուագներ, իմաստախօսութիւններ, որոնք կարող են առաւել ամբողջական դարձնել Ռ. Մելիքեան արուեստագէտի յուշ-դիմանկարը, որն այսօր էլ հետաքրքրութիւն է ներկայացնում: Անդրադարձել ենք նաեւ յուշագրական բնագրերի լեզուական-կառուցուածքային որոշ առանձնայատկութիւններին:

Ռ. Մելիքեանի կենսագրական ուրուագծեր

Ռ. Մելիքեանը ծնուել է 1883 թ. հիւսիսային Կովկասի՝ գինեւէտ այգիներով յայտնի Ղզլար փոքրիկ ու գեղատեսիլ քաղաքում. բնակչութեան մեծ մասը հայեր էին, որոնք զբաղւում էին գինեգործութեամբ: Երաժշտութեան մեծ սիրահար հայրը յաճախ էր երգում հայկական ժողովրդական երգեր, որոնք պատանու հոգում անջնջելի տպաւորութիւններ են թողնում եւ աննկատելիօրէն սէր ու հետաքրքրութիւն հիւսում դէպի երաժշտութիւնը:

1900 թ. հայրենի քաղաքում կայանում է Ռոմանոսի անդրանիկ համերգը, որ կազմակերպել էին տեղի հայերը, այդ թւում՝ քաղաքի՝ ամռանը ծնողների յարկի տակ հաւաքուած ուսանողները:

Ռ. Մելիքեանը Նոր Նախիջեանի թեմական դպրոցում աշակերտում է Գէորգ Զորէքչեանին, որը եւ քաջալերում է կոմպոզիտորի ստեղծագործական առաջին քայլերը: Զորէքչեան սարկաւազը¹ յաճախ էր հիւրընկալում իր աշակերտներին, հպարտանում նրանցով՝ համոզուած, որ նրանք լինելու են իր գործի արժանի հետեւորդները: Մելիքեանը մեծ երախտագիտութեամբ էր յիշում ուսուցչին: Շուտով նշանակւում է Ս. Գէորգ եկեղեցու երգչախմբի ղեկավար: Ռոմանոսի կեանքի այս շրջանի մասին ուշագրաւ յուշեր է պատմում նրա մտերիմ ընկեր Ազատ Մանուկեանը. «Ինձ մօտեցաւ մի նիհար, երկար բոյով պատանի, ամառային աշակերտական բլուզը հագին, գլխին աշակերտական գլխարկ կակարդով, ձեռքը մեկնեց ինձ եւ ասաց՝ Ռոմանոս Մելիքեան. խնդրեմ ծանօթանանք... Ռոմանոսը սիրում էր խօսել հայ երաժշտութեան... մասին: Պիտի գնամ սովորեմ, պիտի ծանօթանամ Եկմալեանի եւ Կարա-Մուրզայի հետ: Ասում են՝ շատ հետաքրքիր մարդ է: Ա՛յ, մարդը այդպէս կը լինի. ամէն տեղ քառաձայն խումբ է պատրաստում, է՛լ գիւղ, է՛լ քաղաք չի թողնում: Ազա՛տ, մենք էլ այդպէս պէտք է անենք, հայկական երաժշտութիւնը տարածենք»²: Առհասարակ նա լաւատես էր հարազատ ժողովրդի ապագայի հանդէպ. «Հայ ժողովուրդը մեղուի պէս աշխատում էր, ջանք չէր խնայում՝ դարաւոր վէրքերը բուժելու, ամոքելու, նորը կառուցելու համար»³:

1902 թ. Ռոմանոսն աւարտում է Նոր Նախիջեանի թեմական դպրոցը եւ ընդունւում Ռոստովի երաժշտական ուսումնարան:

Ուսումը շարունակում է Մոսկուայում, մասնաւոր դասեր առնում յայտնի կոմպոզիտորների մօտ: Այստեղ էլ ծանօթանում է Ա. Մյասնիկեանի ու Վ. Տէրեանի հետ: Մէկ տարի աշխատում է երաժշտական դպրոցում, այնուհետեւ Լազարեան ճեմարանում՝ ղեկավարելով նաեւ եկեղեցական երգչախումբը: Այս շրջանում ձեւաւորւում են Մելիքեանի գեղագիտական հայեացքները: Հետաքրքրութիւնների կենտրոնում է յայտնւում ազգային երգ-երաժշտութիւնը: Իր առաջին ազգային երգերը Մելիքեանը գրում է Տէրեանի խօսքերով. դրանք էին «Աշնան երգ» ռոմանսը եւ «Սօնէթ» մելոդեկլամացիան: Ռ. Մելիքեան-Վ. Տէրեան մտերմութիւնը պատահական չէր: Երկուսի աշխարհում էլ գերիշխում էին էլեգիական մոտիւնները, միայնութեան տրամագրութիւնները: Ռ. Մելիքեանին յուզում էին Վ. Տէրեանի թախծոտ ու հոգեպարար տողերը, որոնց երգահանը եզակի մեկնութեամբ նոր ծնունդ էր տալիս՝ երկնելով քնարական նուրբ մեղեդիներ:

1907-1908 թթ. նիւթական ծանր պայմանները եւ առողջական վիճակը ստիպում են Ռ. Մելիքեանին ընդհատել ուսումը եւ վերադառնալ Նոր Նախիջեան, ապա փոխադրուել Թիֆլիս, որը միանգամայն նոր գոյներով է դիմաւորում երգահանին: Այստեղ նա զբաղւում է մանկավարժական գործունէութեամբ, հանդիպումներ ունենում հայ մտաւորական աշխարհի ներկայացուցիչների հետ, կազմակերպում երաժշտագէտների մի խմբակ՝ «Երաժշտական լիկա» անունով: Խմբակի ծնունդը ողջունում է Ամենայն հայոց բանաստեղծը: Անմոռանալի էին նրանց հանդիպումները՝ ծիծաղաշարժ դրուագներով լի⁴: Թումանեանը նոյնիսկ կատակով ցանկութիւն է յայտնում ընդունուելու երաժշտա-

¹ Հոգեւոր գործունէութեան արշալոյսին հայրենի ֆաղափում երիտասարդ սարկաւազը մանկավարժական բեղուն գործունէութեանը զուգընթաց զբաղուել է ստեղծագործական աշխատանքով, եղել երաժշտութեան ուսուցիչ: Ժամանակակիցների վկայութեամբ ունեցել է «բազմաթիւ հետիմնակոյութիւններ»՝ երկեր: Տե՛ս **Գ. Գեորգ Եպիսկոպոս Զորէքչեան**, ֆառոգներ եւ ելոյթներ, էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2013, էջ 6:

² **Գ. Գյոդակեան**, Ռոմանոս Մելիքեան. կեանքը եւ ստեղծագործութիւնը, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1960, էջ 10-11:

³ **Ռ. Մելիքեան**, յօդուածներ, նամակներ յուշեր, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1977, էջ 124:

⁴ «Երեկոն անցաւ աշխոյժ: Յովհաննէսը եւ Ռոմանոսը կուտակել էին իրենց առկախօսութեան ամբարը ծիծաղաշարժ էպիգրոֆներով: Յովհաննէսը թէ՛ Ռոմանոս, ձեր լիկայի անդամները ֆանի՛ հարիւրի են հասնում:

կան այդ խմբակը՝ ստանալով Ռ. Մելիքեանի օրհնութիւնը: Այցելելով Դսեղ՝ երգահանը Յ. Թումանեանի⁵ հետ շրջել է Լոռուայ աշխարհում, այնտեղից ոտքով հասել Դիլիջան եւ ժողովրդական երգեր ժողովել:

1910-1914 թթ. Ռ. Մելիքեանը շարունակում է իր երաժշտական կրթութիւնը Փեթերսպուրկի կոնսերվատորիայում, կատարելագործում երաժշտական արուեստի մէջ, ապրում ստեղծագործական բուռն կեանքով:

1915 թ. վերադառնում է Թիֆլիս: Այստեղ նա կապ է հաստատում Հայոց երաժշտական ընկերութեան հետ եւ մասնակցում նրա աշխատանքներին:

Ռ. Մելիքեանի կեանքում կարեւոր իրադարձութիւն եղաւ ուղեւորութիւնը դէպի Վան, ուր տառապեալ հայութեանը օգնութիւն ցոյց տուող պատգամաբերների հետ այնտեղ գործուղուեց 1915 թ. Դեկտեմբերից, որտեղից ուղարկուած նամակներում, յուշագրական էջերում երեւում են կեանքի իրական պատկերներն ու հոգեկան տխուր ապրումները: Այդ պայմաններում նա կարողացել է Վասպուրականի ժողերգեր հաւաքել: Տալիս էր մի քանի հարց կալի, խոտհարքի, հողը վարելու, հարսանիքի, մկրտութեան մասին, եւ պատմողը վերջիշելով աննկատելիօրէն սկսում էր երգել: Ռոմանոսը կրկնում էր լսածը, ձայնագրում, ապա ինքը երգում:

Այստեղ նա հանդիպել է Յ. Թումանեանի որդուն՝ Արտաւազդին, որը պատմել է, որ Վանն արդէն երեք հազարի հասնող բնակչութիւն ունի, ստեղծուել է երեք որբանոց, կայ հացի փուռ, նոյնիսկ դպրոց որբերի համար: Այստեղից Ռ. Մելիքեանը մեկնել է Պիթլիս, Խնուս, էրզրում:

Ռոմանոս Մելիքեանի անունը կապում է Երեւանում կոնսերվատորիայի ստեղծման եւ պետական օպերան կազմակերպելու հետ:

Ռոմանոս Մելիքեանին նուիրուած յուշերի լեզուական-կառուցուածքային որոշ առանձնայատկութիւններ

Մեծանուն երաժշտագէտի մասին ժամանակակիցները յուշագրական զգալի նիւթեր են ստեղծել, որոնք լոյս են սփռում նրա կեանքի այս կամ այն ժամանակահատուածի կամ դրուագի վրայ՝ ամբողջացնելով կոմպոզիտորի կենսագրատումը: Սոյն յօդուածի վերջնարդիւնքը, սակայն, փոքր-ինչ այլ է. մեր խնդիրն է տալ կոմպոզիտորի ընդհանուր կենսագրատումը՝ ընդամին վեր հանելով յուշերի՝ որպէս գեղարուեստական վաւերագրութեան ժանրի կառուցուածքային բնութագրիչներն ու լեզուական հիմքերը:

Յուշ-դիմանկարները սովորաբար սկսում են առաջին անգամ տեսայ/հանդիպեցի/ձանօթացայ քերականական կառուցներով: Ուշագրաւ է, որ յուշագիրները քանիցս առիթ են ունեցել շփուելու եւ հաղորդակցուելու կոմպոզիտորի հետ, սակայն որոշակի օրինաչափութեամբ գրեթէ բոլորն էլ յուշերը շարադրում են՝ մատնանշելով եւ ընդգծելով առաջին եւ վերջին հանդիպումը: Բնագրի սկզբնամասում յուշագիր-հեղինակները կերպարագծում են Ռ. Մելիքեանի դիմանկարը՝ արտաքին բարեմասնութիւնների

-Դա լիկայի գաղտնիքն է. մենք իրաւում հունեմ յայտնելու մեր թուի մասին որեւէ մէկին.-պաթոսով ասաց Ռոմանոսը:
- Բա չէ՞ք կարող ինձ եւս անդամագրել ձեր լիկային:
- Ինչո՞ւ չէ.- ասաց Ռոմանոսը.- պայմանով, որ ինձ մօտ կամ երաժշտութիւն սովորես, կամ դրա փոխարէն մեզ համար ամիսը երկու մանկական բանաստեղծութիւն գրես» (Ա. Մանուկեան, 133):
⁵ Ռ. Մելիքեանը բաական մտերմութիւն է ունեցել նաեւ Յ. Թումանեանի դստեր՝ գրականագէտ Նուարդ Թումանեանի հետ:

հաշուառումով՝ երբեմն առանձնացնելով նրա աչքերը, ձայնը, շարժումները, կեցուածքը. «Ես Ռոմանոսին առաջին անգամ տեսել եմ 1904 թուին: Առաջին վայրկեանից նա գրաւեց ինձ. հրաշալի խօսակից էր՝ սրամիտ, հմայիչ իր ձայնով, բանաստեղծական շարժ ու ձեւերով, բարձրահասակ, գեղեցիկ, ճոխ մազերով»⁶ (Ա. Իսահակեան): «Առաջին անգամ Ռոմանոսին հանդիպեցի 1908 թուականին, երբ նա եկել էր Թիֆլիս ու Յովնանեան դպրոցում երաժշտութեան դասեր ստանձնել» (Մ. Նունեան, 145): Առաջին անգամ այդ տաղանդաւոր մարդու հետ ես ծանօթացայ 1930 թուականի գարնանը՝ մայիս ամսին» (Ա. Փալանջեան, 196): «Աւա՛ղ, այդ վերջին տեսնելն էր. երբ հայրենիք վերադարձայ 1936 թ., սիրելի Ռոմանոսը չկար ընկերներիս մէջ» (Ա. Իսահակեան, 91):

Յուշագիրներն առանձնակի սիրով կերպարագծում են բնորդի դիմանկարը՝ արտաքին նկարագրին հիւսելով բնաւորութեան որոշակի գծեր. «Նրա պարթեւ հասակը, համակրելի դէմքը, սիրալիւր վարմունքը գրաւեցին ուշագրութիւնս» (192):

Ժանրի բնութագրական ցուցիչներից է հասկացոյթների գործածութիւնը: Ժամանակակից ճանաչողական լեզուաբանութեան հիմնահարցերից մէկը տիպաբանական հասկացոյթների իրացումն է: Հասկացոյթը մտքի կառուցուածքային միաւոր է, որ ամբողջութեամբ է ուսումնասիրուող յուշագրութեան լեզուատիրոջ թում:

Այս առումով յուշերում ուշագրաւ է ծանօթութիւն, տպաւորութիւն եւ յիշողութիւն հասկացոյթների գործածութիւնը. «Իմ ծանօթութիւնը Ռոմանոս Մելիքեանի հետ» (Ա. Մանուկեան, 127): «Առաջին տպաւորութիւնը, որ ստանում էինք Ռոմանոսից, այն էր, որ այդ մարդը արտիստ էր բառի ամենալաւ եւ ամենալայն մտքով» (92): «Իրար հետեւից երեւան են գալիս յիշողութիւնները: Դրանք այնքա՛ն շատ են եւ այնքա՛ն բազմազան» (115):

Գեղարուեստական-վաւերագրական պատումն ինքնին դէպքերի մի ամբողջական շղթայ է: Այդ դէպքերը փոխկապակցուած են եւ կարող են յաջորդել միմեանց: Այստեղ մեծ է հեղինակի՝ մի դէպքը միւսից բխեցնելու մղումը, որտեղ երեւում է անցեալի եւ ներկայի բաժանման կէտը: Յիշել ըստ էութեան նշանակում է «անցեալ ունենալ» եւ ենթագրում է մտապահել ու մտաբերել որոշ բաներ: Յուշ-դիմանկարներում հետաքրքրական է յիշում եմ (միտս են գալիս) եւ չեմ մոռանում բայաձեւերի յաճախակի կիրառութիւնը, որը յատուկ է յուշագրութեան լեզուին: Անկատար ներկայի առաջին դէմքի բայաձեւերով հեղինակները փորձել են անցեալի անմոռանալի յուշերի արժէքը ցոյց տալ իբրեւ մշտակայ ներկայ իրողութիւն. «Յիշում եմ նրա ձեռքերը, որոնք երբեք հանգիստ չունէին: Յիշում եմ նրա աչքերը՝ կենդանի, սեւ, խորքում ծիծաղի անմար կրակով» (114):

«Յիշում եմ՝ ինչպէս մի անգամ հագուստներ նուիրեց միջոցներից զուրկ մի ուսուցչի՝ ասելով, թէ այդ բոլորն ուրիշն է ուղարկել իր ձեռքով, որպէսզի մարդը չճնշուի բարոյապէս: Յիշում եմ՝ ինչպէս կազմեց Աթաբեկ Խնկոյեանի ոտանաւորների եւ հէքեաթների ժողովածուները՝ դրանցից շատերը արտագրելով իր գեղեցիկ ձեռագրով, որովհետեւ խեղճ Խնկոյեանն այդ ժամանակ տառապում էր ծանր մի գլխացաւով եւ աշխատել չէր կարողանում» (100):

«Զեմ մոռանում 1935 թ. մարտի 24-ը» (137): «Այժմ էլ վառ կերպով յիշում եմ Ռոմանոսին՝ խմբի առաջ կանգնած, թեւերը տարածած, լուռ, գունատ» (148):

⁶ Ա. Մելիքեան, յօդուածներ, նամակներ, յուշեր, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1977, էջ 89: Մնացեալ դէպքերում փակագծում կը նշուի սոյն աղբիւրի էջը:

Ակտիւ գործածութիւն ունի նաեւ այսօրուայ պէս յիշում եմ կառուցքը. «Այսօրուայ պէս յիշում եմ՝ նա եւ դաշնակահար Տէր-Դաւթեանը, միմեանց հետ ասես մրցման ելած, սկսեցին նուագել» (195):

Յուշերի կառուցուածքային միաւոր է մի անգամ («չկրկնուող մի գործողութիւն»), ամէն անգամ («միշտ, շարունակ»), վերջին անգամ («աւարտուող գործողութիւն») ժամանակային արտայայտութիւնները. «Մի անգամ կրասնողարից մեկնում էի Արմաւիր՝ այնտեղ բնակուող քրոջս տեսնելու» (193): «Ամէն անգամ, երբ ես գնում էի Հայաստան, Ռոմանոսին տեսնում էի երիտասարդ երաժիշտներով շրջապատուած» (195): «Վերջին անգամ նա գիւղերն ուսումնասիրելու գնաց մահուանից մէկ-երկու ամիս առաջ» (98):

Յուշագրական պատումը ոճաւորելու, առաւել ամբողջական ներկայացնելու եւ ներգործուն դարձնելու համար յաճախ խօսքը լրացւում է մեծերի, գրական տարբեր հերոսների մտքերով. «Ռոմանոսը շատ էր հաւանում Դանիէլ Վարուժանի այն խօսքը, թէ «լոկ համոզումս է, որ պէտք է ժայռին զարնել, ջախջախել քնարը, երբ ան մեծ չէ»⁷» (139): Յուշագրական արձակում յաճախ քաղաբերում են առած-ասացուածքներ, թեւաւոր խօսքեր. օրինակներ՝ «Թուրքական առածն ասում է՝ «Բեղուանգ՝ դա բի ունգ՝ դրո»-«Անգոյնն էլ մի գոյն է»» (152): «Թող կոյրերի աչքերը զօրութիւն ստանան» (125):

Կառուցուածքային հնար է նամակի կամ բացիկի՝ որպէս երկխօսութեան իւրայատուկ տեսակների գործածութիւնը գեղարուեստական վաւերագրութեան բնագրում (նամակը՝ օրագրութեան մէջ, բացիկը՝ յուշագրութեան մէջ): Նամակը եւ բացիկը լրացնում, ամբողջացնում են խօսքաշարը, ի յայտ են բերում հեղինակի լեզուամտածողութիւնը, ցուցադրում յուշագրութեան պատկերաւորութիւնը: Յու. Աւետիսեանը նշում է, որ պատկերաւորման ու արտայայտչական միջոցները, որոնք ինքնաբերաբար եւ անկեղծ մղումով յայտնուում են նամակներում, լեզուն դարձնում են տպաւորիչ ու բանաստեղծական⁸:

Նամակները, գործածուելով գեղարուեստական վաւերագրութեան լեզուական տիրոյթում, դառնում են այդ ժանրի կառուցուածքային տարրեր: Ռ. Մելիքեանին նուիրուած յուշերում յաճախ են մէջբերում նամակից կամ բացիկից հատուածներ, օրինակ՝ «Սիրելի՛ Գեղամ, անշափ շնորհակալ կլինէի, եթէ Դուք աշակցէիք ինձ. պէտք են պատկերաւոր եւ ճաշակով բանաստեղծութիւններ աշխատանքի, շինարարութեան շուրջ: Խնդրում եմ՝ ուղարկէք մի քանի հատ Ձեր ձեռագիր աշխատութիւններից: Ձեր երկու գրուածքների՝ «Լինէի, հով լինէի» եւ «Ժամացոյցը», էսքիզներ արդէն արել եմ, բայց դեռ չեմ մշակել: Սպասում եմ» (68):

Բնագրային այսպիսի դրսեւորումները տեքստի ոճաբանութեան մէջ անուանում են տեքստը տեքստում, որի դէպքում գործ ենք ունենում միջտեքստային առնչութիւնների հետ⁹: Տուեալ դէպքում նամակը գեղարուեստական վաւերագրութեան մէջ ունի գեղարուեստական ամբողջական համակարգի նշանակութիւն եւ որպէս լեզուական որակ՝ ընկալում է բնագրի լեզուաոճական յատկանիշներով:

Յուշերում նկարագրական խօսքը հեղինակները հիւսում են՝ կիրառելով լեզուաոճական այնպիսի յատուկ հնարներ, որոնք ձեւաւորում են յուշագրական տեքստի դի-

⁷ Գ. Վարուժանի՝ 1908-ին Գ. Լեւոնեանին գրած նամակից է: Տե՛ս Գ. Վարուժան, Նամականի, Երեւան, «Հայաստան» հրատ., 1965, էջ 127:

⁸ Յու. Աւետիսեան, Արեւմտահայ բանաստեղծութեան լեզուն, Երեւան, ԵՊՀ հրատ., 2002, էջ 211:

⁹ А. Горшков, Русская стилистика. Стилистика текста и функциональная стилистика, Москва, 2006, էջ 85:

մապատկերային միջուկը: Այս տեսանկյունից կարող ենք առանձնացնել կառուցուածքային միաւորներ, բառաշերտեր, որոնք ընդգծում են՝ ա. բնորդի արտաքին յատկանիշները, բ. գործողութիւններն ու արարքները, գ. ուղղակի կամ անուղղակի խօսքը եւ այլն:

Այս առումով բնագրում առանձնանում են բառափնջեր, որոնք բնութագրում են Ռոմանոս Մելիքեանին: Ակտիւ են բարդ բառերի սէր վերջնաբաղադրիչով կազմութիւնները՝ հայասէր (154), գրուցասէր (90), կենսասէր (90), երաժշտասէր (131), կատակասէր (144), աղանասէր (172) եւ այլն: Կան բնութագրական արտայայտութիւններ եւ շրջաստութիւններ. «Ի դէպ ասեմ, որ Ռոմանոսին ես «Դոն»¹⁰ տիտղոսն էի տուել. «Դոն Ռոմանոս» այդպէս էի կոչում նրան թէ՛ ըստ իր անուան, թէ՛ ըստ իմ տպաւորութեան իսպանական ասպետական կոլորիտի եւ ոճի, շարժ ու կեցուածքի՝ նրա զարմանալի նոյնութեան համար» (91): Ի դէպ, Ռոմանոս յատկանունն առաջացել է յունարէն Ռոմանոս անունից, որ նշանակում է զօրեղ: Լատիներէն ստուգաբանութեամբ Ռոմանոս նշանակում է Հոռոմի բնակիչ, հոռոմէացի: Բնագրում գործածական են նաեւ *հնչիւնների վարպետ, հայ երգի մեծ վարպետ, երգող սիրտ* շրջաստիւթները (94, 107):

Յուշերում ցրուած են Ռ. Մելիքեանի իմաստախօսութիւններից. «Ստեղծագործութիւնը բարձունք նուաճելու պէս բան է» (93): «Ես քիչը կասեմ, դու շատը հասկացիր» (93):

Ակտիւ գործածուում են երաժշտութեանը նուիրուած բառերն ու արտայայտութիւնները՝ երգ, մեներգ (136), եղերերգ (199), ֆայլերգ (215), երգարուեստ (103), երգարան (204), երգչուհի (124), մեղեդի (106), մելոդիա (108), վոկալ (115), լիբրետո (120), երգացանկ (101), ակորդ (124), դաշնամուր (111), ֆեամանչա (151), ջութակ, թալտութակ, ֆլէյտայ, հոբոյ (178), թառ (128), դաշնակահար (123), ջութակահար (154), մանտոլինահար (128), էստրադա, նօտագրութիւն (137), նոագակցութիւն (118), երգեցողութիւն (131), համերգ (119), կոնցերտ (128), տենոր (120), բաս, solo (128), տրիօ (128), կոնսերվատորիա (129), կոմպոզիտոր, աշուղ (116), օպերա (154), օպերէտ (156), երաժշտախումբ (177), նոագախումբ, երգչախումբ (187), մենանուագ (183), սիմֆոնիկ (184), երաժշտական ընտանիք (133), երաժշտական խանութ (101), երաժշտական գործիք, երգչական ձայն, նուրբ երաժշտականութիւն (115), համերգ-ցուցահանդէս (116), համերգ-երեկոյթ (128), «Ալմաստ» (184), «Անուշ» (187), «Վարդը» (193), Կոմիտաս (136), Մակար Եկմալեան, Կարա-Մուրզա (129), Ա. Սպենդիարեան (180), Ռիմսկի-Կորսակով (154), Բախ, Բեթհովեն (112), Չայկովսկի (142), Գլինկա, Գլիկ, Հենտել (178) եւ այլն: Գործածական է երգը երգուել դարձուածքը, որ նշանակում է աւարտուել, կործանուել, պարտուել. «Չե՞ս տեսնում, որ մեր երգերը վաղուց երգուած են» (171):

Յուշերում ակտիւ են կրօնական-եկեղեցական միաւորները՝ Աստուած (113), Ա. Գէորգ եկեղեցի (128), Ա. Լուսաւորիչ եկեղեցի (127), Վարագայ վանք (168), Թարգմանչաց վանք (173), պատարագ (130), Մովսէսի գաւազան¹¹ (162), խաչ, խաչվառ (172), «Քրիստոս յարեալ», Զատիկի տօն (130), Վարդավառի տօն, եկեղեցի (113), ուխտատեղի (162), հեթանոս (163), տէրտէր (194), հրիմեան Հայրիկ (168) եւ այլն:

Շատ են օտարաբանութիւնները, որոնց գրական համարժէքները գործածական են գրական հայերէնում, այսպէս՝ կաֆէ-սրճարան, միլիցիա-ոստիկան (111), ինտոնա-

¹⁰ Իսպանիայում տղամարդկանց յարգալից դիմելաձեւ՝ պարոն իմաստով:

¹¹ Մովսէսի գաւազանն օգտագործուում է Աստուածաշնչում. Մովսէսն այն օգտագործել է տարբեր հրաշքներ գործելու համար:

ցիա-հնչերանգ (115), կորիֆեյ-վարպետ (116), ֆոլկլոր-բանահիւսուծիւն (117), ափիշ-ազ-դագիր (120), օվաղիայ-ցնծութեան արտայայտութիւն ծափահարութիւնների միջոցով (130), դիապագոն-ձայնածաւալ (136), ինտելիգենցիա-մտաւորականութիւն (93), կուրորտ-առողջարան (94) եւ այլն:

Արեւմտեան Հայաստանում յայտնուելով նաւաշինարանում՝ Ռ. Մելիքեանը տեղացիների հետ ձեռնամուխ է լինում նաև շինութեանը, փորձարկում այն եւ ուղեւորում դէպի Աղթամար: Յուշագրութեան այդ հատուածում գործածուում են նաև բաղադրիչով բառեր՝ նաւաստի, նաւաշինարան, նաւաշինութիւն (167), նաւաշինարար (168), նաւահանգիստ (169):

Բնագրերում գործածական են հայ բաղադրիչով կազմութիւններ՝ հայասէր (154), հայաշատ (163), ռուսահայ եւ այլն:

Յուշագրական բնագրերում գործածութեան յաճախականութիւն ունեն -ցի, -եցի, -ացի վերջածանցներով կազմութիւնները, որոնք արտայայտում են որեւէ բնակավայրի բնակիչ լինելու իմաստ՝ շտալանագի (165), անգլիացի (156), վանեցի (169), սասունցի (173), երեւանցի (182) եւ այլն: Կենսունակ են ան- նախածանցով կազմութիւնները՝ անյագ, անհանգիստ (98), անթիկումբ (194) եւ այլն:

XX դարի գեղարուեստական վաւերագրութեան մէջ առաւել յաճախ են գործածուում վանկաբառային կամ վանկային (մասային) յապաւումներ, որոնք բառակապակցութիւնների փոխանորդներ են եւ գործածութեան յաճախականութեամբ սոյն յուշագրութեան լեզուում ակտիւութիւն են ցուցաբերում: Ինչպէս նշում է Շէյքսպիրի հերոսը, համառօտումը խօսքի հոգին է¹²: Առաւել գործածական են քաղ, լու, յեղ, շրջ, պետ սկզբնաբաղադրիչներով յապաւումները՝ քաղլուվար (102)-քաղաքային լուսաւորութեան վարչութիւն, յեղկում (174)-յեղափոխական կոմիտէ, շրջկում (175)-շրջանային կոմիտէ, լուսժողկումատ (182)-լուսաւորութեան ժողովրդական կոմիսարիատ, պետհրատ (197)-պետական հրատարակչութիւն, պետօպերա (217)-պետական օպերա, բուժոյր (166)-բժշկական քոյր եւ այլն:

Ռոմանոս Մելիքեանը ունէր լեզուական բարձր ճաշակ եւ հոգածու վերաբերմունք դէպի գրական հայերէնը: Նա այն կարծիքին էր, որ գրողի լեզուն պիտի լինի պարզ, մաքուր եւ ճաշակով ընտրուած բառերով: Ու այդ իսկ պատճառով հայոց լեզուի բարձր վարպետների՝ Յ. Թումանեանի եւ Վ. Տէրեանի երկրպագուն էր (95):

Ռ. Մելիքեանը լաւ պատմող էր: Որսորդութիւնը սիրելով՝ գրել է պատմուածքներ, հանելուկներ, որոնք շատ էին սիրում երեխաները: Նրանք շնչակտուր լսում էին որսորդական արկածները եւ խնդրում, որ շատ պատմի: Որսորդութիւնը երգահանի համար սիրելի մի զբաղմունք էր՝ բնութեան մէջ լինելու եւ նրա բազմազան կեանքով ապրելու բնագրական մի սէր: Նա շատ էր սիրում երեխաներին՝ այդ ազնիւ ու մաքուր հոգիներին, որոնց շրջանում իրեն զգում էր թեթեւ ու երջանիկ:

Ռ. Մելիքեանը մեծ ակնածանքով եւ խորունկ յարգանքով էր վերաբերում իր գործընկերներին: Ա. Սպենդիարեանին մօտենում էր այնպէս, ինչպէս աշակերտն իր մեծ ուսուցչին. գրեթէ չէր խօսում, այլ ուշադիր լսում էր մեծ վարպետին:

Ամփոփում: 1. Տարատեսակ հիմքերով յուշագրական պատմումները ձեւաւորում են Ռոմանոս Մելիքեան բնորդի դիմանկարը: 2. Դիմանկարն ամբողջանում է մի քա-

¹² Շէյքսպիր, Երկեր 3 հատորով, հ. 1, Երեւան, 1951, էջ 35:

նի սկզբունքներով, որոնցից էականը թերեւս յուշագրի առաջին տպաւորութիւնն է: 3. Բնորդը համապատասխան բնութագրիչներով ներկայանում է խօսքային տարբեր իրավիճակներում: 4. Յուշագրական արձակում գործածուած բառափնջերը, շրջասութիւններն ու իմաստալի արտայայտութիւնները, կառուցուածքային հնարները երաժշտական յուշերին հաղորդում են պատկերաւորութիւն եւ արտայայտչականութիւն:

Ռոմանոս Մելիքեանը՝ հայ ժողովրդի արժանաւոր զաւակը, իր լիրիկական հոգով ու տաղանդով զարգացրել է հայ ազգային երաժշտական մշակոյթը եւ սերունդների յիշողութեան մէջ մնացել իբրեւ փայլուն եւ ականաւոր արուեստագէտ:

Ինչպէս նշել է Ս. Զօրեանը, քանի դեռ հայ ժողովուրդը կ'ունենայ երգ ու երաժշտութիւն, քանի դեռ «հայոց լեռներում, բարձր լեռներում» կը հնչի հայ երգը, մենք միշտ կը լսենք գեղեցիկ հնչիւնների այդ սրտագին վարպետի՝ Ռոմանոս Մելիքեանի սրտի տրոփիւնը (101):

ԵԻԱ ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆ

Բան. գիտ. դոկտոր, դոցենտ

ԱՇՈՏ ԳԱՍՏԵԱՆ

Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՄԵԾԵՐԸ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՄԱՍԻՆ

Պատմաբանները պարզապէս կը հաստատեն Աստուածաշունչի անվիճելի պատմական փաստերը: Հնագիտութիւնը աստուածաշնչական գիտութիւն մըն է, եւ իւրաքանչիւր գտնուած յայտնագործութիւն մեզ աւելի ու աւելի կը մօտեցնէ Աստուածաշունչի ակունքներուն:

ՀԵՆՐԻԽ ԿԱՐԼ ՊՐՈՒԿՇ

Իմաստութիւնը ամէնուր կ'աղաղակէ, եւ ամէն կողմէ կը լսուի անոր ձայնը: Աստղերը, կենդանիները, մարմինները իրենց գեղեցկութեամբ Իմաստութեան ձայներն ու արձագանգներն են, գործերն Աստուածային Կեցութեան, բարձրագոյն կանխատեսումները Անոր: Անոնց մէջ, ինչպէս գրքի մը մէջ, ամենէն պարզ կերպով կարելի է կարդալ Աստուածային Զօրութեան, Իմաստութեան եւ Բարեգթութեան մասին: Քանզի անտեսանելի Աստուած կը ճանչցուի անով, ինչ որ հասանելի է ըմբռնողութեան:

ՀՈՐՏԱՆՕ ՊՐՈՒՆՕ

Միակ Անսահմանը կատարեալ է, պարզ, բացարձակ, եւ ո՛չինչ ու ո՛չ ոք կրնայ իրմէ աւելի բարձր կամ աւելի բարի ըլլալ: Ատիկա է իսկ միակ անբաժանելի Աստուածը, ամբողջ տարածութիւնը զբաղեցնող տիեզերական բնութիւնը, Որուն հետ կատարեալ նմանութեամբ օժտուած է միայն անսահմանութիւնը:

ՀՈՐՏԱՆՕ ՊՐՈՒՆՕ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**ECCLESIASTICAL IDIOMS IN MODERN EASTERN ARMENIAN**

The study of phraseology remains a consistently relevant and significant field, as it reveals innovative phenomena. In Armenian, there exist debates concerning the boundaries of ecclesiastical phraseology, the differentiation of expressions, and issues related to semantic, morphological, stylistic classification, translation, and other related matters.

Numerous specialized Armenian publications note that the term phrase (ֆրազիա) originally encompassed meanings such as spoken word, dialect, speech, expression, among others, and has been used in both broad senses—including fixed collocations, proverbs, sayings, winged words, aphorisms—and narrow senses, referring solely to idiomatic phrases. Many Armenian scholars observe close relationships among phrases, sayings, proverbs, adages, winged words, and fixed collocations, hence proposing to collectively designate these linguistic phenomena as phrases. A significant number of these possess ecclesiastical significance.

Armenian scientists approach the characterization of ecclesiastical phrases from various perspectives. Within the Armenian scholarly tradition, the first definition of phrase was provided by M. Abeghyan¹. The eminent Armenian philologist defines a phrase as follows: “Not only does the meaning of individual words change, but also the combinations of words. These initially appear coincidentally with a new meaning, but when this new meaning is repeated, it becomes customary. Such semantically novel combinations of words are typically called phrases, which, however, acquire the meaning of a single word and can also be considered a compound word².”

In the Literary Dictionary by Ed. Jrbashyan and H. Machchanyan, all proverbs are regarded as concise and figurative expressions of artistic nature that hold significant cognitive value. They reflect the historical, domestic, ecclesiastical, socio-political conditions, relationships, personality traits, and temperamental characteristics of the people, as well as moral concepts, national customs, beliefs and religion, psychology, and worldview³. These expressions are characterized by comprehensibility, brevity, conciseness, clarity, and vivid imagery. The saying succinctly and expressively describes a certain aspect of life without resorting to rhetorical devices or metaphorical imagery, in a direct and straightforward manner.

E. Gevorgyan emphasizes the stylistic value of ecclesiastical phrases, particularly in artistic discourse. Beyond their purposeful use, these expressions demand special attention. He writes: “The description of various situations requires the selection and application of different phrases⁴.” The correct choice and use of the necessary phrase is a complex and challenging

¹ G. Jahukyan, E. Aghayan, V. Arak'elyan, and V. Khosyan, *Hayots' lezu*, vol. 1, part A (Yerevan: Yerevani hamalsarani hratarakch'ut'yun, 1980), pp. 472–475.

² Manuk Abeghyan, *Erker*, vol. 6 (Yerevan: YPH hratarakch'ut'yun, 2016), p. 124.

³ Ed. Jrbashyan and H. Makhch'anyan, *Grakanagitakan bararan* (Yerevan, 1989), p. 24.

⁴ Ye. Gevorgyan, *Hayereni dardzvatsknerē* (Yerevan: Luys hratarakch'ut'yun, 1969), p. 31.

creative task that demands profound knowledge.

Contemporary Armenian scholars regard ecclesiastical phrases as a distinct layer within the Armenian lexicon. They highlight that various stylistic functions can be realized through phrases. From the perspective of stylistics, phrases garner significant interest, but only when they perform a stylistic function⁵. Emphasis is placed on the correct usage of phrases. The purposeful and successful modification of a phrase activates its meaning, imparting freshness to the speech⁶. Appropriately used phrases ensure brevity, conciseness, and precision in discourse. The laconic form of proverbs and sayings is valued, as well as their strong imagery and the capacity to express profound philosophical, religious, and ecclesiastical ideas. The mixing of phrases, unnecessary personification using phrases, distortion of the lexical composition of phrases, unwarranted grammatical changes—such as replacing plural with singular or vice versa, incorrect alterations of connections, and the like—are considered unacceptable.

In our view, the comprehensive expressive characterization of the term phrase is as follows:

a) A phrase is inherently a multi-word expression; an individual word rarely possesses the value of a phrase on its own.

b) A phrase belongs to the category of fixed collocations, characterized by a strong or moderate fusion of components; semantically (content-wise), these components are inseparable, while structurally (form-wise), the components—or at least one of them—are irreplaceable.

c) Unlike a free (syntactic) collocation, a phrase is not created anew for each context but is reproduced as a ready-made unit with the same morphological composition.

d) A phrase carries a figurative meaning that endows it with imagery, mostly expressing the speaker's emotive attitude, thus functioning as a means of linguistic stylistic expression.

e) Formally, a phrase may coincide with a free collocation but essentially differs from it.

f) A phrase may derive from a free collocation but can also possess an independent formation.

g) Some phrases appear in the form of sentences.

h) Semantically, a phrase may relate to an individual word.

i) Formally, a phrase resembles coordinate compound structures, whereas the components of coordination can possess independent lexical meaning or lack it; however, the components of a phrase usually represent independently used word forms. The content of a coordinate compound stems from the meanings of its components, whereas the content of a phrase generally has a nominative value; its emotive expressiveness is weak, while that of a phrase is strong.

j) As linguistic units, phrases belong to specific layers of the lexicon and have their functional domains⁷.

Armenian researchers consider the translation of ecclesiastical idioms as a stylistic challenge. Primarily, idioms are translated within the same language — referring here to idioms

⁵ T. Shahverdyan, *Ojagitut'yun* (Yerevan: Lusakn hratarakch'ut'yun, 2010), p. 135.

⁶ Yu. Avetisyan, *Hayots' lezu yev Khosk'i mshakuyt'*, vol. A (Yerevan: YPH hratarakch'ut'yun, 2014), p. 110.

⁷ H. Petrosyan, *Hayerenagitakan bararan* (Yerevan: Hayastan hratarakch'ut'yun, 1987), p. 175.

with lexical synonyms. These idioms acquire stylistic value in the language and are used for imagery and intensification of meaning. More valuable for the language are those idioms which are untranslatable and explained descriptively. Untranslatable idioms, which are considerably fewer in number compared to the former, introduce new concepts, thereby significantly enriching the lexicon⁸.

G. Jahukyan and F. Khlghatyan note that idioms are unique expressions that cannot be translated literally⁹. Armenian scholars have identified specific principles and methods for idiom translation. Several approaches are distinguished during idiomatic translation: a) equivalent (adequate) translation, including both absolute and approximate (relative) equivalence; b) idiomatic correspondence; and c) descriptive translation. Equivalence may be complete or partial — if all the multiple meanings of an idiom are replicated, the equivalence is complete; if only one meaning is conveyed, it is partial. In the case of idiomatic correspondence, the translator has a choice: often one or more components are replaced, but the core meaning remains unchanged. As L. Ezekyan writes, “A considerable portion of idioms across languages are translated only by their conveyed meaning, but with different lexical components which precisely and correctly express the same meaning¹⁰.” Extreme caution is required when employing form copying, interpretation, free, or literal translation. The descriptive principle of idiomatic translation applies when there is no idiomatic equivalent, even approximate or partial, available.

Lack of an equivalent unit in the target language system may result in numerous distortions, including stylistic ones. Therefore, it is advisable to consider the context. The context determines the degree of ‘narrow’ or ‘broad’ meaning that words should have in the translated text, thereby composing the sentence expressing the intended meaning. It highlights the specific content and expressiveness of a word, collocation, phrase, or idiom. Context plays a crucial role, especially in the translation of idioms and polysemous words.

During idiomatic translation, a profound mastery of both source and target languages is essential, alongside knowledge of cultural, ecclesiastical, and religious values. Expertise in history, literature, church matters, customs, and beliefs is also necessary, as linguistic and extralinguistic factors must be taken into account. The presence of these factors contributes to more successful translations. Finding an equivalent idiom in another language that fully conveys the meaning of a source idiom poses a significant difficulty. Often, the idiomatic equivalent in different languages, due to varying perceptions and semantics, is expressed through entirely different components¹¹. Identifying such equivalents requires considerable creative insight and thorough familiarity with both languages. Such translation is a complex and responsible task. Accurately conveying their meaning and the nuanced stylistic shades from the source to the target language complicates the work of researchers and translators alike.

H. Acharyan was the first Armenian scientist to undertake the classification of the lexicon

⁸ Ye. Gevorgyan, *Hayereni dardzvatsknerč*, p. 39.

⁹ G. Jahukyan and F. Khlghatyan, *Hayots‘ lezu: Ėndhanur gitelk‘ner: Ojabanut‘yun* (Yerevan: Luys hratarakch‘ut‘yun, 1976), p. 98.

¹⁰ Levon Yezekyan, *Ojagitut‘yun* (Yerevan: Yerevani hamalsarani hratarakch‘ut‘yun, 2007), pp. 195–196.

¹¹ Ye. Gevorgyan, *Hayereni dardzvatsknerč*, p. 43.

into semantic (thematic) groups. G. Jahukyan divided the Armenian vocabulary into 23 semantic (thematic) groups, with the 22nd group designated as religion and prejudice. The folk speech of the Armenian people is rich with numerous proverbs, sayings, idioms, and words that carry moral, religious, ecclesiastical, theological, mythological, and similar meanings.

Due to the historical background of the Armenian people, the lexicon predominantly features words and expressions related to pagan, Christian, and Islamic religions. The semantic group of religious vocabulary was enriched notably after the state adoption of Christianity in 301 AD¹². Many words related to Christianity entered the Armenian language through the 5th-century translation school.

Christian religious vocabulary can primarily be subdivided into several categories: a) terms related to Christian doctrine; b) words denoting places of worship and parts of ecclesiastical structures; c) ecclesiastical and ritual terminology; d) terms denoting clerical ranks (hierarchies); and e) words designating church feasts¹³.

Particularly widespread in Armenian are expressions formed with the component God (Astvats). This word belongs to the native layer of the Armenian lexicon, characteristic of all developmental stages of the language, although some scholars suggest that the word Astvats has Phrygian origins¹⁴. In Armenian literature, the word Astvats has been used with high frequency, and numerous idioms, oaths, blessings, curses, and well-wishing expressions are formed with it. Astvats symbolizes goodness but, within the lexicon, it can also acquire positive, negative, and neutral connotations. Proverbs and sayings featuring the component Astvats number around 200 in the Armenian Proverbs collection¹⁵. Below are examples of Armenian ecclesiastical expressions along with their English equivalents:

Աստծու սիրուն (Asttsu sirun) – for God’s sake

Մարդ Աստծոյ (Mard Asttso) – Good God! O my God

Յա՛, տէր Աստուած (Ya, Tēr Astvats) – Good God! My God! Good (ness) Gracious!

Աստծուն է միայն յայտնի (Asttsun e miayn haytni) – it’s on the knee/lap of God

Աստուած գիտէ (Astvats gite) – God knows

Աստուած լինի քեզ օգնական (Astvats lini k’ez ognakan) – God help you

Աստուած հոգին լուսասորի (Astvats hogin lusavori) – God rest/repose his soul

Աստուած մեծ է (Astvats mets e) – God is almighty

Աստուած չանի (Astvats ch’ani) – God forbid

Աստուած չար աչքից հեռու պահի (Astvats ch’ar ach’k’its’ heru pahi) – God save from evil eyes

Աստուած պահի (Astvats pahi) - God save

Աստուած տայ (Astvats ta) – God willing

¹² Haykanush Mesropyan, *Kronayekheghets’akan barapasharē hayereni barbarnerum* (Yerevan: Asoghik hratarakch’ut’yun, 2016), p. 19.

¹³ *Ibid.*, pp. 23–33.

¹⁴ Hrach’ya Acharyan, *Hayeren armatakan bararan*, vol. 1 (Yerevan: Yerevani hamalsarani hratarakch’ut’yun, 1926), pp. 279–280.

¹⁵ A. Ghanalanyan, *Haykakan Aratsani* (Yerevan: HSSR GA hratarakch’ut’yun, 1951), pp. 5–8.

Աստուած ամէն մարդու իր սրտի համեմատ կը տայ (Astvats amen mardu ir srti hamemat kta) – God gives everybody according to his heart

Աստուած մի դուռ բացում է, միւսը՝ փակում. Աստուած ցարը տալիս է, դեղն էլ հետը (Astvats mi dur bats‘um e, myusë – p‘akum; Astvats ts‘avë talis e, degħn el hetë) – God makes the back to the burden

Աստուած ջահելներին/լաւերին է տանում իր մօտ. ում Աստուած շատ է սիրում, շուտ է իր մօտ տանում (Astvats jahelnerin/laverin e tanum ir mot; um Astvats shat e sirum, shut e ir mot tanum) – whom God loves, die young

Աստծուն ապաւինի՛ր, բայց յոյսդ ֆեզ վրայ դի՛ր (Asttsun apavinir, bayts‘ huysd k‘ez vra dir) – put your trust in God but keep your powder dry

Աստուած արդար է (Astvats ardar e) – God’s truth

Գողը գողից գողացաւ, Աստուած տեսաւ, զարմացաւ (Goghë goghits‘ goghats‘av, Astvats tesav, zarmats‘av) – thief robbed thief; to deceive a deceiver is not deceit; the deceiver is deceived; a thief is in grief, he’s been robbed by a thief; a thief stole from another thief, God saw it with disbelief

Աստուած դարդը տալուց դարմանն էլ է տալիս (Astvats dardë taluts‘, darmann el e talis) – along with grief, God gives us relief

Աստուած հարուստի կողմից է (Astvats harusti koghmits‘ e) – God takes the side of the rich

Աստուած մահ տայ, բաժան-բաժանութիւն չտայ (Astvats mah ta, bazhan-bazhanut‘yun ch‘ta) – better God give us death than divorce

Աստուած միշտ ուժեղի կողմից է (Astvats misht uzheghi koghmits‘ e) – God is always on the side of the big battalions; God sides with the strongest

Աստուած վկայ, ճիշդ եմ. Տէրն է վկայ (Astvats vka, chisht em; Tern e vka) – God witness; God and my right

Աստուած փրկի հիմարից, անգէտից (Astvats p‘rki himarits‘, angetits‘) – God deliver me from fools

Աստուած օգնում է նրանց, ովքեր օգնում են իրենից իրենց (Astvats ognum e nrants‘, ovqer ognum en irenk‘ irents‘) – God helps those who help themselves; Heaven helps him who helps himself

Բոլորի յոյսը Աստուած (Bolori huysë Astvats) – (every man for himself and) God for us all

Ինչքան մօտ են եկեղեցուն, այնքան հեռու են Աստծուց (Inch‘k‘an mot en yekeghets‘un, aynk‘an heru en Asttsuts‘) – the nearer the church, the farther from God

Վտանգն անցաւ, «Սուրբ Աստուած»-ը մոռացաւ (Vtangan ants‘av, “Surb Astvats”ë morats‘av) – the danger past and God forgotten

Տուն քանդողի տունը Աստուած կը քանդի (Tun k‘andoghi tunë Astvats kk‘andi) – God destroys the home of those who destroy the home of others

The sacred religious component also enjoys high frequency of use. There are various

accounts in Armenian literature and scholarly sources regarding the etymology of the word, associating it with meanings such as water, to wash with water, pure, bright, and healthy. According to H. Acharyan, the word Holy (surb) is indigenous to Armenian and in modern usage conveys meanings of purity, incorruptibility, and sanctity, having had an earlier proto-form *subr*¹⁶. As a term and as a morpheme, *surb* appears in words related to Christian doctrine such as the Holy Trinity (Surb Yerrordut‘yun), the Holy Spirit (Surb Hogi), the holy liturgy (*surb patarag*), Christmas (Surb Tsnund), Resurrection (Surb Harut‘yun), Christ’s 12 holy apostles, Saint Hripsime (*surb Hrip‘sime*), the Vardanank saints (*surb Vardanank‘*), among others. Notable idioms include *surb yerkir* (the Holy Land, Palestine) and *surb kaghak* (the Holy City, Jerusalem for Christians; Mecca for Muslims). The expression *surb girk* (the Holy Book; the Bible) is also widespread.

In language use, internationally recognized ecclesiastical idioms have spread and gained common recognition across many languages worldwide. These idioms typically pass from one language to another through literature and the press, often as direct borrowings. Examples of internationally known ecclesiastical idioms with their translations include:

Փառք Ալլահին կամ փառք Աստծու (Pařk Allahin kam pařk Asttsu) — God be thanked

Ասագ հինգշաբթի (Avag hingshabt‘i) — Holy Thursday

Ազիզ օր, տոն օր (Aziz or, ton or) — a red-letter day

To foster interest in ecclesiastical matters among Armenian students, contemporary Armenian publications often include explanations of numerous small religious narratives. Here are some of the favorite little ecclesiastical stories.

Treasures In Heaven

Do not store up for yourselves treasures on earth, where moths and vermin destroy, and where thieves break in and steal. But store up for yourselves treasures in heaven, where moths and vermin do not destroy, and where thieves do not break in and steal. For where your treasure is, there your heart will be also.

Gospel of Matthew 6

Don’t swear at all

Listen also to what it was said in ancient times. “Do not swear an oath at all: either by heaven, for it is God’s throne; or by the earth, for it is his footstool”. And do not swear by your head, simply let your ‘yes’ be yes and your ‘no’ be no.

Gospel of Matthew 5

Reading such passages is highly significant. It is evident that students read these texts with great interest and enthusiasm, afterwards discussing and interpreting important parts. This presents an excellent opportunity to guide students towards the church, promoting ecclesiastical vocabulary, expressions, and discourse.

This study highlights the enduring significance of ecclesiastical idioms in contemporary

¹⁶ Hrach‘ya Acharyan, *Hayeren armatakan bararan*, vol. 4 (Yerevan: erevani hamalsarani hratarakch‘ut‘yun, 1926), pp. 255–256.

Armenian language and culture. These idiomatic expressions not only enrich the Armenian lexicon but also serve as a vital link connecting the linguistic heritage with spiritual, historical, and cultural identity. The challenges posed by translating such idioms underscore the intricate relationship between language, religion, and culture. Therefore, preserving and promoting ecclesiastical phraseology is essential for sustaining Armenian religious discourse and cultural continuity. Encouraging the study and use of these expressions among younger generations will help maintain their relevance and deepen the communal understanding of Armenia's rich ecclesiastical tradition.

Abstract

This paper explores the presence and significance of ecclesiastical idioms in contemporary Armenian language and culture. It examines the definition, classification, and stylistic features of idioms, particularly those with religious and ecclesiastical origins. Drawing on the work of prominent Armenian linguists and philologists, the article analyzes how these expressions reflect the spiritual, cultural, and historical context of the Armenian people. The study also addresses the challenges of translating ecclesiastical idioms into other languages and discusses the strategies for preserving their stylistic and semantic depth. Through the analysis of common idiomatic structures featuring the word “God” (Astvats) and sacred terms such as “Holy” (Surb), the paper demonstrates how ecclesiastical idioms enrich the Armenian lexicon. Finally, it emphasizes the role of idioms in fostering religious education and ecclesiastical discourse among pupils and the broader Armenian-speaking community.

NELLY GEVORGYAN

*Yerevan High School № 139 named
after Karen Demirchyan, English teacher*

References

1. **Abeghyan, Manuk.** Erker [Collected Works]. Vol. 6, Yerevan State University Press, 2016, p. 124.
2. **Acharyan, Hrach'ya.** Hayeren armatakan bararan [Armenian Root Dictionary]. Vol. 1, Yerevan State University Press, 1926, pp. 279–280.
3. **Acharyan, Hrach'ya.** Hayeren armatakan bararan [Armenian Root Dictionary]. Vol. 4, Yerevan State University Press, 1926, pp. 255–256.
4. **Avetisyan, Yuri.** Hayots' lezu ev khosk'i mshakuyt', Book A, Yerevan State University Press, 2014, p. 110.
5. **Gevorgyan, Edik.** Hayereni dardzvatsknerë [Armenian Idioms]. Luys Publishing, 1969, pp. 31, 39, 43.
6. **Ghanalanyan, A.** Haykakan Aratsani [Armenian Proverbs]. Yerevan: Academy of Sciences of the Armenian SSR, 1951, pp. 3–7.

7. **Jahukyan, G., and Frik Khlghatyan.** Hayots' lezu: Ĕndhanur gitelk'ner. Ojabanut'yun [Armenian Language: General Knowledge. Stylistics]. Luys Publishing, 1976, p. 98.
8. **Jahukyan, G., et al.** Hayots' lezu, Part I, Section A. Yerevan State University Press, 1980, pp. 472–475.
9. **Jrbashyan, Edvard, and Hrachya Makhch'anyan.** Grakanagitakan bararan [Dictionary of Literary Studies]. Yerevan, 1989, p. 24.
10. **Mesropyan, Haykanush.** Kronayekeghets'akan barapasharĕ hayereni barbarnerum [Ecclesiastical Lexicon in Armenian Dialects]. Asoghik Publishing, 2016, pp. 19, 23–33.
11. **Petrosyan, H.** Hayerenagitakan bararan [Linguistic Dictionary]. Hayastan Publishing, 1987, p. 175.
12. **Shahverdyan, T.** Ojagitut'yun [Stylistics]. Lusakn Publishing, 2010, p. 135.
13. **Ezekyan, Levon.** Ojagitut'yun [Stylistics]. Yerevan State University Press, 2007, pp. 195–196.



ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

**ԱՂՕԹՔ ԿԻՐԱԿԻ ՕՐՈՒԱՆ
ԱՂՕԹՔ ԵՐԿՆԱԻՈՐ ՀՕՐ՝
ԵՐԱՆԵԼԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱՌՆԵՑԻԻՆ՝ ԿՈՂՄԷ**

Յաւիտեաններու Աստուածը եւ բոլորին ստեղծիչը որ Քու ամենակարող զօրութեամբ սկիզբէն երկինքն ու երկիրը ստեղծեցիր, Քու հրամանովդ լոյսը ստեղծեցիր եւ լոյսը խաւարէն բաժնեցիր (Մննդոց 1:3-4): Ահա մենք՝ տարբեր-տարբեր անօրէնութեամբ խաւարին մէջ նստողներս կ'աղաչենք Քեզի՝ իմ Տէրս եւ Աստուածս, բարին ընող եւ շատ ողորմութիւն ունեցող, Քու ողորմութեանդ լոյսը իմ վրաս ծագեցուր եւ շարին խաւարային խորհուրդները հեռացուր ինձմէ, որոնց միջոցաւ կորուստի անդունդին մէջ իյնալով կործանեցայ եւ տարակուսանքի մէջ եմ:

Դուն որ ամէն ինչի կարող եւ հզօր ես, առանց շուքի լոյս ես, բարիքներու անըստ պառ աղբիւրը, կենդանութիւն տուողը, Քու Սուրբ Հոգիիդ սրբարար շնորհքներդ իմ վրաս ցոլացուր եւ իմ սրտիս եւ իմ հոգիս իմ մեղքերուս մթութենէն եւ բոլոր տեսակի աղտեղութենէն մաքրէ, որոնցմով շլացած եմ եւ չեմ կրնար Քու աստուածային պատւիրաններուդ լոյսին նայիլ եւ արդարութեան ճամբայէն քալել:

Նոր Իսրայէլի անքուն պահապանը եւ ամենատես աչքը, որ քերովբէներուն մէջ կը նստիս եւ անդունդներուն կը նայիս, քաղցրագոյն աչքերով Քու ապիկար ծառայիդ նայիր, որ մեղքերու անդունդներուն մէջ խորասուզուած է, կարողութիւնը եւ զօրութիւնը շունիմ ինքզինքս այս անդունդէն դուրս բերելու եւ ինծի ձեռնտու եւ օգնական չկայ այս անհնարին տարակուսանքներէն ազատելու: Բայց Դուն, ո՛վ Տէր, այցելէ ինծի եւ պաշտպանէ զիս եւ Քու աննահանջելի հրամանովդ զիս այս անբաւ շարերու խորքերէն ազատագրէ, որովհետեւ ոչինչ գոյութիւն ունի որ Քու ամենակարող զօրութիւնդ կրնայ արգիլել:

Ո՛վ որողմած, կ'աղաչեմ Քեզի, Քու աստուածութեանդ հոգին առաքէ ինծի, որ ջուրերուն վրայ շրջելով Քու արարածներդ կը կենսագործէ, որովհետեւ իմ մտքիս ամլութիւնը կը փարատես եւ Քու կամքիդ հաճոյական մաղթանքները իմ մտքիս մէջ սերմանէ, որովհետեւ առանց Քու օգնութեանդ, ես չեմ գիտեր թէ ի՛նչ պէտք է խնդրեմ Քեզմէ, որովհետեւ Ան, որ ամէն ինչ գիտէ եւ նոյնիսկ Աստուծոյ խորհուրդները կը քննէ, Ան նաեւ գիտէ մեր պէտքերն ու կարիքները մեր խնդրածէն եւ գիտցածէն աւելի եւ մեր տկարութեան դողալով, մեզի կը սորվեցնէ հաւատքով խնդրել եւ Քեզմէ գտնել մեր մեղքերուն թողութիւնը:

Քու բարեբանուած երեսներէդ զիս մի՛ մերժեր, որովհետեւ ուխտիս մէջ չմնացի, որ Քեզի ուխտած էի փրկութեան օրը եւ Քու օրէնքներուդ ճամբաներէն շեղեցայ մոլորու-

¹ Յովհաննէս Գառնեցի (1180-1245) 12-րդ դարու աստուածաբան մըն էր: Նշանաւոր վարդապետ եւ համբաւանօթ է իր «Յովհաննէս Վարդապետ Գառնեցիի Աղօթամատոյց» գրքով, որ նաեւ կը կոչուի «Աղօթներու գիրք»: Իր ժամանակակիցները այդ աղօթները կը նկարագրեն որպէս հրաշագործ աղօթներ: Այս աղօթներէն, մասնատրաբար, յայտնի են շաբթուան եօթը օրերու աղօթները, ուր իւրաքանչիւր աղօթք կը սկսի իր անուան առաջին տառերուն համաձայն (Յ, Ո, Վ, Ա, Ն, Է, Ս):

Թեան իշխանին խրատներուն մտիկ ընելով, երկինք առաջնորդող պողոտայէդ շեղեցայ եւ մեղքերու ու մահուան փշոտ ճամբաներուն մէջ գացի: Այլ Դուն՝ խնամող Տէր, որ բարերարութիւնդ ընելէ չես ձանձրանար եւ ողորմածութիւն ցոյց տալէ չես յապաղիր, Քու Հոգիիդ զօրութեամբ Քու անդրդուելի պատուիրաններուդ մէջ վերահաստատէ զիս, իմ ոտքերս ուղղելով դէպի կեանք տուող աղբիւրը:

Արդ՝ մարդասէր եւ ամենակարող Տէր, որ Քու ժառանգութեանդ արքայութիւնը, որ Քու սուրբերուդ համար նախքան երկնքի եւ երկրի ստեղծագործութիւնը պատրաստեցիր, զիս իմ բոլոր տեսակի անօրէնութիւններէն սրբէ եւ արժանի ըրէ սուրբերուդ հետ Քու երկնային արքայութիւնդ մտնելու, գոհութեամբ փառաւորելու Քու ամենազօր տէրութիւնդ, յաւիտեաններուն յաւիտեանը. ամէն:

ԵՐԿՈՒՇԱՔԹԻ
ԱՂՕԹՔ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԳՈՒԹԵԱՄ՝
ԵՐԱՆԵԼԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱՌՆԵՑԻՒՆ ԿՈՂՄԷ

Ո՛վ բարերար եւ ամենակալ՝ բոլոր կասկածողներուն ապաւէնի յոյսը, իմ Տէրս եւ իմ Աստուածս, բոլոր էակներուն արարիչը, ամէն ինչի եւ բոլորին նախախնամողը, որ այսօր, Քու հրամանովդ ջուրերուն բազմութիւնը բաժնեցիր (Մննդոց 1:6-7): Այդ ջուրերէն շատերը ամպերուն վրայ դրիր եւ ջուրերուն միւս մասը, անսահման իմաստութեամբդ, երկրին տակ, ստորոտը տեղաւորեցիր աղբիւրները բխեցնելու եւ գետերը խաղաղացնելու: Այս ջուրերուն միջեւ Դուն անշրպետ եւ տարածք դրիր զայն հոսանուտ օդով լեցնելով, որպէսզի փոխադարձաբար ջուրերը մշտնջենական կերպով վերինները եւ ստորինները իրարու հետ հաղորդուին ամբողջ տիեզերքին օգտին եւ մարդկութեան կարիքներուն համար, ինչպէս նաեւ մարդութեան կարիքին համար, զոր Քու աստուածութեանդ փառքերուն երանաւէտ վայելքին համար ստեղծագործեցիր:

Արդ՝ ես որ ստորին ջուրերուն նման զանազան մեղքերու զարշահար ճահիճներուն մէջ գոյութիւն ունիմ եւ բազմատեսակ անօրէնութիւններով ապականած եմ, Քեզի կը պաղատիմ իմ յոյսս եւ ստեղծիչս, Քու բարեգութ կամքովդ իմ միտքս Քու սրբութեամբդ մաքրագործելով ամէն տեսակի աղտեղութենէն, այս ստորին վայրէն ամպերու ջուրերուն պէս վեր հանէ եւ Քու քաղցրութեամբդ իմ նեխութեանս դառնութիւնը հեռացուր ինձմէ Քու աստուածային կամքիդ հաճելի ըլլալու համար՝ ի գովեստ Քու փառքիդ անբաւելի շնորհներուն:

Իմ անօրէնութեան բազմութեան մի՛ նայիր, որովհետեւ գութի արժանի չեմ եւ իմ յանցանքներուս ահռելիութեան համար ինձմէ մի՛ խորշիր, այլ Քու անբացատրելի գթութեամբդ մօտեցիր ինձի եւ ողորմէ՛ ինձի Քու անհատնում ողորմութեամբդ, որովհետեւ բոլորին համար քաղցր ես, որոնք Քեզի կ'աղօթեն եւ Քու մարդասիրութեանդ կ'ապաւինին:

Դուն, ո՛վ Տէր, Քու կամքիդ գթութեան անձրեւը եւ Քու առատահեղ ողորմութեան ցօղը անձրեւացուր իմ սրտիս վրայ, որ շարերուն սաստիկ ցանկութիւններէն եւ անօրէնութեան տաքութենէն երաշտացած, բարութեան որեւէ տեսակի պտուղ չունի եւ Քու մարդասիրութեանդ շնորհքով ոռոգելով եւ պարարտացնելով անեղծանելի պաշարին արդիւնքները բեր մշտնջենաւոր եւ իւրայատուկ կեանքին համար:

Մտիկ ըրէ, ո՛վ բարերար, առանց յիշելու քաւէ իմ մեղքերս եւ Քու ծառայ արժանի ըրէ երկնային օթեւաններուն, Քու անուանդ սիրելի սուրբերուն հետ միասին եւ Քու Աստուածութեանդ հաճոյքները կատարողներուն հետ, որոնք երկնքի մէջ եւ երկրի վրայ են, որպէսզի անոնց հետ անլուելի օրհնաբանութեամբ փառաւորեմ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին. ամէն:

**ԵՐԵՔՆԱԲԹԻ
ԱՂՕԹՔ ԵՐԿՆԱԻՈՐ ՀՕՐ՝
ԵՐԱՆԵԼԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱՌՆԵՅԻԻՆ ԿՈՂՄԷ**

Վերակացու, արարիչ եւ ամենախնամ Աստուած, որ այսօր Քու կամքիդ գթութեամբ երկրին վրայի ջուրերը ծովերուն խորերուն մէջ ժողովեցիր եւ ցամաքը ջուրերէն զատեցիր: Յամաքը զանազան բանջարներով եւ գեղեցիկ վայելչութեամբ զարդարեցիր եւ տեսակ-տեսակ ծառերով ծաղկեցուցիր (Ծննդոց 1:9-12): Բայց հիմա, այս վաղանցուկ երկիրը՝ ուր քու սերմանած բարի բոյսերդ փոխանակ առաքինի պտուղներ տալու՝ խոցոտիչ մեղքերու փուշեր բուսցուց իմ հոգիիս մէջ եւ քաղցրութեան բերքերու փոխարէն անօրէնութեան դառն եւ մահացու պտուղները գոյացուց իմ ներսիդիս:

Բայց Դուն՝ ոխ չպահող Տէ՛ր, քաղցրութեամբ նայիր Քու արարածներուդ եւ Քու ձեռքերուդ գործերը մի՛ անտեսեր եւ շարութեան փուշերը եւ անօրէնութեան արգասիքը, որ ես ինքս պտղաբերեցի, խլէ ինձմէ: Իմ անօրէնութիւններս իմ գլուխէս աւելի վեր բարձրացան եւ մեղքերուն ցեխոտ ու տղմուտ ջուրերը իմ անձս ծածկեցին. եւ ահա, ո՛վ իմ բարեգո՛ւթ Տէրս, Քեզի կը պաղատիմ որպէս ցամաք երկիր եկուր եւ իմ սիրտս նորոգէ որպէսզի Քու հաճոյքիդ համաձայն՝ ո՛վ մարդը սիրող, իմ հոգիս շուտով եւ բազմատեսակ բարի գտուղներ բերէ:

Բանաւոր երկիրը, որ բնաբոյս առաքինութեամբ զարդարեցիր, այս օդի իշխանին հրատապ հրապոյրներէն ցամքեցաւ՝ ինչպէս սաստիկ տաքութենէն տերեւները կը դալարին եւ հոգիիս ծաղիկները թօթափեցան, առաքինութեան ոտքերը գօսացան եւ բարիքներուն բողբոջները խամրեցան:

Եւ ահա կորսուած անձով Քեզի կ'աղաղակեմ կեանքի պարգեւիչ, Քու մարդասիրութեանդ խնամքին ցօղը իմ վրաս կաթեցուր, որովհետեւ խեցիին պէս իմ գօրութիւնս չորցաւ եւ տուներու խոտերուն պէս ցամքեցայ եւ Քու շնորհքներուդ պայծառութեան սկզբունքի նորոգութեամբ, վերանորոգէ զիս:

Զիս Քու օրէնքներուդ վայելուչ ցանկապատով պատսպարուած այգի մը ըրիր, որպէսզի իմ այգիիս մէջ տնկուած քաղցրութեան ողոյզներէն Աստուծոյ հաճոյքին համար խաղողներ բուսցնեմ: Իսկ ես՝ իմ ապստամբ կամքովս, Քու օրէնքներդ արհամարհեցի, շար ճամբաներով խոպան դարձայ եւ բազմատեսակ անօրէնութիւններու դառնութեան խաղող պտղաբերեցի: Հետեւաբար՝ ո՛վ մարդասէր, Քու անսահման գթութեամբդ խնայէ ինձի եւ դարման տուր այս այգիին, որ Քու մարդասէր աջդ տնկեց: Ամրացուր զիս Քու օրէնքներուդ կեանքին մէջ եւ շարութեան բաղձանքները հեռացուր ինձմէ, որոնք իմ կամքիս պատճառով ստեղծուեցան որպէսզի առաքինութեան արդիւնքները վաստակելով, արժանի ըլլամ Քեզմէ օրհնութիւն ընդունելու եւ Քու սուրբերուդ հետ միասին երկնքի մէջ Քու աննկարագրելի բարիքներդ վայելեմ եւ գոհութեամբ փառաւորեմ Քու ամենազօր տէրութիւնդ, յաւիտեաններուն յաւիտեանը. ամէն:

ԶՈՐԵՔՇԱԲԹԻ
ԱՂՕԹՔ ՈՒՂՂՈՒԱԾ ԵՐԿՆԱԻՈՐ ՀՕՐ՝
ԵՐԱՆԵԼԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱՌՆԵՅԻՒՆ ԿՈՂՄԷ

Ամենէն զօրաւոր երկնքի լուսատուներուն հաստատիչը եւ աշխարհի իմաստուն ճարտարապետը, որ այսօր երկնքի հաստատութեան վրայ լուսաւորները՝ արեգակն ու լուսինը եւ աստղերուն պարերը կարգեցիր որպէս նշան ժամանակի, օրուան եւ տարւան (Մննդոց 1:14-18): Արդ՝ կ'աղաչեմ Քեզի՝ կեանք տուող Աստուած, Քու շնորհքներուդ հոգեձիր հաճոյական պարգեւներով իմ միտքս ու կամքս շարժէ որպէսզի Քեզ ամբողջ սրտով սիրեմ եւ Քու հրամաններուդ ճանապարհէն անխոտոր կերպով քալեմ: Իմ յանցանքներու շղթաներով կապուած ըլլալով, ազատէ զիս ո՛վ ամենակալ: Գաղտնի որսորդին կորստեան տանող ճիւղին մէջ կաշկանդուած եւ ինկած ըլլալով, զիս ազատագրէ, ո՛վ բարի գուլթ ունեցող: Խաւարին անլուծելի գործերուն մէջ կաշկանդուած կը տանջուիմ: Քու շնորհքիդ լոյսը ծագեցուր եւ զիս պահպանէ ո՛վ խնամակալ՝ անվախճան կեանքի ազատութեան համար:

Դուն իմ յոյսն ու ապաւէնն ես: Դուն իմ փրկութիւնն ես: Իմ մեղաւոր անձս մեծ սպասումով Քեզի կ'ակնկալէ: Իմ հոգիս Քեզի կը փափաքի ո՛վ մարդասէր, ինչպէս եղջերուն՝ աղբիւրներու ջուրերուն: Քու ողորմութեանդ ծարաւ եմ, հետեւաբար ըմպեցուր ինձի: Սովէն տառապելով խոզերու եղջիւրներ կ'ուտեմ, ուստի երկնաւոր հացդ ինձի հասցուր: Մեղքերու եւ մահուան մրուր դառնութենէն շարաշար կը տագնապիմ եւ կեանքի բաժակդ ինձի մատակարարէ: Մահուան իշխանին շարակամ աւազակներու ներկայութենէն մերկացած կը դողամ, Քու խնամքներու զգեստներով ծածկէ զիս: Աներեւոյթ թշնամիին թունաւոր նետէն վիրաւորուած եմ, բժշկէ իմ վէրքերս եւ հարւածներս:

Եւ զիս՝ ապերախտ ծառադ, որ Քեզի աղօթք կը կարդամ, երկնային հարսնարանին եւ անմահական սեղանիդ արժանացուր անոնց հետ, որոնք բոլոր սրտով Քեզ սիրեցին եւ Քու պատուիրաններդ պահեցին, որպէս զի անոնց հետ միասին Քու ամենագուլթ մարդասիրութիւնդ փառաւորեմ, յաւիտեաններուն յաւիտեանը. ամէն:

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ԱՂՕԹՔ ՈՒՂՂՈՒԱԾ ԵՐԿՆԱԻՈՐ ՀՕՐ՝
ԵՐԱՆԵԼԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱՌՆԵՅԻՒՆ ԿՈՂՄԷ

Նման ոչ ուրիշին իմ Աստուածս եւ իմ Տէրս, որ արարչական գուլթով Քու արարածներդ կը կենդանացնես, այսօր Քու ամենագօր հրամանովդ, ջուրերէն շնչող կենդանիներուն խումբերը՝ մեծ կէտերը եւ թելաւոր թռչունները ստեղծեցիր եւ Քու Աստուածային օրհնութեամբ օրհնեցիր զանոնք ըսելով, «աճեցէք եւ բազմացուցէք երկիրը» (Մննդոց 1.20-22): Արդ՝ Քու անփոփոխելի տիրութեանդ բարերարութեան կ'աղաչեմ, օրհնէ նաեւ զիս՝ Քու ամենակալ ձեռքովդ ստեղծուածս առաքինի գործերու արժանացուր: Եւ հոգեւոր կեանքի սերմերը, որ այդ օրուրնէ իմ մտքիս խորերուն մէջ տեղաւորեցիր, զօրացուր եւ աճեցուր զիս Քու ողորմութեանդ եւ շնորհքներուդ միջոցով եւ կեանք տուող խորհուրդով աճեցուր, որ բոլորին կու տաս եւ չես նախատեր, որովհետեւ Դուն նոյնն ես եւ Քու տարիներդ չեն պակսիր, Քու ձեռքերդ կը բանաս եւ բոլորին

պէտքերն ու կարիքները Քու անսպառ գանձերով կը լրացնեմ: Ո՛վ Տէր, բարութեան գործերէն ամուլ մի՛ ձգեր զիս եւ իմ յանցանքներուս բազմութեան համար զիս մի՛ անտեսեր եւ մի՛ մերժեր Քու խնամքներէդ: Քու ականջներդ խոնարհեցուր եւ մտիկ ըրէ ինծի, որովհետեւ բարութենէդ աղքատ դարձայ, Քու կեանք տուող պատուիրաններէդ հեռացայ եւ իմ անձիս կամքին հաճոյքներուն յօժարեցայ:

Քու ստեղծագործութեանդ մէջ զիս որպէս կենդանի տաճար զարդարեցիր եւ ես իմ անձս պատրաստեցի որպէս բնակարան Քեզ ատող դեւերուն: Իմ հոգեւոր ծննդեանս ժամանակ, ինծի լուսաւոր պատմութեաններ հազցուցիր եւ ես իմ անձովս զանոնք մեղքերու եւ մահուան խաւարին մէջ նետեցի: Ինծի մարմնեղէն սիրտ տուիր որ ամէն ժամանակ Քու օրէնքներուդ մասին մտածէ, իսկ ես զայն անօրէնութիւններու աման դարձուցի: Ինծի ականջներ տուիր Քու պատուիրաններդ մտիկ ընելու եւ ես շար վերաբերմունքով բանսարկուին հրապոյրներուն բացուեցայ: Բարի առաքինութեան սերմը սերմանեցիր իմ մէջս եւ ես անոր փոխարէն դժնդակ մոլութեան փուշերը բուսցուցի: Բարիքը, որ ինծի պարգեւեցիր եւ անոր միջոցաւ կեանք պէտք էր շահէի, իմ անմտութեամբ կեանքի ստորոտները գացի եւ մահ ու կորուստ ստացայ: Տիրական իշխանութեամբ եւ փառքերով ինծի պատուէր տուիր եւ ես կամովին իմ անձս մեղքերու ծառայութեան մատնեցի:

Եւ հիմա, Քեզի ապաւինելով կ'աղաչեմ ո՛վ բարեգութ, իմ յացանքներս քաւէ եւ Քու ողորմութեանդ շնորհքներով նորոգէ զիս: Ծարաւ եմ Քեզմէ, իմ Աստուածս, Քու կեանք տուող ջուրերովդ արբեցուր զիս: Զարութեան ցանկութեամբ ժանգոտեցայ: Զիս հուրին մէջ նետէ եւ Քու սիրոյ հուրովդ զիս սրբէ: Երկրաւոր բաղձանքները զիս տարագիր ըրին Քեզմէ, ուստի Քու ամենազօր աջդ երկարէ ինծի եւ զիս Քեզի մօտեցուր: Փոխանակ մշտնջենաւոր եւ անանցելի փառքերու, դիւրին ու ապականացու բաները սիրեցի. ուստի զիս իմ կամքիս մի՛ ձգեր:

Աներեւոյթ թշնամին իր թունաւոր նետերը իմ վրայ տեղացուց, զիս ապրեցնելու համար ինծի ամրութեան վահան եւ ապաւինելու վայր եղիր: Զարերուն խորհուրդները իմ հոգիս անաշառօրէն հարուածեցին, ինծի գթութեամբ մօտեցիր եւ բժշկէ՛ զիս ո՛վ բուրբ հնարներուն ստեղծիչը: Թշնամիները իմ անձս պաշարեցին եւ իրենց խաբէութեան լարերուն մէջ քնացուցին. Քու զօրութեամբդ եկո՛ւր եւ զիս ապրեցուր: Աւազակները զիս մերկացուցին եւ վէրքերուս վրայ վէրք աւելցուցին, որպէսզի արդարութեան գրահը չհագնիմ եւ գլխուս վրայ փրկութեան յոյսին սաղաւարտը չդնեմ եւ հաւատքի վահանը չառնեմ եւ Բան Աստուծոյ սուրը չկրեմ. բայց Դուն՝ հօր եւ ամէն ինչի կարող, Քու զէնքդ եւ գրահներդ առ եւ ինծի օգնելու եկուր: Հպարտացած թշնամիին զօրութիւնը խորտակէ եւ իմ անձիս ըսէ թէ «Քու փրկութիւնդ ես եմ» (Սաղմոս 35:3): Իմ անձս ցմահ տրտմած է. մխիթարէ Քու ծառադ: Երախտապարտ ըլլալու տեղ ապերախտ գտնուեցայ եւ Քու անբարկանալի բնութիւնդ բարկացուցի. հետեւաբար, ո՛վ անյիշաշար, զիս իմ անօրէնութեան համաձայն մի՛ հատուցաներ, այլ Քու ողորմութեամբդ քաւէ զիս:

Անդունդներուն խորերէն Քեզի կ'աղաղակեմ ես որ Յովնանի նման ընկղմած եմ կէտին փորը (Յովնան 1:1-17), Զիս խաւարի վիհէն հանէ եւ Քու յաւիտենական կեանքի լոյսիդ մէջ վերահաստատէ: Կորստեան մեղքերու անդունդին մէջ խորասուզուած եմ, Քու ամենազօր աջդ երկարէ եւ փրկէ զիս:

Մտաւոր խիղճէն միշտ կը տառապիմ, որպէսզի իմ քաղցրագութ Տիրոջս դառնամ եւ տանջանքներու աններելի վանողական խորհուրդներուն յուզումները, որոնք ինծի

համար պատրաստուած են, որպէս ամեհի լեռնացած ալիքներու նման իմ անձս ալեկոծեն, ո՛վ բարերար եւ անոխակալ՝ հօր այցելու, օգնէ ինձի եւ իմ մտքիս խռովութեան մորկայոյզ ալիքները հանդարտեցուր Քու գթութեան ցօղով:

Իմ անօրէնութիւններուն բազմութիւնը, գետին գարնանային զայրոյթով պղտորած եւ հեղեղ դարձած ողողեցին մեղուցեալս. այլ Դուն՝ մարդասէր Տէր, Քու կամքիդ քաղցրութեան հողմերը շնչէ իմ վրաս եւ իմ շար հոսանքներս ցամքեցուր եւ Քու ողորմութեամբ իմ անօրէնութիւններս քաւէ եւ Քու անուանդ սիրելի սուրբերուն հետ կարգէ զիս, որովհետեւ անոնց հետ միասին պիտի փառաւորեմ Քու անոխակալ մարդասիրութիւնդ, հիմա եւ միշտ եւ յաւիտեաններուն յաւիտեանը. ամէն:

**ՈՒՐԲԱԹ՝
ԱՂՕԹՔ ՈՒՂՂՈՒԱԾ ԵՐԿՆԱԻՈՐ ՀՕՐ՝
ԵՐԱՆԵԼԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱՌՆԵՅԻՒՆ ԿՈՂՄԷ**

Էապէս բարի եւ ամենակարող զօրութեան յաւիտենական Աստուածը, որ այսօր երկրին հրամայեցիր որ ամէն տեսակի անասուններ եւ սողուններ եւ գազաններ մէջտեղ բերէ: Եւ բարիիդ բնութեամբ մարդը հողէն եւ Քու պատկերիդ նմանութեամբ եւ տիեզերքիդ արարչապետիդ համաձայն ստեղծեցիր եւ զինք բոլոր արարածներուն վրայ տէր եւ իշխան նշանակեցիր (Մննդոց 1:26-28) եւ զգուշացուցիր իրեն Քու պատուիրաններուդ հետեւիլ եւ բարիքը վայելել, որ անոր ձրիաբար տուիր Քու առատութենէդ:

Եւ հիմա, իմ Տէրս եւ իմ Աստուածս որ զիս՝ անարգութեան հողը, որ այնպիսի անկշռելի բարութեամբ բարգաւաճեցուցիր, ես ինքս կեանքի թշնամիին հրապոյրներուն անսալով, կեանք պարգեւողիդ պատուիրանները անտեսեցի եւ իմ Աստուծոյս եւ իմ նմանութիւնս հաստատողէն հեռացայ: Հոգիիս կերպարանքներուն գեղեցկութիւնը նսեմացուցի բազմատեսակ անօրէնութիւններով եւ շարհուրեցայ:

Զիս իմացական մտքով հարստացուցիր շարէն խորշելու ու բարին ընտրելու, բայց ես անմտութեամբ տարուելով յօժարեցայ շարը ընտրել: Քու կամքովդ զիս Քու աստուածութեանդ նմանութեան բարձրացուցիր, իսկ ես մարմնիս կիրքերուն ծառայ դառնալով անբան անասուններուն հաւասարեցայ: Քու հրամաններուդ լոյսը, որ ինձի տուիր անոնցմով երկնային օթեւանին ուղիդ ճանապարհին մէջ մնալու մոռցայ, իսկ ես խաւարին երթալով՝ անեղանելի կորստեան վիհին խորխորատը ինկայ:

Բայց դուն, ո՛վ մարդասէր եւ երկայնամիտ Տէր, իմ դէմս յաւիտեան մի՛ բարկանար եւ իս մի՛ պահեր, որովհետեւ մօրս արգանդէն ես ծնայ (Սաղմոս 22:10, 71:6) Քեզի համար եւ դուն ես իմ Աստուածս եւ իմ Տէրս (Յովհաննէս 20:28): Գթա՛ ինձի՝ Քու ձեռագործիդ եւ Քու աստուածեղէն շնորհքներով նորոգէ մեղքերով խանգարուած Քու բարերարութեանդ պատկերը: Իմ մտքիս աչքերը լուսաւորէ իմ շաւիղներս ուղղելու Քու օրէնքներուդ ճանապարհիդ մէջ: Քու սուրբ երկիւղովդ բաղձանքներուս եւ անբան կիրքերուս բնութիւնը սանձարձակէ: Իմ հոգիս Քու աստուածութեանդ սիրով վառէ Քու բարերարութեանդ հաճոյքին համաձայն օրհնութեան պատարագ մատուցանելու: Իմ փրկութեան թշնամիին ձեռքը մի՛ ձգեր զիս, որ կ' ուզէ զիս արտաքին խաւարին մէջ նետել, այլ Քու բարեգթութեամբդ այցելէ ինձի եւ փրկէ զիս:

Հակառակորդին մահաբեր հարուածներէն ուժաթափ եղայ եւ բեկանուեցայ եւ

իմ մեղքերուս բեռան տակ իմ մէջքս կքեցաւ, բայց Դուն, ո՛վ ողորմած, նայիր իմ բազմամեղ անձիս եւ զօրացուր զիս շարը թօթափելու եւ Քու օրէնքներուդ հրամաններուն մասին խոկալու: Աներեւոյթ վիշապին թոյնէն թունաւորուեցայ եւ մահը ամէն ժամ իմ առջեւ է: Գթա՛ ինձի, ո՛վ օրհնեալ եւ ամենողորմ, եւ Քու երկնային շնորհքներուդ ապաքինիչ դեղը ինձի տուր, որպէսզի ապրիմ եւ Քու անբացատրելի մարդասիրութիւնդ փառաւորեմ, հիմա եւ միշտ եւ մինչեւ անվախճան յաւիտեանները. ամէն:

ՇԱԲԱԹ

ԱՂՕԹՔ ՈՒՂՂՈՒԱԾ ԵՐԿՆԱԻՈՐ ՀՕՐ՝

ԵՐԱՆԵԼԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱՌՆԵՑԻՒՆ ԿՈՂՄԷ

Սուրբ եւ ամենակալ Աստուած, անբաւելի եւ անբացատրելի, անեղ բնութիւն եւ ամենազօր զօրութիւն, որ այսօր Քու բոլոր գործերէդ հանգստացար եւ այդ օրը օրհնեցիր եւ սրբացուցիր ամենէն իմաստուն խորհուրդով եւ նախագիտութեամբ (Մննդոց 2:2-3): Հետեւաբար ես՝ մեղքերուս ծնունդը՝ հոգեկան վնասներու դառնագին ցաւերուն ախտը, որովհետեւ խաւարի իշխանը մահացու հով շնչեց իմ մէջս եւ ինձի համար այլեւս դժնդակ տանջանքներէն հանգիստ չկայ: Բայց Դուն ո՛վ ամենազօր՝ Քու աննահանջելի հրամանովդ իմ հոգիիս հիւանդութիւնը բժշկէ եւ անհնար տանջանքներէն զիս հանգստացուր, որոնց պատճառով հասած եւ կեցած եմ մահուան դրան առջեւ, որովհետեւ ամէն ինչի կարող ես եւ հզօր եւ Քեզի համար անկարելի բան չկայ:

Երկրաւորներու սէրը եւ դիւրին բաներու բաղձանքը իմ միտքս գերի դարձուցին, շարաշար վիշտերը զիս ամէն օր զգացական եւ անիմաստ բաներու ծառայ դարձուցին եւ երբեք դադար, հանգիստ եւ ժամանակ առիթ չտուին դառն աշխատութիւններէն եւ անտանելի կիրքերու կարիքներէն ազատուելու ելքի մը մասին մտածելու: Եւ ապա Քեզի կ'աղաչեմ ո՛վ բարերար, որ բոլոր բաներուն փրկութիւնն ես (Յբրայեցիս 2:10; Բ. Տիթոմէոս 2:10) եւ նեղուածներուն վիշտերուն դիւրին լուծումը: Տուր ինձի այս տառապանքներէն ձերբազատուելու միջոցը, մշտնջենաւոր կեանքի ազատութիւնը եւ անցաւ հանգստեան կեանքը, ուրկէ ցաւերը եւ հեծութիւնները մերժուած են (Սաղմոս 116:3, 25:17-18; Բ. Կորնթացիս 4:8-9):

Բանասարկուին հրապոյրներուն հողմով յանցանքներու յուզեալ ալիքները մարմնիս նաւակը կը բախեն եւ կը սպառնան անբացատրելի տանջանքներու խաւարային անդունդները խորասուզել զիս: Իսկ դուն ո՛վ բարեգութ, փրկէ զիս այս վիշտերէն շնորհքիդ ամենազօր աջով եւ երկնային խաղաղ հանգստեան նաւահանգիստը հասցուր զիս, ուր բարիքներու բոլոր գանձերը եւ անարատ երջանկութիւնները ամբարուած են:

Տէր իմ Աստուածս, մի՛ ձգեր զիս իմ կամքիս, որովհետեւ ապականած բնութեանս արտօնութեամբ եւ յօժարութեամբ դէպի անցաւոր եւ անիմաստ բաներու ազդեցութեան տակ գացի: Հետեւաբար, Քու ողորմութեանդ եւ շնորհքներուդ նպաստը ինձմէ հեռացնելով, զիս մի՛ մոռնար իմ անօրութիւններուս համար, այլ Քու մարդասիրութեանդ համաձայն խնայէ ինձի՝ Քու ստեղծած արարածիդ, որ անզսպելի հեծութեամբ Քեզի կ'աղաղակէ եւ կ'աղաչէ:

Ո՛վ անոխակալ, ականջալո՛ւր եղիր ինձի: Գթա՛ ինձի ո՛վ մարդասէր: Ներէ՛ ինձի ո՛վ շարութիւններս չիշող եւ բազմաթիւ մեղքերով ծանրաբեռնուած անձիս ողոր-

մութիւն տուր, Քու մեծ ողորմութեանդ համաձայն: Քու սուրբ անուանդ փառքին համար ինձի բարի նշան մը տուր եւ իմ մեղքերու քաւութիւն տուր Քու ամենաբաւական շնորհքներուդ միջոցաւ, որովհետեւ Դուն քաղցր ես, ով Տէր եւ Քու գթութիւնդ անսահման է:

Կ'աղաչեմ Քեզի, ո՛վ մարդասէր, զիս դժոխային գազաններուն ձեռքը մի՛ մատներ, որոնք իրենց բերանները բացած ամենէն սուր եւ դաժան ժանիքներով կը փորձեն իմ հոգիս կեղեքել եւ բզկտել: Քու բազկիդ զօրութեամբ հարուածէ զանոնք, որպէսզի ոչնչանան եւ Քու ծառագ մահաբեր վտանգէն ազատէ ու պահպանէ, որովհետեւ Դուն իմ կեանքս եւ փրկութիւնս ես (Սաղմոս 27:1) եւ ամէն ատեն իմ օգնութիւնս Քեզմէ կու գայ (Սաղմոս 121:1)

Իմ մեղքերու բազմութեան համար տարակուսած վարմունքի մէջ եմ, երբ մտքիս աչքերով կը տեսնեմ անոնց անաչառ եւ արդար դատաստանը, բոլոր գործերուն անշիջողական յանդիմանութիւնը, մեղաւորներու եւ անդարձներուն սոսկալի պատիժը, անշէջ եւ անմար կրակը եւ յաւիտեանական դատապարտութիւնը:

Եւ որովհետեւ իմ անհատական եւ անձնական կարողութեամբս չեմ կրնար մեղքերու բեռը թօթափել եւ շուտափոյթ պատիժներէն ազատիլ, այս պատճառով անձնապէս Քեզի կը կանչեմ, ով մարդասէր, գործակից եղիր ինձի զիս իմ անօրէն գնացքներէն հեռացնելու եւ մտքի ամենայն զօրութեամբ Քեզի դիմելու եւ սրտառուջ զղջումով շնորհք եւ թողութիւն գտնելու եւ Քու ողորմութեամբդ Քու սուրբերուդ հետ միասին արժանի ըլլալու Քու երկնային արքայութեանդ մշտնջենաւոր հանգիստին եւ անոնց հետ անլուելի գոհաբանութիւններով փառաւորելու Քու ամենագոր Տէրութիւնդ, յաւիտեաններուն յաւիտեանը. ամէն:

Արեւմտահայերէնի վերածեց՝

համեմատական կրօններու դոկտոր, պրոֆեսոր

ՆԱԻԱՍԱՐԳ ՄԱՐՏՈՅԵԱՆ



ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Եկեղեցու արդի ճարտարապետական լուծումների հարցը մինչ օրս գտնուում է ակտիվ քննարկումների եւ վերարժեւորման փուլում: Ճարտարապետական համայնքում գոյութիւն ունեն տարբեր, երբեմն՝ իրարամերժ մօտեցումներ: Մի մասը կողմ է պատմական ձեւերի հնարաւորինս ճշգրիտ վերարտադրութեանը՝ համարելով, որ եկեղեցին սրբազան կառոյց է, որի կերպարը պէտք է մնայ անփոփոխ: Միւսները առաջարկում են արմատական նորարարութիւն՝ ձեւերի ազատ մեկնաբանութիւն, երբեմն նոյնիսկ՝ աւանդոյթի հետ տեսանելի խզումով:

Իմ համոզմամբ՝ այդ երկու ծայրայեղութիւնների միջեւ գոյութիւն ունի հաւասարակշռուած եւ կենսունակ ճանապարհ՝ եկեղեցական ճարտարապետութեան էվոլյուցիոն զարգացումը: Այդ մօտեցումը ենթադրում է ոչ թէ ձեւերի մեխանիկական կրկնութիւն կամ դրանց ժխտում, այլ սկզբունքների պահպանում եւ զարգացում՝ ժամանակակից պայմանների ու տեխնոլոգիաների համատեքստում:

Աւանդոյթ եւ շարունակականութիւն

Հայ միջնադարեան ճարտարապետութիւնը ձեւաւորել է եկեղեցաշինութեան բացառիկ հարուստ ժառանգութիւն: Գմբէթաւոր բազիլիկները, խաչաձեւ գմբէթաւոր համակարգերը, կեդրոնագմբէթ յօրինուածքները, բազմախորան կառոյցները ոչ միայն կառուցողական լուծումներ են, այլեւ խորհրդանշական համակարգեր: Դրանցում մարմնաւորուած են Հայ Եկեղեցու դաւանաբանական եւ ծիսական պատկերացումները, տիեզերական խորհրդաբանութիւնը, լոյսի եւ ուղղահայեացութեան գաղափարը:

Առաջին կարեւոր իրողութիւնը, որի վրայ հիմնուում է իմ մօտեցումը, այն է, որ Հայ Առաքելական Եկեղեցու ծիսակարգը միջնադարից մինչ այսօր էական փոփոխութիւնների չի ենթարկուել: Սա նշանակում է, որ պատմականօրէն ձեւաւորուած տարածական կառուցուածքները շարունակում են լիարժէք բաւարարել արարողակարգային պահանջներին: Եկեղեցու ներքին յօրինուածքը՝ խորան, աւագ խորան, աւանդատներ, գմբէթի տակ գտնուող կեդրոնական տարածք, պահպանել են իրենց գործառնական նշանակութիւնը:

Երկրորդ՝ միջնադարում ձեւաւորուած բազմատիպ համակարգերը այսօր էլ ստեղծագործական լայն դաշտ են բացում: Դրանք կարելի է վերաիմաստաւորել՝ կիրառելով նոր կոնստրուկտիւ լուծումներ, նոր նիւթեր եւ նոր տեխնոլոգիաներ՝ առանց կորցնելու գաղափարական հիմքը:

Երրորդ՝ աւանդական եկեղեցիների ծաւալատարածական լուծումները եւ գեղարուեստական արտայայտչամիջոցները մինչ օրս ունեն բարձր էսթետիկ արժէք: Քարի պլաստիկան, ռիթմիկ յօրինուածքը, լոյսի ներթափանցման սահմանափակ, սակայն խորհրդանշական բնոյթը շարունակում են յուզել ժամանակակից մարդուն:

Չորրորդ՝ պատմական եկեղեցիների հիմքում դրուած խորհրդանշական համակարգը ենթակայ չէ կամայական փոփոխութիւնների: Ճարտարապետը պարտաւոր է գի-

տակցել, որ աշխատում է ոչ միայն նիւթական, այլեւ հոգեւոր ժառանգութեան հետ:

Վերջապէս, ճարտարապետի հիմնական նպատակը, իմ համոզմամբ, գեղեցիկ եւ յարմարաւէտ միջավայրի ստեղծումն է՝ անկախ նրանից, թէ որ ճարտարապետական ուղղութիւնն է նա նախընտրում: Ճարտարապետութիւնը, որպէս կենդանի արուեստ եւ գիտութիւն, երբեք չի եղել ստատիկ երեւոյթ: Հազարամեակների ընթացքում հայ ճարտարապետութիւնն անցել է զարգացման տարբեր փուլերով, որոնցից իւրաքանչ-իւրն իր վրայ կրել է թէ՛ ներքին հասարակական-մշակութային գործընթացների, թէ՛ արտաքին քաղաքական եւ քաղաքակրթական ազդեցութիւնների կնիքը:

Եկեղեցաշինութիւնը Հայաստանում եւս ժամանակի ընթացքում ենթարկուել է փոփոխութիւնների՝ պահպանելով իր գաղափարական եւ ծիսական հիմքը, բայց միաժամանակ արձագանգելով նոր պայմաններին ու պահանջներին: Մեր ժամանակները եւս զարգացման հերթական փուլն են հայ ճարտարապետութեան համար: Յատկապէս եկեղեցական ճարտարապետութիւնն այսօր կրում է մի շարք արդի երեւոյթների ազդեցութիւնը, որոնք անխուսափելիօրէն յանգեցնում են նոր ձեւերի, տարածական լուծումների եւ արտայայտչամիջոցների ձեւաւորմանը՝ շարունակելով աւանդոյթի եւ նորարարութեան բնական երկխօսութիւնը:

Ժամանակակից տեխնոլոգիաների ազդեցութիւնը

Մեր ժամանակները եւս զարգացման մի փուլ են հայ ճարտարապետութեան համար: Ժամանակակից շինարարական տեխնոլոգիաները, ինժեներական համակարգերը, նիւթերը նոր հնարաւորութիւններ են ստեղծում, որոնք անտեսելն անհնար է:

Գմբէթակիր սիւներից հրաժարումը

Նոր կոնստրուկտիւ համակարգերը հնարաւորութիւն են տալիս իրականացնել մեծածախիչ ծածկեր եւ ազատել ինտերիերը սիւներից: Եթէ միջնադարում գմբէթակիր սիւները կառուցողական անհրաժեշտութիւն էին, ապա այսօր հնարաւոր է ստեղծել նոյն կամ աւելի մեծ ծաւալներ՝ առանց տեսանելի ծանր հենարանների:

Դնեպրում եւ Կիեւում նախագծուած եկեղեցիներում կիրառուել է կրկնակի կամարի սկզբունքը. գմբէթակիր կամարները յենւում են աղօթասրահի շորս անկիւններում՝ 45 աստիճան թեքութեամբ տեղադրուած կամարների վրայ: Այս լուծումը թոյլ տուեց ստեղծել ամբողջական, բաց եւ անխոչընդոտ աղօթասրահ:

Սոչիում կիրառուել է միջնադարեան գաւիթներին բնորոշ խաչուող կամարների սկզբունքը՝ նոր կառուցողական մեկնաբանութեամբ: Բոստոնում նախագծուած եկեղեցում գմբէթակիր կամարները յենւում են բարձրակների (կոնսոլների) վրայ, ինչը ստեղծում է թեթեւութեան եւ տարածական ազատութեան զգացողութիւն:

Այս փոփոխութիւնները ոչ միայն տեխնիկական են, այլեւ գեղարուեստական. տարածքը դառնում է աւելի միաձոյլ, տեսանելիութիւնը՝ ամբողջական, իսկ հաւատացեալների մասնակցութիւնը՝ առաւել ընդգրկուն:

Լայն բացուածքներ եւ լոյսի նոր ընկալում

Այդ անհրաժեշտութիւնը պայմանաւորուած է եկեղեցու արագ բեռնաթափման (էվակուացիայի) պահանջով, ինչպէս նաեւ եկեղեցական թափօրի եւ հաւատացեալների ազատ ու անխոչընդոտ մուտքն ու ելքը ապահովելու նպատակով: Մուտքերի եւ բաց-

լածքների ճշգրիտ կազմակերպումը ոչ միայն գործառնական, այլև անվտանգութեան կարեւոր խնդիր է լուծում:

Պատուհանների չափերն ու համամասնությունները յաճախ պայմանաւորուած են նախագծողի գեղագիտական մօտեցմամբ եւ ընդհանուր յօրինուածքային գաղափարով: Մեզ համար նախընտրելի է մեծ պատուհանների կիրառումը՝ եկեղեցու ներքին տարածքում առաւել լուսաւոր, բաց եւ հոգեբանօրէն թեթեւ միջավայր ձեւաւորելու համար, որտեղ լոյսը դառնում է ոչ միայն բնական լուսաւորման միջոց, այլև տարածքի հոգեւոր կերպարը ձեւաւորող կարեւոր տարր:

Լոյսը եկեղեցական ճարտարապետութեան մէջ միշտ ունեցել է խորհրդանշական նշանակութիւն: Եթէ միջնադարում այն ներթափանցում էր սահմանափակ չափով՝ ստեղծելով միատիկ կիսախաւար, ապա այսօր հնարաւոր է ձեւաւորել աւելի լուսաւոր միջավայր՝ պահպանելով խորհրդանշական շեշտադրումները:

Վիտրաժ, մոզաիկա, որմնանկար

Որմնանկարչութիւնը կիրառուել է դեռեւս միջնադարում, սակայն երբեք պարտադիր չի եղել հայ եկեղեցու համար: Ժամանակակից պայմաններում վիտրաժի եւ մոզաիկայի կիրառումը նոր շերտ է աւելացնում ներքին տարածքի ընկալմանը:

Գունային շեշտադրումները, լոյսի ֆիլտրումը, խորհրդանշական պատկերները ձեւաւորում են հոգեւոր ներգործութեան լրացուցիչ մակարդակ: Կարեւոր է, որ այս տարրերը լինեն ոչ թէ դեկորատիւ յաւելումներ, այլ տարածական ամբողջութեան բաղադրիչներ:

Նստատեղերի ներառում

Ժամանակի պահանջով շատ եկեղեցիներում նախատեսուած են նստատեղեր: Թէեւ աւանդաբար հաւատացեալը մասնակցում էր արարողութեանը կանգնած, ժամանակակից պայմաններում յարմարաւէտութիւնը եւս կարեւոր է: Նստատեղերի ինտեգրումը պէտք է իրականացուի այնպէս, որ չխախտի տարածքի սիմուլիկ կառուցուածքը եւ շարժման ազատութիւնը:

Քաղաքաշինական եւ բնակլիմայական գործօններ

Ճարտարապետական լուծումները երբեք չեն ձեւաւորում վակուումում: Տարածքի քաղաքաշինական միջավայրը, պատմական համատեքստը, բնակլիմայական պայմանները եւ իրաւական նորմերը էական ազդեցութիւն ունեն նախագծման վրայ:

Կիւելում եկեղեցական համալիրի համար յատկացուած հողամասը գտնուում էր քաղաքի պատմական միջուկում եւ ունէր սահմանափակ չափեր: Անհրաժեշտ եղաւ նախատեսել ստորգետնեայ յարկ՝ գործառնական տարածքները տեղաւորելու համար: Բարձր գրունտային ջրերի պատճառով ստեղծուեց փողոցի մակարդակից երկու մեթր բարձրութեամբ հարթակ (պողիում), որի վրայ տեղադրուեցին եկեղեցին եւ վարչական մասնաշէնքը: Այս լուծումը միաժամանակ լուծեց ինժեներական խնդիր եւ ստեղծեց ծաւալատարածական արտայայտիչ յօրինուածք:

Խարկովի, Սոչիի եւ Բոստոնի եկեղեցիներում մոմավառութեան հետեւանքով առաջացած ծխի հեռացման նպատակով ինտերիերում ներդրուեց յատուկ գեղարուեստական տարր, որը դարձաւ նաեւ ինժեներական համակարգի մաս: Այսպիսով, տեխնիկա-

կան անհրաժեշտությունը վերածուեց գեղարուեստական արտայայտչամիջոցի:

Ճարտարապետի պատասխանատուությունը

Եկեղեցաշինությունները պահանջում է ոչ միայն մասնագիտական հմտություն, այլև խորքային պատասխանատուություն: Ճարտարապետը աշխատում է մի միջավայրի հետ, որը նախատեսուած է մարդու եւ Աստծոյ հանդիպման համար: Այդ տարածքը պէտք է լինի ե՛ւ գեղեցիկ, ե՛ւ յարմարաւէտ, ե՛ւ գաղափարապէս ամբողջական:


Գեղեցիկ միջավայրի ստեղծումը չի սահմանափակում ձեւով կամ դեկորով: Այն ենթադրում է համաշփոթիւն, նիւթի ազնուութիւն, լոյսի ճիշդ կազմակերպում, ձայնային եւ ջերմային յարմարաւէտութիւն, շարժման տրամաբանութիւն: Երբ այս բոլոր բաղադրիչները միաւորուում են, ստեղծուում է տարածք, որը կարող է դառնալ հոգեւոր փորձառութեան վայր:

Եզրակացութիւն

Ճարտարապետութիւնը, այդ թւում՝ եկեղեցական, մշտապէս փոփոխուող եւ զարգացող գործընթաց է: Սակայն դրա արժէքը պահպանուում է այն դէպքում, երբ զարգացումը հիմնուում է շարունակականութեան վրայ: Էվոլյուցիոն մօտեցումը հնարաւորութիւն է տալիս համադրել միջնադարեան հայ ճարտարապետութեան խորքային սկզբունքները եւ ժամանակակից տեխնոլոգիական հնարաւորութիւնները:

Այս ճանապարհը ոչ թէ անցեալի կրկնութիւնն է, այլ նրա շարունակութիւնը: Եւ եթէ մեզ յաջողուի ստեղծել միջավայր, որտեղ աւանդոյթն ու նորարարութիւնը չեն հակադրուում, այլ լրացնում են միմեանց, ապա եկեղեցական ճարտարապետութիւնը կը շարունակի ապրել, զարգանալ եւ ծառայել իր հիմնական նպատակին՝ դառնալ մարդու հոգեւոր վերափոխման տարածք:

ԽԱՉԻԿ ԳԱՆԻԷԼԵԱՆ
Ճարտարապետ



ՎԻՄԱԳՐԱԿԱՆ**ՎԱՂԱՏՈՒՐ ԳԻՒՂԻ ՆՈՐԱՅԱՅՏ ՎԻՄԱԳՐԵՐԸ**

Սիւնեաց լեռնաշխարհում պահպանուել են մշակութային բազմաշերտ վկայութիւններ: Դրանցից են Գորիս քաղաքի շրջակայ գիւղերի պատմական յուշարձանները, որոնց ուսումնասիրութիւնը կարեւոր է տուեալ տարածաշրջանի մշակութային կեանքի լուսաբանման համար: Յատկապէս փոքր չափերի գիւղական միջավայրերում պահպանուած եկեղեցիները յաճախ միակ նիւթական վկայութիւններն են բնակավայրի անցեալի վերաբերեալ: Սոյն ուսումնասիրութեան շրջանակներում, կարեւորելով տարածաշրջանի յուշարձանների ներկայիս վիճակը եւ պահպանուածութիւնը մեր վիմագրական ուսումնասիրութիւնն այս անգամ շարունակեցինք Սիւնիքի մարզի Վաղատուր գիւղում՝ նպատակ ունենալով ներկայացնել գիւղի տարածքում պահպանուած վիմագրերն ու պատմամշակութային յուշարձանները, որի համար հիմք հանդիսացան մեր դաշտային դիտարկումները, տեղացիների հետ զրոյցները, արխիւային նիւթերն ու առկայ պատմական տուեալների համագրութիւնը: «Սիւն» պարբերականի էջերում նախորդիւ անդրադարձել ենք այս մարզի մի շարք գիւղերի վիմագրական ուսումնասիրութեանը: Շարքի ամփոփման նպատակով, ընթերցողի ուշադրութեանն ենք ներկայացնում Վաղատուր գիւղի յուշարձաններն ու նորայայտ արձանագրութիւնները:

Վաղատուր գիւղի աշխարհագրական եւ պատմական համառօտ բնութագիրը. Գիւղը գտնուում է Սիւնիքի մարզում, Գորիս քաղաքից մօտ 10-12 մ հիւսիս-արեւելք, Խոզնավար եւ Խնածախ գիւղերի հարեւանութեամբ: Աշխարհագրական դիրքը բնորոշ է Սիւնիքի լեռնային բնակավայրերին: Պատմական աղբիւրների համաձայն, մասնաւորապէս պատմագիր Ստեփանոս Օրբէլեանի հարկացուցակի, այն յիշատակուում է պատմական Հաբանդ գաւառի կազմում Վաղատու 12 միւտը հարկով¹: Մատենագրութեան մէջ բնակավայրը տարբեր ժամանակաշրջաններում հանդէս է եկել մի շարք անուանաձեւերով. Բայանդուր, Բայենդուր, Հալախ, Պայանդուր²: Ղեւոնդ Արիշանն անդրադառնալով Հաբանդ գաւառի բնակավայրերին գրում է. «...Հաբանդայ գաւառի կարգեալք էին ի հին Յուցակին՝ անդէն և յիշեալ եմք. որպիսիք են երկոքին Պայանդուր, Խոնածախ և այլն...»³: Մէկ այլ յիշատակութեան մէջ. «Քառորդաւ ժամու ի Հս սորա կայ Պայանդուր գեօղ, և միւս եւս համանուն նմին ի վերոյ, կրկին նոյնչափ հեռի ի Խնածախէ...»⁴: Գրաւոր աղբիւրների վկայութիւններին լրացնում են պահպանուած վիմագրական տեղեկութիւնները եւ Պայանդուր անուանաձեւը կարգում ենք Խնածախի մելիք Հայկազ Բ-ի կնոջ՝ Գուլաբի տապանաքարի արձանագրութեան մէջ, որտեղ թուարկուում են նաեւ տարածաշրջանի հարեւան գիւղերը. «ԳՆԱՅ ԵՒ ՄԵՐ Հ[Ա.]ՅՐԵՆԻՔ Մ[ՈՒ]ԼՔԵՐՆ ԱՆԿԵ[Ա.]Լ ԷՐ Ի ԶԵՌ[Ա.]Յ, Թ[Ա.]Գ[Ա.]Վ[Ո.]ՐԷՆ Գ[Ա.]Բ[Ա.]Լ[Ա.]Յ ԷԱՌ ԱՅՍՔ[Ա.]Ն ԳԵՂԻ: ԽՆ[Ա.]Ծ[Ա.]Խ, Պ[Ա.]Յ[Ա.]ՆԳ[ՈՒ]Ր,

¹ Ստ. Օրբէլեան, Սիւնիքի պատմութիւն, Երեւան, 1986, էջ 399:

² Թ. Խ. Յակոբեան, Ստ. Տ. Մելիք-Բախշեան, Հ. Խ. Բարսեղեան, Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան չորս հատորով, հ. 2 (դ-կ), ԵՊՀ հրատ., Երեւան, 1988, էջ 741:

³ Հ. Ղեւոնդ Արիշան, Սիւնեաց, Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Միսիսարեան միաբ. հրատ., Վենետիկ, Ս. Ղազար, 1893, էջ 268:

⁴ Նոյն տեղում, էջ 264:

Խ[Ո]ՁՆ[Ա]Վ[Ա]Ր»⁵: Այսպիսով, գրաւոր եւ վիճակագրական աղբիւրների համադրութիւնը թոյլ էն տալիս փաստելու, որ Վաղատուր գիւղը տարածաշրջանում ունեցել է հաստատուն տեղ եւ հանդէս է եկել տարբեր անուանաձեւերով, որոնք արտացոլում են տեղանուանական եւ պատմական զարգացման փուլերը:


1918 թուականին այստեղ մշտական բնակութեան տեղափոխուեցին Զէյվայի, Միքենդի եւ Ալիղուլի գիւղերի հայերը: Այս իրողութեան վառ ապացոյցն է գիւղի գերեզմանատանը հանդիպող արձանագիր տապանաքարերը, որոնց բովանդակութիւնը հնարաւորութիւն է տալիս տեղեկութիւն ստանալ տուեալ ժամանակաշրջանի բնակչութեան սոցիալական կազմի եւ տեղական համայնքի կեանքի մասին: Այս առումով, յատկանշական է արձանագրութիւններում հանդիպուող «զէյվայի», «միքենդցի» ձեւակերպումները (նկ. 1, 2), որոնք վկայում են տուեալ անձանց ծագման վայրի մասին:

1969 թուականին գիւղը վերանուանուել է Վաղատուր⁶ եւ բաժանուել երկու թաղամասի՝ Հալաք եւ Ներքին Բայանդուր: Հալաք բնակավայրից գաղթած բնակչութիւնը հաստատուել է գիւղի հարաւային հատուածում, ինչի արդիւնքում ձեւաւորուել է առանձին թաղամաս, որը պահպանել է Հալաք անուանումը: Թաղամասի անուանումը, հաւանաբար ժամանակի ընթացքում փոխանցուել է այստեղ գտնուող եկեղեցուն, որը տեղական աւանդոյթում յայտնի է Հալաքի վանք անուամբ⁷: Եկեղեցու վերաբերեալ մատենագրական եւ վիճակագրական տեղեկութիւնները սահմանափակ են: Շինարարական արձանագրութեան բացակայութիւնը եւս խոչընդոտում է յուշարձանի ճշգրիտ թուագրումը: Ելնելով ճարտարապետական կառուցուածքից՝ 19-րդ դարի եկեղեցին եռանաւ է (նկ. 3), պահպանուել են զոյգ աւանդատները: Վերանորոգման ընթացքում շրջակայ գերեզմանատան քանդակազարդ տապանաքարերի մի մասն օգտագործուել է որպէս շինաքար եւ ազուցուել եկեղեցու հարաւային պատի շարուածքում (նկ. 4):

Վաղատուրի ժամը եկեղեցին (17-րդ դար), գտնուում է գիւղի հարաւ-արեւելեան հատուածում: Այն միանաւ, կրաշաղախ եւ անմշակ քարերով եկեղեցի է (նկ. 5), որի հիւսիսային եւ հարաւային պատերին կան հինգ խորադիր կամարաշարեր (նկ. 6): Պահպանուել են յուշարձանի զոյգ աւանդատները, որոնք կիսով չափ լցուած են հողով: Ի տարբերութիւն Հալաքի վանքի ժամը եկեղեցու պատերին պահպանուել են արձանագրութիւններ: Թէեւ ներսից արձանագրութիւնների ոչ այնքան մեծ հնարաւորութիւն ունեն այս յուշարձանի որմերը, այնու ամենայնիւ վիճակներ են պահպանուել խորանի կամարը երիզող քարերին (նկ. 7): Ստորեւ վերոնշեալ շինաքարերին բացառապէս անձնանունների տեսքով տեղ գտած արձանագրութիւններ.

1. Հիւսիսային մոյթի կամարի ստորին քարին, 2 տող. (նկ. 8)

Խ[Ա]ՉԱՅՏ[Ո]Ի[Ր]ԻՆ, ԳՈՒԼԻԿ:




⁵ Մ. Հասրաթեան, Պատմա-հնագիտական ուսումնասիրութիւններ, ՀԱՀ ԳԱ հրատ., Երեւան, 1985, էջ 164:
⁶ Թ. Խ. Յակոբեան, Ստ. Տ. Մելիք-Բախշեան, Հ. Խ. Բարսեղեան, Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան չորս հատորով, հ. 1 (ա-դ), Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1986, էջ 741:
⁷ Տեղեկութիւնը մեզ հաղորդել է ծնունդով վաղատուրցի Անահիտ Գրիգորեանը՝ պատմական միջավայրի պահպանութեան, Սիւնիքի մարզային ծառայութեան պետի նախկին տեղակալ:

Ծանօթ. Գուլիկ, իգական անձնանունան փաղաքշական ձեւն է Գուլ՝ վարդ կամ Գուլի՝ վարդագոյն տարբերակը, որը դարձել է անկախ անուն: Հնագոյն գործածութիւն ունենք 1444-1466 թթ.⁸:

2. Նախորդից վերև, 1 տող. (նկ. 9)


ՓԱՐԻ:

Ծանօթ. Փարի, ար եւ իգ., պրսկ. պարիկ, գեղեցկադէմ ոգի բառերից⁹:




3. Յաջորդը, 1 տող. (նկ. 10)

ՊԱՋԻ:



4. Ապա, 1 տող. (նկ. 11)

ԽՈՒՄՐԱ:




⁸ Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հ. 1, Երևան, 1942, էջ 503:

⁹ Նոյն տեղում, էջ 194:


5. Խորանի կամարը երիզող հարաւային շինաքարին, 1 տող. (նկ. 12)

ՄԻԳԷԼԻՆ:




6. Նախորդի ստորեւ, 1 տող. (նկ. 13)

ՄԿՐՏԻՉ:



7. Ապա, 2 տող. (նկ. 14)

ՍԱՐՔԻՍ, ՇԱՀՈՒՄ:




Այսպիսով, կամարը երիզող քարերին տեղ են գտել գրեթէ նոյնաբովանդակ, հնագրորէն համանման տառաձեւերով արձանագրութիւններ, որոնք բնոյթով յիշատակագրային են եւ ըստ էութեան հաղորդում են այցելու նուիրատուների անունները, որոնք իրենց նպաստն են բերել եկեղեցու շինարարութեան կամ նորոգման գործին: Վերջերս այս թեմային առանձնաշատուկ անդրադարձել է վիմագրագէտ Գագիկ Սարգսեանը, հիմք ընդունելով Վայոց Ձորի մարզում գտնուող «Մեծ վանք» յուշարձանի որմերի խա-

շաքանդակներին կից արձանագրութիւնները¹⁰:

8. Արձանագրութիւն հիւսիսային սաւանդատան ճակատակալ քարին, 1 տող. (նկ. 15)


ՏՐ Փ[Ա.]Ն[Ո]Ս ԵՂՈՍ ԳՐԶԻ:



Ծանօթ. Արձանագրութեան մէջ յիշատակուած Եղոսն ըստ Հր. Աճառեանի ծագել է Եղիա անունից, որը, հաւանաբար, անձնանունն էր Եղոս Դեոյի յիշատակութիւն կայ 1557 թուականին: Կարծում ենք խօսքը իսկապէս Եղիա գրչի մասին է, ինչպէս Աճառեանն է յիշատակում. «Եղիա երէց, որդի Շապանի, գրիչ-Քաջթաղուց գաւառի Խոզնավար գիւղում օրինակեց մի Աւետարան, 1490 թ»¹¹: Խոզնավար գիւղին նուիրուած յօդուածում մենք անդրադառնում ենք այս գրչի ընդօրինակած Աւետարանին¹²:

9. Արձանագրութիւն հարավային ավանդատան ճակատակալ քարին, 1 տող. (նկ. 16)

ԵԱՆԷՍ:



¹⁰ Գ. Մարգսեան, Մեծ վանք, վիմագրութիւնը եւ խաչերի իմաստաբանութիւնը, ՀԱԻ հրատ., Երեւան, 2024, 62 էջ:

¹¹ Տ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հ. 2, Երեւան, 1942, էջ 106:

¹² Ս. Խորշոյեան, Խոզնավարի յուշարձանները, «Սիոն» ամսագիր, Երուսաղէմ, 2024, թիւ 1-2-3, էջ 93:


10. Հրահային պատի կամարակապ որմնախորշին, 4 տող. (նկ. 17)

ՄԲ ԽԱՂՉՍ ԲԱՐԵՆՈՍ ՏՐ ԳՐԻԳՈՐԻՆ ՈՐԴՈՒՆ ԱԿՈՒԲԻՆ:



11. Արձանագրութիւններ են պահպանուել բեմի աջ եւ ձախ կողմերում փորուած պատրհաններին, որոնցից մէկի գիրը խիստ եղծուած է (նկ. 18), իսկ միւսի վրայ կարդում ենք հետեւեալ ընթեռնելի տողերը (նկ. 19).

ԽԱՂՉՍ ՏՐ ԳՈՒՐԳԵՆԻՆ...:



12. Խաչքար՝ հենած եկեղեցու արևելեան պատին, 2 տող. (նկ. 20):

ԵՍ Մ[Ա]ՐԿՈՍ ՄԱՀ[Տ]ԵՍԻ

ՄԲ ԽԱՉՍ ՀՈՒԳՈՒՆ:



Սերօ Խանգաղեանն իր «Հայրենապատում»¹³ աշխատութեան մէջ անդրադառնալով յիշեալ եկեղեցուն վկայում է յուշարձանի վրայ տեսանելի «Թվին ՌԲ» (1553) արձանագրութեան մասին: Սակայն չի յստակեցնում, թէ կոնկրէտ որ հատուածում է գտնուել այդ արձանագրութիւնը: Աւելին, ներկայումս եկեղեցու որեւէ պատի վրայ նման թուագրում չի պահպանուել, ինչի հետեւանքով հնարաւոր չէ ճշգրտօրէն որոշել յիշեալ գրութեան կապը յուշարձանի կառուցման ժամանակի հետ: Գրողը եւս մէկ արձանագրութիւն էլ յիշատակում է աւագանի քարին. Սբ Խաչս...ՌԱ Թվ (1552):

Գրաւոր աղբիւրները վկայում են, որ Բայանդուր գիւղի քահանան եղել է Մինաս Տէր Մինասեանը (ծնուել է 1879 թուին՝ Միքենդում: 1938 թ. ձերբակալուել եւ գնդակահարուել է)¹⁴: Հայաստանի ազգային արխիւում պահպանուած փաստաթղթերից մէկում կարդում ենք. «Տեղեկանք»¹⁵. «Բայանդուր գյուղացի Տիր Մինաս Գալուստի Տիր Մինասյանը գյուղում հանդիսացիլ է տերտեր՝ 1916 թվից մինչև 1925 թիվը: 1925 թվին հրաժարական է տվել թիրթում: Սակայն հրաժարականը տալուց հետո դարձյալ զբաղվիլ է կրոն քարոզիլով: 1930 թվին կապված է յիղել հակահեղափոխական այժմ ձիրբակալված Շամիր Պիտրոսյանի և մյուսների հետ, վորոնք պայքարելին կոլխոզի դիմ: Տէր Մինասյանը 1930 թվին յինթարկվել է անհատական հարկատրման, վորպիս կուլակ: Տիր Մինասյանը 1928 թվից մինչև 1934 թիվը յիղել է ձայնիզուրկ... Խնածախ գ. Խ. Նախ. Ա. Շահրամանյան, 19/11/1938 թ»:

Պահպանուած յուշարձանների ուսումնասիրման շրջանակներում կարելոր է նշել նաեւ գիւղի սրբատեղիները: **ԹԹՈ ՋՈՐ**. տեղանքն այստեղ գտնուող իւրատիպ խաչքարի շնորհիւ սրբավայր է դարձել (նկ. 21): Խաչքարը գտնուել է գիւղի այգիներից մէկում իրականացուող հողային աշխատանքների ժամանակ եւ տեղափոխուել ներկայիս տարածք: **ՍՈՐՔ ՔԱՐ**. Սա մի հսկայ քար է, որ տարիներ շարունակ մատաղատեղի է դարձել վաղատուրցիների համար (նկ. 22): Կարծում ենք, սրանք եւս կարելոր վկայութիւններ են տեղական համայնքի կեանքի եւ աւանդոյթների մասին:

Վաղատուր գիւղի տարածքում պահպանուած յուշարձանները կարելոր հիմք են գիւ-

¹³ Ս. Խանգաղեան, Հայրենապատում, հ. 1, Երևան, 1981, էջ 127:

¹⁴ Ստեփան Կերտոզ, Գիրք տառապելոց (1820-1950-ական թուականներին բռնութիւնների գոն հայ հոգեւորականներ), Երևան, 2002, էջ 313-314:

¹⁵ Архив но. 13390, дело 4777. Ֆոնդ 1191, ցուցակ 15, գործ 724:


դի պատմական անցեալի եւ մշակութային ժառանգութեան ուսումնասիրման համար: Տարածքում իրականացուած դաշտային ուսումնասիրութեան արդիւնքներն առաջին անգամ գիտական շրջանառութեան մէջ են դնում մի շարք նորայայտ արձանագրութիւններ: Յուշարձանի որմերին պահպանուած վիմագրերի մեծ մասը խաչապատկերներով ուղեկցուող յիշատակագրութիւններ են: Մնացած գրերը զգալիօրէն վնասուած են, ինչի հետեւանքով դրանց ամբողջական ընթերցումն ու վերականգնումը հնարաւոր չէր: Կարծում ենք, գիւղի պատմութեան ու վիմագրական նիւթի լուսաբանումը հիմք է ստեղծում հետագայ ուսումնասիրութիւնների եւ համեմատական վերլուծութիւնների համար:




Նկ. 1



Նկ. 2



Նկ. 3




Նկ. 4



Նկ. 5



Նկ. 6



Նկ. 7



Նկ. 8



Նկ. 9



Նկ. 10



Նկ. 11




Նկ. 12



Նկ. 13, 14



Նկ. 15



Նկ. 16



Նկ. 17



Նկ. 18



Նկ. 19



Նկ. 20



Նկ. 21



Նկ. 22

ՍԱԹԵՆԻԿ ԽՈՒՐՇՈՒԳԵԱՆ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ

ՍՈՒՐԲ ԶԱԿՈՒԹԻ ՆԵՐՍԷՆ**ԴԻԻԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅ****A STATEMENT FROM THE PATRIARCHS AND HEADS OF THE
CHURCHES IN JERUSALEM ON UNITY AND REPRESENTATION OF THE
CHRISTIAN COMMUNITIES IN THE HOLY LAND****January 17, 2026**

The Patriarchs and Heads of Churches in the Holy Land affirm before the faithful and before the world that the flock of Christ in this land is entrusted to the Apostolic Churches, which have borne their sacred ministry across centuries with steadfast devotion. Recent activities undertaken by local individuals who advance damaging ideologies, such as Christian Zionism, mislead the public, sow confusion, and harm the unity of our flock. These undertakings have found favor among certain political actors in Israel and beyond who seek to push a political agenda which may harm the Christian presence in the Holy Land and the wider Middle East.

Holy Scripture teaches us that “we, though many, are one body in Christ, and individually members one of another” (Romans 12:5). To claim authority outside the communion of the Church is to wound the unity of the faithful and burden the pastoral mission entrusted to the historic churches in the very land where our Lord lived, taught, suffered, and rose from the dead.

The Patriarchs and Heads of Churches further note with concern that these individuals have been welcomed at official levels both locally and internationally. Such actions constitute interference in the internal life of the churches and disregard the pastoral responsibility vested in the Patriarchs and Heads of Churches in Jerusalem.

The Patriarchs and Heads of Churches in Jerusalem reiterate that they alone represent the Churches and their flock in matters pertaining to Christian religious, communal, and pastoral life in the Holy Land.

May the Lord, who is the Shepherd and Guardian of souls, grant wisdom for the protection of His people and the safeguarding of His witness in this sacred land.

—The Patriarchs and Heads of the Churches in Jerusalem

**ԱՌ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԵՒ ՕՏԱՐ ԼՐԱՏՈՒԱՄԻՋՈՅՆԵՐՈՒՆ**

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը հարկ կը նկատէ տեղեկացնել Հայաստանի Հանրապետութեան եւ օտար լրատուամիջոցներուն, որ Տիար Արմէն Աթաշանեան (նախկին՝ Էմմանուէլ Վարդապետ Աթաշանեան) կարգալոյծ հռչակուած է 2019 թուականի Մայիս 6-ին:

Սակայն, այս իրողութեան հակառակ, ան երբեք չէ դադրած հանրութեան առջեւ ներկայանալ իբրեւ հոգեւորական: Տարբեր լրատուամիջոցներուն ան կը շարունակէ ներկայանալ որպէս Երուսաղէմի հայկական եկեղեցւոյ սպասաւոր՝ Հայր Էմմանուէլ Վարդապետ Աթաշանեան, եւ հարցազրոյցներ կու տայ՝ անդրադառնալով Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կալուածներուն, ինչպէս նաեւ Սուրբ Երկրին մէջ տիրող պատերազմական եւ այլ իրավիճակներուն:

Այսու կը տեղեկացնենք Հայաստանի Հանրապետութեան եւ օտար լրատուամիջոցներուն, որ Տիար Արմէն Աթաշանեան 2019 թուականէն ի վեր այլեւս հոգեւորական չէ: Հետեւաբար ան իրաւունք չունի հանդէս գալու որպէս հոգեւորական կամ ներկայանալու որպէս «Երուսաղէմի հայկական եկեղեցւոյ սպասաւոր Հայր Էմմանուէլ Վարդապետ Աթաշանեան», ինչպէս նաեւ՝ հարցազրոյցներ տալու կամ հրապարակային մեկնաբանութիւններ կատարելու Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան, անոր կալուածներու եւ առնչակից այլ հարցերու վերաբերեալ:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան անունով պաշտօնական տեղեկութիւններ հաղորդելու իրաւասութիւնը վերապահուած է բացառապէս Սուրբ Աթոռոյ Դիւանատանը:

Կոչ կ'ուղղենք Հայաստանի Հանրապետութեան եւ օտար լրատուամիջոցներուն՝ յարգելու վերոյիշեալ հանգամանքը եւ զերծ մնալու կարգալոյծ անձի կարծիքները կամ մեկնաբանութիւնները ներկայացնելուց որպէս Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան պաշտօնական դիրքորոշում:

9 Մարտ, 2026

ԳԻԻԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅ

**ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԴԱՏԱԻՈՐԱՅ ԿԻՐԱԿԻԻ ՄԱՍԻՆ**

Սուրբ Երկրին մէջ տիրող պատերազմական իրավիճակին եւ ատոր հետեւանքով սահմանուած սահմանափակումներուն պատճառով՝ Մեծ Պահոց Հինգերորդ՝ Դատաւորաց Կիրակիին առիթով մատուցուելիք հանդիսաւոր Սուրբ եւ Անմահ Պատարագը, 22 Մարտ, 2026-ին, Սուրբ Յարութեան Տաճարէն ներս պիտի մատուցուի դռնփակ, միայն Սուրբ Յարութեան տեսչի, փոխ-տեսչի, ժամարարի եւ ծառայող միաբաններու մասնակցութեամբ՝ Status Quo-ով սահմանուած ժամուն՝ առաւօտեան 09:30-ին:

Նոյն օրը, վանքաբնակ ժողովուրդին եւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան համար Դատաւորաց Կիրակիի Սուրբ եւ Անմահ Պատարագ պիտի մատուցուի Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ:

Սկիզբ Սուրբ Պատարագի՝ ժամը 09:00-ին:

20 Մարտ, 2026

ԳԻԻԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻ, ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԳԵՐՁՄԱՆԻ
ՓԱԿՄԱՆ ԵՒ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ ՄԱՏՈՒՅՈՒՈՂ ՍՈՒՐԲ
ՊԱՏԱՐԱԳՆԵՐՈՒ, ԹԱՓՕՐՆԵՐՈՒ ԵՒ ԱՅԼ ՍՐԲԱԶԱՆ
ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանը այսու կը տեղեկացնէ մերազն հաւատացեալ ժողովուրդին, թէ վերջին օրերուն համացանցին մէջ տարածուած տեղեկութիւնները՝ Սուրբ Յարութեան Տաճարի, Քրիստոսի Սուրբ Գերեզմանի փակման, ինչպէս նաեւ Տաճարին մէջ մատուցուող Սուրբ Պատարագներու, թափօրներու եւ այլ սրբազան արարողութիւններու վերաբերեալ, կեղծ լուրեր են:

Ներկայ պատերազմական իրավիճակի սկիզբէն մինչ օրս, Սուրբ Յարութեան Տաճարի հաստատուած *Status Quo*-ի թելադրութեամբ Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանին վերապահուած բոլոր արարողութիւնները կատարուած են եւ կը շարունակուին առանց ընդհատման: Բացառութիւն կը կազմեն Մեծ Պահոց շրջանին յատուկ որոշ արարողութիւններ, որոնք կը կատարուին դռնփակ՝ անվտանգութեան նկատառումներով, փոքրաթիւ միաբաններու մասնակցութեամբ:

Անվտանգութեան պահպանման ներկայ իրավիճակին տեսողութիւնը տակաւին անորոշ է, եւ առայժմ անկարելի է ճշդել Աւագ Շաբթուայ եւ Զատիկական տօներու արարողութիւններու վերջնական ժամանակացոյցը:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանը մշտապէս հաղորդակցութեան մէջ է Սուրբ Յարութեան Տաճարի միւս երկու իրաւատէրերուն, ինչպէս նաեւ համապատասխան պետական մարմիններուն հետ: Երբ Աւագ Շաբթուայ եւ Զատիկական տօներու արարողութիւններու ժամանակացոյցին վերաբերեալ վերջնական որոշումներ առնուին, Պատրիարքարանը կը ծանուցէ մերազն հաւատացեալներուն եւ աշխարհասփիւռ մեր ժողովուրդին:

Այս դժուարին պայմաններու մէջ, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը կ'աղօթէ Սուրբ Երիրի խաղաղութեան եւ անդորրութեան վերահաստատման համար:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանը քրիստոնէական ամենահին ներկայութիւն է Սուրբ Երկրին մէջ եւ պիտի շարունակէ հաւատարմօրէն իր սրբազան առաքելութիւնը, որ անխափան կը շարունակուի IV դարէն մինչեւ մեր օրերը:

22 Մարտ, 2026

ԳԻՒԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՒՈՅ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԳԱԼՍՏԵԱՆ ԿԻՐԱԿԻՒ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԸ ՆՈՐ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ
ՉՄԱՏՈՒՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սուրբ Երկրին մէջ տիրող պատերազմական իրավիճակին եւ ատոր հետեւանքով սահմանուած սահմանափակումներուն, ինչպէս նաեւ Նոր քաղաքի Սուրբ Գրիգոր Լու-

սաւորիչ եկեղեցւոյ յարակից ճանապարհաշինական աշխատանքներուն պատճառով, Մեծ Պահոց Վեցերորդ՝ Գալստեան Կիրակիին առիթով մատուցուելիք Սուրբ Եւ Անմահ Պատարագը, 29 Մարտ, 2026-ին, փոխանակ Նոր քաղաքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ պիտի մատուցուի Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ:

Սկիզբ Սուրբ Պատարագի՝ ժամը 09:00-ին:

25 Մարտ, 2026

ԴԻԻԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՒՈՅ



**ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ
ԱՅԼԵՒԱՅԼՔ**

ՏԱՐԵՄՈՒՏ 2026 ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Ինչպէս ամէն տարի, 2026-ին եւս Տարեմուտի կէս-գիշերային զանգակահարութեան աւանդութիւնը տեղի ունեցաւ վանքի Մեծ բակին մէջ, սակաւաթիւ Սաղիմահայերու մասնակցութեամբ:

Ճիշդ կէս-գիշերին Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի մեծ զանգերու զանգիւնով ազդարարուեցաւ Նոր Տարուան սկիզբը:

Յաջորդ օրը առաւօտուն, 14 Յունուար, 2026-ին, Հին տոմարով Նոր Տարիին, ժամը 8-ին, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Առաւօտեան ժամերգութիւն եւ մատուցուեցաւ Սուրբ եւ Անմահ Պատարագ: Պատարագեց եւ քարոզեց՝ Հոգեշնորհ Տ. Սերովբէ Աբեղայ Անտոնեան:

Պատարագէն յետոյ նախագահութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր՝ Միաբանութիւնը, Ժառանգաւոր սաները եւ Սաղիմահայ ժողովուրդը Սուրբ Աթոռոյս օրհներգի երգեցողութեամբ, թափօրով բարձրացան Պատրիարքարան, ուր նախ Սրբոց Թարգմանչաց սաներէն փոքրիկն Վանա Տէմիրճեան յանուն վարժարանի աշակերտութեան եւ տեսչութեան հաճելի Ամանորի ուղերձ մը ընթերցեց՝ ուղղուած Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր եւ Միաբանութեան:

«Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայր, Գերաշնորհ եւ Հոգեշնորհ Հայրեր, Արժանապատիւ Տէր Հայրեր, յարգելի ուսուցիչներ, Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի սաներ, յարգելի ուսուցիչներ, հիւրեր եւ ներկաներ:

Մեծ պատիւ եւ ուրախութիւն է ինծի համար՝ մեր վարժարանին անունէն Ձեզ փոխանցել Ամանորի եւ Սուրբ Ծննդեան օրհնաբեր եւ սրտագին շնորհաւորանքները:

Այսօր հոս հաւաքուած միասին կը դիմաւորենք եւ կը տօնենք այս գեղեցիկ տօները, որոնք մեր կեանքին մէջ իրենց առանձնայատուկ նշանակութիւնը ունին: Ամանորը տօն մըն է, նոր սկիզբ մը բոլորիդ համար, եւ ան մեզ կը յիշեցնէ, որ Աստուած իւրաքանչիւր օր մեզի կը վստահի նոր հնարաւորութիւն մը՝ բարին գործելու, սխալներէն դաս առնելու եւ մեր կեանքը լոյսով ու ճշմարտութեամբ լեցնելու համար:

Սուրբ Ծնունդը լոյսի եւ սիրոյ սուրբ տօն է, որ մեր կեանքերը կը լեցնէ խաղաղութեամբ եւ հոգեւոր ջերմութեամբ: Այս օրհնուած օրերուն մենք կը յիշենք մանուկ Յիսուս Քրիստոսի ծնունդը եւ անոր բերած փրկութեան ու սիրոյ պատգամը, որ դարեր շարունակ կը լուսաւորէ մարդկութեան ճամբան: Սուրբ Ծնունդը մեզ կը հրաւիրէ մաքուր սրտով նայելու մեր շրջապատին, միմեանց հանդէպ աւելի զթաւրտ ըլլալու եւ մեր կեանքը ապրելու ոչ միայն խօսքով, այլ նաեւ գործով:

Մեր վարժարանին համար Հայոց Պատրիարքարանը առանձնայատուկ, խորիմաստ եւ անփոխարինելի նշանակութիւն մը ունի: Ան մեր հաւատքի կենդանի սիւնն է, մեր պատմութեան պահապանը եւ մեր ազգային ինքնութեան ամուր հիմքը: Պատրիարքարանը մեզի համար միայն հաստատութիւն մը չէ, այլ տուն մը, ուր մեր ժողո-

վուրդի հոգին կը շարունակէ ապրել եւ ուժ առնել: Ան մեզ կը յիշեցնէ մեր արմատները, մեր նահատակները եւ այն արժէքները, որոնց շնորհիւ մեր ժողովուրդը միշտ կանգուն մնացած է:

Պատրիարք Սրբազան Հայր,

Մեր դպրոցական կեանքին մէջ մենք կը սորվինք, որ կրթութիւնը միայն դասագիրքերու եւ քննութիւններու մասին չէ: Կրթութիւնը նաեւ հաւատք է, ծառայութիւն է եւ պատասխանատուութիւն: Մեր ուսուցիչները մեզի կը սորվեցնեն սիրել ճշմարտութիւնը, յարգել միմեանց եւ հաւատարիմ մնալ մեր հայկական եւ քրիստոնէական արժէքներուն: Այս բոլորին մէջ Հայոց Պատրիարքարանին հոգեւոր ներկայութիւնը մեզի համար անփոխարինելի ուղեցոյց մըն է:

Որպէս աշակերտներ, թէեւ փոքր ենք տարիքով, բայց մեր սրտերուն մէջ մեծ երազներ կը պահենք ապագային համար: Մենք կը հասկնանք, որ մեր ժողովուրդի վաղւան կեանքը կախուած է այսօր մեր ստացած դաստիարակութենէն: Ձեր հոգեւոր առաջնորդութիւնը եւ հայրական խնամքը մեզ կը ներշնչեն վստահութիւն, կը քաջալերեն լաւ սորվելու, աշխատասէր ըլլալու եւ ապագային ծառայելու մեր եկեղեցւոյ, մեր դպրոցին եւ մեր համայնքին:

Այս ուրախ առիթով կ'ուզենք մեր շնորհաւորանքներն ու խորին երախտագիտութիւնը ուղղել Ձեզ եւ բոլոր անոնց, որոնք իրենց նուիրումով եւ հաւատարմութեամբ կը ծառայեն Հայոց Պատրիարքարանին: Թող Աստուած պահպանէ մեր Զինուորեալ միաբանութիւնը, օրհնէ հոգեւորականները, բոլոր պատասխանատուները, ուսուցիչները, աշխատակիցները եւ բոլոր ծառայողները, որոնք իրենց ժամանակը, ուժը եւ սիրտը կը նուիրեն մեր եկեղեցական եւ ազգային կեանքի պահպանման ու զօրացման: Անոնց ծառայութիւնը մեզի համար օրինակ մըն է համբերութեան, նուիրումի եւ անշահախնդիր սիրոյ:

Մենք կը շնորհաւորենք Պատրիարքարանի ամբողջ ընտանիքը եւ կը մաղթենք, որ Աստուած նոր ուժ եւ եռանդ պարգեւէ բոլոր անոնց, որոնք իրենց ծառայութիւնը կը շարունակեն ի շինութիւն Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի եւ Սաղիմահայ գաղութին:

Պատրիարք Հայր, Ձեզ կը մաղթենք առողջութիւն, խաղաղութիւն եւ երկար կեանք: Թող Նոր Տարին լեցուն ըլլայ օրհնութիւններով, յոյսով եւ հոգեւոր պտուղներով՝ Ձեզի, Պատրիարքարանին, ծառայող բոլոր անձերուն եւ մեր ամբողջ ժողովուրդին համար:

Շնորհաւոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ:

Ձեզի եւ մեզի մեծ աւետիս:

Խորին յարգանօք եւ սրտաբուխ շնորհաւորանքներով՝ Սրբոց Թարգմանչաց վարժարանի աշակերտութիւն»:

Ապա բոլոր ներկաները մօտեցան Սրբազան Պատրիարքին աջը համբուրելու եւ ստացան մէկական նարինջ:

Տարեմուտի Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցուեցաւ նաեւ Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, պատարագեց եւ քարոզեց Սուրբ Հրեշտակապետաց Վանքի տեսուչ՝ Հոգեշնորհ Տ. Ղեւոնդ Ծայրագոյն Վարդապետ Յովհաննիսեան:

«ՀՐԱՇԱԳՈՐԾ ՄԱՅՐ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ» ՍՐԲԱՊԱՏԿԵՐԻ ՔՕՂԱԶԵՐԾՈՒՄ ԱՍՈՐԻՈՅ ՍՈՒՐԲ ՄԱՐԿՈՍ ՎԱՆՔԷՆ ՆԵՐՍ

11 Յունուար, 2026-ին, Երուսաղէմի Ասորոց Սուրբ Մարկոս առաջնորդանիստ վանքին մէջ տեղի ունեցաւ «Հրաշագործ Մայր Աստուածածնի» սրբապատկերի հանդիսաւոր քօղազերծման արարողութիւնը:

Սրբապատկերի վերականգնողական աշխատանքները, որոնք տեւեցան երկու տարի, իրականացուած են Մեքսիքոյէն ժամանած մասնագիտական խումբին կողմէ՝ «Maria Vision» հիմնադրամի նախաձեռնութեամբ եւ լիակատար նիւթական հովանաւորութեամբ:

Հանդիսաւոր արարողութեան ներկայ էին տարբեր եկեղեցիներու առաջնորդներ եւ ներկայացուցիչներ, հոգեւորականներ, ինչպէս նաեւ դիւանագիտական շրջանակներու ներկայացուցիչներ:

Երուսաղէմի Հայ Պատրիարքութիւնը ներկայացուց Աւագ Թարգման՝ Հոգեշնորհ Տ. Արշակ Աբեղայ Ղազարեան:

Քօղազերծման արարողութենէն ետք, վանքի շրջափակին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն, որ զուգորդուած էր ասորական սկաուտական խումբի երաժշտական կատարումներով:

ԻՍՐԱՅԷԼԻ ՌԱՄԼԷ ՔԱՂԱՔԻ ՀԱՅՈՅ ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՅԻ ԱՌԱՋՆՈՐԳՈՂ ՓՈՂՈՅԸ ԱՆՈՒԱՆԱԿՈՂՈՒԵՅԱԻ «ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՅԻ»

12 Յունուար, 2026-ին, Իսրայէլի Ռամլէ քաղաքին մէջ տեղի ունեցաւ Հայոց Սուրբ Գէորգ Եկեղեցի առաջնորդող փողոցի հանդիսաւոր եւ պաշտօնական անունակոչութիւնը եւ ցուցանակի քօղազերծումը: Փողոցը անուանակոչուեցաւ «Հայ Եկեղեցի»:

Միջոցառումը կազմակերպուած էր Ռամլէի քաղաքապետարանին կողմէ՝ ներկայութեամբ քաղաքապետ Տիար Միքայէլ Վիտալի եւ աւագանիի անդամ՝ Տիար Մուսա Սապայի:

Անուանակոչութեան արարողութեան ներկայ գտնուեցաւ Գերաշնորհ Տ. Կորին Եպիսկոպոս Բաղդասարեան՝ ընկերակցութեամբ Ռամլէի Հայոց Սուրբ Գէորգ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժանապատիւ Տ. Սուրէն Քահանայ Ղազարեանի: Ներկայ էին նաեւ տարբեր եկեղեցիներու ներկայացուցիչներ եւ Հայ համայնքի անդամներ:

ՈՒՐԱՐԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ

16 Յունուար, 2026-ին, յետ երեկոյեան ժամերգութեան, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան Ուրար կրելու իրաւունք շնորհեց Ա. Ընծայարանի ուսանողներ՝ Արա Յակոբեանի, Սամուէլ Սուքիասեանի, Նարեկ Մկրտչեանի, Հայկ Թեւոսեանի եւ Մարտին

Բարոյեանի:

Թող Աստուած անխախտ պահէ անոնց ուխտը, որպէսզի Իր այգիին նուիրուին նոր եւ եռանդուն մշակներ:

ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԸ ԲԵԹՂԵՀԷՄԻ ՄԷՋ

18 Յունուար, 2026-ին, Հայոց Սուրբ Ծնունդի առաւօտեան ժամը 9:30-ին, Երուսաղէմի Հին քաղաքի ոստիկանապետ՝ Տիար Դվիր Թամիմ իր ոստիկաններով, Իսրայէլի ոստիկանապետ՝ Տիար Աւշալոմ Պէլետ, Իսրայէլի Արտաքին գործոց նախարարութեան քրիստոնեաներու բաժնի վարիչ՝ Տամի Պէն Խայիմ, Իսրայէլի Ներքին գործոց նախարարութեան քրիստոնեայ համայնքներու բաժնի վարիչ՝ Տիար Սեզար Մարճիէ այցելեցին Պատրիարքարան, նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի Սուրբ Ծնունդը շնորհաւորելու: Այդ առթիւ նորին Ամենապատուութեան հետ ունեցան նաեւ պաշտօնական նախաճաշ:

Ժամը 9:45-ին, Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան Սրբազան Հօր գլխաւորութեամբ Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը ինքնաշարժերու շարանով ճամբայ ելաւ դէպի Բեթղեհէմ: Ճամբու կիսուն Յունաց Սուրբ Եղիա վանքին առջեւ Լուսարարապետ Սրբազան Հօրը դիմաւորելու եկած էին Պէյթ Ճալայի, Պէյթ Սահուրի քաղաքապետները, եւ Պաղեստինեան իշխանութեան ներկայացուցիչներ: Հիւրասիրութենէ ետք Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորած ինքնաշարժերու թափօրը Ռաքէլի գերեզման առաջնորդող դուռէն անցնելով՝ առաջնորդուեցաւ դէպի Բեթղեհէմ:

Քաղաքի մուտքին, ինքնաշարժերէն դուրս ելլելով, Լուսարարապետ Սրբազան Հայրը եւ Միաբանութեան անդամները քալելով յառաջացան մինչեւ հրապարակ: Բարի գալուստի համար Բեթղեհէմի հրապարակին վրայ Լուսարարապետ Սրբազան Հօր եւ Միաբանութեան դիմաւորելու եկած էին Բեթղեհէմի քաղաքապետ՝ Տիար Մահեր Կանաւատի, նահանգապետը եւ բարձրաստիճան զինուորականներ: Թափօրը կ'առաջնորդէին նախ օտար յարանուանութեանց, ապա Հ.Յ.Միութեան եւ Հ.Մ.Ը.Միութեան սկառուտական խումբերը, որ տողանցքէն ետք թափօրի երկու կողմէն պատուի կեցան, իսկ Միաբանութիւնը «Խորհուրդ Մեծ» շարականի երգեցողութեամբ, եւ Տաճարին զանգերու ղօղանջին ներքոյ բարձրացաւ Ծննդեան Տաճարի Հայկական վանքը, ուր Լուսարարապետ Սրբազան շնորհաւորեց եւ շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկաներուն: Ապա բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ Բեթղեհէմի քաղաքապետ՝ Տիար Մահեր Կանաւատի:

Ժամը 2-ին, Լուսարարապետ Սրբազան Հօր հանդիսապետութեամբ Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Սուրբ Ծննդեան Տաճար եւ Սուրբ Այր, որմէ յետոյ կատարուեցան ճաշու ժամերգութիւններ, ապա Երեկոյեան ժամերգութիւն:

Ճրագալոյցի Սուրբ Պատարագը Սուրբ Այրին մէջ մատուցեց եւ «Հայր Մեր»էն առաջ քարոզեց Ամերիկայէն ուխտաւորաբար Սուրբ Աթոռ ժամանած՝ Ամերիկայի Հայոց Արեւելեան թեմի առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Մեսրոպ Եպիսկոպոս Պարսամեան: Ապա՝ Միաբանութիւնը պատարագիչ Սրբազան Հօր հանդիսապետութեամբ թափօրով

եւ «Խորհուրդ Մեծ» շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Հայոց Վանք, բակին մէջ կարդացուեցաւ Սուրբ Ծննդեան Աւետարանը եւ երգուեցաւ «Փառք ի բարձունս»:

Սրբազան արարողութիւններէն յետոյ, երեկոյեան ժամը 7-ին, Սուրբ Ծննդեան տօնին առիթով «Քաղա Նովա» պանդոկին մէջ Պատրիարքութեանս կողմէ տրուած հիւրասիրութեան ներկայ գտնուեցան Պաղեստինի քրիստոնեաներու հարցերով բարձրագոյն խորհուրդի նախագահ՝ Դոկտոր Ռամզի Խուրի, Բեթղէհէմի քաղաքապետ՝ Տիար Մահեր Կանաւատի, նահանգապետը, բարձրաստիճան գինուորականներ եւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամներ:

Նոյն գիշեր, ժամը 22:00-ին, սկսաւ Սուրբ Ծննդեան գիշերային արարողութիւնը: Միաբանութիւնը՝ հանդիսապետութեամբ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեանի՝ Հայոց Վանքէն իջաւ Սուրբ Ծննդեան Տաճար եւ Սուրբ Այր: Սրբավայրին երկրպագելէ ետք Հայոց բաժնին մէջ կատարուեցան Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւններ:

Գիշերուայ ժամը 12-ին (որ է Յունուար 19-ի առաւօտեան) Միաբանութիւնը հանդիսապետութեամբ Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի, իջաւ Սուրբ Ծննդեան Այր, ուր կարդացուեցաւ մեր Փրկչի Ծննդեան աւետիսը եւ երգուեցաւ «Փառք ի բարձունս» երգը, աւետելով Քրիստոսի խաղաղութեան եւ ի մարդիկ հաճութեան բարի լուրը: Սուրբ Այրին մէջ կատարուած արարողութեան ներկայ էին նաեւ Պաղեստինի քրիստոնեաներու հարցերով բարձրագոյն խորհուրդի նախագահ՝ Դոկտոր Ռամզի Խուրի եւ այլ պաշտօնեաներ, որոնք հանդիսապետ Լուսարարապետ Սրբազան Հօր Ծննդեան պատգամէն ետք իրենց շնորհաւորանքը յայտնելով՝ մեկնեցան:

Սուրբ Այրի արարողութենէն ետք, պաշտամունքները շարունակուեցան Տաճարին մէջ, ուր հանդիսապետութեամբ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեանի ընթերցուեցան չորս Աւետարաններ եւ կատարուեցաւ նախատօնակ: Ապա՝ ճաշու ժամերգութիւններէն ետք, Աւագ սեղանին վրայ պատարագեց եւ քարոզեց Ամերիկայէն ուխտաւորաբար Սուրբ Աթոռ ժամանած՝ Հոգեշնորհ Տ. Առէն Աբեղայ Ճէպէճեան:

Սուրբ Պատարագին յաջորդեց Զրօրհնեաց արարողութիւնը՝ հանդիսապետութեամբ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեանի եւ առընթերակայութեամբ Հոգեշնորհ Տ. Ներսէս Վարդապետ Ալոյեանի եւ Տ. Սերովբէ Աբեղայ Անտոնեանի: Զրօրհնէքի հոգեպարար արարողութենէ ետք քարոզեց հանդիսապետ՝ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեան, ապա նախագահեց Սուրբ Յովհաննէս Մկրտչի նախատօնակին:

Յետ նախատօնակի կատարուեցան ճաշու ժամերգութիւններ, ապա Սուրբ Ծննդեան Այրին մէջ պատարագեց հանդիսապետ՝ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեան:

Պաշտամունքներու աւարտին, առաւօտեան ժամը 6-ին, Միաբանութիւնը թափօրով եւ «Խորհուրդ մեծ» շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Հայոց Վանք, եւ տեսչարանին մէջ կարդացուեցաւ Սուրբ Ծննդեան Աւետարանը եւ երգուեցաւ «Փառք ի բարձունս», ապա Միաբանութիւնը վերադարձաւ Երուսաղէմ:

ՍՈՒՐԲ ԹԷՈՂՈՐՈՍ ՁԵՌԱԳՐԱՏԱՆ ՆՈՐ ՅԱՐԿԻՆ ԲԱՅՈՒՄ

23 Յունուար, 2026-ին, ժամը 17:00-ին, բացառիկ հանդիսաւորութեամբ եւ շուքով կատարուեցաւ պաշտօնական բացումը Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան Սուրբ Թէոդորոս Ձեռագրատան նոր յարկին: Բազմաթիւ հրաւիրեալներ խմբուած էին Ձեռագրատան բակը, ուր նախ խօսք առաւ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հայրը եւ գնահատանքով արտայայտուեցաւ Ձեռագրատան նոր յարկաբաժնի նորոգութեան բարերաներ՝ Տիար Ճերալտ Տէմիրճեանի, Զարլզ Տէմիրճեանի եւ Ռիչըրտ Տէմիրճեանի եւ Տէմիրճեան ընտանիքի մասին, որոնց նուիրատուութեամբ կարելի դարձաւ Սուրբ Թէոդորոս Ձեռագրատան նորոգութիւնը, յարդարումը եւ վերագարդարումը:

Տէմիրճեան ընտանիքին կողմէ խօսք առաւ բարերաններէն Տիար Զարլզ Տէմիրճեան, ապա Նորին Ամենապատուութեան հետ միասին կտրեցին կարմիր ժապաւէնը՝ պաշտօնապէս բանալով Սուրբ Թէոդորոս Ձեռագրատունը:

Սուրբ Թէոդորոս Ձեռագրատունը 4000 հայերէն ձեռագիր մատեաններու իր հաւաքածոյով Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանէն յետոյ թուով երկրորդ է:

Սուրբ Թէոդորոս Ձեռագրատան տեսուչն է Հոգեշնորհ Տ. Արշակ Աբեղայ Ղազարեան:

ՏԱՐԵԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԳԷՊԻ ՅՈՐԴԱՆԱՆ ԳԵՏ

Շաբաթ, 25 Յունուար, 2026-ին, առաւօտեան ժամը 10:30-ին, Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ՝ միաբան հայրերու այցելեցին աշխարհի ամենահին քաղաք՝ Երիքով եւ հանդիպում ունեցան կառավարիչ՝ Մեծայարգ Տիար Յուսէին Համայէլին հետ:

Լուսարարապետ Սրբազան եւ հոգեւոր հայրերը դիմաւորուեցան Երիքովի կառավարութեան ողջ աշխատակիցներուն կողմէ եւ անոնց հետ ձեռնուելէ ետք ներս հրաւիրուեցան: Իր խօսքին մէջ Երիքովի կառավարիչը յայտնեց իր ուրախութիւնը Հայոց Պատրիարքութեան պատուիրակութեան այցին առիթով եւ շնորհաւորեց Հայոց Սուրբ Ծնունդը:

Ապա Լուսարարապետ Սրբազան Հայրը շնորհակալութիւն յայտնեց ջերմ ընդունելութեան ու հիւրասիրութեան համար, ապա յաջորդ տարի դարձեալ տեսնուելու յոյսով հրաժեշտ տուաւ կառավարիչին եւ պաշտօնեաներուն:

Հանդիպումէն յետոյ Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորած պատուիրակութեան միացան նաեւ ժառանգաւոր սաները եւ ուխտաւորները եւ ուղղուեցան դէպի Յորդանան գետ, ուր տեղի ունեցաւ տարեկան Զրօրհնեաց արարողութիւնը:

Յորդանանեան կողմէ գետափ եկած էին Յորդանանահայոց առաջնորդ եւ Պատրիարքական փոխանորդ՝ Հոգեշնորհ Տ. Աւետիս Ծ. Վարդապետ Իփրաճեան իր գաղութի հաւատացեալներու հետ միասին:

**ՍՈՒՐԲ ԵՐԿՐԻ ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐԸ, ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԵՐԸ ԵՒ
ԳԻՒԱՆԱԳԷՏՆԵՐԸ ՄԷԿՏԵՂՈՒԵՑԱՆ ՅՈՒՆԱՑ
ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻՆ ՄԷՋ**

6 Փետրուար, 2026-ին, Երուսաղէմի Յունաց Պատրիարքարանին մէջ տեղի ունեցաւ նշանակալից հանդիպում մը, որու ընթացքին Երուսաղէմի պատրիարքները, հոգեւոր պետերը, դեսպանները, գլխաւոր հիւպատոսները եւ դիւանագիտական առաքելութեանց ներկայացուցիչները հաւաքուած էին քննարկելու Սուրբ Երկրին մէջ գտնուող եկեղեցիներու եւ քրիստոնեաներու առջեւ ծառայած մարտահրաւէրները եւ գտնելու ուղիներ, որոնցմով դիւանագիտական կապերը կարող են նեցուկ ըլլալ քրիստոնեաներուն եւ պաշտպանել իրավիճակը Երուսաղէմի մէջ: Հոգեւոր պետերը նաեւ ընդգրծած են միջազգային համագործակցութեան կարեւորութիւնը տարածաշրջանին մէջ քրիստոնէական համայնքներու պատմական եւ քաղաքացիական դերի շարունակականութիւնն ապահովելու համար:

Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան կողմէ համագումարին ներկայ էին Դիւանապետ՝ Հոգեշնորհ Տ. Աղան Վարդապետ Գոգչեան:

**ՍՈՒՐԲ ԾՆՆԳԵԱՆ ՏԱՃԱՐԻ ԻՐԱՒԱՏԷՐԵՐԷՆ՝ ՀԱՅՈՑ
ՍՐԲՈՑ ՅԱԿՈՒԲԵԱՆՑ ԶԻՆՈՒՈՐԵԱԼ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ
ԱՅՅԵԼԵՑ ՍՈՒՐԲ ԾՆՆԳԵԱՆ ՔԱՐԱՅՐ՝ ՄՕՏԷՆ ՀԵՏԵՒԵԼՈՒ
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ**

Չորեքշաբթի, 25 Փետրուար, 2026-ին, Բեթղեհէմի Սուրբ Ծննդեան տաճարի իրաւատէր Հայոց Սրբոց Յակոբեանց Զինուորեալ միաբանութիւնը, գլխաւորութեամբ Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր, այցելեց Սուրբ Ծննդեան քարայր՝ մօտէն հետեւելու վերականգնման աշխատանքներու ընթացքին:

Այցը կը յաջորդէ Պաղեստինի նախագահ՝ Վսեմաշուք Տիար Մահմուտ Ապասի 2024 թուականի հրամանագրին, որով նախատեսուած էր Սուրբ Ծննդեան քարայրի վերականգնումը: Ծրագիրը մաս կը կազմէ Սուրբ Ծննդեան տաճարի 2013 թ.-ին սկսուած համապարփակ նորոգութեան:

Նախագահ Ապասի հրամանագիրը կը շեշտէ այս հոգեւոր, կրօնական եւ ազգային ժառանգութեան պահպանման անհրաժեշտութիւնը՝ միաժամանակ յստակ կերպով պաշտպանելով Սուրբ Ծննդեան տաճարի երեք իրաւատէր եկեղեցիներու՝ Յունաց, Հայոց եւ Լատիններու Status Quo-ի իրաւունքները:

Աշխատանքները կ'իրականացնէ իտալական Piacenti ընկերութիւնը՝ միջազգային գիտական բարձր չափանիշներով եւ Status Quo-ի լիակատար յարգումով: Վերականգնումը նպատակ ունի ապահովելու քարայրի անվտանգութիւնը, սրբութիւնը եւ երկարակեցութիւնը:

Աշխատանքներու աւարտը նախատեսուած է մինչեւ 2026 թուականի Օգոստոս:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Տնօրէն Ժողովի որոշումով եւ Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր տնօրինութեամբ կատարուած են նոր նշանակումներ:

Հոգեշնորհ Տ. Արշակ Աբեղայ Ղազարեան, ազատուելով Սուրբ Աթոռոյս Աւագ Թարգմանի պաշտօնէն, նշանակուած է Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Կուսարար եւ Գանձատան մարմնի անդամ:


Հոգեշնորհ Տ. Վազգէն Վարդապետ Ալէքեան նշանակուած է Սուրբ Աթոռոյս Աւագ Թարգման:

ՍՈՒՐԲ ԵՐԿՐԻ ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐԸ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԵՐԸ ՋԱՏԿԱԿԱՆ ՏՕՆԵՐՈՒՆ ԸՆԴԱՌԱՋ ՄԷԿՏԵՂՈՒԵՅԱՆ ՅՈՒՆԱՅ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻՆ ՄԷՋ

26 Մարտ, 2026-ին, Զատիկական տօներուն ընդառաջ, Երուսաղէմի Յունաց Պատրիարքարանին մէջ, նախագահութեամբ Յունաց Ամենապատիւ Տ. Թէոֆիլոս Գ. Պատրիարքի, մէկտեղուեցան Սուրբ Երկրի Պատրիարքները, հոգեւոր պետերը եւ ներկայացուցիչները՝ քննարկելու Զատիկական շնորհաւորանքներուն առնչուող եւ միասնական հաղորդագրութեան բովանդակային հարցերը:

Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցաւ Աւագ Թարգման՝ Հոգեշնորհ Տ. Վազգէն Վարդապետ Ալէքեան:

Պատրաստեց՝ ՆԵՐՍԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼՈՅԵԱՆ





ՍՈՒՐԲ ՅԱԿՈՒԲԻ ՆԵՐՍԷՆ ԵԿԵՂԵՅԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

Շաբաթ, 3 Յունուար.- Նախավկայ եւ ի Քրիստոս անդրանիկ հաւատացեալ թագաւորին մերոյ Սրբոյն Աբգարու: Ս. Պատարագը մարուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Սիոն Աբղ. Թաբուշեան

Կիրակի, 4 Յունուար.- Ե. Կիրակի Յիսնակի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Սուրէն Քհնյ Ղազարեան:

Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սրբազան Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Աւագ Տօներու առաջին հանդիսաւոր նախատօնակին:

Երկուշաբթի, 5 Յունուար.- Սրբոցն՝ Դաւթի Մարգարէին եւ Յակոբայ Տեառնեղբայր Առաքելոյն (Տօն Առաքելական Ս. Աթոռոյս Երուսաղէմի):

Առաւօտեան ժամերգութեան վերջաւորութեան Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան «Քրիստոս Աստուած մեր» մաղթանքի ընթացքին մասնաւոր բարեմաղթութիւններ ըրաւ Նորին Ամենապատուութեան բարօր կենաց համար:

Օրուան Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ մատուցեց եւ քարոզեց Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան: «Հայր Մեր»-էն առաջ Լուսարարապետ Սրբազան Հայրը նախագահեց Ս. Աթոռոյս հանգուցեալ Պատրիարքաց համար կատարուած հոգեհանգստեան պաշտօնին:

Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սրբազան Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Ս. Ստեփանոսի նախատօնակին: Տօնին բուրվառակիր հայրերն էին Տ. Աղան Վրդ. Գոգշեան եւ Տ. Արշակ Աբղ. Ղազարեան:

Երեքշաբթի, 6 Յունուար.- Սրբոյն Ստեփանոսի Նախասարկաւագին եւ Առաջին Մարտիրոսին: Առաւօտեան ժամերգութեան աւարտին Ս. Աթոռոյս երկու բարեշնորհ սարկաւագներ եւ հինգ ուրարակիրներ՝ առաջնորդութեամբ երկու բուրվառակիր հայրերու, մարգարտագարդ սաղաւարտներով եւ տապանակ ու բուրվառ ի ձեռին, պան-

ծացուցին յիշատակը իրենց մտատիպարին: Արարողութեան նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Ս. Պատարագը մատուցուեցաւ Աւանդատան մէջ գտնուող Ս. Ստեփանոսի սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Գէորգ Վրդ. Հայրապետեան:

Չորեքշաբթի, 7 Յունուար.- Կէսօրէ ետք, գլխաւոր Առաքելոց նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Հինգշաբթի, 8 Յունուար.- Սրբոց Առաքելոցն՝ Պետրոսի եւ Պօղոսի: Մայր Տաճարի Ս. Պետրոսի վերնամատրան մէջ Ս. Պատարագը մատուցեց Տ. Դետնդ Մ. Վրդ. Յովհաննիսեան:

Ուրբաթ, 9 Յունուար.- Երեկոյեան նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 10 Յունուար.- Տօն Սրբոց Որդւոցն Որոտման՝ Յակոբայ Առաքելոյն եւ Յովհաննու Աւետարանչին: Մայր Տաճարի Ս. Գլխադիր մատրան մէջ օրուան Ս. Պատարագը մատուցեց եւ քարոզեց Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան:

Պատարագէն ետք Լուսարարապետ Սրբազան Հայրը ամպհովանիի տակ Ս. Խաչափայտի մասունքն ի ձեռին, նախագահեց եռադարձ մեծահանդէս թափօրին: Ապա Միաբանութիւնը եւ ժողովուրդը թափօրով «Որ էնն յէութեան» շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան:

Կիրակի, 11 Յունուար.- Զ. Կիրակի Յիսնակի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Աղան Վրդ. Գոգշեան:

Երեքշաբթի, 14 Յունուար.- Կաղանդ: Տարեմուտ 2026 թուականին Քրիստոսի (Հստ Հին Տոմարի): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ քարոզեց Տ. Սերովբէ Աբղ. Անտոնեան: Ապա Միաբանութիւնը եւ ժողովուրդը բարձրա-

ցան Պատրիարքարան՝ երգելով Ս. Աթոռոյ Մաղթերգը: Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը շնորհատրեց բոլոր ներկաները Նոր Տարուան առիթով եւ ըստ սովորութեան, նարինջ բաժնեց ամենուն:

Նոյն առաւօտեան Ս. Պատարագ մատուցուեցաւ նաեւ ի Ս. Հրեշտակապետաց: Պատարագեց եւ քարոզեց Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան:

Շաբաթ, 18 Յունուար.- Ճրագալոյց Ծննդեան եւ Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Ժամը 09:45-ին, Լուսարարապետ՝ Ս. Սեւան Արք. Ղարիպեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը ինքնաշարժերու շարանով մը ճամբայ ելաւ դէպի Բեթղեհէմ:

Բեթղեհէմի հրապարակին վրայ Լուսարարապետ Սրբազան Հօր եւ Միաբանութեան դիմաւորելու եկած էին Բեթղեհէմի քաղաքապետ՝ Տիար Մահեր Կանաւատի, նահանգապետը եւ բարձրաստիճան գինուորականներ: Թափօրը, որուն երկու կողմէն Հ.Յ.Մ.-ի եւ Հ.Մ.Ը.Մ.-ի սկստական խումբերը պատուի կեցած էին՝ «Խորհուրդ Մեծ» շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Ծննդեան Տաճարի Հայոց Վանք:

Յետ միջօրէի ժամը 14:00-ին, Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ «Հրաշափառ»-ով մուտք կատարուեցաւ Սիւնազարդ Գաւթէն դէպի Ս. Ծննդեան Տաճարի Ս. Այրը: Ճրագալոյցի Ս. Պատարագը Ս. Այրին մէջ մատուց եւ քարոզեց Ամերիկայէն ուխտաւորաբար Ս. Աթոռ ժամանած՝ Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ՝ Տ. Մեսրոպ Եպս. Պարսամեան: Ապա Լուսարարապետ Սրբազանը նախագահեց Ծննդեան նախատօնակին, որմէ յետոյ Միաբանութիւնը զգեստաւորեալ, թափօրով եւ երգեցողութեամբ Սիւնազարդ գաւթէն անցնելով բարձրացաւ Հայոց Վանք: Բակին մէջ կարդացուեցաւ Ս. Ծննդեան Աւետարան եւ երգուեցաւ «Փառք ի բարձունս»:

Կիրակի, 19 Յունուար.- Տօն Ծննդեան եւ Աստուածայայտնութեան: Կէս գիշերէն առաջ ժամը 22:00-ին սկսուած գիշերային պաշտամունքէն յետոյ, Միաբանութիւնը իջաւ Ս. Ծննդեան Այր, ուր շարունակուեցաւ «Փառք ի բարձունս»-ի երգեցողութիւնը, որմէ յետոյ Լուսարարապետ Սրբազանը ներկաներուն եւ համայն հայութեանը փոխանցեց Սուրբ Աթոռոյս Գահակալի Ծննդեան պատգամը: Արարողութեաց ներկայ Պաղեստինեան կառավարութեան ներկայացուցիչները շնորհավորելով Լուսարարապետ Սրբազան Հայրը՝ մեկնեցան, որմէ յետոյ պաշտամունքները շարունակուեցան Տաճարին մէջ, ուր կատարուած նախատօնակին

հանդիսապետեց Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան:

Երկրորդ Ս. Պատարագը Աւագ Սեղանին վերայ մատուց Ամերիկայէն ուխտաւորաբար Ս. Աթոռ ժամանած՝ Տ. Առէն Աբղ. Ճէպէճեան: Յաւարտ Ս. Պատարագի կատարուած «Ջրօրհնէք»-ի արարողութեան եւ Յովհաննու Կարապետի նախատօնակին հանդիսապետեց եւ քարոզեց՝ Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան, ով նաեւ Ս. Ծննդեան Այրին մէջ երրորդ Ս. Պատարագը մատուց:

Յաւարտ Ս. Պատարագի Միաբանութիւնը շուրջառնելով եւ շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Հայոց Վանքի տեսչարան, ուր կարդացուեցաւ Ս. Ծննդեան Աւետարան եւ երգուեցաւ «Փառք ի բարձունս»: Պաշտամունքներու աւարտին՝ առաւօտեան ժամը 6:30-ին, Միաբանութիւնը վերադարձաւ Երուսաղէմ:

Երուսաղէմի մէջ Ճրագալոյցի արարողութիւն կատարուեցաւ Ս. Յարութեան Տաճարին մէջ: Ս. Գերեզմանին վրայ պատարագեց Տ. Տիրան Վրդ. Յակոբեան, ապա Ս. Գերեզմանին առջեւ կատարուեցաւ «Ջրօրհնէք»:

Առաւօտեան Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ քարոզեց, ապա «Ջրօրհնէք»-ի արարողութեան հանդիսապետեց Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան:

Երկուշաբթի, 20 Յունուար.- Բ. օր Ծննդեան: Յիշատակ Մեռելոյց: Մայր Տաճարի Աւագ խորանին վրայ պատարագեց Տ. Արշակ Աբղ. Ղազարեան: Հոգեհանգստեան կարգին նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 24 Յունուար.- Զ. օր Ծննդեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Զախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Պատարագեց Տ. Խաղ Ծ. Վրդ. Ճունտուրեան:

Կէսօրին Լուսարարապետ Սրբազան Հօր նախագահութեամբ՝ միաբան հայրեր, սարկաւազներ, ժառանգաւոր սաներ եւ հաւատացեալ հայորդիներ ինքնաշարժերով մեկնեցան Յորդանան գետ, ուր կատարուեցաւ «Ջրօրհնէք» արարողութիւն:

Երկուշաբթի, 25 Յունուար.- Է. օր Ծննդեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Գէորգ Վրդ. Հայրապետեան:

Երեկոյեան նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Երկուշաբթի, 26 Յունուար.- Տօն Անուանակողութեան Տեառն: Առաւօտեան ժամերգութիւնը

պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա միաբան հայրեր Տ. Մեսրոպ Եպս. Պարսամեան Սրբազան Հօր գլխաւորութեամբ «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Յարութեան Տաճար: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցելու քարոզեց հանդիսապետ Սրբազան Հայրը:

Դէպի վանք դարձին, Հայոց Թաղի մուտքէն Միաբանութիւնը «Լոյս ի Լուսոյ» շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Պատրիարքարան, ուր Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ կատարուեցաւ «Տնօրհնէք»-ի արարողութիւն, ապա տեղի ունեցաւ Միաբանական ճաշ՝ աւանդական «հարիսայով»:

Կէսօրէ ետք նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան:

Երեքշաբթի, 27 Յունուար.- Տօն Մննդեան Սրբոյն Յովհաննու Կարապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Խորանին վրայ: Պատարագեց Տ. Ներսէճ Վրդ. Ալոյեան:

Նոյն օրը, ժամը 17:00-ին, Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ էքիմենիք աղօթք՝ վասն Քրիստոնէական միութեան եւ խաղաղութեան: Աղօթքին իրենց մասնակցութիւնը բերած էին Սուրբ Երկրի տարբեր քրիստոնէայ յարանուանութեանց եկեղեցականները: Հայ եկեղեցւոյ կողմէ քարոզեց Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Շաբաթ, 31 Յունուար.- Սրբոյն Անտոնի Ճրգնաւորին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գրլխաղիր: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան:

Կիրակի, 1 Փետրուար.- Ա. Կիրակի գկնի Ծընընդեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Զախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածանի խորանին վրայ: Պատարագեց Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Շաբաթ, 7 Փետրուար.- Ս. Սարգսի Զօրավարին եւ որդւոյ նորա Մարտիրոսին եւ չորեքտասան գինաւորացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Մինասի մատրան մէջ՝ Ս. Սարգսի խորանին վրայ: Պատարագեց եւ քարոզեց Հայաստանէն՝ Արարատեան թեմի քահանաներէն Տ. Ղուկաս Քհնյ. Պալայեան: Ըստ սովորութեան կատարուեցաւ Հոգեհոգնապետեան պաշտօն Ս. Աթոռոյս մեծանուն բարերար, հանգուցեալ Գալուստ Կիւպէնկեանի հօր՝ Սարգիս Կիւպէնկեանի հոգւոյ համար:

Կիրակի, 8 Փետրուար.- Բ. Կիրակի գկնի Ծընընդեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յա-

րութիւն մեր վերնամատրան մէջ: Պատարագեց Տ. Գէորգ Վրդ. Հայրապետեան:

Շաբաթ, 14 Փետրուար.- Սրբոյն Իսահակայ Պարթեւի Հայրապետին մերոյ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Խաղ Ծ. Վրդ. Ճունտուրեան:

Կիրակի, 15 Փետրուար.- Գ. Կիրակի գկնի Ծընընդեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Խորանին վրայ: Պատարագեց Տ. Արշակ Աբղ. Ղազարեան:

Հինգշաբթի, 19 Փետրուար.- Ս. Վարդանանց Զօրավարացն մերոյ՝ հազար երեսուն եւ վեց վկայիցն: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ, ըստ սովորութեան, պատարագեց եւ քարոզեց ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի տեսուչ՝ Տ. Գէորգ Վրդ. Հայրապետեան:

«Հայր մեր»-էն առաջ Լուսարարապետ Սրբազան Հայրը նախագահեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի անուան տօնին առթիւ կատարուած «Հայրապետական Մաղթանք»-ին:

Ուրբաթ, 20 Փետրուար.- Առաւօտեան միաբան հայրեր մեկնեցան Ասորոց վանք: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Մարկոս Աւետարանիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազան Հայրը: Պատարագեց Տ. Սերովբէ Աբղ. Անտոնեան, իսկ «Հայր մեր»-էն առաջ քարոզեց Տ. Գէորգ Վրդ. Հայրապետեան:

Շաբաթ, 21 Փետրուար.- Կ. Պոլսոյ Ս. Ժողովոյն հարիւր յիսուն հայրապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Պատարագեց Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան:

Կէսօրէ ետք, Մայր Տաճարի Աւագ խորանը, սեղանները եւ գլխաւոր սրբապատկերները, «Համբարձի» շարականը երգուած ժամանակ վարագուրուեցան Պատրիարք Սրբազան Հօր, Գերաշնորհ, Հոգեշնորհ եւ Արժանապատիւ Հայրերու ձեռքով:

Կիրակի, 22 Փետրուար.- Ա. Քառասնորդաց: Բուն Բարեկենդան: Փակեալ Խորանի Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցելու քարոզեց Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան: Դպրապետի պաշտօնը վարեց Տ. Գէորգ Վրդ. Հայրապետեան:

Հինգշաբթի, 26 Փետրուար.- Կէսօրէ ետք, Տեառնընդառաջի մեծահանդէս նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, որմէ ետք կատարուեցաւ «Անդաստան» եւ մոմավառութիւն, նախագահութեամբ՝ Լուսարարապետ Սրբազան Հօր:

Գիշերասկզբին Մայր Տաճարին մէջ կատար-

ւեցաւ «Եկեցե՛ք»-ի հսկման կարգը: Հանդիսապետն էր Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան:

Ուրբաթ, 27 Փետրուար.- Տեառնընդառաջ: Տօն Քառասնօրեայ Գալստեանն Քրիստոսի ի Տաճարն: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց եւ քարոզեց Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան:

Նոյն օրը երեկոյեան, նախատօնակին ի Ս. Թորոս նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 28 Փետրուար.- Սրբոյն Թէոդորոսի Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Թորոս: Ժամարարն էր Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Սուրբ Երկրին մէջ տիրող պատերազմական իրավիճակին եւ ատոր հետեւանքով սահմանուած սահմանափակումներուն պատճառով՝ Մեծ Պահոց երկրորդ՝ Արտաքսման Կիրակիին յատուկ «Հրաշափառ»-ը Սուրբ Յարութեան Տաճարէն ներս չկատարուեցաւ:

Կիրակի, 1 Մարտ.- Բ. Քառասնորդաց. Արտաքսման: Պատերազմին պատճառով Ս. Պատարագ չմատուցուեցաւ:

Շաբաթ, 7 Մարտ.- Սրբոցն՝ Կիւրղի Երուսաղիմայ հայրապետին եւ միւս Կիւրղի Եպիսկոպոսին եւ մօրն նորա՝ Աննայի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան մէջ գտնուող Ս. Կիւրղի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Սիոն Աբղ. Թաքուչեան: Ս. Պատարագէն ետք, կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ, վասն հոգւոցն Սուլթանի, Կարինէի, եւ ծնողացն՝ Կարապետի եւ Մարիի եւ Կիւրեղեան գերդաստանի հոգիներուն ի հանգիստ, հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր:

Կիրակի, 8 Մարտ.- Գ. Քառասնորդաց. Անառակին: Ժամերգութիւններն ու Ս. Պատարագը մատուցուեցան Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Տ. Ներսէ՛՛ Վրդ. Ալոյեան: «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Տիրան Վրդ. Յակոբեան:

Շաբաթ, 14 Մարտ.- Սրբոցն Յովհաննու Երուսաղէմայ Հայրապետին եւ Հայրապետին մերոյ՝ Յովհաննու Օձնեցւոյն եւ վարդապետացն մերոց Յովհաննու Որոտնեցւոյն եւ Գրիգորի Տաթեւացւոյն: Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Խաղ Մ. Վրդ. Ժունտուրեան:

Կիրակի, 15 Մարտ.- Գ. Կիրակի Քառասնորդաց, Տնտեսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Զախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի սեղանին վրայ: Պատարագեց Տ. Արշակ Աբղ. Ղազարեան: «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Շաբաթ, 21 Մարտ.- Սրբոց Մանկանցն Քառասնից, որք ի Սեբաստիա կատարեցան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Վերաբերումը կատարուեցաւ Քառասուն Մանկանց նկարին առջեւ շտկուած Սեղանին վրայէն, որուն դիմացը կաթնայի մէջ կը պլպլային քառասուն գոյնզգոյն կանթեղներ, աւանդական սառցապատ լիճը խորհրդանշող: Ժամարարն էր Տ. Սերովբէ Աբղ. Անտոնեան:

Սուրբ Երկրին մէջ տիրող պատերազմական իրավիճակին եւ ատոր հետեւանքով սահմանուած սահմանափակումներուն պատճառով՝ Մեծ Պահոց հինգերորդ՝ Դատաւորաց Կիրակիին յատուկ «Հրաշափառ»-ը Սուրբ Յարութեան Տաճարէն ներս չկատարուեցաւ:

Կիրակի, 22 Մարտ.- Ե. Քառասնորդաց: Դատաւորին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Սուրէն Քհնյ Ղազարեան:

Ուրբաթ, 27 Մարտ.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Սեւան Աբք. Ղարիպեան:

Շաբաթ, 28 Մարտ.- Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Յիշատակ Զարչարանաց եւ Մտանելոյն ի Վիրապն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Մ. Վրդ. Յովհաննիսեան:

Կիրակի, 29 Մարտ.- Զ. Կիրակի Քառասնորդաց: Գալստեան: Սուրբ Երկրին մէջ տիրող պատերազմական իրավիճակին եւ ատոր հետեւանքով սահմանուած սահմանափակումներուն, ինչպէս նաեւ Նոր քաղաքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ յարակից ճանապարհաշինական աշխատանքներուն պատճառով, Մեծ Պահոց վեցերորդ՝ Գալստեան Կիրակիի Ս. Պատարագը փոխանակ Նոր քաղաքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի խորանին վրայ: «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Ներսէ՛՛ Վրդ. Ալոյեան:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ



Ուրբաթ, 2 Յունուար.- Հայաստանէն Սուրբ Երկիր ժամանած Վահան Տէրեանի ծոռ, գրակա- նագէտ, Տէրեանագէտ Գէորգ Էմին-Տէրեանը ընտա- նեօք այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանու- կեան Պատրիարք Սրբազան Հօր հետ՝ ստանալով Նորին Ամենապատուութեան օրհնութիւնը:

Նոյն օրը երեկոյեան ժամը 18:30-ին Տիար Էմին-Տէրեան «Վահան Տէրեանի կեանքի ու ստեղ- ծագործութեան անյայտ էջերը» խորագիրով բա- նախօտութիւն մը տուաւ Պատրիարքութեանս Կիւ- պէնկեան Մատենադարանին մէջ:

Հանդիպմանը ներայ էր նաեւ Աւագ Թարգ- ման Տ. Արշակ Աբղ. Ղազարեան:

Շաբաթ, 3 Յունուար.- Միջազգային Կաթո- լիկ օրէնսդիրներու խումբը այցելեց Հայոց Վանք: Օրէնսդիրներուն Թարգմանատան մէջ ընդունեց Գերաշնորհ Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան Սուրբ Երկրի մէջ քրիստոնեաներու ունեցած դժ- ուարութիւններու եւ Արնոնայի վերաբերեալ հար- ցեր:

Ուրբաթ, 9 Յունուար.- Առաւօտեան ժամը 09:30-ին, Ամանորի եւ Սուրբ Ծննդեան տօներու առիթով Սրբոց Յակոբեանց միաբանութիւնը՝ զԸԼ- խաւորութեամբ Գերաշնորհ Տ. Կորիւն Եպս. Բաղ- դասարեանի, շնորհաւորութեան գնաց Յունաց Ամենապատիւ Տ. Թէոֆիլոս III Պատրիարքին եւ Միաբանութեան:

Նոյն օրը, երեկոյեան ժամը 16:00-ին, զլիսա- տրութեամբ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպս. Զաքա- րեանի, շնորհաւորութեան գնաց Սուրբ Երկրի մէջ Հայերու հետեւակ՝ Ասորի, Ղպտի եւ Հապէշ եկեղեցիներու եպիսկոպոսներուն եւ միաբանու- թեանց:

Երկուշաբթի, 12 Յունուար.- Ամանորի եւ Սուրբ Ծննդեան տօներուն առիթով Իսրայէլի նա- խագահ՝ Վսեմաշուք Տիար Իսահակ Հերցոկի կողմէ կազմակերպուած ընդունելութեան Երուսաղէմի

Հայ Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցաւ Գերաշնորհ Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան:

Չորեքշաբթի, 21 Յունուար.- Հայոց Սուրբ Ծննդեան տօնին առիթով ժամը 10:45-էն սկսեալ մինչեւ կէսօր, յաջորդաբար Պատրիարքարան Ամե- նապատիւ Պատրիարք Սրբազան Հօր եւ Սրբոց Յա- կոբեանց միաբանութեան շնորհաւորելու եկան Լատին Միաբանութիւնը եւ Կաթոլիկ, Բողոքական, Ասորի Ուղղափառ եկեղեցիներու հոգեւոր պետե- րը եւ ներկայացուցիչները:

Հինգշաբթի, 22 Յունուար.- Առաւօտեան ժա- մը 09:00-ին, Յունաց Ամենապատիւ Տ. Թէոֆիլոս III Պատրիարք Սրբազանն իր միաբաններով շնոր- հաւորական այցելութիւն տուաւ Հայոց Ամենա- պատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանին եւ Սրբոց Յակոբեանց միաբանութեան: Հայոց Վանքի մուտքին Յունաց Պատրիարքը դիմաւոր- ւեցաւ խունկով եւ վարդաշուրով, ապա առաջ- նորդուեցաւ Պատրիարքարան:

Ուրբաթ, 30 Յունուար.- Սուրբ Ծննդեան տօ- նին առիթով ի պատիւ Երուսաղէմի Ընդհանուր Հիւ- պատոսներու, դիւանագիտական ներկայացուցիչ- ներու եւ հոգեւոր առաջնորդներու Երուսաղէմի Հայ Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մա- նուկեան ընթրիք տուաւ Պատրիարքարանի մէջ:

Ուրբաթ, 6 Փետրուար.- Ռամլէի քաղաքա- պետ՝ մեծարգոյ տիար Միքայէլ Վիտալ քաղաքա- վարական այցելութիւն մը տուաւ Երուսաղէմի Հայ Պատրիարք Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մա- նուկեանին:

Հանդիպման ընթացքին Նորին Ամենապատ- ւութիւնը շնորհակալութիւն յայտնեց Տիար Վիտա- լին՝ Իսրայէլի Ռամլէ քաղաքի Հայոց Սուրբ Գէորգ Եկեղեցի առաջնորդող փոզոցը «Հայ Եկեղեցի» ան- ընակոչելուն համար:

Քննարկուեցան նաեւ Ռամլէ քաղաքը Հայաս- տանի որեւէ քաղաքին հետ քոյր քաղաք դարձնե- լու հնարաւորութիւնները, որոնք կեանքի կրնան կորշուիլ դիւանագիտական քննարկումներէ ետք:

Հանդիպմանը ներկայ էր նաև Գերաշնորհ Տ. Կորին Եպս. Բաղդասարեան:

Ուրբաթ, 13 Փետրուար.- Առաւօտեան ժամը 09:00-ին, Քրիստոնէական Միասնութեան Պապական խորհուրդի նախագահ՝ Կարտինալ Կուրտ Քոխ, առաջնորդութեամբ Սուրբ Երկրի Պապական Նուիրակ՝ Գերապայծառ Տ. Ատուֆո Արք. Տիտօ Ըլանայի այցելեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Հանդիպման ընթացքին Ամենապատիւ Պատրիարք Սրբազան բարձր գնահատեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան եւ Կաթողիկ եկեղեցիներու միջեւ եղած եղբայրական յարաբերութիւններն

ու համագործակցութեան ոգին:

Կարտինալ Քոխ շնորհակալութիւն յայնելով Պատրիարք Սրբազան Հօր, ուրախութեամբ յայտնեց թէ իր համար մեծ պատիւ է գտնուիլ Հայոց Պատրիարքարանի կամարներուն տակ, ազգի մը Պատրիարքարանէն ներս, որ առաջինն ընդունած է Քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն, որն ունի քրիստոնէական խոր արմատներ, հարուստ մշակոյթ եւ հակառակ բազմաթիւ արհաւիրքներուն մինչեւ այսօր անսասան պահպանած է քրիստոնէական իր արժէքները:

Հանդիպմանը ներկայ էին նաև Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան, Հոգեշնորհք Տ. Վագէն Վրդ. Ալէքեան եւ Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Պատրաստեց՝ ՆԵՐՍԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼՈՅԵԱՆ



ՏԵՐՈՒՆԻ**ՀԱՆԳԻՍՏ**

**Տ. ԲԱՐՍԵՎ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼԷՄՏԷՐԵԱՆԻ
(1954-2026)**

Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը վիշտն ունեցաւ կորսնցնելու իր սիրեցեալ միաբաններէն՝ Տ. Բարսեղ Ծայրագոյն Վարդապետ Գալէմտէրեանը, որ տեղի ունեցաւ Զորեքշաբթի, 25 Փետրուար, 2026-ին, Երուսաղէմի Ֆրանսական հիւանդանոցին մէջ, 72 տարեկան հասակին:

Լուսահոգի Հայր Սուրբը Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի նուիրեալ, սրտացաւ եւ արթուն պահակն էր, ով 46 տարի, մինչ իր մահը, Մայր Տաճարի Աւագ Լուսարարն էր:

Հանգուցեալ Տ. Բարսեղ Ծայրագոյն Վարդապետ Գալէմտէրեանի վախճանը մեծ կորուստ է Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ Առաքելական մեր Սուրբ Աթոռոյ համար:

Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը եւ ողջ Միաբանութիւնը կը սգան Հայր Սուրբի մահը եւ կ'աղօթեն անոր բարի հոգւոյ լուսաւորութեան եւ երկինքի արքայութեան արժանանալու համար:

«Յիշեսցէ Տէր զհոգի ծառային Իւրոյ եւ հանգուցէ զնա ի լոյս երեսաց Աստուածութեան Իւրոյ. ամէն»:

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Տ. ԲԱՐՍԵՎ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼԷՄՏԷՐԵԱՆԻ

Աւագանի անունով Սերոբ, ծնած է 15 Օգոստոս, 1954-ին Ճըսըր Շուղուր (Սուրիա): Զաւակն է Գէորգ եւ Նուրիձա Գալէմտէրեաններու:

Սկզբնական կրթութիւնը ստացած է Քեսապի Գալատուրանի Ազգային Վարժարանի նախակրթարանը:

1965-ին ընդունուած է որպէս ուսանող Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարան:

1968-ի Յունիս 26-ին, ստացած է Դպրութեան շորս աստիճանները՝ ձեռամբ Տ. Հայրիկ Արք. Ասլանեանի:

1974-ին աւարտած է Ժառանգաւորաց Վարժարանը, իսկ յաջորդ տարուան Յունիս 28-ին սարկաւագ ձեռնադրուած է՝ ձեռամբ Տ. Շահէ Արք. Աճէմեանի:

1977-ին կաւարտէ Ընծայարանի բաժինը, եւ նոյն տարին՝ Մայիս 29-ին, ձեռամբ երջանկայիշատակ Տ. Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի կը ձեռնադրուի կուսակրօն եկեղեցական՝ վերակոչուելով Տ. Բարսեղ Աբեղայ:

1978-1980 թթ. եղած է Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի գաւազանակիր:

1978-1991 թթ. դասաւանդած է Ժառանգաւորաց եւ Սբ. Թարգմանչաց վարժարաններուն մէջ՝ իբրեւ հայերէնի, հայոց պատմութեան, կրօնի եւ աշխարհագրութեան ուսուցիչ:

1979-1980 թթ. վարած է Սուրբ Աթոռոյս մատակարարի պաշտօնը:

1980-2026 թթ. Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի աւագ լուսարարն էր:

1981-2026 թթ. Գանձատան յանձնախումբի անդամ էր:

1983 Մայիս 28-ին, ձեռամբ Տ. Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի, ստացած է վարդապետական շորս աստիճաններ եւ լանջախաչ կրելու իրաւունք:

1991 Յունուար 11-ին, երջանկայիշատակ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի կողմէ ստացած է ծաղկեայ փիլոն կրելու իրաւունք:

1995-ին մասնակցած է Ազգային եկեղեցական ժողովին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրելու առիթով:

2020-ի Սեպտեմբեր 26-ին, ստացած է ծայրագոյն վարդապետութեան աստիճան՝ ձեռամբ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի:

Տարբեր տարիներուն Ս. Աթոռոյս Միաբանական ընդհանուր ժողովին կողմէ ընտրուած է նոյն ժողովի ատենադպիր, ապա ատենապետ, ինչպէս նաեւ Ս. Աթոռոյս Տնօրէն ժողովի անդամ:

Հեղինակ է երկու աշխատութիւններու՝ «Հայոց Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարը – Երուսաղէմ» (հայերէն-անգլերէն), հրատարակուած՝ 2007-ին, եւ «Յիշատակարանք սպասուց Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի», հրատարակուած՝ 2008-ին:

Նկատի առնելով Սուրբ Երկրին մէջ տիրող պատերազմական իրավիճակը՝ լուսահոգի Բարսեղ Ծայրագոյն Վարդապետ Գալէմտէրեանի մարմինը Մայր Տաճար փոխադրուեցաւ 3 Մարտ, 2026-ին, առաւօտեան ժամը 7:30-ին:

Մայր Տաճարի արտաքին գաւիթին մէջ Աւետարանի ընթերցումէն ետք, շարականներու երգեցողութեամբ դագաղը զետեղուեցաւ Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի ատենանին մէջ: Ապա կատարուեցաւ Առաւօտեան ժամերգութիւն եւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ հանգստեան Սուրբ Պատարագ մատուցեց Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան:

«Ողջոյն»-էն առաջ դագաղը բեմ հանուեցաւ, ուր Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արք. Ղարիպեան Սրբազան Հայրը, առընթերակայութեամբ Հոգեշնորհք Տ. Ներսէս Վրդ. Ալոյեանի եւ Տ. Աղան Վրդ. Գոգչեանի կատարեց հանգուցեալ Տ. Բարսեղ Ծ. Վրդ. Գալէմտէրեանի «Վերջին Օծումը», ապա դամբանականը խօսեցաւ

պատարագիչ՝ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան՝ դրուատելով 45 եւ աւելի տարիներու եկեղեցասէր, նուիրեալ գործունէութիւնը հանգուցեալին, որմէ ետք նախ Միաբանութիւնը եւ ապա ժողովուրդը մօտեցան աջը առնելու հանգուցեալին:

Ժամը 10:30-ին Մայր Տաճարին մէջ կատարուած հանգստեան կարգէն ետք հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Սուրբ Փրկչայ վանք՝ իր յաւիտենական կայքին:

Յուղարկաւորութեան արարողութեան նախագահեց Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Հայր Սուրբին մարմինը ամփոփուեցաւ Սուրբ Փրկչի Միաբանական գերեզմանատան մէջ:

Իր մահով՝ Պատրիարքութիւնը կորսնցուց իր պարտականութեանց գիտակից, նըւիրեալ ու ծառայասէր եկեղեցականը:

Բոլորով սրտիւ կ'աղօթենք հանգուցեալ Հայր Սուրբի հոգիին համար, թող Երկնաւոր Հայրը, իր լոյսերուն մէջ հանգչեցնէ անոր բարի հոգին եւ Սուրբ Հոգիի մխիթարութիւնը պարգեւէ Միաբանութեանս անդամներուն եւ անոր անմիջական հարազատներուն եւ ընտանեկան պարագաներուն:

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԹԷՈՂՈՐՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԱՔԱՐԵԱՆԻ ԿՈՂՄԷ ԽՕՍՈՒԱԾ ԳԱՄԲԱՆԱԿԱՆԸ Ի Ս. ՅԱԿՈՔ

«Ազնիւ, ծառայ բարի եւ հաւատարիմ, որովհետեւ ի սակաւող հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից գրեզ. մտտ յորսխոյթիւն Տեառն Քո»:

Միրելիներ, այսօր մենք համախմբուած ենք սրտերու խոր ցաւով, բայց նաեւ լուռ երախտագիտութեամբ՝ յիշելու, հոգեւոր խոնարհումով հրաժեշտ տալու եւ յուղարկաւորելու մեր սիրելի հոգեւոր եղբայրը եւ Սուրբ Աթոռոյս երկարամեայ, նուիրեալ, ծառայասէր, նախանձախնդիր եւ ազնիւ հոգեւորականի՝ Տ. Բարսեղ Մ. Վրդ. Գալէմտէրեանը:

Հոգեւորականի յուղարկաւորութիւնը կ'ուղեկցուի Սուրբ Պատարագի խորհրդով եւ Սուրբ Միւռոնի վերջին օծումով: Մեր հաւատքի հայր՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ, կ'ըսէ. «Հանգուցեալի համար Սուրբ Պատարագը նման է սրատես եւ բարձրաթոիչ արծուի, որը կը յափշտակէ հոգին շարի ձեռքէն եւ կը վերաբերէ Աստուծոյ Սուրբ Աթոռին»:

Այս հաւատքով եւ այս աղօթքով կը մատուցենք այսօրուան Սուրբ Պատարագը:

Քրիստոնէական հաւատքը մեզ կը սորվեցնէ, թէ մահը վերջ չէ. անիկա դուռ մըն է դէպի յաւիտենութիւն: Մենք կը հաւատանք, որ այն Տէրը, որուն Հայր Բարսեղ ծառայեց ամբողջ հոգիով եւ սրտով, այժմ զինք կ'ընդունի իր խաղաղութեան մէջ՝ ըսելով. «Ազնիւ, բարի եւ հաւատարիմ ծառայ, մտիր քու Տիրոջ ուրախութեան մէջ»:

Այս խօսքերը այսօր կը հնչեն ոչ միայն որպէս աւետիս, այլեւ որպէս մխիթարութիւն՝ վստահեցնելով մեզ, որ հաւատարիմ ծառայութիւնը երբեք անպտուղ չի մնար Աստուծոյ առջեւ:

Աւագանի անունով Սերոբ, ծնած է 15 Օգոստոս, 1954-ին Ճըսըր Շուղուր (Սուրիա): Զաւակն է Գէորգ եւ Նուրիձա Գալէմտէրեաններու:

Սկզբնական կրթությունը ստացած է Քեսապի Գարատուրանի Ազգային Վարժարանի մէջ:

1965-1977 թթ. ուսանած է Երուսաղէմի ժառանգաւորաց Վարժարան:

1977-ին կաւարտել է Ընծայարանի բաժինը եւ նոյն տարին, 29 Մայիսին, ձեռամբ Երջանկայիշատակ Տ. Եղիշէ Պատրիարք Տէրութեանի կը ձեռնադրուի կուսակրօն եկեղեցական վերակոչուելով Տ. Բարսեղ Աբեղայ:

1978-1980 թթ. եղած է Եղիշէ Պատրիարք Տէրութեանի գաւազանակիր:

1978-1991 թթ. դասաւանդած է ժառանգաւորաց եւ Սբ. Թարգմանչաց Վարժարաններու մէջ՝ իբրեւ հայերէնի, Հայոց պատմութեան, կրօնի եւ աշխարհագրութեան ուսուցիչ:

1979-1980թթ. վարած է Ս. Աթոռոյս Մատակարարի պաշտօնը:

1980-էն մինչ մահը Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Կուսարարն էր:

1983-ի Մայիս 28-ին, ձեռամբ Տ. Եղիշէ Պատրիարք Տէրութեանի ստացած է վարդապետական շորս աստիճաններ եւ լանչախաչ կրելու իրաւունք:

2020-ի Սեպտեմբեր 26-ին, ստացած է Ծայրագոյն Վարդապետութեան աստիճան, ձեռամբ՝ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի:

Տարբեր տարիներուն Ս. Աթոռոյս Միաբանական ընդհանուր ժողովին կողմէ ընտրուած է նոյն ժողովի Ատենադպիր ապա Ատենապետ, ինչպէս նաեւ Ս. Աթոռոյս Տնօրէն ժողովի անդամ:

Հայր Բարսեղ այն մարդոցմէ էր, որոնց մասին խօսած ատեն բառերը միշտ փոքր կը թուին: Գրեթէ կէս դար ան ծառայեց Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին՝ ոչ թէ որպէս պաշտօնակատար, այլ որպէս հարազատ զաւակ, հաւատարիմ ժառանգորդ եւ նըփրեալ հոգեւորական մեր Ս. Աթոռին:

Մայր Տաճարի ամէն մէկ քար, ամէն մէկ իր, սպասք կամ զգեստ իր համար նուիրական, թանկ եւ սուրբ էր: Անոնց կը մօտենար ծայրահեղ խնամքով, զգուշութեամբ եւ երկիւղով՝ որպէս սրբութիւններու պահապան:

Պատմութիւնը արձանագրելու եւ զայն որպէս ժառանգութիւն յաջորդ սերունդներուն փոխանցելու համար ան հրատարակեց «Յիշատակարանք սպասուց Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի» աշխատութիւնը, ուր մեծ համբերութեամբ եւ մանրակրկիտ աշխատանքով վերծանեց Մայր Տաճարի սրբազան իրերու յիշատակարանները եւ պատմութիւնը:

Նաեւ պատրաստեց Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի համապարփակ պատմութիւնը՝ հիմնուելով գրաւոր եւ բանաւոր աղբիւրներու եւ աւանդութեան վրայ:

Հայր Բարսեղի ծառայութիւնը երբեք սահմանափակուած չէր միայն եկեղեցւոյ պատերէն ներս: Ան անտարբեր չէր որեւէ ցաւի նկատմամբ՝ ըլլայ ազգային, հայրենական, եկեղեցական, համայնքային, մինչեւ անգամ անհատի: Յատկապէս զգայուն էր այն ամէնի հանդէպ, ինչ որ կապուած էր Սուրբ Աթոռի իրաւունքներուն, սեփականութեան եւ ունեցուածքին:

Երբեմն մենք ականատես կ'ըլլայինք անոր արդար բարկութեան եւ իրաւացի ցասման պոռթկումներուն, անոր խոր մտահոգութիւններու ալեկոծումին: Այդ բոլորը կը ծնէին սիրոյ, պատասխանատուութեան բարձր գիտակցութենէ եւ անկեղծ սրտացա-

ւութենէ:

Պօղոս Առաքեալ կը գրէ. «Բարի պատերազմը պատերազմեցի, ընթացքս աւարտեցի, հաւատը պահեցի»:

Մեր սիրելի Հայր Բարսեղը իրապէս պատերազմեց բարի պատերազմը՝ ոչ թէ սըրով, այլ սիրով, ոչ թէ իշխանութեամբ, այլ խոնարհութեամբ, ոչ թէ դատելով, այլ համեստ ծառայութեամբ: Ան աւարտեց իր ընթացքը արժանապատուութեամբ եւ պահեց հաւատը մինչեւ վերջին շունչը:

Սաղմոսերգուն կը վկայէ. «Թանկագին է Տիրոջ աչքին իր սուրբերու մահը»:

Աշխարհի համար մահը կորուստ է, բայց Աստուծոյ աչքին այն հանդիպում է յաւիտենական կեանքին: Մենք այսօր կը սգանք, բայց երկինքը ուրախութեամբ կ'ընդունի Աստուծոյ հաւատարիմ ծառան:

Սուրբ հայրերը մեզ կը յիշեցնեն մահուան խորհրդը: Սուրբ Յովհաննէս Ոսկեբերան կ'ըսէ. «Մահը ննջում կը կոչուի, որովհետեւ հաւատացեալներուն համար այն քուն է, ոչ թէ կորուստ»: Եւ իրապէս քրիստոնեայի մահը աւարտ չէ, այլ հանգիստ՝ արդար վարձքի սպասումով:

Ս. Գրիգոր Նարեկացի կ'աղօթէ. «Տէր, յիշէ զիս մահուանս ժամուն, եւ մի մերժեր զիս քու ողորմութենէդ»: Մենք կը հաւատանք, որ ողորմած Տէրը յիշեց Իր ծառան եւ կ'ընդունի անոր հոգին Իր անսպառ ողորմութեան մէջ: Իր սիրով կը ներէ անոր կամայ եւ աւանդ գործաց մեղքերը, արդարութեամբ չի դատեր, այլ գթութեամբ կը քաւէ:

Սուրբ Բարսեղ Մէծ կ'ըսէ. «Ով սիրեց Աստուծոյ այս կեանքին մէջ, չի բաժնուիր Անկէ նաեւ մահուան միջոցով»:

Հանգուցեալ Հայր Բարսեղ սիրեց Աստուծոյ ոչ միայն խօսքով, այլ իր ամբողջ կեանքով: Անոր ծառայութիւնը քարոզ էր՝ առանց բարձրաձայն ճառերու, անոր խոնարհութիւնը՝ բարձրագոյն վկայութիւն, անոր ազնուութիւնը՝ հաւատքի կենդանի ապացոյց:

Այսօր մեր պարտքն է ոչ միայն սգալ, այլ նաեւ շարունակել այն ճանապարհը, որ ան մեզի ցոյց տուաւ՝ նուիրումի, անխոնջ ծառայութեան եւ համակ սիրոյ առ մեր Ս. Աթոռը:

Քրիստոս կ'ըսէ. «Ես եմ յարութիւն եւ կեանք, ով կը հաւատայ Ինծի, թէկուզ մեռնի, կ'ապրի»: Այս խօսքերը մեր հաւատքի հիմն է: Մենք մեր հոգեւոր եղբօր հոգին կը յանձնենք ոչ թէ խաւարին, այլ յարութեան յոյսին:

Աղօթենք, որ Տէրը, բարեխօսութեամբ Ս. Աստուածածնի, մեր պահապան սուրբերու՝ Ս. Յակոբոս Տեառնեղբօր եւ Ս. Յակոբոս Գլխադիր առաքեալի, արժանացնէ անոր հոգին արդարներու օթեւաններուն, ուր «ոչ ցաւ կայ, ոչ տրտմութիւն, ոչ հառաչանք, այլ կեանք յաւիտենական»:

Թող անոր յիշատակը մնայ օրհնեալ, եւ թող անոր թողած հոգեւոր օրինակը ծաղկի մեր կեանքերուն մէջ:

Կ'աղօթենք նաեւ մեր Սուրբ Աթոռի, միաբանութեան՝ ի գլուխ Պատրիարք Սրբազան Հօր, մեր համայնքին եւ Հայր Բարսեղի հարազատներուն համար, որպէսզի Տէրը Սուրբ Հոգիով մխիթարէ եւ զօրացնէ ամենքս:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»

ՏԵՐՄԻՆՆԵՐ**ՔԱՐՈՋ՝ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ Տ. ԲԱՐՍԵՂ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԳԱՊԵՏ ԳԱԼԷՄՏԵՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ**

Երուսաղեմի մէջ ընկալեալ սովորութեան համաձայն՝ Մեծ Պահոց ընթացքին, Երեւշաբթի եւ Հինգշաբթի օրերուն, հսկումներու ընթացքին վարդապետ հայրերը կը ֆարոզեն: Այդ ցանկը նախապէս կը կազմէ Լուսարարապետ Սրբազան Հայրը:

2026 թուականի Մեծ Պահոց Երեւշաբթի օրերու ֆարոզներու ցանկը Մարտ 3-ին պիտի բանար Տ. Բարսեղ Ծայրագոյն Վարդապետ Գալեմտէրեան: Սակայն Աստուծոյ ծրագիրն այլ էր. այդ օրը՝ Մարտ 3-ին, Հայր Բարսեղի թաղումն էր:

Հետեւաբար, Լուսարարապետ Սրբազան Հօր յանձնարարութեամբ, Հայր Բարսեղի փոխարէն պիտի ֆարոզէր Հոգեշնորհ Տ. Ներսէս Վրդ. Ալոյեան:

Եւ քանի որ Սուրբ Երկրին մէջ պատերազմ կը որոտար, ոչ հսկում տեղի ունեցաւ, ոչ ալ ֆարոզ տրուեցաւ: Սակայն ֆարոզը նուիրուած էր Հայր Բարսեղին եւ «Սիռն»-ի խմբագրութիւնը որոշեց զայն հրատարակել:

Յանունն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն:

Սիրելի՛ հաւատացեալ ժողովուրդ, սգակիր միաբանակից եղբայրներ եւ ժառանգաւոր սաներ,

Այսօր մեր սրտերը լեցուած են զգացումով մը, որու մէջ միահիւսուած են ցա՛ւը, կարօ՛տը, զարմա՛նքը եւ խոր լռութիւն մը: Այսօր, այս հսկումին մենք պիտի գայինք լսելու մեր աւագ եղբօր՝ Բարսեղ Մ. Վրդ. Գալեմտէրեանի քարոզը... սակայն մենք կը ծրագրենք, Աստուած կը տնօրինէ...

Հայր Բարսեղ այս երեկոյ պիտի կենար այս սուրբ խորանին առջեւ, պիտի բանար Սուրբ Աւետարանը եւ իր խաղաղ, սիրառատ ձայնով պիտի կերակրեր մեզի եւ բոլոր հաւատացեալներուդ: Բայց Տիրոջ խորհուրդները մեզմէ բարձր են:

Այսօր, այս հսկումին ան պիտի քարոզէր, սակայն չեկաւ: Եւ մենք հաւաքուած ենք ոչ թէ լսելու անոր խօսքը, այլ ճանապարհելու զինքը դէպի յաիտենութիւն:

Սիրելիներ՛ր, այսպիսի պահերուն մարդուս լեզուն կը դժուարանայ խօսիլ, որովհետեւ սիրտը տակաւին չէ համակերպուած իրականութեան հետ:

Ամէն բան շատ արագ եղաւ: Հիւանդանոցի մէջ, յանկարծ, անակնկալ, լուռ... Տէրը կանչեց իր հաւատարիմ ծառան: Բայց հաւատացեալի աչքով նայելով՝ մենք կը տեսնենք ոչ միայն մահ, կեանքի աւարտ, այլ նաեւ կատարեալ վկայութիւն:

Հայր Բարսեղ քարոզիչ չէր, ան իր կեանքով ապրած քարոզ մըն էր:

Ան բարի էր - ոչ ձեւական բարութեամբ, այլ այն խոր, հայրական բարութեամբ, որ կը հանգստացնէր մարդը անոր կողքին:

Ան նուիրեալ էր - ոչ խօսքով միայն, այլ ամբողջ էութեամբ:

Ան սրտացաւ էր - ոչ ձեւական, այլ ազնուօրէն գիտէր ցաւերը Պատրիարքութեան թէ՛ անցեալի, եւ թէ ներկայի:

Եւ մենք բոլորս գիտենք, թէ ինչ էր անոր համար Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարը, որուն արթուն պահակն էր Հայր Բարսեղ:

Ան կը դողար Մայր Տաճարի ամէն քարին վրայ, ամէն կանթեղի լոյսին վրայ, ժամերգութեանց վրայ: Անոր համար եկեղեցին պարզապէս ծառայութեան վայր մը չէր - այդ իր սիրտն էր, իր տունն էր, իր շունչն էր:

Քանի՛ գիշերներ անցուցեր էր հոգսով, անցեալին նաեւ վախով, ատեն մը նոյնիսկ Սուրբ Յակոբի բանալին գրապանը կը պառկէր ու կ'արթննար, աւելին՝ Երուսաղէմի տագնապի օրերուն ան իր էնթերիներու գրպաններէն մին սովորականէն աւելի մեծ կարել կու տար, որպէսզի Սուրբ Յակոբի բանալին տեղաւորցնէր:

Քանի՛ աղօթքներ բարձրացուցեր է լուռ: Քանի՛ մարդոց մխիթարած է առանց աղմուկի:

Այսօր այդ հոգին հանգիստ է, այդ աչքերը փակ են, բայց անոր ծառայութիւնը չէ լռած:

Սիրելի՛ հաւատացեալներ, խորհրդաւոր է Աստուծոյ տնօրինութիւնը:

Հայր Բարսեղ կը պատրաստուէր քարոզելու: Անոր հոգին պատրաստ էր խօսելու կեանքի, հաւատի, յաւիտենութեան մասին: Բայց Տէրը կամեցաւ, որ անոր վերջին քարոզը հնչի ոչ թէ շուրթերով, այլ կեանքով:

Ինչպիսի՛ լուռ, բայց հզօր պատգամ:

Եկեղեցին կը սպասէր անոր... հաւատացեալներդ պիտի լսէիք անոր... բայց խօսեցաւ եւ խօսեցնել տուաւ անոր մահը... Եւ այդ լուռ քարոզը այսօր մեզմէ իւրաքանչիւրիս հարց կը տայ:

Արդեօ՞ք մենք պատրաստ ենք մեր ժամուն: Արդեօ՞ք մեր հաւատը կենդանի է: Արդեօ՞ք մենք կ'ապրինք այնպէս, ինչպէս կը խոստովանինք:

Սուրբ Գիրքը կ'ըսէ. «Արթուն եղէք, որովհետեւ չէք գիտէր օրը եւ ժամը» (Մատթ. 25:13):

Հայր Բարսեղ ապրեցաւ որպէս արթուն պահակ: Եւ Տէրը անոր գտաւ նախ այդ արթուն վիճակի մէջ, ապա իր քովն առաւ:

Սիրելիներ՛, մահը միշտ ցաւոտ է ողջ մնացողներու համար: Մենք մարդ ենք, մենք կը սիրենք, կը կապուինք... եւ այսօր մեր սիրտերու մէջ պարապութիւն կայ:

Մենք պիտի կարօտնանք անոր մեղմ ժպիտը, անոր խոնարհ ընթացքը, անոր հոգատար ներկայութիւնը Մայր Տաճարին մէջ, անոր աղօթող լռութիւնը:

Բայց որպէս հաւատացեալ ժողովուրդ՝ մենք չենք սգար ինչպէս անոնք, որոնք յոյս չունին (Ա. Թեսաղ. 4:13): Մենք կը հաւատանք մեր Տիրոջ խօսքին. «Ես եմ յարութիւն եւ կեանք. ով հաւատայ ինծի, թէեւ մեռնի, պիտի ապրի» (Յովհ. 11:25):

Այսօր Հայր Բարսեղը չէ կորսուած - ան ննջած է:

Չէ լռած - այլ փոխած է իր ծառայութեան ձեւը:

Չէ հեռացած Աստուծմէ - այլ մօտեցած է Անոր:

Սիրելի՛ հաւատացեալներ, Հայր Բարսեղի կեանքը մեզի կը ձգէ պարզ, բայց խորը կտակ մը:

Ապրեցէ՛ք հաւատքով:

Ծառայեցէ՛ք լուռ հաւատարմութեամբ:

Սիրեցէ՛ք եկեղեցին ոչ թէ խօսքով, այլ սրտի դողով:

Ան մեզի սորվեցուց, որ մեծ ծառայութիւնները յաճախ կը կատարուին առանց աղմուկի, առանց ցուցադրութեան, առանց բարձրաձայն խօսքերու:

Եւ այսօր անոր լուռ հեռանալը դարձաւ անոր կեանքի ամենաբարձրաձայն քարոզը:

Թող որ լսենք մենք այդ քարոզը:

Եթէ մեր սիրտերու մէջ կայ սառնութիւն - թող այն հալի:

Եթէ կայ անտարբերութիւն - թող այն արթննայ:

Որովհետեւ մենք չենք գիտէր օրը... բայց կրնանք ընտրել մեր արթուն ըլլալը:

Եկենք աղօթենք Հայր Բարսեղի հոգույ խաղաղութեան համար.

Տէր Աստուած, ընդունէ քու հաւատարիմ ծառան՝ Տ. Բարսեղ Ս. Վրդ. Գալէմտէրեանը, Քո երկնային արքայութեան մէջ:

Յիշէ անոր ծառայութիւնը, անոր սրտացաւութիւնը, անոր արթուն պահակութիւնը քո սուրբ տաճարին:

Շնորհէ անոր հանգիստ մը լոյսի եւ դրախտային խաղաղութեան մէջ, ուր չկայ ցաւ, վիշտ եւ հառաչանք, այլ կեանք յաւիտենական:

Եւ մեզ՝ կենդանի մնացողներուս, պարգեւէ արթուն սիրտ, հաստատուն հաւատ եւ մխիթարուած հոգի:

Քանզի Դու ես յարութիւնը եւ կեանքը, յաւիտեանս, յաւիտենից. Ամէն:

ՆԵՐՍԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼՈՅԵԱՆ

ՅՕԴՈՒԱԾԱԳԻՐՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

«Սիոն» կրօնական, գրական, բանասիրական հանդեսը հիմնուած է 1866-ին, պաշտօնաթերթն է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան եւ լոյս կ'ընծայուի Սրբոց Յակոբեանց Տպարանէն:

«Սիոն» կրօնական, գրական, բանասիրական նիւթերէ գատ, կ'ընդգրկէ նաեւ պատմական, եկեղեցական, լեզուական եւ հայ արուեստի վերաբերեալ ուսումնասիրութիւններ եւ այլ բնոյթով նիւթեր:

Յօդուածներու հիմնական լեզուն Հայերէնն է, կ'ընդունուին նաեւ Անգլերէնով յօդուածներ, նախընտրաբար 8-15 համակարգչային շարուածքով լման էջ՝ Word միջավայրին մէջ, երկու կողմերէն հաւասարեցուած, առանց տողադարձերու, ծաւալը՝ A4 ֆորմատի, տառատեսակը՝ Arian Grqi, տառաչափը՝ 12 pt, տողերու հեռաւորութիւնը՝ 1.15 pt:

Յղումները կը տրուին տողատակը՝ աճման կարգով, տառատեսակը՝ Arian Grqi, տառաչափը՝ 10 pt: Հայերէն յօդուածները «Սիոն»-ի մէջ կը հրատարակուին դասական հայերէն ուղղագրութեամբ: «Սիոն»-ին յանձնուած յօդուածները պէտք է ըլլան անտիպ:

Յօդուածին սկիզբը կը դրուի հեղինակի անունը, մականունը (գլխագիրներով), գիտական աստիճանն ու կոչումը, աշխատանքի վայրը, պաշտօնը եւ ելեքտրոնային փոստի անուանումը:

Յօդուածին կամ գրականութեան ցանկին մէջ եթէ լատինատառ տառադարձութեան անհրաժեշտութիւն կայ, օգտագործել *The library of congress* միջազգային կայքի *Armenian Romanization Table (2022)*-ը: (Կայքի յղումը՝ <https://www.loc.gov/catdir/cpso/roman.html>):

Յօդուածագիրներու արտայայտած գաղափարներն ու կարծիքները պայման չէ որ համընկին «Սիոն»-ի խմբագրութեան տեսակէտին:

Մեր սրտագին բաղձանքն է որ «Սիոն» մուտք գործէ բոլոր հայ տուներէ ներս. Վստահ ենք թէ ամէն ընթերցող պիտի գտնէ անոր էջերուն մէջ գրութիւններ՝ որոնք համապատասխան ըլլան իր ճաշակին եւ նախասիրութեան:

Յօդուածներ եւ այլ թղթակցութիւններ, ուսումնասիրութիւններ պէտք է ուղարկուին «Սիոն»-ի հետեւեալ հասցէով.

E-mail: sionjournal@yahoo.com





Բանաստեղծ Վահան Տերեանի ծոռ, գրականագետ Դոկտ. Գեորգ Էմին-Տերեան մեր մէջ:
«Վահան Տերեանի կեանքի ու ստեղծագործութեան անյայտ էջերը» խորագրով բանախօսութիւն մը
տուաւ Կիլպէնկեան Մատենադարանին մէջ



Տօն Աբ. Ստեփանոսի Նախասարկաագին եւ Առաջին Մարտիրոսին



Տօն Աբ. Ստեփանոսի Նախասարկաագին և Առաջին Մարտիրոսին: Ս. Աթոռոյս սարկաագաց դասը
Սարկաագապետեր՝ Տ. Աղան Վրդ. Գոգչեան և Տ. Արշակ Աբղ. Ղազարեան



Ս. Աթոռոյս սարկաագաց դասը՝ սարկաագապետեր
Տ. Աղան Վրդ. Գոգչեանի և Տ. Արշակ Աբղ. Ղազարեանի առաջնորդութեամբ



Տօն Որդոցն Որոտման
Պատարագի՛ Տ. Կորին Եպս. Բաղդասարեան



Տօն Որդոցն Որոտման, մեծահանդէս թափօր Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ
Հանդիսապետ Տ. Սեան Արք. Դարիպեան՝ Տիրոջ Խաչափայտի մատունին ի ձեռին



Հայկական Ծնունդին Բերդենկն ֆաղափ մուափին, Լուսարարապետ Գերշ. Տ. Սեան Արք. Ղարիպեան, ընկերակցութեամբ պաշտօնական հիւրերու Մսուրի հրապարակէն թափօրով կը յտաջանայ դէպի Տանար



Աբ. Ծնունդ ի Բերդենկն



Հայկական Ծնունդին ի Բերդեհէմ: Ճրագալոյցի պատարագիչ՝ Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ՝ Տ. Մերուպ եպս. Պարսամեան



Սբ. Ծնունդ ի Բերդեհէմ, Սբ. Այրին առջև



Սբ. Ծննդեան տօնի Ա. Այրի արարողութեան երգչախումբը՝ կազմուած ժառանգաւոր սաներէ եւ Բարեշնորհ Սարկաազներէ



Սբ. Ծնունդ ի Բերդեհէմ: Զօրհմեաց արարողութիւն՝ ձեռամբ Տ. Թէոդորոս Եպս. Զափարեանի



Երուսաղեմի Հին ֆաղափ ոստիկանապետ՝ Տիար Դվիր Թամիմ իր ոստիկաններով, Իսրայելի ոստիկանապետ՝ Տիար Աշալոմ Պելետ, Իսրայելի Արտաքին գործոց նախարարության ֆրիստոնեաներու բաժնի վարիչ՝ Տամի Պեն Խայիմ, Իսրայելի Ներքին գործոց նախարարության ֆրիստոնեայ համայնքներու բաժնի վարիչ՝ Տիար Սեգար Մարնիել այցելեցին Պատրիարքարան, Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի Սուրբ Ծնունդը շնորհատրելու:



Բեթղեհեմի «Կազա Նովա» պանդոկին մէջ Պատրիարքութեանս կողմէ տրուած հիւրասիրութեան ներկայ էին Պաղեստինի ֆրիստոնեաներու հարցերով բարձրագոյն խորհուրդի նախագահ՝ Դոկտոր Ռամզի Խուրի, Բեթղեհեմի ֆաղափապետ՝ Տիար Մահեր Կանաասաթի, նահանգապետը, բարձրաստիճան զինուորականներ եւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամներ:



Սբ. Ծննդեան շնորհատուրքի մեներ Լատինաց Պատրիարքութեան եւ միա
յարանուանութեանց կողմէ



Ամանորի եւ Սուրբ Ծննդեան տօներուն առիթով Սուրբ Եկրի հոգեւոր պետերու ընդունելութիւն
Իսրայէլի նախագահական պալատին մէջ: Երուսաղէմի Հայ Պատրիարքութիւնը ներկայացուց
Տ. Կորին Եպս. Բաղդասարեան



Լուսարարապետ Սրբազան Հօր գլխատրած պատուիրակության այցը Երիվովի կառավարիչ՝ Տիար Յուսէին Համայէլիին



Տարեկան ուխտագնացութիւն դէպի Յորդանան գետ, ուր տեղի ունեցաւ Ջրօրհնէաց արարողութիւն՝ ձեռամբ Լուսարարապետ Տ. Սեւան Ա.բ. Դարիպեան Սրբազան Հօր



Տօն Անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ ի Ս. Յարութեան Տաճար:
Պատարագիչ՝ Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ՝ Տ. Մեսրոպ Եպս. Պարսամբեան



Տօն Անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի
«Տնօրհնէի» Պատրիարքարանի մէջ



Ուրարի տուչոյքին Ա. Ընծայարանի ուսանողներ՝
Արա Յակոբեանի, Սամուել Սովիասեանի, Նարեկ Մկրտչեանի, Հայկ Թեոտեանի եւ Մարտին
Բաբոյեանի՝ ձեռամբ Լուսարարապետ Տ. Սեան Արք. Դարիպեանի



«Հրաշագործ Մայր Աստուածածնի» սրբապատկերի ֆոյազերծում Ասորից Սուրբ Մարկոս վանքին
մէջ: Երուսաղէմի Հայ Պատրիարքոսինը ներկայացուց Ասագ Թարգման՝ Տ. Արշակ Աբղ. Դազարեան



Իսրայելի Ռամլե քաղաքի Հայոց Սուրբ Գեորգ Եկեղեցիի առաջնորդող փոփոքր անուանակոչուեցաւ «Հայ Եկեղեցի»: Ներկայ էին Ս. Կորիւն Եպս. Բաղդասարեան եւ Ռամլեի հոգեւոր հովիւ՝ Ս. Սուրեն Քհնյ. Ղազարեան



Ամանորի եւ Սուրբ Ծննդեան տօներու առիթով Սուրբ Երկրի Բիստոնեայ հոգեւոր պետերու եւ ներկայացուցիչներու հանդիպում Յունաց Պատրիարքարանին մէջ: Երուսաղէմ Հայ Պատրիարքոսիւնը ներկայացուց Ասագ Թարգման Ս. Արշակ Աբղ. Ղազարեան



Սուրբ Թեոդորոս Չեռագրատան նոր յարկին բացում՝ ի ներկայութեան նորոգութեան բարերարներուն՝ Տիար Ճերայտ Տէմիրնեանի, Չարլզ Տէմիրնեանի և Ռիչըրտ Տէմիրնեանի



Սուրբ Թեոդորոս Չեռագրատան նոր յարկին բացում՝ ի ներկայութեան նորոգութեան բարերարներուն՝ Տիար Ճերայտ Տէմիրնեանի, Չարլզ Տէմիրնեանի և Ռիչըրտ Տէմիրնեանի



Սուրբ Ծննդեան Տանարի Իրաատերէն՝ Հայոց Արքեպիսկոպոսի Յակոբեանց Զինուորեալ միաբանութիւնը, գլխատրութեամբ Պատրիարք Արքազան Հօր, այցելեց Սուրբ Ծննդեան Բարայր՝ մօտէն հետեւելու վերականգնման աշխատանքներուն





Հանգիստ Տ. Բարսեղ Մ. Վրդ. Գալեմտերեանի



Հանգիստ Տ. Բարսեղ Մ. Վրդ. Գալեմտերեանի



Վերջին օծում Տ. Բարսեղ Ծ. Վրդ. Գալեմսեանի



Տան կարգ հանգուցեալ Տ. Բարսեղ Ծ. Վրդ. Գալեմսեանի

«ՍԻՈՆ»Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՍԻՈՆ»-ին բաժանորդագրուելու համար հաճեցէք ներքեւի կտրոնը յստակ եւ գլխագիր տառերով ամբողջացնել եւ փութով մեր E-mail: sionjournal@yahoo.com հասցէին ղրկել:

**ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ ԵՐՈՒՍԱԳԷՄԻ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԻՈՆԻ**

Անուն, Մականուն. _____

Տիտղոս. _____

Կազմակերպութիւն. _____

Հասցէ. _____

E-mail address _____

Տարեկան բաժանորդագրութիւն՝ \$150 USD

NOTICE TO SUBSCRIBERS

To subscribe to "SION", please kindly complete the form below clearly in capital letters and send it promptly to our email address: sionjournal@yahoo.com.

Name, Surname. _____

Title. _____

Organization. _____

Address. _____

E-mail address. _____

Annual Subscribtion \$ 150 USD

Tel: +972 (0)2-6282331

Fax: +972 (0)2-6264861

E-mail: sionjournal@yahoo.com

